ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

XXXII (2)

ԵՐԵՎԱՆ • 2019

NATIONAL ACADEMY OF SCIENCES
REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

THE COUNTRIES AND PEOPLES OF THE NEAR AND MIDDLE EAST

VOLUME XXXII, PART 2

YEREVAN
"GITUTYUN" PUBLISHING HOUSE
2019

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

СТРАНЫ И НАРОДЫ БЛИЖНЕГО И СРЕДНЕГО ВОСТОКА

ТОМ XXXII, ЧАСТЬ 2

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН»
2019

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

ՀԱՏՈՐ XXXII, ՊՐԱԿ 2

ԵՐԵՎԱՆ
«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2019

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Ժողովածուն հրատարակվում է 1960 թ.-ից

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ռուբեն Սաֆրաստյան (գլխավոր խմբագիր) - պ.գ.դ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Ռոբերտ Ղազարյան (գլխավոր խմբագրի տեղակալ) - պ.գ.թ.,
Ռուսլան Ցականյան (պատասխանատու քարտուղար) - պ.գ.թ.,
Նիկոլայ Հովհաննիսյան - պ.գ.դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Վահան Բայբուրդյան - պ.գ.դ., **Արամ Քոսյան** - պ.գ.դ., **Գոռ Մարգարյան** - պ.գ.թ., **Ազատ Բոզոյան** - պ.գ.դ., **Ալեքսան Հակոբյան** - պ.գ.դ.,
Լիլիթ Հարությունյան - պ.գ.թ., **Քրիստինե Մելքոնյան** - պ.գ.թ.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

Յակովոս Ակցօղլու - պ.գ.թ., Թրակիայի Դեմոկրիտոսի համալսարան (Հունաստան), izak@cyta.gr, **Իզաբել Օժե** - պ.գ.դ., Մոնպելյեի համալսարան (Ֆրանսիա), isabelle.auge@univ-montp3.fr, **Մարիամ Չխարտիշվիլի** - պ.գ.դ., Թբիլիսիի պետ.համալսարան (Վրաստան), mariam.chkhartishvili@tsu.ge, **Վլադիմիր Դմիտրին** - պ.գ.թ., Պսկովի պետ.համալսարան (Ռուսաստան), dva_psk@mail.ru, **Հրաչ Մարտիրոսյան** - բ.գ.թ., Լեյդենի համալսարան (Նիդերլանդներ), hrch.martirosyan@gmail.com, **Աննա Շիրինյան** - բ.գ.թ., Բոլոնիայի համալսարան (Իտալիա), anna.sirinian@unibo.it, **Մուրադգելդի Սոյեգով** - բ.գ.դ., ակադեմիկոս, msoyegov@gmail.com (Թուրքմենստան)

Խմբագրական խորհրդի հասցե՝ Մ. Բաղրամյան պող. 24/4, ք. Երևան, 0019, ՀՀ
Հեռ. (+374 10) 58 33 82, (+374 10) 56 52 11
Էլ. փոստ՝ journal@orient.sci.am
Կայքէջ՝ http://www.orientcpnme.am

ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ. XXXII/2 / - Եր.: «Գիտություն» հրատ., 2019.- 367 էջ :

«Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարի հերթական (XXXII/2) հատորն ընդգրկում է Մերձավոր և Միջին Արևելքի երկրների հին և միջին դարերի պատմության, նոր և նորագույն ժամանակների, ինչպես նաև արդյուրագիտության և բանասիրության հարցերի վերաբերյալ հետազոտություններ: Զգալի տեղ է հատկացված տարածաշրջանի քաղաքական զարգացումների, միջազգային հարաբերությունների և այլ հիմնախնդիրների լուսաբանմանը: Նախատեսվում է արևելագետների, հայագետների, միջազգայնագետների համար:

ISSN 1829-1422
© ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, 2019

Published by the decision of the Scientific Council of the Institute of Oriental Studies of NAS RA

The periodical has been published since 1960

EDITORIAL BOARD:
Ruben Safrastyan (Editor-in-Chief) - Doctor of Sciences, Full Member (academician) of the National Academy of Sciences of the Republic of Armenia (NAS RA); **Robert Ghazaryan** (Vice Editor-in-Chief) - Ph.D; **Ruslan Tsakanyan** (Executive Secretary) - Ph.D
Nikolay Hovhannisyan - Doctor of Sciences, Corresponding Member of NAS RA; **Vahan Bayburdyan** - Doctor of Sciences; **Aram Kosyan** - Doctor of Sciences; **Gor Margaryan** - Ph.D; **Azat Bozoyan** - Doctor of Sciences; **Alexan Hakobyan** - Doctor of Sciences; **Lilit Harutyunyan** -Ph.D; **Kristine Melkonyan** - Ph.D

FOREIGN MEMBERS OF THE EDITORIAL BOARD:
Iakovos Aktsoglu - Ph.D., Democritus University of Thrace (Hellas), izak@cvta.gr; **Isabelle Augé** - Doctor of Sciences, University of Montpellier (France), isabelle.auge@univ-montp3.fr; **Mariam Chkhartishvili** - Doctor of Sciences, Tbilisi State University (Georgia), mariam.chkhartishvili@tsu.ge; **Vladimir Dmitriev** - Ph.D, Pskov State University (Russia), dva_psk@mail.ru; **Hrach Martirosyan** - Ph.D, Leiden University (Netherlands), hrch.martirosyan@gmail.com; **Anna Sirinian** - Ph.D, Bologna University (Italy), anna.sirinian@unibo.it; **Muratgeldi Soyegov** - Doctor of Sciences, Full Member (academician) (Turkmenistan), msoyegov@gmail.com

Editorial Office: Marshal Baghramyan Ave. 24/4, Yerevan 0019, Armenia
Tel. (+374 10) 58 33 82, (+374 10) 56 52 11
E-mail: journal@orient.sci.am
http://www.orientcpnme.am

THE COUNTRIES AND PEOPLES OF THE NEAR AND MIDDLE EAST. XXXII/2 / - Yerevan: «Gitutyun» Publishing house, 2019.- 367 p.:

The current issue of the "The Countries and Peoples of the Near and Middle East" includes researches on the ancient, medieval, modern and contemporary history of the countries of the Near and Middle East history, as well as issues of source studies and philology. A considerable part is devoted to the ongoing developments and processes in the Eurasian region. The periodical may be of interest to orientalists, specialists in the field of Armenology and International Relations.

ISSN 1829-1422
© Institute of Oriental Studies of NAS RA, 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԻԱՄ ԽԱՆԶԱԴՅԱՆ
ՎԱՂ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՍԻԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ 14

ԱՆՆԱ ԱԶԻԶՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՂԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԽԵՑԵՂԵՆԻ ՈՐՈՇ ԼՈԿԱԼ ԽՄԲԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՄԱՆ ՇՈՒՐՋ 44

ՌՈԲԵՐՏ ՂԱԶԱՐՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆ Մ.Թ.Ա. 20-18-ՐԴ ԴԴ. ՔԱՆԵՇԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ 69

ՀԱՍՄԻԿ ՀՄԱՅԱԿՅԱՆ
ՎԱՆԱ ԼՃԻ ԱՎԱԶԱՆԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ (ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ՍՅՈՒԺԵՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՈՒ ՏԻՊԱԲԱԺԱՆՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՓՈՐՁ) 87

ՌՈՒՍԼԱՆ ՅԱԿԱՆՅԱՆ
ԱՐՔԱՅԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՐԳՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՕՐԻՆԱԿ ԱՍՍՈՒՐԱ-ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 104

ԱՐԹՈՒՐ ՄԵԼԻՔՅԱՆ
ԳՈԹԱՐԶ II-Ի ՍԱՐՊՈԼ-Ի ՋՈՀԱԲԻ ԺԱՅՌԱՔԱՆԴԱԿԸ 127

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽՈՐԻԿՅԱՆ
ՆԵՍՏՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԻԱԲՆԱԿՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՊԱՅՔԱՐԸ. ԲԱՐԾՈՒՄԱՅԻԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ .. 159

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ
XVII ԴԱՐՈՒՄ ԻՐԱՆԱՀԱՅ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԱՌԱՋԱՏԱՐ ԴԵՐԸ ՀԱՄԱՀԱՅ-ԿԱԿԱՆ ՏԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՐՑԵՐՈՒՄ . 170

ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՄ ԳԱՍՊԱՐՅԱՆ
ԱԲԴ ԱԼ-ԿԱԴԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ 196

ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ. ՀԱԿԱՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂԱՑՈՒՄԸ 19-ՐԴ ԴԱՐԻ 50-60-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ. 207

ԴԱՎԻԹ ԲԱԲԱՅԱՆ
ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ. ԷՎՈԼՅՈՒՑԻԱ, ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԸ 222

ՆԵԼԼԻ ՄԻՆԱՍՅԱՆ
ՀԱՄԱԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԱՌԱՋԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 248

ՔՐԻՍՏԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՖՐԱՆՍԻԱ-ԹՈՒՐՔԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 1970-1980-ԱԿԱՆ ԹԹ. 284

ՀԱՅԿ ՍԱՄՍՈՆՅԱՆ
ԲԱՆԱԿԻ ԴԵՐԸ ՍԻՐԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ. ՍԻՐԻԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՏԱԿԻՑ ՄԻՆՉԵՎ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԲԱՆԱԿ 304

ԱՐԾՐՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՕԴԱՅԻՆ ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՏՐԵԼՈՒ ՎԵՑ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ 325

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՏԻԳՐԱՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
ԱԳԱՐԱԿԱՁՈՐԻ ԿԱՄՐՋԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 338

ԿԱՐԻՆԵ ԱՎԵՏՅԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԴԻՎԱՆԻ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ ՄԱՆՈՒԿ ԲԵՅԻ ԵՎ ԻՐ ԸՆՏԱՆԻՔԻ ՄԱՍԻՆ 349

СОДЕРЖАНИЕ

ДРЕВНЯЯ И СРЕДНЕВЕКОВАЯ ИСТОРИЯ

МАРИАМ ХАНЗАДЯН
РАННЕЕ ГОСУДАРСТВО: АЗИАТСКИЙ СПОСОБ ПРОИЗВОДСТВА 14

АННА АЗИЗЯН
О ТИПОЛОГИИ НЕКОТОРЫХ ЛОКАЛЬНЫХ ГРУПП КЕРАМИКИ РАННЕГО БРОНЗОВОГО ПЕРИОДА АРМЕНИИ 44

РОБЕРТ КАЗАРЯН
ЗАПАДНЫЕ РЕГИОНЫ АРМЯНСКОГО НАГОРЬЯ СОГЛАСНО КАНЕШСКИМ ИСТОЧНИКАМ 20-18ВВ. ДО Н.Э. 69

АСМИК АМАЯКЯН
ОСНОВНЫЕ МИФЫ, СВЯЗАННЫЕ С БАССЕЙНОМ ОЗЕРА ВАН (ПРЕДВАРИТЕЛЬНАЯ ПОПЫТКА КЛАССИФИКАЦИИ И ТИПОЛОГИЧЕСКОГО ОПРЕДЕЛЕНИЯ МИФОЛОГИЧЕСКИХ СЮЖЕТОВ) ... 87

РУСЛАН ЦАКАНЯН
ПРОЯВЛЕНИЕ ЦАРСКОЙ СУБОРДИНАЦИИ В ОТНОШЕНИЯХ АССИРИИ И УРАРТУ 104

АРТУР МЕЛИКЯН
РЕЛЬЕФ ГОТАРЗА II–ГО В САРПОЛ-Э-ЗОХАБЕ 127

ОВАНЕС ХОРИКЯН
БОРЬБА МЕЖДУ НЕСТОРИАНАМИ И МОНОФИЗИТАМИ: ДЕЯТЕЛЬНОСТЬ БАРСАУМЫ 159

ВААН БАЙБУРДЯН
ЛИДИРУЮЩАЯ РОЛЬ ИРАНСКОЙ АРМЯНСКОЙ ТОРГОВОЙ БУРЖУАЗИИ В XVII ВЕКЕ В ВОПРОСАХ ПАНАРМЯНСКОЙ ЗНАЧИМОСТИ 170

НОВАЯ И НОВЕЙШАЯ ИСТОРИЯ

АРАМ ГАСПАРЯН
ПРЕДПОСЫЛКИ СОЗДАНИЯ ГОСУДАРСТВА АБД АЛ-КАДИРА 196

РУБЕН САФРАСТЯН
УСИЛЕНИЕ АНТИХРИСТИАНСТВА В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ В 50-60-Х ГОДАХ 19-ГО ВЕКА 207

ДАВИД БАБАЯН
АДМИНИСТРАТИВНО-ТЕРРИТОРИАЛЬНАЯ ГЕОПОЛИТИКА РОССИЙСКОЙ ИМПЕРИИ В ЗАКАВКАЗЬЕ ЭВОЛЮЦИЯ, ОСНОВНЫЕ ЦЕЛИ И ИМПЕРАТИВЫ 222

НЕЛЛИ МИНАСЯН
ИДЕИ И ЦЕЛИ ПЕРВЫХ ПАНТЮРКИСТСКИХ ОРГАНИЗАЦИЙ . 248

КРИСТИНЕ МЕЛКОНЯН
ПРОБЛЕМА ГЕНОЦИДА АРМЯН В КОНТЕКСТЕ ФРАНКО-ТУРЕЦКИХ ОТНОШЕНИЙ В 1970-1980 ГГ. . 284

АЙК САМСОНЯН
РОЛЬ АРМИИ В ПОЛИТИЧЕСКОЙ ЖИЗНИ СИРИИ ОТ СИРИЙСКОГО БАТАЛЬОНА ДО СИРИЙСКОЙ АРАБСКОЙ АРМИИ 304

АРЦРУН ОВАННИСЯН
ИСПЫТАНИЕ ЩЕСТИ ПРАВИЛ ПРОРЫВА ПРОТИВОВОЗДУШНОЙ ОБОРОНЫ НА БЛИЖНЕМ ВОСТОКЕ 325

ИСТОЧНИКОВЕДЕНИЕ И ФИЛОЛОГИЯ

ТИГРАН МИКАЕЛЯН
ПЕРСИДКАЯ НАДПИСЬ НА АГАРАКАДЗОРСКОМ МОСТУ 338

КАРИНЕ АВЕТЯН
АРХИВНЫЕ ДОКУМЕНТЫ КАТОЛИКОСАТА О МАНУК БЕЕ И ЕГО СЕМЬЕ 349

CONTENTS

HISTORY OF THE ANCIENT AND MIDDLE AGES

MARIAM KHANZADYAN
EARLY STATE ASIATIC MODE OF PRODUCTION 14

ANNA AZIZYAN
TYPOLOGY OF SOME LOCAL GROUPS OF CERAMICS OF THE EARLY BRONZE PERIOD OF ARMENIA 44

ROBERT GHAZARYAN
THE WESTERN REGIONS OF THE ARMENIAN HIGHLAND ACCORDING TO THE 20TH-18TH CC BC KANEŠ SOURCES 69

HASMIK HMAYAKYAN
MAIN MYTHS RELATED TO THE LAKE VAN BASIN (PRELIMINARY ATTEMPT OF CLASSIFICATION AND TYPOLOGICAL DIFFERENTIATION OF MYTHOLOGICAL NARRATIVES) ... 87

RUSLAN TSAKANYAN
A SAMPLE OF MANIFESTATION OF ROYAL SUBORDINATION IN RELATIONSHIP BETWEEN ASSYRIA AND URARTU 104

ARTHUR MELIQYAN
THE ROCK RELIEF OF GOTARZES II IN SARPOL-E ZOHAB 127

HOVHANNES KHORIKYAN
THE STRUGGLE BETWEEN NESTORIANS AND MONOPHYSITES BARSAUMA'S ACTIVITY 159

VAHAN BAYBURDYAN
THE LEADING ROLE OF THE IRANIAN-ARMENIAN TRADE BOURGEOISIE IN THE XVII CENTURY PAN-ARMENIAN ISSUES 170

MODERN AND CONTEMPORARY HISTORY

ARAM GASPARYAN
THE PRECONDITIONS OF THE ESTABLISHMENT OF ABD EL-KADER'S STATE 196

RUBEN SAFRASTYAN
OSMANISCHES REICH DIE VERSTARKUNG DES ANTICHRISTENTUMS IN DEN 50-60ER JAHREN DES 19 JAHRHUNDERTS 207

DAVID BABAYAN
ADMINISTRATIVE AND TERRITORIAL GEOPOLITICS OF THE RUSSIAN EMPIRE IN TRANSCAUCASIA. EVOLUTION, THE MAIN IMPERATIVES 222

NELLI MINASYAN
THE IDEAS AND PURPOSES OF THE FIRST PAN-TURKIC ORGANIZATIONS 248

CHRISTINE MELKONYAN
THE QUESTION OF THE ARMENIAN GENOCIDE IN THE CONTEXT OF THE FRANCE - TURKEY RELATIONS IN 1970-1980s 284

HAYK SAMSONYAN
THE ROLE OF ARMY IN THE POLITICAL LIFE OF SYRIA. FROM THE SYRIAN BATTALION TO THE SYRIAN ARAB ARMY 304

ARTSRUN HOVHANNISYAN
THE SIX RULES OF BREAKING AIR DEFENSE TESTED IN THE MIDDLE EAST .. 325

SOURCE STUDY AND PHILOLOGY

TIGRAN MIKAYELYAN
THE PERSIAN INSCRIPTION OF AGARAKADZOR BRIDGE 338

KARINE AVETYAN
ARCHIVES OF THE CATHOLICOSATE CONCERNING MANUK BAY AND HIS FAMILY 349

ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ДРЕВНЯЯ И СРЕДНЕВЕКОВАЯ ИСТОРИЯ

HISTORY OF THE ANCIENT AND MIDDLE AGES

ՎԱՂ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՍԻԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ՄԱՐԻԱՄ ԽԱՆՉԱԴՅԱՆ

Բանալի բառեր՝ *մարքսիզմ, արտադրության ասիական եղանակ, օրիենտալիզմ, արևելյան դեսպոտիզմ, պետության ծագում, խորհրդային գաղափարախոսություն:*

«Արտադրության ասիական եղանակին» (այսուհետև՝ ԱԱԵ) մեր անդրադարձի պատճառն այդ կոնցեպտի՝ վաղ պետականությունների տեսական ուսումնասիրման կարևոր փուլ լինելն է: Այն քննարկել են ամբողջ XX դ. ընթացքում թե՛ խորհրդային, թե՛ արևմտյան պատմաբանները և սոցիոլոգները: Նրա որոշ դրույթներ Կարլ Վիտֆոգելի «հիդրավլիկ տեսության»[1] հիմքն են եղել, ինչպես նաև 1960-1990-ական թթ. ԱԱԵ քննարկումը «օդանցքի» պես մի բան դարձավ գաղափարախոսական աքցաններով սեղմված խորհրդային պատմաբանների համար, և այդ քննարկումները մեծապես նպաստեցին խորհրդային տեսական պատմագիտության զարգացմանը:

Այդ իսկ պատճառով վաղ պետականությունների տեսական հարցերն ուսումնասիրելիս անհրաժեշտ է անդրադառնալ ԱԱԵ տեսությանը՝ առանձնացնելով այն վուլգար մարքսիզմի կարծրացած տեսակետներից: Գրականության ահռելի ծավալի պատճառով անհնար է հանգամանորեն

[1] Կ. Վիտֆոգելը (1886-1998 թթ.) գերմանական և ամերիկյան չինագետ էր, սոցիոլոգ և պատմաբան, մարքսիստական հայեցակարգի հետևորդ: Իր գլխավոր աշխատության՝ ***«Oriental despotism. A comparative study of total power»*** (1957 թ.) մեջ նա առաջ է քաշում հիդրավլիկ պետությունների տեսությունը, որի համաձայն ոչեվրոպական հասարակարգերի հետամնացությունն ու դեսպոտիզմը բացատրվում են ոռոգովի երկրագործության համար անհրաժեշտ սոցիալական կառույցների ազդեցությամբ:

քննարկել այս հարցը մեկ հոդվածի շրջանակներում, սակայն մենք կփորձենք առանձնացնել ԱԱԵ կոնցեպտի այն դրույթները, որոնք կարևոր են վաղ պետականությունների ուսումնասիրման հարցում:

Արևելք-Արևմուտք դիխոտոմիան (երկատումը) հազարամյակների պատմություն ունի և քաղաքագիտական մտքում իր տեղն է գրավել դեռ Արիստոտելի «Պոլիտիկայից». ***«Տեղին է հույներին իշխել բարբարոսների վրա. բարբարոս և սպրուկ հասկացություններն իրենց բնույթով նույնն են»***[2]: Եվ, չնայած այս արտահայտությունն անհրաժեշտ է դիտարկել իր համատեքստում և Արիստոտելի բազմաթիվ վերապահումները հաշվի առնելով[3], այնուամենայնիվ այս միտումն իր հաստատուն տեղը գտավ նախ անտիկ աշխարհատեսության մեջ, իսկ հետագա դարաշրջաններում արևմտյան հասարակության ներսում ծավալված համակարգային փոփոխություններն էլ ավելի խիստ տարանջատում մտցրեցին դինամիկ զարգացող Արևմուտքի և «քընկոտ»[4] Արևելքի միջև: Ձևավորվեց արևմտաեվրոպական օրիենտալիզմը, որի շրջանակներում եվրոպական և ասիական պետական կառուցվածքների տեսական համադրությունն ու հակադրությունը վերածվեց ավանդույթի՝ ազդված օսմանյան տերության՝ չափից դուրս մոտիկ լինելու հանգամանքով: Միս ու արյուն առնելով Վերածննդի շրջանի քաղաքական տեսության առաջացմանը զուգընթաց՝ այն քայլ առ քայլ հասավ XVII-XVIII դարերին, և օսմանյան տերությանը վերաբերող գաղափարներն ու պատկերացումները

---

[2] **Аристотель** 1983: кн. 1, 1:5

[3] Մանրամասն տե՛ս **Рожанский** 1994

[4] «Золотая дремотная Азия» արտահայտությունը Ս. Եսենինի «Да! Теперь решено! Без возврата...» (1922 թ.) բանաստեղծության տողերից է: Էլ. Տարբերակը՝ http://www.museum-esenin.ru/tvorchestvo/453

տարածվեցին նաև Պարսկաստանի, Հնդկաստանի և Չինաստանի վրա[5]:

XVII-XVIII դդ. ճամփորդական նոթերը (Պ. Ռիկո, Ժ.Բ. Տավերնյե, Ժ. Շարդեն և այլք) էլ ավելի նպաստեցին Արևելքի՝ Արևմուտքից խիստ տարբերվող քաղաքակրթական միջավայր լինելու տեսակետի ամրապնդմանը: Հրապարակում հայտնվեց ***«արևելյան դեսպոտիզմ»***[6] ձևակերպումը, ինչն էլ դարձավ մուսուլմանական Արևելքի հիմնական բնորոշումը ֆրանսիական Լուսավորությունից սկսած[7]: Այդ միտումն է տեղ գտնում Շարլ Լուի Մոնթեսքյոյի աշխատություններում[8], ֆիզիոկրատների դպրոցի հիմնադիր ֆրանսիացի տնտեսագետ Ֆրանսուա Կենեի «Le Despotisme de la Chine» աշխատությունում[9], պատմական դինամիկայի առաջին տեսաբան Գ. Հեգելի պատմության փիլիսոփայության մեջ (***«Արևելքը պատմության մանկությունն է»***[10]) և արևմտաեվրոպական

---

[5] **Андерсон П.** 2010: 424-425

[6] Արևելքում դեսպոտիկ կառավարման մասին միտքը նոր ժամանակներում ի հայտ է գալիս ֆրանսիացի փիլիսոփա Ժան Բոդենի (1530-1596 թթ.) աշխատություններում. *«Սկզբնապես բոլոր պետությունները բռնությամբ ու նվաճումներով են ստեղծվել: Անարդար պատերազմների արդյունքում ի հայտ են եկել տերունական պետություններ, որտեղ միապետը զենքի ուժով յուրացրեց գույքը և փրկեց մարդկանց: Նա կառավարում է իր հպատակներին ինչպես հայրը ընտանիքին: Ահա այդպիսին են Արևելքի միապետությունները»:* Տե՛ս **Мухаев** 2016. Էլ.տարբերակը՝ https://studme.org/56782/politekonomiya/teoriya_gosudarstvennogo_suvereniteta_zhana_bodena

[7] **Мигаль** 2015: 154; **Годелье** 2007: 3-4, **Шубина** 2011: 208

[8] **Монтескье** 1955: 23, 30-32, 36-37

[9] Վերջերս արտահայտվել է տեսակետ, որ *«չինական դեսպոտիզմ»* արտահայտությունը Ֆ. Կենեի համար հնարավորություն էր տվյալ ժամանակի ֆրանսիական միապետական համակարգը ներկայացնելու համար, տե՛ս **Кондакова** 2014.

[10] **Гегель** 1993: 147-149 «Всемирная история направляется с Востока на Запад, так как Европа есть безусловно конец всемирной истории, а Азия ее начало... Это - детский возраст истории» Տե՛ս նաև **Гобозов** 2017: 12

բազմաթիվ այլ պատմաբանների, սոցիոլոգների ու փիլիսոփաների աշխատություններում[11]:

Արևելքի տարբերվող հասարակական և տնտեսական զարգացմանը 1853 թվականին «New-York Herald Tribune» ամսագրում անդրադառնում է Կ. Մարքսը: «*The British Rule in India*» հոդվածում[12] նա քննարկում է արևելյան հասարակություններին բնորոշ «դեսպոտիզմը»՝ պայմանավորելով դա կլիմայական առանձնահատկություններով, աշխարհագրական միջավայրով ու արհեստական ոռոգման ցանց ստեղծելու և զանգվածային հասարակական աշխատանքներով պահպանելու անհրաժեշտությամբ: Այդ կացութաձևն, ըստ Կ. Մարքսի, գոյություն է ունեցել անհիշելի ժամանակներից և էական որևէ փոփոխման չի ենթարկվել:

1859 թ. Կ. Մարքսն իր «Քաղաքական տնտեսագիտության քննադատությունը» աշխատությունում տալիս է հետևյալ ձևակերպումը. «Ընդհանուր առմամբ՝ արտադրության ***ասիական***, անտիկ, ֆեոդալական և ժամանակակից բուրժուական եղանակները կարող են դիտարկվել որպես հասարակության տնտեսական ձևավորման ***պրոգրեսիվ*** փուլեր»[13]: Առավել հանգամանորեն ԱԱԵ կոնցեպտին Կ. Մարքսն անդրադառնում է իր «Արտադրության կապիտալիստական եղանակին նախորդող ձևերը» աշխատության[14] մեջ և բազմաթիվ նամակներում[15], որոնցում քննարկում է Լյուիս Մորգանի և այլ ազգագրագետների աշխատությու-

---

[11] **Васильев** 1982: 60; 1997: 93

[12] Տե՛ս էլ. տարբերակը անգլերեն՝ https://www.marxists.org/archive/marx/works/1853/06/25.htm, ռուսերեն՝ http: /lugovoy-k.narod.ru/marx/09/22.htm

[13] **Маркс** 1949: 8

[14] **Маркс** 1980: 267-270.

[15] **Millos** 1997: 5.

ները, Ռուսաստանի և Արևելյան Եվրոպայի ագրարային հարցերը[16]:

ԱԱԵ կոնցեպտը Կ. Մարքսը դիտարկում է իր արտադրության եղանակների տեսության հիմքի վրա: «Արտադրության եղանակի կոնցեպտը Կ. Մարքսի տեսության առանցքային կոնցեպտն է, կոնցեպտ, որը ձևավորվում է՝ սկսած «Գերմանական գաղափարախոսությունից» (1846 թ.): Արտադրության «եղանակը»՝ դա մատերիալիստական «կարգի» («maniere») և սոցիալական «կարգի» («maniere») համակցությունն է»[17]: Մատերիալիստական կարգն իր մեջ է ամփոփում հասարակությունը որոշակի դարաշրջանում բնորոշող նյութական և ինտելեկտուալ արտադրողական ուժերը: Սոցիալական կարգը հարաբերությունների ամբողջությունն է, որով մարդիկ ներազդում են բնության վրա՝ իրենց գոյության նյութական պայմաններն արտադրելու և բաշխելու համար: Այս հարաբերություններն է Կ. Մարքսն անվանում հասարակական արտադրական հարաբերություններ, որոնք պատմականորեն հաջորդում են մեկը մյուսին՝ համապատասխանելով արտադրողական ուժերի որոշակի մակարդակներին, իսկ սոցիալական կազմավորումները («institutions») (ընտանիքի, կրոնի, կառավարման և այլնի ձևերը) իրենց հերթին համապատասխանում են արտադրության տարբեր ձևերին և նրանց հետ միասին կազմում են յուրահատուկ հասարակական ամբողջություններ, որոնք նա անվանում է հասարակական և տնտեսական ֆորմացիաներ[18]: Այլ կերպ ասած՝ արտադրությունը որոշակի հասարակական ձևում ոչ այլ ինչ է քան արտադրության որոշակի ձև (ստրկատիրական, ավատատիրական և այլն)[19]:

---

[16] **Тер-Акопян** 1973: 217; **Годелье** 2007: 5.
[17] **Годелье** 2007: 4
[18] **Նույն տեղում**, 3:
[19] **Семенов** 2003: 2.4.2 էլ. տարբ. https://scepsis.net/library/id_1079.html

ԱԱԵ հիմքում, ըստ Կ. Մարքսի, արևելյան համայնքն է և ***համայնական հողային սեփականությունը***: «*Հողն է այն մեծ լաբորատորիան, զինանոցը, որն ապահովում է և՛ աշխատանքի միջոցներով, և՛ աշխատանքի նյութով, և՛ կացարանով, այսինքն՝ կոլեկտիվի բազիսն է*»[20]: Այս համայնական հողի սեփականությունը («***սեփականության ասիական ձևը***») Կ. Մարքսը համարում է ***ի սկզբանե***, բնական ճանապարհով ձևավորված համայնքերին (տոհմերի վերածված ընտանիքներ կամ նմ.) հատուկ սեփականության ձև[21]: Մանր համայնքները միավորող ընդհանուր ուժը հանդես է գալիս որպես գերագույն սեփականատեր կամ միակ սեփականատեր, որպես հայր, որը տրամադրում է հողակտորն առանձին մարդուն այն համայնքի միջոցով, որին այդ մարդը պատկանում է: Որպես միավորող ընդհանուր ուժ կարող է հանդես գալ ամենազդեցիկ ընտանիքի հայրը, կամ էլ այդ դերը կարող են ստանձնել մի քանի ընտանիքների գլխավորները: Ըստ այդմ այդ հասարակության ձևը կլինի կամ ավելի դեսպոտիկ, կամ ավելի դեմոկրատական[22]:

Դեսպոտիկ կառավարումն այս պարագայում ավելի բարձր սկզբունք է, և ընդհանուր միջավայրը, ասիական ժողովուրդների տնտեսության մեջ մեծ նշանակություն ունեցող ջրանցքները, կապի միջոցները և այլն հենց այդ կառավարման արդյունքն են, իսկ քաղաքներն այս դեպքում առաջանում են կա՛մ արտաքին առևտրի համար բարենպաստ վայրերում, կա՛մ էլ այն վայրերում, որտեղ պետության ղեկավարը և իր պաշտոնյաներն օգտագործում էին իրենց եկամուտը (հավելյալ արդյունքը)՝ համայնականների աշխատանքը փոխհատուցելու համար[23]:

---

[20] **Маркс** 1980՝ 468

[21] **Նույն տեղում**, 467:

[22] **Նույն տեղում**, 470:

[23] **Նույն տեղում**:

Փորձենք ի մի բերել մարքսյան ԱԱԵ կոնցեպտի հիմնական դրույթները.

1. Դա պատմության վաղնջագույն շրջանից գոյություն ունեցող համայնքն է, և **«ասիական»** ձևակերպումն այստեղ **պայմանական բնույթ** է կրում. այդպիսին են եղել ի սկզբանե բոլոր մայրցամաքներում ձևավորված համայնքները[24]: Կ. Մարքսի համար այդքան էլ պարզ չէին հինարևելյան սոցիոպատմական օրգանիզմներում տիրող սոցիալ-տնտեսական հարաբերությունները, բայց նա չէր կասկածում, որ դրանք նույնատիպ են և որակապես տարբերվում են թե՛ անտիկ, թե՛ ավատատիրական հարաբերություններից: Այդ իսկ պատճառով ասիական տնտեսական ֆորմացիան նա համարում է դասակարգային հասարակության առաջին պատմական ձևը[25]:

2. Պատմական տեսակետից այս առաջին համայնքներում Կ. Մարքսը չի բացառում իշխանության սակրալ բնույթը. *«իրական յուրացումը աշխատանքի պրոցեսի միջոցով տեղի է ունենում այնպիսի նախադրյալների արդյունքում, որոնք աշխատանքի արդյունք չեն, բայց ընկալվում են որպես դրա բնական կամ **աստվածային** նախադրյալներ»*[26]:

3. ԱԱԵ պարագայում **չկա մասնավոր սեփականություն**, այլ կա հողի համայնական՝ պետական, իմա՝ թագավորական սեփականություն: Եվ հողն է արտադրության գլխավոր միջոցը:

4. ԱԱԵ-ն պայմանավորված է արևելյան քաղաքակրթությունների համար կենսական նշանակություն ունեցող ոռոգման ցանցեր ստեղծելու և պահպանելու անհրաժեշտությամբ:

5. Կ. Մարքսը գտնում է, որ ասիական հասարակու-

---

[24] **Гарушянц** 1966: 87, **Тер-Акопян** 1973. 168
[25] **Семенов** 2003: 2.4.3. Էլ. տարբերակը՝ https://scepsis.net/library/id_1079.html
[26] **Маркс** 1980: 468

թյուններում պետությունը և՛ հողատերն է, և՛ սուվերենը, և այս դեպքում ***հարկն ու ռենտան համընկնում են***, կամ, ավելի ճիշտ ասած՝ չկա հարկ, որը տարբերվի հողային ռենտայի այդ ձևից: Պետությունն է հողի գերագույն սեփականատերը, չկա մասնավոր սեփականություն, սակայն կա հողի ինչպես մասնավոր, այնպես էլ համայնական տիրապետում[27]: Այլ կերպ ասած՝ տիրող դասակարգը յուրացնում էր հավելյալ աշխատանքի արդյունքները, և այդ յուրացումը նման է բոլոր ագրարային կամ քաղաքային համայնքների կողմից պետությանը վճարվող հարկին[28]:

Հատկանշական է, որ 1850-ական թթ. հետո Կ. Մարքսն այլևս չի հիշատակում *«արտադրության ասիական եղանակ»*[29] արտահայտությունը[30]: Նա տվեց ընդամենը ուսումնասիրման աշխատանքային ուրվագիծը, սակայն չստեղծեց ավարտուն հայեցակարգ[31], քանի որ նրա ուշադրության կենտրոնում առհասարակ կապիտալիստական արտադրության ձևերն էին[32], և ըստ որոշ ուսումնասիրողների՝ Կ.

---

[27] **Маркс** 1962 354

[28] **Milios** 1999

[29] Նշենք, սակայն, որ նրա աշխատություններում հանդիպում են ***«ասիական ֆորմացիա», «ասիական հասարակություն», «ասիական համայնք», «գյուղական համայնքների համակարգ»*** արտահայտությունները, որոնք երբեմն հանգեցնում են այդ հասկացությունների արտահամատեքստային նույնականացմանը, տե՛ս **Даниленко** 2018· 42

[30] Ըստ Ն. Տեր-Հակոբյանի՝ հետագա աշխատություններում ԱԱԵ ձևակերպման բացակայությունը պայմանավորված է նրանով, որ Կ. Մարքսը 1868 թ. արդեն ծանոթացել էր Գ. Մաուրերի աշխատանքներին, որոնցում գտել էր իր տեսության հաստատումը. «Հնարավոր է, որ Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը հրաժարվել են եզրույթից՝ դրա աշխարհագրական բնույթից ելնելով, ինչպես, օրինակ, նույն կերպ հրաժարվել են «արտադրության անտիկ եղանակ» եզրույթից: Կամ կարելի է ենթադրել, որ ԱԱԵ եզրույթը օգտագործվում է միայն տնտեսագիտական երկերում»: Տե՛ս **Тер-Акопян** 1973· 203, примечание №2

[31] **Гарушянц** 1966 87

[32] **Milios** 1997. 3

Մարքսի կարծիքն այս հարցում մնաց անորոշ ու հակասական[33]:

Կ. Մարքսի մահից հետո Ֆ. Էնգելսը հրատարակեց երկու աշխատություն, որտեղ անդրադարձավ հասարակության պատմական ձևերին. *«Անտի-Դյուրինգ»* (1878 թ.) և *«Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը»* (1884 թ.) ուսումնասիրությունները: «Անտի-Դյուրինգ»-ում կա ԱԱԵ կոնցեպտի դրույթներից մեկի հիշատակումը (դեսպոտիաների և արհեստական ոռոգման փոխկապակցվածության համատեքստում)[34], սակայն երկրորդ աշխատությունում որևէ անդրադարձ այդ կոնցեպտին չկա: Այս հանգամանքը տեղիք է տվել կասկածելու, որ Ֆ. Էնգելսը հրաժարվել է այդ տեսակետից, սակայն Ն. Տեր-Հակոբյանը գտնում է, որ այդ աշխատությունում Ֆ. Էնգելսն առհասարակ իր առջև հասարակական ֆորմացիաները և արտադրության ձևերը քննարկելու նպատակ չի դրել[35]: Ե՛վ խորհրդային, և՛ արևմտյան տեսակետների հանգամանալից վերլուծությամբ այս հարցը քննարկված է Վ. Լինշայի 1995թ. լույս տեսած «Էնգելսի հանելուկը» հոդվածում[36]:

Ասիական եղանակի որոշ քննարկումներ և զուգահեռներ ռուսական հողագործական համայնքի հետ կարելի է գտնել Ա. Գերցենի[37] և Գ. Պլեխանովի մոտ: Վերջինս գտնում էր, որ ի տարբերություն արևմտաեվրոպականի՝ ռուսական գյուղական համայնքն է ռուս գյուղացու և հողի փոխ-

---

[33] **Sofri** 1969: 15, **Васильев** 1997: 94

[34] **Энгельс** 1931: 109. «Многочисленные деспотии, поднимавшиеся и падавшие в Персии и Индии, все отлично помнили свою первейшую обязанность. заботиться об орошении долин, без которого в этих странах невозможно земледелие»

[35] **Тер-Акопян** 1973: 70, 168.

[36] **Лынша** 1995

[37] **Герцен** 1858 III Էլ.տարբերակը՝ http://gertsen.hit-info.ru/gertsen/public/russie-vieux-monde/russie-vieux-monde-staryj-mir-i-rossiya.htm

հարաբերությունների հիմքում, ինչի շնորհիվ հնարավոր է խուսափել կապիտալիզմից, և հողի կոլեկտիվ տիրապետումը կարող է դառնալ սկզբնակետ սոցիալիստական սկզբունքներով տնտեսական կյանքի բոլոր կողմերը կազմակերպելու համար[38]:

Եթե մինչև 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունը ԱԱԵ կոնցեպտի քննարկումը հիմնականում տեսական բնույթ էր կրում, ապա խորհրդային վարչակարգի հաստատման և հետագա գաղափարախոսական պայքարի պայմաններում այն անհարկի միտումնավորություն ձեռք բերեց: Կ. Մարքսի՝ ԱԱԵ կոնցեպտի վերջնական ամփոփ ձևակերպում չտալը, նրա հայացքների որոշակի փոփոխությունը 1850-ականներից հետո և Վ. Լենինի՝ ընդամենը երկու արտահայտությամբ այս խնդրին անդրադառնալը ստեղծեցին լայն դաշտ գաղափարական սպեկուլյացիաների և սուր քաղաքական պայքարի համար: «Argumentum ad verecundiam»-ը վերածվեց բանավեճի կարևոր դրույթի, և առաջին պլան մղվեցին սահմանափակող դեր ունեցող «հեղինակության վկայակոչումները»՝ դրական կամ բացասական իմաստով[39]: ԱԱԵ կոնցեպտը 1927 թվականին հայտնվեց բանավեճերի կիզակետում Չինաստանում հեղափոխության հետագա զարգացման քննարկումների համատեքստում: Կ. Ռադեկի՝ Կոմինտերնում արտահայտված տեսակետին[40] «Правда»

[38] **Плеханов** 1956: 133

[39] **Dunn** 1982: 7-8. «1. **arguments from authority**, subddivisible into a) *positive arguments from positive authority* (Marx himself described the Asiatic mode of production as one of the progressive epochs in economic formation of society, and we are bound by what he said, b) *negative arguments from positive authority*, either direct (Lenin specifically rejected the asiatic mode of production, and we're bound by it regardless of what Marx said) and c) *negative arguments from negative authority* (Trotsky (or Bukharin or Kautsky or some other recognized deviationis) accepted the Asiatic mode of production; therefore we're bound to reject it; 2 **arguments from pure Marxist theory**, 3 **political arguments**»

[40] Կ. Ռադեկը համարում էր, որ Չինաստանը 1927 թ. նախօրեին ավելի շուտ բուրժուական բնույթ ուներ, քան թե ավատատիրական: Ավատա

թերթի 1927թ. մայիսմեկյան համարում պատասխանեց Կոմինտերնում ԱՄՆ-ի կոմկուսի ներկայացուցիչ Ջոն Պոպերը՝ Ռադեկի հայացքներին հակադրելով մարքսյան «արտադրության ասիական եղանակը»: Այս հոդվածն առաջացրեց բուռն բանավեճ[41] որի նպատակը մեկն էր. որոշել, թե ժամանակակից չինական հասարակությունը զարգացման ո՞ր փուլում է գտնվում և, համապատասխանաբար, նրա ո՞ր խավերն են օբյեկտիվորեն նպաստում հեղափոխությանը, իսկ որոնք՝ ոչ[42]: Գաղափարախոսական հրամայականները, մասնագետ-պատմաբանների սուր պակասը և քաղաքական նպատակահարմարությունը հանգեցրին նրան, որ ընդունված բնութագրումը դոկտրինալ երանգավորում ձեռք բերեց. նախահեղափախական Չինաստանը (տարածումով ամբողջ Արևելքի վրա) բնութագրվեց որպես դասակարգային ավատատիրական հասարակություն[43]:

1920-1930-ական թվականները ԱԱԵ կոնցեպտի վերաբերյալ բանավեճի առաջին փուլն էին[44]: Դրան գումարվեց ֆորմացիաների բանավեճը. 1933 թ. Վ. Ստրուվեն առաջ քաշեց Հին Արևելքի ստրկատիրական հայեցակարգը՝ փորձելով այն հիմնավորել Միջագետքի, Եգիպտոսի և Խեթական տերության աղբյուրներով[45]: Հինարևելյան հասարակությունները Վ. Ստրուվեն ներկայացրեց որպես ստրկատիրական՝ ստրուկներին դասելով նաև ոչ ստրուկ, բայց

տիրական նա համարում էր Չինաստանի հին շրջանը, մանրամասն տե՛ս **Никифоров** 1970. 208-209.

[41] **Никифоров** 1970: 209-211; **Тер-Акопян** 1973: 172.

[42] **Крих** 2015: 133.

[43] Նաև քննարկվող հարցերից էին՝ առհասարակ ԱԱԵ գոյությունը և ԱԱԵ-ն մարքսիզմի դասականների աշխատություններում: Մանրամասն տե՛ս **Никифоров** 1966: 10-13.

[44] **Годес** 1931.

[45] **Струве** 1934, **Формозов** 2006, ГАИМК как центр советской исторической мысли էլ.տարբերակը՝ https://arheologija.ru/gaimk-kak-tsentr-sovetskoy-istoricheskoy-mysli-v-1932-1934-godah

շահագործվող լայն զանգվածներ, և ստեղծեց, այսպես կոչված, «пятичленка»-ն՝ հինգ սոցիալ-տնտեսական ֆորմացիաների (***նախնադարյան-համայնական, ստրկատիրական, ավատատիրական, կապիտալիստական, կոմունիստական***) հարացույցը: Արևելյանն ու անտիկն այս սխեմայում միավորվեցին մեկ՝ ստրկատիրական ֆորմացիայի մեջ: Եվ եթե 1930-ականների սկզբում բանավեճեր դեռ ընթանում էին, ապա ՀԿ(բ)Կ պատմության համառոտ կուրսում հին աշխարհը որպես ստրկատիրական ֆորմացիա ներկայացնելուց հետո այլընտրանքային կարծիքներն առհասարակ դուրս հանվեցին գիտական քննարկման հարթությունից:[46] Նույն ճակատագրին արժանացավ ԱԱԵ կոնցեպտը[47]:

Խնդիրը չսահմանափակվեց միայն Խորհրդային Միության սահմաններով: Երբ 1957 թ. խորհրդային հասարակության բարեկամ համարվող Կ. Վիտֆոգելը խորհրդային հասարակությունը դասեց արևելյան դեսպոտիաների թվին, նրա հիմնարար աշխատությունը նույնպես ընկավ արգելքի տակ[48]:

Բանավեճի արգելքից հետո խորհրդային պատմաբաններն ու փիլիսոփաները գնացին հինարևելյան և անտիկ ֆորմացիաների միջև տարբերությունների մերժման ճանապարհով: Ավելին, ավատատիրության ձևավորումը որևէ կերպ չէր համապատասխանում Ֆ. Էնգելսի եզրահանգումներին, քանի որ Արևմտյան Հռոմեական կայսրության վերջին շրջափուլը արտադրողական ուժերի անկման շրջան էր, այլ ոչ թե վերելքի, և Ֆ. Էնգելսի դիպուկ բնորոշմամբ՝ ավատատիրությունը ստեղծեցին գերմանացիներն հենց այն պատճառով, որ բարբարոս էին: Խորհրդային պատմաբան-

---

[46] **Неронова** 1992: 111.

[47] **Ким** 2001 Էլ.տարբերակը՝ http://cheloveknauka.com/problema-aziatskogo-sposoba-proizvodstva-v-sovetskoy-istoriografii-20-e-gg-nachalo-90-h-gg

[48] **Качановский** 1971.6, **Галеев** 2011: 156

ները փորձեցին այս անհամապատասխանությունները բացատրել նոր սխեմայով, ըստ որի նախնադարյան հասարակարգը կարող է զարգացման երեք իրավահավասար ճյուղեր տալ՝ ասիական, անտիկ և ավատատիրական, և երեքն էլ ոչ թե ինքնուրույն ու հաջորդաբար փոփոխվող ֆորմացիաներ են, այլ միևնույն, իմա՛ երկրորդական ֆորմացիայի իրավահավասար վերափոխություններ[49]:

ԱԱԵ կոնցեպտի բանավեճի երկրորդ փուլը (1960-ական թթ.) անհնար կլիներ առանց «ձնհալի»: Այս փուլում առանցքային թեման ԱԱԵ՝ ֆորմացիաների հարացույցում տեղի ճշգրտումն էր. արդյո՞ք ԱԱԵ-ն պետք է տեղադրել առաջնային (նախադասակարգային) ֆորմացիայի և երկրորդական (դասակարգային) փուլի միջև որպես միջանկյալ փուլ, որից սոցիոպատմական էվոլյուցիան շարժվում է դեպի ստրկատիրություն, ստրկատիրությունից էլ դեպի ավատատիրություն, թե՞ ԱԱԵ-ն պետք է համարել ինքնուրույն երևույթ, որը զուգահեռաբար գոյություն ունի ստրկատիրության և ավատատիրության հետ մեկտեղ: ԱԱԵ կողմնակիցների մեծ մասը պաշտպանում էր առաջին տարբերակը[50]:

Բանավեճին մասնակցեցին նաև ֆրանսիացի մարքսիստներ Մ. Գոդելյեն և Ժ. Սյուրե-Կանալը: Երկուսն էլ գտնում էին, որ պատմությանը հայտնի հասարակությունների մեծամասնությունում առկա է արտադրության ասիական եղանակը որպես *միջանկյալ փուլ*, և այդ միջանկյալ փուլում շահագործման երկու հիմնական տեսակները (ստրկատիրական և ավատատիրական) գոյություն ունեին զուգահեռաբար[51]: Մ. Գոդելյեն ԱԱԵ-ն համարում էր վերջին

---

[49] **Семенов,** Философия истории 2.4.8. Է.տարբերակը՝ https. /sceptis.net/library/id_1079.html, **Семенов** 1998 215-217

[50] **Васильев, Стучевский** 1966: 86.

[51] **Նույն տեղում:**

ոչ դասակարգային և միևնույն ժամանակ առաջին դասակարգային հասարակարգը[52]: Նախնադարյան-համայնական կարգերի քայքայման պարագայում առաջանում են դասակարգային հակասությունների երկու ճյուղեր, և հետագա ընթացքն արդյունքում հանգեցնում է նրանցից մեկի (ստրկատիրականի կամ ավատատիրականի) հաղթանակին[53]:

1960-ական թթ. ԱԱԵ բանավեճերի մյուս թեմաներն էին. ԱԱԵ կոնցեպտի մարքսյան տեսակետների քննարկումը[54], հողագործական համայնքի և հինարևելյան դեսպոտիայի՝ ԱԱԵ, ավատատիրության և ստրկատիրության պայմաններում գործարկման հարցերը, Հին Արևելքում սեփականության բնույթի, ԱԱԵ կայացման մեջ աշխարհագրական գործոնի դերի, ԱԱԵ ֆորմացիայի՝ ստրկատիրական ֆորմացիային նույնացնելու սխալականությունը[55], հինարևելյան կարգերի, այսպես կոչված, «լճացումը»[56] և այլն: Բանավեճի արդյունքում 1966 թվականին լույս տեսավ «Общее и особенное в историческом развитии стран Востока» ժողովածուն՝ երեք տասնյակից ավելի հոդվածներով[57]:

Ցավոք, 1960-ականների վերջում ԱԱԵ կոնցեպտի մասին բանավեճը նույնպես արհեստականորեն դադարեցվեց, և նույնիսկ պաշտոնական տեսակետի դեմ հանդես եկողների հասցեին սպառնալիքներ հնչեցին[58]: Նոր թափ այս բանավեճը խորհրդային պատմագիտության մեջ սկսեց հավաքել 1970-ականների վերջերից՝ դառնալով խորհրդային արևելագիտության առավել ազդեցիկ ուղղություններից

---

[52] **Годелье** 1965. 102
[53] **Васильев, Стучевский** 1966. 87
[54] **Варга** 1965
[55] **Гарушянц** 1966 88
[56] **Тер-Акопян** 1973. 167
[57] **Ким** (отв ред.) 1966
[58] **Семенов** 2003 2 4 11

մեկը[59], իսկ ԽՍՀՄ փլուզումը վերջնականապես վերացրեց գաղափարախոսական բոլոր արգելքներն այս հարցում:

1980-2000-ական թվականների գիտական բանավեճում (ցավոք, չենք կարող մեզ թույլ տալ ներկայացնել տեսակետների մեծ մասը, այդ իսկ պատճառով կսահմանափակվենք առավել կարևոր կարծիքներով) կարևոր ներդրում ունեցան Յու. Սեմյոնովը, Լ. Վասիլևը, Լ. Ալաևը, Ա. Կորոտաևը:

Առաջին հերթին պետք է նշել «ծնհալի» ժամանակաշրջանի բանավեճերի ակտիվ մասնակից Յու. Սեմյոնովի մեծ ավանդը ԱԱԵ կոնցեպտի զարգացման հարցում: Նա դեռևս խորհրդային տարիներին առաջարկեց ԱԱԵ-ն վերանվանել ***«արտադրության պոլիտար եղանակ»***՝ շեշտադրելով այս եղանակի համար առանցքային համադասակարգային մասնավոր սեփականությունը: Եվ քանի որ տիրող դասակարգը համընկնում է պետական ապարատի կորիզի հետ, ապա ճիշտ կլինի այն անվանել ոչ թե ասիական (Յու. Սեմյոնովը նշում է, որ այն գերակայող է եղել ոչ միայն Ասիայում, այլև վաղ Եվրոպայում, Աֆրիկայում, նախակոլումբոսյան Ամերիկայում), այլ արտադրության ***պոլիտար*** եղանակ (հուն. πολιτεία՝ պետություն բառից) կամ ***պոլիտարիզմ***[60]: Իր հետագա աշխատանքներում էլ Յու. Սեմյոնովը շարունակեց պաշտպանել պատմության մարքսյան՝ մատերիալիստական ընկալումը, գտնելով, որ նույնիսկ Կ. Մարքսի այս կամ այն գաղափարի անճշտությունը չի ազդում պատմության մատերիալիստական հայեցակարգի կորիզի վրա[61]:

Լ. Վասիլևը, ընդգծելով Արևելքի վաղ պետականությունների առաջացման առանձնահատկությունները՝ առաջարկեց ԱԱԵ կոնցեպտը փոխարինել «***արտադրության պե-***

[59] **Коротаев** 1995: 77 (примечание 1)
[60] **Семенов** 2019: 302
[61] **Семенов** 1998: 195

տական եղանակ»[62] ձևակերպմամբ: Քննարկելով Արևելքում մասնավոր սեփականության բացակայության մարքսյան թեզը, Լ. Վասիլևը որպես արևելյան մոդելի ***համակարգա-ստեղծ գործոն*** առաջարկում է դիտարկել ռենտա-հարկով արտահայտվող ***ռեդիստրիբուցիան***[63]: Նման հարաբերությունների հետևանքն է Արևելքի իրավական համակարգը իր հրապարակային-իրավական նորմերի (публично-правовые нормы) գերակայությամբ և մասնավոր սեփականատիրոջ ունեցվածքի պահպանման խիստ իրավական երաշխիքների բացակայությամբ, համակարգ, որը միտված է պետության շահերի պաշտպանությանը՝ պաշտոնյայի վերահսկող (և չարաշահող) գործառույթներով[64]: Արևելյան այս մոդելը նա անվանում է ***«власть-собственность»***[65] շարունակելով իշխանության սակրալ բնույթի մասին մարքսյան թեզը[66]: ԱԱԵ կոնցեպտը քննարկվում է նաև 1988 թ. լույս տեսած «Что такое азиатский способ производства» հոդվածում[67], և արդեն իր «История Востока» երկհատորյակում նա, դրական գնահատելով մարքսյան ԱԱԵ կոնցեպտը և գտնելով, որ Կ. Մարքսը ճիշտ է ընկալել դասական արևել-

[62] **Васильев** 1982: 60

[63] **Նույն տեղում**, 90:

[64] **Նույն տեղում**, 94:

[65] **Васильев** 2007: 306.

[66] **Նույն տեղում**: «Сакральный лидер протогосударства оказывается центром политической и экономической структуры, которая не знакома еще с частной собственностью. В силу этого на плечи власти ложится не столько право, сколько обязанность взять на себя руководство усложняющимся хозяйством большого и имеющего тенденцию к разрастанию и усложнению коллектива. Все имущество и все хозяйство протогосударства обретает в силу этого (как и в силу традиционного права руководителя земледельческого коллектива на редистрибуцию его ресурсов) облик собственности правителя. Возникает феномен власти-собственности. высшая власть рождает верховную собственность носителя этой власти с его аппаратом администрации»

[67] **Васильев** 1988 Էլ.տարբերակը՝ http://ignorik.ru/docs/vasileev-l-s-chto-takoe-aziatskii-sposob-proizvodstva-naro.html

յան կառուցվածքի հիմնական գծերը[68], առանձնացնում է մագիստրալ զարգացման երկու ուղիներ, որոնց առանցքային տարբերությունը մասնավոր սեփականության հարցն է. **առաջինը**՝ հնագույնը (ex Oriente lux)՝ արևելյանն է իր վաղնջագույն քաղաքակրթական-ուրբանիստական հզոր ներդրումով և պետության մակրոստրուկտուրան կանխորոշող համայնքով[69], **երկրորդը**՝ արևմտյանը իր «անտիկ շրջան - ավատատիրություն - կապիտալիզմ» (ընդ որում Լ. Վասիլևը համարում է, որ կապիտալիզմը անտիկ շրջանի էվոլյուցիայի պոտենցիան է) շղթայով. «Եթե մի կառուցվածքը հանգեցնում է կապիտալիստական հարաբերությունների՝ նրանում գոյություն ունեցող էվոլյուցիայի պոտենցիաների շնորհիվ, իսկ մյուսը՝ տարբերվողը, նույն հանգամանքների (այլ պոտենցիաների) բերումով կապիտալիզմի հանգեցնել չի կարող, ապա այս ամենն առաջացնում է ոչ միայն կառուցվածքների և զարգացման ուղիների տարբերություն, այլ հենց վերը նշված դիխոտոմիան: Այլ կերպ ասած՝ Արևելք-Արևմուտք հակադրությունը բարձրանում է սիմվոլի մակարդակի»[70]:

Լ. Ալաևը[71] եզրահանգում է, որ մեկ ֆորմացիայի պատկանող հասարակությունների շղթայում դասական ավատատիրության ձևավորումը Արևմտյան Եվրոպայում հնարավոր դարձավ այն պատճառով, որ արևմտաեվրոպական հասարակությունն ի տարբերություն արևելյանի, ներքին «շեղում» ուներ, այսինքն՝ այդպես էլ չկարողացավ մինչև վերջ հաղթահարել անտիկ հարաբերությունների, մասնավորապես հռոմեական իրավունքի ժառանգությունը[72]:

---

[68] **Васильев** 2005. 29

[69] **Նույն տեղում**, 13:

[70] **Նույն տեղում**, 16-17: Տե՛ս նաև **Годелье** 2007. 12-13

[71] **Алаев** 1987, **Алаев** 1990

[72] **Алаев** 1987. 78

Ա. Կորոտաևը վերապահությամբ է մոտենում Արևելք-Արևմուտք կտրուկ հակադրությանը և զարգացման անտիկ մոդելը որպես «մուտացիա» և պատահականություն ներկայացնելուն՝ համարելով, որ սոցիալ-քաղաքական էվոլյուցիայի միագիծ մոդելները (թե՛ հետխորհրդային, թե՛ արևմտյան) չեն կարող սպառիչ կերպով արտացոլել վաղ պոլիտիաների ամբողջ սպեկտրը[73]: Հետագայում Ա. Կորոտաևի՝ աշխարհագրական առանձնահատուկ պայմաններում ապրող հանրույթների սոցիալական էվոլյուցիայի առանձնահատկությունների վերհանման միտումը կշարունակեն Ն. Կրադինը և Ա. Խազանովը՝ դիտարկելով քոչվորական կազմավորումները որպես վաղ պետականության ձևեր[74]: Ա. Կորոտաևը ԱԱԵ կոնցեպտը համարում է արհեստական և աննշան մոդիֆիկացիա մարքսյան հիմնական միագիծ հայեցակարգի (նախնադարից դեպի կոմունիզմ) շրջանակներում[75]:

ԱԱԵ կոնցեպտի քննարկումը տեղ է գտել նաև Վ. Իլյուշեչկինի (ֆորմացիաների նոր՝ քառանդամ տեսության հեղինակի)[76], Ռ. Նուրեևի[77], Ա. Տարասովի[78] և շատ ուրիշների աշխատություններում:

ԱԱԵ կոնցեպտի հետխորհրդային քննարկումները չսահմանափակվեցին ռուսաստանյան պատմագիտությամբ.

---

[73] **Коротаев** 1995: 78-79
[74] **Хазанов** 2002; **Крадин** 2000.
[75] **Коротаев** 2003: 128
[76] **Илюшечкин** 1986, 1996.
[77] **Нуреев** 1979, 1993.
[78] **Тарасов** 1996. Էլ.տարբերակը՝ https://scepsis.net/library/id_102.html: Ա. Տարասովը «ասիական» և «անտիկ» արտադրածևերը միավորում է մեկ ընդհանուր՝ «նախամեքենայական արտադրության» (домашинное производство)՝ տարբերակելով միայն արտադրության միջոցների նկատմամբ սեփականության ձևերը, մասնավոր՝ Արևմուտքում, պետական (սակրալ կամ արքայական)՝ Արևելքում: Մարքսյան ԱԱԵ կոնցեպտը Տարասովը համարում է **էոատիզմ**:

XX դարի վերջին և XXI դարում ԱԱԵ կոնցեպտը քննարկվել է նաև բազմաթիվ արևմտյան պատմաբանների և սոցիոլոգների աշխատություններում[79]: Քննարկվող թեմաների շարքում են ԱԱԵ տեսական առանձնահատկությունները, մասնավորապես՝ ԱԱԵ կոնցեպտի հիմնարար կառուցվածքային առանձնահատկությունների և մարքսիզմի հետազոտական մեկնաբանությունների անհամապատասխանությունը[80], նախակապիտալիստական հասարակարգերի սոցիալական և տնտեսական առանձնահատկությունները, վաղ հասարակությունների գյուղացիական բնակչության շահագործման ձևերը, ստրուկների կարգավիճակային հարցերը, ֆորմացիաների ներսում տեղի ունեցող որակական փոփոխությունները և այլն[81]:

Իր ուսումնասիրությունները շարունակեց նաև Մ. Գոդելյեն: 1980-ական թթ. հետո նրա հետաքրքրությունների կենտրոնում իշխանության առաջացման և ավանդական հասարակություններում ռեցիպրոկացիայի առանձնահատկությունների հարցերն էին[82]: Կ. Մարքսի իշխանության սակրալ բնույթի մասին նկատառումը Մ. Գոդելյեն բացատրում է հետևյալ կերպ. իշխանությունն ու շահագործումը նախկինում դասակարգեր չունեցող հասարակություններում առաջացել են աստիճանաբար և ընկալվել են որպես պարգև այն ծառայությունների համար, որոնք կառավարող անհատները իրականացրել են, ինչպես նաև ինչ-ինչ գործողություններով ապահովել են տիեզերական կարգի և կյանքի վերարտադրության համար պատասխանատու անտեսանելի ուժերի բարեհաճությունը: Տիեզերական կարգի և

[79] **Krader** 1994, Varieties of Marxism (edited by Shlomo Avineri) 1977; **Андерсон** 2010; **Treadgold** 1987, **Рокмор** 2011 և ուր., տե՛ս նաև հղում 81:
[80] **Milios** 1997: 9-13. տե՛ս նաև **Milios** 1999
[81] Այդ հրատարակություններից կարելի է նշել **Bhattacharyya** 2013, **Bailey** 1981
[82] **Годелье** 2007

կյանքի վերարտադրման միջոցների հանդեպ մոնոպոլիան պետք է նախորդեր արտադրության տեսանելի միջոցների մոնոպոլիային: Այստեղից էլ բխում է ծիսական փոլի գերակայությունը[83]:

Երկրորդ աշխարհամարտից հետո վերանայվեց նաև արևմտաեվրոպական օրիենտալիզմը[84], և նրա շատ դրսևորումներն այժմ ընկալվում են որպես ռասիստական և հնացած, մանավանդ իր գաղութարարական հենքի և «Արևելքը ապասուբյեկտիվացնելու» (Է. Սաիդի բնորոշմամբ) համար: «Սպառված» կամ ստագնացիայի մեջ գտնվող Արևելքի բնորոշումն այժմ լոկ քննիծաղ է առաջացնում[85]:

Այս տեսակետից կարևոր տեղ են գրավում մարքսյան ԱԱԵ՝ եվրոպական օրիենտալիզմի ծիրում քննարկող (և քննադատող, մանավանդ Հնդկաստանի պատմաբանների և սոցիոլոգների շրջանում) աշխատությունները, որոնցից նշենք Էդվարդ Սաիդի «Orientalism - Western Conceptions of the Orient»[86] աշխատությունը: Է. Սաիդը գրում է, որ Կ. Մարքսի հոդվածի վերջում տեղ գտած Յ. Վ. Գյոթեի քառատողը՝ «Sollte diese Qual uns quälen Da sie unsere Lust vermehrt...» West–östlicher Divan[87] ստեղծագործությունից արդեն իսկ հուշում է, որ Կ. Մարքսը տեղի է տվել Արևելքի մասին տիրող ռոմանտիկ և մեսիանիկ տրամադրություններին, և նրա տեսական սոցիալ-տնտեսական հայացքներն ընկղմվել են այդ դասական կերպարի մեջ[88]: Հնդկաստանին անդրադարձել է

[83] Մեջբերումն ըստ **Саутхолл** 2000: 345-346 (բնօրինակը՝ **M. Godelier** 1982, La Production des Grands Hommes. Pouvoir et domination masculine chez les Baruya de Nouvelle- Guinee)
[84] Տե՛ս **Said** 2003, **Abdel Malek** 1981
[85] **Մարգսյան** 2016 12
[86] **Said** 2003 13-14. 155-156
[87] Գյոթեի 1814-1819 թթ. «Արևմտա-արևելյան դիվան» պոեմների ժողովածուն, որը ստեղծվել էր XIV դ. պարսիկ բանաստեղծ Հաֆեզի պոեզիայի ազդեցությամբ:
[88] **Said** 2003 154

նաև O'Լարին իր աշխատության[89] մեջ՝ նշելով, որ Հնդկաստանի վերաբերյալ հատվածները ցիրուցան են և մշակված չեն, այդ իսկ պատճառով տեղիք են տալիս բազմաթիվ սխալ եզրահանգումների[90]: Նշենք նաև Գ. Սահայի «Marxism and the Orient: A Reading of Marx»[91] և Մ. Թավարաջի[92] հոդվածները, որոնցում ԱԱԵ կոնցեպտը քննարկված է իր համակարգային թերությունների, եվրոպակենտրոնության և Հընդկաստանի պատմագրության վրա ազդելու տեսակետից:

ԱԱԵ կոնցեպտը մանրամասն քննարկվել Ս. Դանի «The Fall and Rise of the Asiatic Mode of Production»[93] աշխատության մեջ, Պ. Անդերսոնը վերհանել է ԱԱԵ կոնցեպտի ձևավորման ակունքները և կոնցեպտի՝ Արևելքի տարաբնույթ քաղաքակրթական մոդելներին համապատասխանելու հարցը[94], Հ. Կլասենը գրել է, որ մարքսյան պարզից դեպի բարդը և էվոլյուցիայի միագիծ զարգացման դրույթը թերի է, հետևաբար անհրաժեշտ է ընդունել սոցիալական էվոլյուցիայի բազմագիծ բնույթը, քանի որ զարգացման ոչ բոլոր ուղիներն են հանգեցնում պետության[95]: Վաղ պետականությունների մարքսյան դիխոտոմիային վերապահումով է վերաբերվում նաև ամերիկյան գիտնական Պ. Լոյդը: Ըստ արժանվույն գնահատելով խորհրդային պատմաբանների ավանդը սոցիալական էվոլյուցիայի ուսումնասիրման մեջ և *«դասակարգ», «պետություն»* և *«արտադրության եղանակ»* հասկացությունները համարելով հզոր վերլուծական գործիքներ, այդուհանդերձ նա գտնում է, որ նրանց կիրառումը

---

[89] **O'Leary** 1989 82-151
[90] **Նույն տեղում**, 147:
[91] **Sahay** 2007· 9-23 կետերը. Էլ.տարբերակը՝ https://www.researchgate.net/publication/263167816_Marxism_and_the_Orient_A_Reading_of_Marx
[92] **Thavaraj** 1984
[93] **Dunn** 1982
[94] **Андерсон** 2010 424-509.
[95] **Классен** 2007: 374.

միշտ չէ, որ միանշանակ է, որ վաղ պետականության և «երրորդ աշխարհի» ուսումնասիրությունները ի հայտ են բերում արտադրության մի քանի ձևերի գուգահեռ առկայություն, որոնք սերտորեն փոխկապակցված են մեկ հասարակական ֆորմացիայի շրջանակներում[96]:

Խորհրդային շրջանի հայազգի գիտնականներից (Գ. Պապայան, Յու. Գարուշյանց, Ն. Տեր-Հակոբյան) բացի, հետխորհրդային շրջանում ԱԱԵ կոնցեպտին անդրադարձել է Վ. Պողոսյանը քաղաքական մատրիցների հայեցակարգի տեսանկյունից: ԱԱԵ նա համարում է բազմաթիվ դարերի ընթացքում ձևավորված կացութաձև, որը ձևավորել է եվրասիական էթնոսների մշակույթն ու ոգին: Նրանց մշակութային արքետիպերի գերակայող գծերն են էտատիզմն ու պատերնալիզմը: Հասարակության արժեքային համակարգում այդ ալգորիթմը արտացոլված է ուժեղ սոցիալական պետության՝ որպես բազային արժեքի առկայությամբ: Այդ պետության համակարգաստեղծ ֆունկցիոնալ առանձնահատկություններն են ուժեղ կառավարիչը, իշխանության կոշտ ուղղահայաց գիծը, հստակ աստիճանակարգությունը և գործադիր (ոչ թե օրենսդիր) իշխանության առաջնությունը)[97]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Յուրաքանչյուր ուսումնասիրություն կամ տեսակետ անհրաժեշտ է դիտարկել այն գաղափարախոսական-հասարակական պարադիգմում, որտեղ նա ստեղծվել է: ԱԱԵ կոնցեպտի զարգացումը Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի աշխատություններում կապված է XIX դարի երկրորդ կեսին կոնկրետ գիտությունների զարգացման հետ[98], և այդ տեսակե-

---

[96] Լոյդի տեսակետը ներկայացված է ըստ **Кочакова** 2007: 329-334
[97] **Погосян** 2015, 37-41
[98] **Тер-Акопян** 1973: 219

տից Կ. Մարքսի հիմնական խնդիրը ոչ թե ***«ասիական հեղափոխության»*** թեզն էր, այլ ***ոչ կապիտալիստական հասարակությունների՝ կապիտալիստականի վերածվելու պատճառների*** քննարկումը[99]: Կ. Մարքսը որևէ ենթադրություն չի արել ԱԱԵ-ին բնորոշ ստագնացիայի մասին, նա ընդամենն արձանագրել է էմպիրիկ փաստի տեսական բացատրությունը, այն, որ Ասիայի առանձին հատվածներ ցուցաբերում են սոցիալական էվոլյուցիայի տեսակետից անփոփոխ վիճակ[100]:

Ավելին, Կ. Մարքսը կարողացել է արևելյան դեսպոտիզմի հին հասկացությունը վերափոխել պետականաստեղծ գործընթացների յուրովի մեկնաբանության՝ բխեցնելով ***պետությունը*** հասարակության սեփականության, աշխատանքի և կազմակերպման համայնական ձևերի զարգացումից[101]:

Տասնամյակներ անց ԱԱԵ կոնցեպտն ընկավ խորհրդային գաղափարախոսական մեքենայի և քաղաքական կոնյունկտուրայի մամլիչի տակ, և շատ հարցերում ինքը՝ Կ. Մարքսը անընդունելի դարձավ մարքսիստների համար[102]: Եվ չնայած ԱԱԵ կոնցեպտը խորհրդային պատմագրության մեջ թողեց այլևս չկիրառվող կլիշեներ (պարտադիր ստրկատիրական ֆորմացիա, պետության առաջացման միագիծ տարբերակ, արևելյան դեսպոտիա և այլն[103]), այնուամենայնիվ ԱԱԵ կոնցեպտին նվիրված բանավեճերը (մանավանդ 1960-ական թթ. հետո) իրենց կարևոր ներդրումն ունեցան վաղ հասարակությունների սոցիալ-տնտեսական հարցերի ուսումնասիրման մեջ՝ ապահովելով այս կոնցեպտի որոշյն տեղը առհասարակ պատմության փիլիսոփայության մեջ:

---

[99] **Milios** 1997: 5
[100] **Նույն տեղում**, 9:
[101] **Годелье** 2007: 12
[102] **Рокмор** 2011: 56
[103] **Даниленко** 2018: 46

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Алаев Л. 1987, Формационные черты феодализма и восток, Народы Азии и Африки, № 3, с. 78-90 Էլ.տարբերակը՝ http.//ignorik ru/docs/l-b-alaev-formacionnie-chertı-feodalizma-i-vostok-narodı-a html (մուտքի օր՝ 29.10.2019):

Алаев Л., Ерасов Б. 1990, Формация или цивилизация?, Народы Азии и Африки, № 3, с. 46-56 Էլ տարբերակը՝ http //ignorik.ru/docs/l-b-alaev--b-s-erasov-formaciya-ili-civilizaciya-narodı-az.html (մուտքի օր՝ 29.10.2019):

Андерсон П. 2010, Родословная абсолютистского государства, Москва, Изд дом «Территория будущего», 511 с.

Аристотель 1983, Сочинения, т 4, Москва, «Мысль», 840 с

Богомазова Л.Н., Хлудеева Л.С. 2018, К вопросу о необходимости возобновления дискуссии об «азиатском способе производства», История, политология, социология, философия: теоретические и практические аспекты, с. 5-9

Варга Е. 1965, Очерки по проблемам политэкономии капитализма, Об азиатском способе производства, Москва, Издательство политической литературы, 383 с

Васильев Л., Стучевский И. 1966, Три модели возникновения и эволюции докапиталистических обществ, Вопросы истории, № 6, с 77-90

Васильев Л., 1982, Феномен власти-собственности. К проблеме типологии докапиталистических структур, Типы общественных отношений на Востоке в средние века, с. 60-99

Васильев Л. 1988, Что такое «азиатский способ производства»? Народы Азии и Африки, №3, с. 66-75. Էլ.տարբերակը՝ http //ignorik.ru docs/vasıleev-l-s-chto-takoe-azıatskıj-sposob-proizvodstva-naro html (մուտքի օր՝ 29.10 2019)

Васильев Л. 1997, Генеральные очертания исторического процесса (эскиз теоретической конструкции), Философия и общество Выпуск №1, с. 113-134
Էլ տարբերակը՝ https://www.socionauki.ru/journal/articles/1442523/ (մուտքի օր՝ 29.10.2019):

Васильев Л. 2005, История Востока, том I, Москва, «Высшая школа», 512 с.

Гарушянц Ю. 1966, Об азиатском способе производства, Вопросы истории, № 2, с 83-100

Галеев К. 2011, Теория гидравлического государства К. Виттфогеля и ее современная критика, Социологическое обозрение, том X, № 3, с 155-179

Гегель Г. В. Ф. 1993, Лекции по философии истории, СПб, «Наука», 480 с

Герцен А. 1858, Старый мир и Россия Письма Искандера к редактору «The English Republic», В. Линтону (1854 г.). Перевод с французского, Лондон Էլ.տարբերակը՝ http://gertsen lit-info.ru/gertsen/public/russie-vieux-monde/russie-vieux-monde-staryj-mir-i-rossiya.htm (մուտքի օր 29.10 2019):

Гобозов И. 2017, Гегель и философия истории, Философия и общество, Выпуск №4 (85), с. 5-19

Годелье М. 1965, Понятие азиатского способа производства и марксистская схема развития общества, Народы Азии и Африки, № 1, с 101

Годелье М. 2007, Азиатский способ производства стимулирующий концепт с ограниченным аналитическим значением. Общество. Среда. Развитие (Terra Humana), (1), с. 3-18.

Данильенко Г. 2018, О месте азиатского способа производства в формационной теории исторического процесса, Культура и цивилизация, № 1(7), с. 42-46 Էլ.տարբերակը՝ https://cyberleninka.ru/article/v/o-meste-aziatskogo-sposoba-proizvodstva-v-formatsionnoy-teorii-istoricheskogo-protsessa (մուտքի օր՝ 29.10.2019):

Годес М. 2009, Дискуссия об азиатском способе производства По докладу Годеса, Москва, «Либроком», 184 с.

Ерасов Б. 1998, Общие критерии дихотомного сопоставления социокультурных оснований Запада и Востока, Сравнительное изучение цивилизаций, Хрестоматия, Москва, «Аспект-Пресс», 536 с

Завалько Г. 2012, Об «азиатском» способе производства и не только о нем, Альтернативы, №3, с. 163-173.

Илюшечкин В. 1986, Сословно-классовое общество в истории Китая (опыт системно-структурного анализа), Москва, «Наука», 398 с

Илюшечкин В. 1996, Теория стадийного развития общества, Москва, «Восточная литература» РАН, 406 с.

Ким Г. (отв.ред.) 1966, Общее и особенное в историческом развитии стран Востока, Материалы дискуссии об общественных формациях на Востоке (Азиатский способ производства), Москва, «Наука», 248 с.

Ким О. 2001, Проблема азиатского способа производства в советской историографии. Автореферат диссертации. Էլ.տարբերակը՝ http //cheloveknauka.com/problema-aziatskogo-sposoba-proizvodstva-v-sovetskoy-istoriografii-20-e-gg-nachalo-90-h-gg#ixzz62sMmqI58 (մուտքի օր՝ 29.10.2019):

Классен Х. Дж. М. 2007, Проблемы, парадоксы и перспективы эволюционизма, Альтернативные пути к ранней государственности, с 366-382

Кондакова С. 2014, «Китайский деспотизм»: миф или реальность? Проблемы и перспективы экономики и управления, Материалы III Международной научной конференции, с. 6-11.

Коротаев А. 1995, Горы и демократия: к постановке проблемы Альтернативные пути к ранней государственности, с. 77-93

Коротаев А. 2003, Социальная эволюция: факторы, закономерности, тенденции, Москва, «Восточная литература» РАН, 287 с.

Кошман В. 2018, Современные подходы к пониманию государства и его типологий, Современные тенденции развития права в условиях гобализации, с. 369-377

Кочакова Н. 2007, Понятие «раннее государство», Антропология власти. Хрестоматия по политической антропологии, том II, Политическая культура и политические процессы, с. 321-345

Крадин Н. 2000, Кочевники, мир-империи и социальная эволюция, Альтернативные пути к цивилизации, с. 314-336

Крих С. 2015, Образ древности в советской историографии конструирование и трансформация, Автореферат диссертации Էլ.տարբերակը՝ http //cheloveknauka.com/obraz-drevnosti-v-sovetskoy-istoriografii (մուտքի օր՝ 29.10.2019):

Латов Ю. 2007, К читателю. Тройной юбилей теории азиатского производства. Историко-экономические исследования, Изд-во Байкальский государственный университет (Иркутск), том VIII, № 2, с. 5-7

Лынша В. 1995, Загадка Энгельса, Альтернативные пути к ранней государственности, с. 36-58.

Маргарян Е. 2016, «Деколониальный поворот» в современном историческом сознании. «Что там за поворотом?, «Ex orient lux. Изменение мировоззренческой парадигмы от европоцентризма к универсализму», с. 10-27

Маркс К. 1949, К критике политической экономики, Москва, Госполитиздат, 270 с

Маркс К., Энгельс Ф. 1962, Сочинения, том XXV, ч. II, Москва, Госполитиздат, 551 с. Էլ.տարբերակը՝ https://www marxists org/russkij/marx/cw/t25-2.pdf (մուտքի օր 29.10.2019):

Маркс К. 1980, Экономические рукописи 1857-1861 гг., Москва, Политиздат, 564 с. Էլ.տարբերակը՝ http://www marxism-leninism narod.ru/Library/Marx/Marx3 htm (մուտքի օր՝ 29.10 2019):

Мигаль А. 2015, Концепт ВОСТОЧНЫЙ ДЕСПОТИЗМ в представлениях французских просветителей о мусульманском Востоке, Научный диалог, № 11(47), с. 150-162.

Монтескье Ш. 1955, Избранные произведения, Москва, Госполитиздат, 803 с

Муи А. 2009, Сущность концепции «восточного общества» К.А.Виттфогеля и ее истоки, Известия Российского государственного педагогического университета им. А. И. Герцена, с. 27-34

Мухаев Р. 2016, История политических и правовых учений (с хрестоматией), учебник для бакалавров, Москва, «Юрайт», 694 с. Էլ.տարբերակը՝ https://studme org/56782/politekonomiya/teoriya_gosudarstvennogo_suvereniteta_zhana_bodena#806 (մուտքի օր՝ 29.10.2019)

Неронова В. 1992, Проблема формационной принадлежности древнего мира в советской историографии, Античность Европы, с. 111-121.

Никифоров В. 1966, Концепция азиатского способа производства и современная советская историография (доклад), Общее и особенное в историческом развитии стран Востока (под ред. Кима Г. Ф.), с. 9-33.

Никифоров В. 1970, Советские историки о проблемах Китая, Москва, «Наука», 416 с.

Никифоров В. 1977, Восток и всемирная история, Москва, «Наука», 359 с.

Нуреев Р. 1979, Проблема «азиатского способа производства» в советской историко-экономической литературе, Вестник Московского университета, серия 6: экономика, № 5, с. 13-22

Нуреев Р. 1993, Азиатский способ производства как экономическая система, в сб. Феномен восточного деспотизма структура управления и власти, с. 62-87.

Плеханов Г. 1956, Избранные философские произведения, том I, Москва, Госполитиздат, 848 с.

Погосян В. 2015, Концепция цивилизационных матриц в

макросоциологическом анализе социальных изменений, Вестник Ереванского университета, №3(18), с 30-44

Рожанский И. 1995, Расизм и древняя Греция, Вопросы истории естествознания и техники, Выпуск №2, с. 58-65 Էլ.տարբերակը՝ http //vivovoco astronet ru/VV/PAPERS/HISTORY/VV_HI1_W HTM#1 (մուտքի օր՝ 29.10.2019):

Рокмор Т. 2011, Маркс после марксизма, Москва, «Канон+»; «Реабилитация», 411 с

Саутхолл Э. 2000, О возникновении государства, Альтернативные пути к цивилизации, с. 130-136

Семенов Ю. 1998, Марксова теория общественно-экономических формаций и современность, Философия и общество, с. 190-233 Էլ.տարբերակը՝ https://scepsis.net/library/id_120.html (մուտքի օր՝ 29.10.2019):

Семенов Ю. 2003, Философия истории, Общая теория, основные проблемы, идеи и концепции от древности до наших дней, Москва, «Современные тетради», 777 с. Էլ.տարբերակը՝ https://scepsis net/library/id_1065.html (մուտքի օր՝ 29.10.2019):

Семенов Ю. 2019, Политарный (азиатский) способ производства сущность и место в истории человечества и России, Москва, Ленанд, 376 с.

Струве В. 1934, Очерки социально-экономической истории древнего Востока, Известия Государственной академии истории материальной культуры, Вып. 77

Тарасов А. 1996, Суперэтатизм и социализм, К постановке проблемы, Свободная мысль, № 12. Էլ.տարբերակը՝ https://scepsis.net/library/id_102 html (մուտքի օր՝ 29.10 2019):

Тер-Акопян Н. 1965, Развитие взглядов К.Марка и Ф Энгельса на азиатский способ производства и земледельческую общину, Народы Азии и Африки, № 2, с. 70-87

Тер-Акопян Н. 1973, Маркс и Энгельс об азиатском способе производства и земледельческой общине, Из истории марксизма и международного рабочего движения, с. 167-220

Хазанов А. 2002, Кочевники и внешний мир, Алматы, «Дайк-пресс», 604 с.

Формозов А. 2006, Русские археологи в период тоталитаризма Էլ.տարբերակը՝ https://arheologija.ru/formozov-russkie-arheologi-v-period-totalitarizma/ (մուտքի օր՝ 29.10.2019):

Шубина М. 2011, Анализ концепции «восточного деспотизма» в западноевропейской философской мысли нового времени, Вопросы теории и практики. № 3(9), ч. III, с. 208-210

Энгельс Ф. 1931, Анти-Дюринг, Маркс К., Энгельс Ф., Сочинения, том 14, Соцэкгиз, 359 с. Էլ.տարբերակը՝ https://www.marxists.org/russkij/marx/1877/anti-duhring.pdf (մուտքի օր՝ 29.10.2019):

Bhattacharyya S. 2013, The Asiatic Mode of Production, Studies in Marxism, Vol.14, pp. 54-65

Dunn Stephen P. 1982, The Fall and Rise of the Asiatic Mode of Production, Routledge & Kegan Paul Ltd, 154 p

Krader L. 1994, Asiatische Produktionsweise, Historisch-kritische Wörterbuch des Marxismus 1, 1994, pp. 628-638

Milios J. 1997, Der Marxsche Begriff der asiatischen Produktionsweise und die theoretische Unmoglichkeit einer Geschichtsphilosophie, Beitrage zur Marx-Engels-Forschung. Neue Folge. pp. 101-113 Էլ.տարբերակը՝ https://www.academia.edu/12011475/Der_Marxsche_Begriff_der_asiatischen_Produktionsweise_und_die_theoretische_Unm%C3%B6glichkeit_einer_Geschichtsphilosophie (մուտքի օր՝ 29.10.2019)·

Milios J. 1999, Asiatic mode of production. Encyclopedia of Political Economy, v.1. Routledge Publishers, London 1999, pp. 18-20

O'Leary B. 1989, The Asiatic mode of production. Oriental despotism, historical materialism and Indian history, B. Blackwell, 394 p

Treadgold, Donald W. 1987, Soviet Historians' Views of the «Asiatic Mode of Production» Acta Slavica Iaponica, 5, pp. 1-20

Sahay Gaurang 2007, Marxism and the Orient: A Reading of Marx, Borderlands e-journal, volume 6, №1. Էլ.տարբերակը՝ https://www.researchgate.net/publication/263167816_Marxism_and_the_Orient_A_Reading_of_Marx (մուտքի օր 29.10.2019):

Said Edward W. 2003, Orientalism - Western Conceptions of the Orient, Penguin Books, 396 p.

Sofri G. 1969, Il Modo di Produzione Asiatico. Storia di una controversia marxista. Torino, Einaudi, 193 p.

Մարիամ Խանզադյան - *ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, Հին Արևելքի բաժին, գիտաշխատող,*
mkhanzadyan@orient.sci.am

EARLY STATE: ASIATIC MODE OF PRODUCTION

Key words: *Marxism, Asiatic mode of production, orientalism, oriental despotism, genesis of state, soviet ideology.*

The article discusses a theory of Asiatic mode of production. This theory had a great influence on the development of historiographic and sociological science thoughts of the 19th-20th centuries. The theory of Asiatic mode of production proposed by Marx in the Soviet years was under ideological and political pressure, and its discussion was interrupted twice - in the 1930s and 1960s. Nevertheless, indirect developments of this theory had a great influence on the development of Oriental studies in the USSR. Many points of Marxian theory are now outdated, but still it is being discussed both in the post-Soviet space and in Western science.

Mariam Khanzadyan - *Institute of Oriental Studies NAS RA, Department of Ancient Orient, Researcher,*
mkhanzadyan@orient.sci.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՂԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԽԵՑԵՂԵՆԻ ՈՐՈՇ ԼՈԿԱԼ ԽՄԲԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՄԱՆ ՇՈՒՐՋ

ԱՆՆԱ ԱԶԻԶՅԱՆ

Բանալի բառեր՝ *Շենգավիթյան մշակույթ, Կառնուտ, Շենգավիթ, զարդագոտի, հորինվածք, լոկալ խումբ, խեցեղեն:*

Ներածություն

Վաղբրոնզեդարյան մշակույթը շատ ինքնատիպ է և ընդգրկելով բավական մեծ արեալ, ըստ ժամանակագրական փուլերի իր մեջ ներառում է տարատեսակ, ոճաբանորեն տարբեր լոկալ խմբեր: Շենգավիթյան մշակույթում առանձնակի տեղ են գրավում խեցեղենի վրա պատկերվող զարդամոտիվները, իր ուրույն դրսևորումներով, որը հիմք է հանդիսացել ուսումնասիրող մասնագետների կողմից խեցեղենն իր ձևաբանությամբ և զարդամոտիվներով, տիպաբանորեն տարանջատել և դրա հիման վրա սահմանել որոշակի տիպեր՝ լոկալ խմբեր[1]:

Լոկալ խմբերի ի հայտ գալը պայմանավորված է ներմշակութային փոխառնչությունների, ժամանակագրական փուլերի զարգացման և նրանց մեջ առկա տարրերի՝ հատկանիշների նույնանման բնույթով: Խմբերի ուրվագծման և տարանջատման գործում առաջնային նշանակություն ունի

[1] Այս մշակույթի ճիշտ փուլաբաժանման և համակարգված ուսումնասիրման սկիզբը դրեց առաջին իսկ պեղող հնագետ Ե. Բայբուրթյանը 1936 1938 թթ., անվանելով այն «Շենգավիթյան մշակույթ» տես՝ **Байбуртян** 2011. 5, 7, 14. 51, 52, **Куфтин** 2012. 116-117, **Пиотровский** 1949: 34-37, **Мунчаев** 1975: 194, **Мартиросян** 1964. 35-36, **Խանզադյան** 1967, 71-80: **Badalyan** 2014 71-92, **Бадалян** 2018: 25-28, **Smith, Badalyan, Avetisyan** 2009 42-51

խեցեղենի ուսումնասիրությունը՝ իր տարածման արեալում: որտեղ բացի առաջին և երկրորդ փուլին պատկանող խեցեղենից հանդիպում ենք նաև համաժամանակյա, իրարից ոճաբանորեն հստակ տարբերվող խեցեղենի օրինակներ, որոնց ոճաբանական տարբերությունը արտացոլվում է թե՛ անոթների ձևաբանության և, թե՛ նրանց զարդաբանության մեջ:

Ոճաբանական տարբերությունները դրսևորվում են երկու հատկանիշներով՝ արտաքին և ներքին: Արտաքին հատկանիշներն են՝ տարածական, ժամանակագրական: Ներքին հատկանիշներն են՝ նյութը, ձևաբանությունը և զարդաբանությունը:

Էլառ-արագածյան խումբ

Էլառ-արագածյան տիպի խեցեղենը տարածված է գրեթե ամբողջ Հայկական լեռնաշխարհով մեկ[2] և թվագրվում է մ.թ.ա. 3600/3500-2900 թթ.[3]:

Էլառ-արագածյան տիպը բնութագրվում է խեցեղենի ինքնատիպ ձևաբանությամբ. հանդիպում ենք կարասներ, քրեղաններ, կճուճներ և այլ տիպի անոթներ, որոնց արտաքին բնորոշ հատկանիշներից է երկթեք (*բիկոնիկ*) իրանի կառուցվածքը (աղ. I նկ. 1,2,4,6,7,9,11-13): Բնորոշ այլ հատկանիշներից է՝ նաև շուրթից դեպի վիզ հատվածի ինքնատիպ կառուցվածքը, որը կրկնում է նախորդ մշակույթի՝ էնեոլիթի ուշ փուլին պատկանող խեցանոթների շուրթերի ձևերը[4]: Հատկանշական է նաև պսակը, որն ունի դեպի դուրս քիչ թեքվածություն: Կավանոթի շուրթ-վզի հատվածն աննշան ավելի հաստ է քան իրանինը և նմանվում է «*կա-*

[2] **Badalyan** 2014. 73-76, **Бадалян** 2018: 25, **Isikli, Yardimciel** 2015: 6, **Altunkaynak, Isikli, Erkmen** 2018 84-89

[3] **Бадалян** 2018 25-26

[4] **Ծոպոսյան** 1976, տախտակ VI/5, 6, 7, տախտակ VIII/1, 2:

կաչ» ծաղկի բացվածքին (աղ. I նկ. 2, 4, 6, 12)։ Տվյալ խմբին բնորոշ են կիսագնդաձև կառուցվածքով կանթեր, որոնց զուգահեռ հանդիպում ենք արմունկաձև, նաև շուրթից ոտիղ իջնող քիչ կորացող (աղ. I, նկ. 1) և ելուստավոր կեղծ կանթեր։ Կավանոթների արտաքին մակերեսը մեծամասամբ սև է, երբեմն՝ գորշ, աղյուսագույն, մոխրագույն, մեծ մասամբ լավ փայլեցված, երբեմն արծաթափայլ մակերեսով։ Բաց անոթների դեպքում աստառը լավ հղկված է անգոբապատ փայլեցված մակերեսով, իսկ փակ անոթների ժամանակ՝ միայն շուրթի հատվածն է ժապավենաձև փայլեցված, 1-6 սմ լայնությամբ[5]։ Կավանոթների նմանատիպ մշակումը բնորոշ է բոլոր մյուս լոկալ խմբերին։

Էլառ-արագածյան որոշ տիպի խեցեղենի[6] զուգահեռները տեսնում ենք էնեոլիթյան ժամանակաշրջանի խեցեղեն անոթների ձևերում[7] ու նաև այլ նյութերի մեջ ակնարկներ ունեցող՝ փայտից, քարից, կաշվից և տարատեսակ բույսերից պատրաստված, որոշ անոթների ձևերի մեջ։ Էլառ-արագածյան տիպի որոշ կավանոթների ձևաբանությունն իր ակնարկներն ունի նաև էնեոլիթյան ժամանակաշրջանի խեցանոթների ձևաբանության մեջ։ Հետաքրքիր է նաև, որ Էլառ-արագածյան խմբի մեջ հանդիպում ենք այնպիսի խեցեղեն կավանոթների, որոնք իրենց կառուցվածքով կաշվե պարկեր են հիշեցնում[8]։ Հայտնի է, որ դեռևս վաղագույն ժամանակաշրջանից կաշին ծառայել է նաև որպես անոթ։ Հետագայում կաշվե անոթների որոշ ձևեր անցել են կավե անոթներին[9]։

---

[5] **Ագիգյան** 2017, 241։

[6] **Бадалян** 2011. рис. I- 9, 15

[7] **Ծոպոսյան** 1976, տախտակ VI/6, 7, տախտակ VIII/1, 2: **Chataigner et al.** 2006· Fig 23.4-d, **Мусенбли** 2007 194/7, 181/8, 182/6

[8] **Badalyan** 2018 Fig. 1/9, Fig. 2/9, 10, Fig 5/4; **Мартиросян** 1964. 312, рис 12

[9] **Кинк** 1976. 14

Ինչ վերաբերում է զարդաձևերին ապա, շենգավիթյան մշակույթի խեցեղենի վրա պատկերված վաղագույն զարդամոտիվներն ի հայտ են գալիս առաջին փուլի ժամանակաշրջանում, որոնք պատկերվել են Էլառ-արագածյան խմբին պատկանող խեցեղենի վրա: Այստեղ հանդիպում ենք մի քանի մոտեցմամբ կատարված զարդամոտիվներ՝ թրծումից հետո կատարված փորագիր ու երկրաչափական կառուցվածքով, ինչպես նաև թրծումից առաջ ներճկման և վերադիր եղանակներով կատարված զարդամոտիվների: Այս խմբի խեցեղենի զարդամոտիվներում կենդանակերպ պատկերները եզակի բնույթ են կրում, իսկ զանազան մոտիվներով հորինվածքներ չեն հանդիպում: Մեծ մասամբ կավանոթների իրաններն անզարդ են: Տարածված զարդաձևերից են՝ թրծումից հետո, փորագիր եղանակով կատարված ուսի հատվածում՝ երկրաչափական, եզրագոտիները: Երբեմն իրանին պատկերվում են պարույրներով ու համակենտրոն շրջաններով մոտիվներ: Տարածված են իրանի հատվածում՝ կլոր կամ օվալաձև ներճկված փոսիկները ու նաև ներճկված զույգ կլոր փոսիկներով, որոնց միջև վերադիր եղանակով պատկերված են լինում ուղղահայաց ու թեքությամբ տեղադրված ելուստներ: Մեր կարծիքով Էլառ-արագածյան խմբին պատկանող կավանոթներն ունեն ներխմբային՝ միմյանցից որոշ հատկանիշներով տարբերվող զարդամոտիվներ:

Շրեշ-մոխրաբլուրյան խումբ

Շրեշ-մոխրաբլուրյան խմբին պատկանող հուշարձանները տարածված են շենգավիթյան մշակույթի արեալում՝ Արարատյան դաշտում և Իգդիրի հովտում[10]:

Այս խմբում ևս տարածված են տարբեր տիպի կավա-

[10] **Burney** 1958: 43, 191 Fig 128, 129, 130, 132, 142, 143, **Խանզադյան** 1967, 73: **Smith, Badalyan, Avetisyan** 2009: 47, **Бадалян** 2011: 65, **Badalyan** 2014 80-85

մաններ՝ կարասներ, կճուճներ, քրեղաններ և այլ անոթներ, իրենց խմբին բնորոշ հատկանիշներով (աղ. II նկ. 1-13): Շենգավիթյան մշակույթի հարուստ պատկերազարդումներով խեցեղենը հանդես է գալիս երկրորդ փուլին պատկանող շրջանում, որը թվագրվում է մ.թ.ա. 2900-2600/2500 թթ.[11]: Տվյալ խմբի խեցեղենի բնորոշ հատկանիշներից մեկը խեցեղենի արտաքին մակերեսի սև գունավորումն է, ի տարբերություն մյուս խմբերի, որտեղ բացի սև փայլեցված մակերեսով խեցեղենից՝ հանդիպում են նաև այլ գույնի արտաքինով կավանոթներ: Բնորոշ հատկանիշներից է նաև արծաթափայլ մակերեսը՝ ինչպես անոթի ողորկ մակերեսին, այնպես էլ զարդարված հատվածներում: Այս արծաթափայլ մակերևույթով խեցեղենը տարածում ունի գրեթե բոլոր խմբերում, այն կապված է տեխնիկական և թրծման եղանակների հետ: Շրեշ-մոխրաբլուրյան խմբին պատկանող խեցեղենի պատկերազարդ հորինվածքները վաղագույնն են համարվում տվյալ մշակույթում, որոնք հիմնականում պատկերված են անոթի միայն իրանի հատվածում, այն էլ մեկ երեսին: Վերջիններիս հորինվածքների պատկերագրության մեջ գերիշխում են մեծ մասամբ բուսական մոտիվները[12], որոնցում ընկալվում են հացազգիների պատկերազարդումներով հորինվածքներ[13] (աղ. II նկ. 5, 6): Զարդագոտիները Շրեշ-մոխրաբլուրյան խմբում գրեթե բացակայում են:

Վերը նշված երկու խմբերի ներխմբային խեցեղենն իր ձևաբանությամբ, զարդաբանությամբ, նաև զարդերի կատարման եղանակներով նույնական է: Մասնագիտական գրականության մեջ հայտնի Կառնուտ-շենգավիթյան խումբը իր անվանումը ստացել է Կառնուտ և Շենգավիթ հուշար-

---

[11] **Бадалян** 2018: 25

[12] **Байбуртян** 1937: рис. 2, **Խանզադյան** 1964, աղ. I 1-6, II 1-5: **Թումանյան** 2012, աղ. XVII-1, 2, 7, աղ. XVIII-1, 2: **Шенгавит** 2015: табл. IV 1, 2, 6

[13] **Խանզադյան** 1964, 223:

ձաններից հայտնաբերված խեցեղեն նյութի հիման վրա: Ըստ Ռ. Բադալյանի, Հայաստանի Հանրապետության հյուսիսարևմտյան՝ Շիրակի տարածաշրջանի հուշարձանների ինչպե՛ս տարածական, այնպե՛ս էլ ժամանակագրական տեսակետից «Կուր-արաքսյան» մշակույթի անբաժան մասը կազմելով հանդերձ, մի շարք գծերով՝ տեղագրություն, ճարտարապետություն, տնտեսության յուրահատկություն, կարող է դիտվել որպես ընդհանուր վաղ բրոնզեդարյան մշակույթի տեղական տարբերակ[14]:

Մեր կարծիքով Կառնուտի և Շենգավիթի խեցեղեն նյութերը ունեն որոշակի տարբերություններ, թե՛ ձևաբանորեն, թե՛ զարդաբանությամբ, և թե՛ իրենց կատարման եղանակներով: Հետևաբար այս երկու հուշարձանների խեցեղեն նյութերն իրարից առանձնանում ու տարանջատվում են հստակ տարբերվող հատկանիշներով: Ելնելով մեր դիտարկումներից՝ խեցեղենի ձևաբանական կառուցվածքից, զարդարման մոտեցումներից և նրա կատարման որոշ եղանակների տարբերությունից «Կառնուտ-Շենգավիթյան» խումբը նախընտրելի է առանձնացնել:

Կառնուտյան խումբը պատկանում է Շենգավիթյան մշակույթի II փուլին և թվագրվում մ.թ.ա. 2900-2600/2500 թթ.[15]: Կավանոթների տարածված ձևերից են՝ կարասներ, կճուճներ, քրեղաններ, թասեր և այլ տիպի կավամաններ (աղ. III, նկ. 1-14, աղ. V նկ. 1-3): Այս խմբի խեցեղենը Շենգավիթյան մշակույթի մեջ ամենից աչքի ընկնողն է՝ իր հորինվածքների հարուստ զանազանությամբ:

Կառնուտի խեցեղեն անոթների ձևերը բազմազան են: Ձևերի զանազանության մեջ գերակշիռ մաս են կազմում միջին չափի կավամանները, կճուճները և գավաթները,

[14] **Բադալյան** 1981, 8:
[15] **Бадалян** 2018 25

որոնք գրեթե հիմնականում զարդարված են (աղ. III, նկ. 1-5, 12, 13):

Համեմատական զուգահեռներ անցկացնելու նպատակով հիմք ենք ընդունել կավամանների հետևյալ տիպերը՝ կարասներ, կճուճներ, քրեղաններ, ինչպես նաև նրանց վրա պատկերված զարդագոտիները և հորինվածքները (աղ. V, նկ. 1-3, աղ. VI, նկ. 1-16):

Կարասները, ի տարբերություն մյուս կավանոթների ամենամեծ չափերի հասնող անոթներն են, որոնք արտաքինից լինում են սև, մոխրագույն, գորշ, երբեմն դարչնագույն, դարչնագորշավուն փայլեցված մակերեսներով: Իսկ աստառի կողմից, դարչնագույն և մոխրագույն հղկված մակերեսով են: Կարասների շուրթերը՝ աստառի կողմից, ժապավենաձև 5-8 սմ հաստությամբ փայլեցված են: Դրանք բավական մեծ չափի անոթներ են, որոնց շուրթի տրամագիծը, երբեմն հասնում է մինչև 55 սմ, իսկ որոշ ամենախոշոր անոթների ընդհանուր բարձրությունը կազմում է 85 սմ-ից մինչև 1 մ, իսկ նստուկները համեմատած կավանոթի չափերին բավական նեղ են, որոնց տրամագիծը տատանվում է՝ 7-10 սմ: Կարասների շուրթերը դեպի դուրս թեքված են, ունեն բարձր ուղղահայաց կառուցվածքով վիզ, որից ընդգծված անցում է կատարվում դեպի ուռուցիկ իրան, այնուհետև շատ կտրուկ նեղանալով, դեպի ներքև՝ հատակամերձ հատված, որն ավարտվում է նեղ, հարթ նստուկով: Նմանատիպ անոթների վզի և ուսի միակցման նաև ուսիրան հատվածներում ունենում են կանթեր, երբեմն կեղծ կանթեր, որոշ դեպքերում էլ առանց կանթի են (աղ. V, նկ. 1):

Կճուճները արտաքինից պատված են սև, դարչնագույն, աղյուսագույն, մոխրագույն ու դրանց երանգներով, փայլեցված երբեմն անփայլ մակերեսով, իսկ աստառի կողմից՝ մոխրագույն, դարչնագույն և աղյուսագույն հղկված,

որոշ դեպքերում՝ ամբողջությամբ անգոբապատ երանգներով: Շուրթերը աստառի կողմից ունեն անգոբապատ փայլեցված ժապավեն, որոնց լայնությունը տատանվում է 1-6 սմ[16]: Կճուճները լինում են փոքր և մեծ չափերի և ունեն նույնանման կառուցվածք՝ ընդհանուր բարձրությունը տատանվում է 10-30 սմ, լայնաբերան են, որոնց տրամագիծը տատանվում է 12-27 սմ, ունեն կարճ, ճկված, ուղիղ վիզ, ուռուցիկ իրան, որը շեշտակի անցում է կատարում դեպի հատակամերձ հատված և ավարտվում է համեմատաբար նեղ 3,5-7 սմ տրամագծով հարթ կամ ներճկված նստուկով: Կճուճները երբեմն ունենում են իրար հանդիպակաց տեղադրված երկու կանթեր, նաև հանդիպում են կեղծ կանթերով կճուճներ (աղ. V նկ. 2):

Քրեղանները, ինչպես կճուճները արտաքինից ունեն նույն գունավորումը, իսկ աստառի կողմից մեծ մասամբ դարչնագույն են՝ ամբողջությամբ անգոբապատ, փայլեցված մակերեսով: Կառուցվածքով ոչ շատ բարձր, լայնաբերան են, ունեն արտահայտված պսակ, դեպի դուրս բացված շուրթ, որից անմիջապես սկիզբ է առնում թեք տեղադրված ուսը, ապա կիսագնդաձև իրանը, որը շեշտված անցում է կատարում դեպի նեղացող հատակամերձ հատված, որն ավարտվում է հարթ, երբեմն թեթև ներճկված նստուկով: Ընդհանուր բարձրությունը հասնում է 8-15 սմ, շուրթի տրամագիծը տատանվում է 15-29 սմ, իսկ նստուկը համեմատաբար նեղ է, 5-11 սմ տրամագծով հարթ կամ ներճկված: Իրանի հատվածում երբեմն տեղադրված են լինում երկու իրար հանդիպակաց կիսագնդաձև կամ խոպ կանթեր (աղ. V, նկ. 3):

Կառնուտի խեցեղենի զարդագոտիները մեծ մասամբ բնորոշվում են մեկ, երբեմն զույգ զարդագոտիների առկա-

[16] **Ագիգյան** 2017, 241:

յությամբ: Նրանք պատկերված են լինում կավանոթի վզին, երբեմն վիզ-ուս միակցման հատվածներում: Կատարման եղանակներն են՝ թրծելուց առաջ գծազարդ և քիչ հանդիպող՝ ներճկված: Բնութագրող ու ամենից հաճախ հանդիպող զարդագոտու տեսակներից են մեկ շար ունեցող, անկանոն շարվածքով տարբեր տարրերից կազմված գոտիները (աղ. VI, նկ. 1-5): Սրանք սովորաբար բաղկացած են լինում թեք գծերից, կետազարդ ժապավեններից, եռանկյուներից և այլն:

Հորինվածքների դեպքում, հորինվածքային կառուցվածքի հենքը լիովին տարբերվում է մյուս խմբերին պատկանող հորինվածքներից: Այդ հորինվածքներն ունեն բավական հարուստ, տարբեր տարրերով հագեցած պատկերազարդում: Այս խմբի խեցեղենի հորինվածքները պատկերազարդ են կավանոթի միայն իրանը, այն էլ մեկ երեսը, հազվադեպ օրինակներում՝ ամբողջ իրանը: Հորինվածքները կատարվել են ներճկման ու ռելիեֆ-ներճկման եղանակներով: Այս խմբին բնորոշ են, որոշ հորինվածքների կառուցվածքի հիմքում պատկերված խոյանման ու խարսխանման տարրեր: Այդ տարրերից սկիզբ են առնում և զարգանում հորինվածքները: Ըստ Է. Խանզադյանի՝ Կառնուտի խեցեղենի որոշ բեկորների վրա պատկերված հորինվածքների հիմքը կազմում է խարիսխ, որով նաև շեշտում է Կառնուտի խեցեղենի տեղային յուրահատկությունը[17]: Է. Խանզադյանը լոկալ խումբ է անվանում և առանձնացնում կառնուտյան-կիրովականյանը, որին բնորոշ են «բազմագալար շրջանները, պարույրները, հատիկաձև ակոսներով ծածկված լայն ժապավենները, սակայն հիմնականը, զարդանախշերի. խճճվածությունն ու բարդությունն է»[18]: Մեր կարծիքով նման

[17] **Խանզադյան** 1964, 227:
[18] **Խանզադյան** 1967, 73:

խարսխանման հիմքով հորինվածքները բնորոշ են Հայաստանի հյուսիսային տարածքների հուշարձաններին:

Շենգավիթյան խումբը նույնպես պատկանում է Շենգավիթյան մշակույթի II փուլին՝ մ.թ.ա. 2900-2600/2500 թթ.[19]: Շենգավիթ բնակավայրից հայտնաբերված խեցեղենն աչքի է ընկնում ինքնատիպ ձևաբանությամբ և իրեն բնորոշ յուրօրինակ զարդաձևերով:

Կավանոթների տարածված ձևերից են՝ մեծ ու փոքր չափերի կճուճներ, քրեղաններ, թասեր, նաև կարասներ (աղ. IV, նկ. 1-14):

Աղյուսակներում համեմատական զուգահեռներ է տարվում կառնուտյան խմբի խեցեղենի և նրա զարդամոտիվների ու շենգավիթյան տիպի կավանոթների զարդամոտիվների միջև: Կավանոթների տեսակների մեջ զուգադրվում են կարասները, կճուճները և քրեղանները, զարդամոտիվների դեպքում՝ հորինվածքներն ու զարդագոտիները:

Շենգավիթյան տիպի կարասները, համեմատած մյուս կավանոթների հետ, չափերով մեծ են, ունեն սև, գորշ, նաև մուգ մոխրագույն փայլեցված մակերես, աստառի կողմից՝ մոխրագույն, գորշ, մարմնամոխրագույն երանգների, հղկված մակերեսով են: Հարկ է նշել, որ Շենգավիթի խեցեղենը արտաքինից հաճախ ունենում է արծաթափայլ մակերես: Կարասների շուրթերը աստառի կողմից 3-5սմ ժապավենաձև փայլեցված են: Դրանք, համեմատած Կառնուտի կարասների հետ, ավելի փոքր են, ընդհանուր բարձրությունը կազմում է 34,5-50 սմ, որոնց շուրթի տրամագիծը երբեմն հասնում է մինչև 27-35 սմ, նստուկները կավանոթի չափերի համեմատ նեղ են, որոնց տրամագիծը տատանվում է՝ 6-9 սմ: Կարասների կառուցվածքը հետևյալն է. շուրթերը քիչ դեպի դուրս թեքված, ունեն կարճ ճկված վիզ, որից սահուն ան-

[19] **Бадалян** 2018: 25

ցում է կատարվում դեպի ուռուցիկ իրան, այնուհետև իրանը նեղանալով իջնում է դեպի հատակամերձ հատված, որն ավարտվում է ընդհանուր կառուցվածքին համեմատ նեղ հարթ նստուկով: Կարասները վզի և ուսի միակցման կամ ուս-իրան հատվածներում ունենում են կանթեր, մեծ մասամբ հանդիպակաց տեղադրված, երկու փոքր կիսագնդաձև, երբեմն կեղծ կանթեր (աղ. V, նկ. 4):

Կճուճները ամենից տարածված ձևերից են: Լինում են մեծ և փոքր չափերի: Արտաքինից պատված են սև, մուգ մոխրագույն փայլեցված, երբեմն հղկված մակերեսով: Աստառի կողմից՝ բաց աղյուսագույն հղկված մակերեսով են: Շուրթից ունեն 2-4 սմ փայլեցված, անգոբապատ ժապավեն: Կճուճների բարձրությունը տատանվում է՝ 11-25 սմ, շուրթի տրամագիծը՝ 10-25 սմ, նստուկինը՝ 3-5 սմ: Մեծ և փոքր չափերի կճուճների ձևերը կրկնում են միմյանց: Լայնաբերան են, ունեն երկար, քիչ դեպի ներս թեքված բարձր վիզ, բիկոնիկ իրան, որից շեշտակի անցում է կատարվում դեպի հատակամերձ հատված՝ ավարտվելով համեմատաբար նեղ հարթ կամ ներճկված նստուկով: Կճուճները մեծ մասամբ առանց կանթերի են, բայց երբեմն ունենում են մեկ կամ երկու իրար հանդիպակաց տեղադրված կանթեր: Հանդիպում ենք նաև կեղծ կանթերով կճուճներ (աղ. V, նկ. 5):

Քրեղանները բավական տարածված են: Կան միջին չափի և փոքր քրեղաններ: Արտաքինից՝ սև, մուգ մոխրագույն փայլեցված մակերեսով են, ներսի կողմից մոխրագույն, դարչնագույն, աղյուսագույն են: Աստառի կողմից ամբողջությամբ անգոբապատ, հղկված, երբեմն փայլեցված մակերեսով են: Կառուցվածքով բարձր չեն՝ 6-12 սմ, լայնաբերան են, որոնց տրամագիծը տատանվում է 11-18 սմ, ունեն կլոր արտահայտված պսակ, ուղիղ բարձր վիզ, թեքությամբ իջնող իրան՝ շեշտված հատակամերձ հատվածով, որն ավարտվում է հարթ 2,8-5 սմ լայնությամբ նստուկով:

Եթե կարասների ու կճուճների նստուկները համեմատաբար իրենց կառուցվածքի շատ նեղ են, ապա քրեղանների նստուկները համեմատ կավանոթի չափերի համաչափ են: Կանթերը բացակայում են (աղ. V, նկ. 6):

Շենգավիթյան տիպի զարդագոտիներ հանդիպում ենք կավանոթների վզի ու վիզ-ուս միակցման հատվածում: Այս խմբի խեցեղենի եզրագոտիները ի տարբերություն կառնուտյան խմբի, որտեղ հաճախ մեկ շար գոտիներ են, այստեղ մեծ մասամբ պատկերված են երկու կամ երեք ժապավեններից բաղկացած զարդագոտիներ (աղ. VI նկ. 7-10): Շենգավիթյան տիպի գոտիներում խեցեգործները մեծ ուշադրություն են դարձրել կատարման որակին: Զարդագոտիները կատարվել են թրծումից առաջ, նուրբ գծազարդումով ու ակոսազարդ կատարման եղանակներով: Ի տարբերություն Կառնուտի խեցեղենի անկանոն կառուցվածք ունեցող զարդագոտիների տարածվածությանը, Շենգավիթի զարդագոտիների գեռակշիռ մասը կազմում են կանոնավոր կառուցվածք ունեցող գոտիները: Հանդիպում ենք նաև այս խմբին բնորոշ, ինքնատիպ եզրագոտիներ՝ «հասկազարդ» ու «կարպետազարդ»[20]: Մեկ ժապավենից կազմված «հասկազարդ» եզրագոտիները խիստ ոճավորված են, մեծ մասամբ պատկերվում են քրեղանների վրա (աղ. IV նկ. 9, 12, աղ. V նկ. 6): Նման զարդագոտիներ Կառնուտի խեցեղենի եզրագոտիներում բացառություն են կազմում: «Կարպետազարդ» տիպի եզրագոտիները, պատկերվել են հիմնականում կճուճների վրա (աղ. IV նկ. 1, 2, 6, 10, 11, 14): Վերջիններս նմանվում և կարծես թե կրկնում են հայկական կարպետների, ինչպես նաև գորգերի եզրագոտիներում առկա հորինվածքներին[21]:

---

[20] **Ագիգյան** 2018, 15-17:
[21] **Ագիգյան** 2016, 20:

Շենգավիթի խեցեղենի հորինվածքների լուծումները իրենց բնույթով գիջում են Կառնուտի տարատեսակ զանազան լուծումներով հարուստ զարդահորինվածքներին: Համեմատական անցկացնելով շենգավիթյան տիպի եզրագոտիների ու իր հորինվածքների միջև, եզրագոտիները հստակ աչքի են ընկնում իրենց պատկերազարդման մոտեցմամբ, քան հորինվածքները: Իրանի վրա պատկերված հորինվածքները նույնպես չունեն այն զանազանությունը, որը առկա է Կառնուտի հորինվածքներում: Ի տարբերություն Կառնուտի հորինվածքների, որտեղ ակնառու են գծերի ճկվող պատկերման մոտեցումը ու պարույրների համակենտրոն շրջանների առատությունը՝ Շենգավիթի հորինվածքներում դիտարկվում են սխեմատիկ պատկերման մոտեցումը և խիստ ոճավորումը (աղ. VI, նկ. 17-19): Որոշ հորինվածքներում նկատվում են արագ կերպով կատարման միտումը, որի հետևանքով պատկերները ինչ որ տեղ անփույթ և ոչ հստակ տեսք են ստացել: Հորինվածքները պատկերված են ակոսազարդ, երբեմն՝ խորակոս կատարման եղանակներով:

Եզրակացություն

Շենգավիթյան մշակույթի անոթների ձևաբանական փոփոխությունները ժամանակի ընթացքում նկատելի են դառնում: Զարգացած և ուշ փուլերում ի հայտ են գալիս նոր ձևեր: Առաջացած նոր ձևերը դառնում են էլ ավելի զանազան, որը կարող է պայմանավորված լինել կենսակերպով: Սկսում են առաջ գալ նոր զբաղմունքներ, անասնապահությունում կարիք է առաջանում նոր տիպի անոթների: Չի բացառվում նաև փոխառնչությունների միջոցով, առևտրական կապերի, շփումների, տեղաբնակեցումների և այլ պատճառներով նոր ձևերի ի հայտ գալը: Վերը նշվածի հետ մեկտեղ, համաժամանակյա լոկալ խմբերի գոյությունը պայմանավոր-

ված է նաև բնակլիմայական և դրանից բխող՝ կենսակերպի պայմանների ազդեցությամբ:

Հարկ է նշել, նաև որ այս մշակույթի կավանոթները դիտելիս աչքի են զարնում նրանց ծավալի ընկալումն ու համաչափությունը: Այս ամենի հետ մեկտեղ ակնառու են նաև զարդերի միմյանց հետ հիանալի համադրումները և դրանց փոխկապակցվածությունը տարատեսակ կավանոթների հետ: Կառնուտյան խմբի զարդամոտիվներում շեշտը դրվել է հաճախ պատկերվող հարուստ պատկերազարդմամբ հորինվածքների վրա, իսկ եզրագոտիները երկրորդական նշանակություն են ունեցել, կատարվել են ոչ այնքան ռիթմիկ ու հստակ: Ի տարբերություն Կառնուտի՝ Շենգավիթյան խմբի զարդամոտիվներում հորինվածքները շատ ավելի սխեմատիկ ու գծային ոճով են կատարված: Եզրագոտիները հստակ պատկերման մոտեցումով առանձնանում են պատկերազարդման մոտեցմամբ քան հորինվածքներով: Կառնուտի և Շենգավիթի հուշարձաններում կավանոթների բոլոր տեսակները միմյանցից տարբերվում են ձևաբանական կառուցվածքով, ինչպես նաև զարդամոտիվների հորինվածքների ու զարդագոտիների պատկերազարդումներով և նրանց կատարման եղանակներով:

Հետևաբար, մեր կարծիքով, այս երկու հուշարձանների խեցեղեն նյութը չի կարող դիտարկվել որպես մեկ խումբ: Թե՛ Կառնուտը և թե՛ Շենգավիթը իրենցից ներկայացնում են տարբեր հատկանիշներով առանձին խմբեր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ազիզյան Ա. 2016, Համեմատական զուգահեռներ 19-20-րդ դարերի գորգային զարդամոտիվների և վաղբրոնզեդարյան (կուր արաքսյան) խեցեղենի զարդարման մոտիվներում: Հայկական հանգույց. գորգարվեստի ավանդույթները, միջազգային գիտաժո-

ղով Երևան 20-22 նոյեմբեր, 2013, խմբագիր՝ Ա. Պողոսյան, Երևան, էջ 19-33:

Ազիզյան Ա. 2017, Դիտողություններ Հայաստանի կուր-արաքսյան խեցեղենի հազվադեպ հանդիպող զարդաձևերի վերաբերյալ, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ 2, Հաբիտուս, էջ 238-248.

Ազիզյան Ա. 2018, Շենգավիթ բնակավայրի խեցեղենի որոշ զարդամոտիվների մասին, ԵՔՊԹ, Երևան 5, Նվիրվում է Երևանի 2800 ամյակին, Երևան, էջ 14-20:

Բադալյան Ռ. 1981, Հյուսիս-արևմտյան Հայաստանի 3-րդ. հազարամյակի խեցեղենի մի քանի ձևերի և զարդամոտիվների մասին, Հայկական ՍՍՀ-ՈՒՄ 1979-1980թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված զեկուցումների թեզիսներ, էջ 8-9:

Թումանյան Գ. 2012, Ագարակ I, վաղբրոնզեդարյան բնակավայրը (2001-2008 թթ.), Երևան:

Թորոսյան Ռ. 1967, Թեղուտի վաղ երկրագործական բնակավայրը, (մ.թ.ա. IV հազարամյակ), Երևան·

Խանզադյան Է. 1964, Շրեշ-բլուրի և Քյուլ-թափայի խեցեղենն ու նրա արվեստը, Պատմաբանասիրական հանդես, № 3, էջ 219-228:

Խանզադյան Է. 1967, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում, Երևան:

Խանզադյան Է. 1979, Էլառ-Դարանի, Երևան·

Бадалян Р., Смит А., 2008 Поселение Гехарот: Основные результаты раскопок 2005-2006гг. Հին Հայաստանի մշակույթը XIV, նյութեր հանրապետական գիտական նստաշրջանի, Երևան, էջ 45-68.

Бадалян Р. 2011: К вопросу о периодизации и хронологии Куро-Аракской культуры Армении, Археология, этнология, фольклористика Кавказа., сборник кратких содержаний докладов, Тбилиси, с. 63-68

Бадалян Р. 2018. Новые данные к проблеме периодизации и хронологии раннебронзовых материалов Армении, По ту сторону Арагаца, археологические исследования посвященные памяти Телемака Хачатряна, Ереван, с. 25-28

Байбуртян Е. 1937: По поводу древней керамики из Шрешблура, Москва, Советская Археология № 3, с. 209-213

Байбуртян Е 2011. Последовательность древнейших культур Армении на основании археологического материала, Ереван.

Кинк Х. 1976 Художественное ремесло древнейшего Египта и сопредельных стран, Москва.

Куфтин Б. 2012 Урартский «колумбарий» у подошвы Арарата и куро-араксский энеолит, Махачкала

Мартиросян А. 1964 Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван

Мунчаев Р. 1975 Кавказ на заре бронзового века, Москва

Мунчаев Р., Мерпет Н. 1981 Раннеземледельческие поселения северной месопотамии, Москва.

Мусеибли Н. 2007: Энеолитическое поселение Беюк Кесик, Баку

Пиотровкий Б. 1949 Археология закавказья с древнейших времен до I тысячалетия до н. э., Ленинград.

Шенгавит 2015: каталог археологических материалов из коллекций Музея истории Армении, Музей истории Армении, составители - Бадалян Р. С., Овсепян С. Г., Хачатрян Л. Е., Ереван

Badalyan R. 2014: New data on the Periodization and Chronology of the Kura-Araxes Culture in Armenia, Paleorient, 40.2, Pluridisciplinary Journal of Prehistory and Protohistory of Southwestern and Central Asia, Thematic Issue, Coordinated by C. Chataigner and G. Palumbi, The Kura-Araxes culture from the Caucasus to Iran, Anatolia and the Levant: Between unity and diversity, CNRS Editions, pp. 71-92.

Badalyan R. 2018: The chronology of the Kura-Araxes: New data and old problems of periodization and chronology of the Early Bronze Age materials in Armenia, Armenian Journal of Near Eastern Studies volume XII ISSUE 1, Association for Near Eastern and Caucasian Studies, Yerevan, Oxford, pp. 51-65

Burney C. 1958: Eastern Anatolia in the Chalcolitic and Early Bronze Age, Anatolian Studies vol. VIII, 157-209

Chataigner C., Avetisyan P., Palumbi G., Uerpmann H., Godedzor 2006: A Late Ubaid-Related Settlement in the Southern Caucasus, Beyond the Ubaid Transformation and Integration in the Late Prehistoric Societies of the Middle East, edited by Carter R. and Philip G., Studies in Ancient Oriental Civilization, Volume 63, the Oriental Institute of the University of Chicago, Chicago, Illinois, pp. 391-409.

Smith A., Badalyan R., Avetisyan P. 2009 The Foundations of Research and Regional Survey in the Tsaghkahovit Plain, Armenia. The

Archaeology and Geography of Ancient Transcaucasian Societies volume I, Oriental Institute Publications, v. 134 the Oriental Institute of the University of Chicago

Isikli M., Yardimciel A. 2015· Kura-Araxes Pottery from Kars Museum: A Corpus Study, 4-24

Altunkaynak G., Isikli M., Erkmen M. 2018. In the Light of New Evidence from the Erzurum Plain. An Overview of Kura-Araxes Funerary Practices in Eastern Anatolia, TUBA-AR, Ankara, pp. 73-91

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղ. I. նկ. 1-6 Արագած, Ռ. Թորոսյանի 1980 թ. և Ֆ. Մուրադյանի 2012 թ. պեղ., Էջմիածնի պատմա ազգագրական թանգարան, ինվ. №№ 5565/6, 5506/6, 3945/6, 3946/6, 5581/6, 5567/6 (**գծանկարները՝ հոդվածագրի**).
նկ. 7. Էլառ, Խանզադյան Է. 1967, աղ. VII 2,
նկ. 9, 11. Արճեշ, Խանզադյան Է. 1967, աղ. XXIV,
նկ.12. Հացավան, Խանզադյան Է. 1967, աղ. XIV,
նկ. 8, 10, 13, 14. Էլառ, Խանզադյան Է. 1979, աղ. VII-4, 5, 6, 7,
Աղ. II. նկ.1.Արագած, Ռ. Թորոսյանի 1980 թ. պեղ., Էջմիածնի պատմաազգագրական թանգարան, ինվ. № 3943/6 (**գծանկարը՝ հոդվածագրի**).
նկ. 2.Շրեշ-բլուր, Խանզադյան Է. 1967, աղ.XIX,
նկ. 3, 4, 7, 8, 9. Շենգավիթ, Ս. Սարդարյանի 1967-1969 թթ, 1970 թ., 1971 թ., 1978 թ. պեղ., «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան, ինվ. №№ 7/19,7, 3/67, 1/564, 3/77, 2/126, (**գծանկարները՝ հոդվածագրի**).
նկ. 5. 6. Շրեշ բլուր, Մոխրաբլուր, Խանզադյան Է. 1967, աղ. XX,
նկ. 10, 11, 12, 13. Ագարակ, Թումանյան Գ. 2012, աղ. XVII, 1, 7, աղ. XVIII, 1, աղ. XXIV, 2:
Աղ. III. նկ. 1-14. Կառնուտ, Ռ. Բադալյանի 1981-1985 թթ., 1987 թ. 1990 թ. պեղ. Հայաստանի պատմության թանգարան, ինվ. №№ 3017/16, 2859/52, 3017/22, 2934/4, 3017/30, 2995/42, 2934/33, 2934/36, 3016/19, 3016/17, 2995/30, 3015/8, 2857/8, 2995/46, (**գծանկարները՝ հոդվածագրի**)
Աղ. IV. նկ. 1-12. Շենգավիթ, Ս. Սարդարյանի 1967-1969 թթ., 1970 թ., 1973 թ., 1976-1977 թթ. պեղ., «Էրեբունի» պատմահնագիտա-

կան արգելոց-թանգարան, ինվ. №№ 2/18, 4/297, 1/516, 1/400, 1/517, 2/14, 2/8, 1/394, 1/584, 2/9, 1/518, 6/2,1 (**գծանկարները՝ հոդվածագրի**),
նկ. 13, 14, Շենգավիթ, Шенгавит 2015: табл. 86 840, табл. 73 697:
Աղ. V. նկ.1 Կառնուտ, Smith A., Badalyan R., Avetisyan P. 2009: fig. 7b
նկ. 2 Կառնուտ, Smith A., Badalyan R., Avetisyan P 2009 fig 7e
նկ. 3 Կառնուտ, Smith A., Badalyan R., Avetisyan P 2009 fig 7p
նկ. 4 Շենգավիթ, Հ. Սիմոնյանի 2000թ. պեղ., «Էրեբունի» պատ մահնագիտական արգելոց-թանգարան, ինվ. № 15/8 (**գծանկարը՝ հոդվածագրի**),
նկ. 5 Շենգավիթ, Шенгавит 2015: табл. 73 697,
նկ. 6, Շենգավիթ, Ս. Սարդարյանի 1976 1977 թթ. պեղ., «Էրե բունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան, ինվ. № 6/2,1 (**գծանկարը՝ հոդվածագրի**),
Աղ. VI. նկ. 1-5, 13-16. Կառնուտ, Ռ. Բադալյանի 1983 թ., 1984 թ., 1990 թ. պեղ., պեղ. Հայաստանի պատմության թանգարան, ինվ. №№ 2934/36, 3017/22, 3017/16, 2934/4, 2995/29, 3017/33, 2995/29, 3017/34, 2995/27 (**գծանկարները՝ հոդվածագրի**),
նկ. 6 Շենգավիթ, Шенгавит 2015: табл. 56-545,
նկ. 7-12, Շենգավիթ, Ս. Սարդարյանի 1967-1969 թթ., 1970 թ., 1973 թ., 1976-1977 թթ. պեղ., «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց թանգարան, ինվ. № 1/520, 2/18, 4/297, 2/14, 1/584, 6/2,1 (**գծանկարները՝ հոդվածագրի**):
նկ. 17, Շենգավիթ, Шенгавит 2015: табл. 73-697,
նկ. 18, 19 Շենգավիթ, Шенгавит 2015: табл. 38-375, 377:

Աննա Ազիզյան - *Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարանի գիտահետազոտական բաժնի վարիչ,*
annamalah@yahoo.com

TYPOLOGY OF SOME LOCAL GROUPS OF CERAMICS OF THE EARLY BRONZE PERIOD OF ARMENIA

Keywords: *Shengavitian culture, Karnut, Shengavit, ornamented belt, composition, local group, pottery.*

The changes in morphology of vessels of Shengavit culture chronology became evident period of time. New forms emerge in the advanced and late stages. New forms are becoming more diverse, it can be conditioned with lifestyle. New occupations begin to emerge, in ranching is needed new types vessels, it is not excluded also through exchanges, trade relations, resettlement and other reasons. Above all the existence of simultaneous local groups is also conditioned by the climatic conditions and by influence of conditions of lifestyle emerging from this. It is important to see that when you look at the vessels of this culture, it is distinguished the perception of their proportionality and the volume. With all this it is also obvious the well combination with jewelry and their interconnectedness and combinations with different type of vessels. In decoration motifs of Karnut group was emphasized in compositions with rich decoration depicted consequently and edges had secondary importance, they were not so rhythmic and clear. In difference of Karnut group, the motifs of decoration of Shengavit group the compositions are much more schematic and linear. Edges where a detailed by their approach of decoration not by composition. In a Karnut and In Shengavit monuments all types of vessels differ from each other by morphological structure as well by her motifs of decoration, compositions and ornaments of belts, illustrations and ways of performing them. Consequently, in our opinion, these two monuments cannot be observe as a one group. And Karnut and Shengavit are separate groups with different characteristics.

Anna Azizyan - Erebuni Historical and Archaeological Museum-Reserve, Head of the Scientific Research Section, annamalah@yahoo.com

Էլառ-արագածյան խումբ

Աղ. 1



Աղ. 11

Շրեշ-մոխրաբլուրյան խումբ



Կառնուտ հուշարձանի գարդարված խեցեղեն

Շենգավիթ հուշարձանի զարդարված խեցեղեն



Աղ. V

Կավանոթների ձևերը



Աղ. VI



Կառնուտ հուշարձան
Զարդագոտի
Շենգավիթ հուշարձան
1
2
3
4
5
6
7
8
9
10
11
12
Կառնուտ հուշարձան
Հորինվածք
Շենգավիթ հուշարձան
13
14
15
16
17
18
19

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆ Մ.Թ.Ա. 20-18-ՐԴ ԴԴ. ՔԱՆԵՇԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

ՌՈԲԵՐՏ ՂԱՋԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ *Քանեշ, Աշշուր, Փոքր Ասիա, Հայկական լեռնաշխարհ, Սամուխա, Թեգարամա, Կուսսար, առևտուր, խեթական պետություն, կապադովկյան աղբյուրներ:*

Նախաբան

Քանեշ կամ Նեսա քաղաքը գտնվում էր Փոքր Ասիայի արևելքում (ժամ. Կեսարիա/Կայսերի քաղաքից մոտ 21 կմ հյուսիս-արևելք, հետագայի Կապադովկիայի տարածքում): Քաղաքը բնակեցված է եղել դեռևս պղնձեքարեդարյան ժամանակաշրջանից և ծաղկման է հասել հատկապես մ.թ.ա. II հազարամյակի սկզբներին (մ.թ.ա. 20-18-րդ դդ.), երբ այն հանդիսանում էր տարածաշրջանում աշշուրական առևտրականների կենտրոնատեղին և Քանեշի պետության մայրաքաղաքը[1]: Այն մի որոշ ժամանակ հանդիսացել է նաև խեթական պետության մայրաքաղաքը (մ.թ.ա. 18-րդ դար)[2]:

[1] Կապադովկյան աղբյուրներում հիշատակվել է Քանեշի երկիրը, տարածքը, որը նշանակում է, որ քաղաքը վերահսկել կամ իր ենթակայության տակ է պահել մի շարք հարակից տարածքներ: Քանեշի և նրա պետության պատմության մասին տե՛ս **Forlanini** 1992. 171-179; **Klengel** 2006 3-21, **Klengel** 2007. 154-193; **Dercksen** 2008· 86-102, **Barjamovic** 2011. 230-240, **Michel** 2014 **Barjamovic** 2014, **Barjamovic** 2017: 311-318

[2] Նշենք նաև, որ քաղաքը հանդիսանում էր խեթական (նեսիական) պետության մայրաքաղաքը: Այստեղից է առաջացել նաև հնդեվրոպացի խեթերի լեզվի «նեսիերեն» անունը: Փաստորեն, խեթերի մասին առաջին գրավոր տեղեկությունները թողել են աշշուրցի առևտրականները: Նրանց տեքստերում վկայված են խեթական անձնանուններ, խեթերեն բառեր: Հավանաբար, այս փուլում խեթերի հիմնական բնակեցման վայրերն են

Քանեշում էր հատվում այն ճանապարհը, որը Փոքր Ասիայի կենտրոնական շրջանները կապում էր Հյուսիսային Ասորիքի և Միջագետքի հետ: Նմանատիպ հանգուցային կետում գտնվելը նպաստել է, որ հնուց ի վեր (մ.թ.ա. III հազարամյակից) քաղաքը հանդիսանա տարածաշրջանի վաճառաշահ և միջազգային առևտրափոխանակման կենտրոններից մեկը:

Փոքր Ասիայի և հարակից տարածքների պատմության համար անգնահատելի սկզբնաղբյուրներ են Քանեշից, ավելի ճիշտ՝ Կարահյոյուք բնակավայրի մոտ գտնվող Քյուլթեփե (Մոխրաբլուր, հայկ. Զրզորթ[3]) հնավայրից գտնված, այսպես կոչված, «կապադովկյան աղյուսակները»: Դրանք աքքադերենով, ավելի հստակ՝ հինաշշուրյան խոսույթով գրված տասնյակ հազարավոր սեպագիր սալիկներ են, որոնք ներկայացնում են մ.թ.ա. 20-18-րդ դդ. հիմնականում Փոքր Ասիայի տարբեր շրջաններում գտնվող Աշշուրի առևտրական գաղութների գործունեությունը[4]: Քանեշի սեպագիր սալիկները վաղագույն գրավոր փաստաթղթերն են, որոնք վեր են հանում տվյալ ժամանակաշրջանի տարածաշրջանի պատմությունը և մասամբ լուսաբանում են նաև Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջանների պատմությունը: Այդ աղյուսակներից պարզ է դառնում, որ Աշշուրից դեպի Քանեշ և Փոքր Ասիայի այլ շրջաններ միջազգային առևտուր էր իրականացվում:

Հայկական լեռնաշխարհը, գտնվելով Առաջավոր Ասիայի հյուսիսային մասում, հնուց ի վեր բնական կամրջի դեր է խաղացել Արևելքի և Արևմուտքի միջև: Այստեղով են անցել Հին աշխարհի միջազգային քարավանային առևտրի

հանդիսացել Քանեշից մինչև Վերին Եփրատի ավազան ընկած հատվածը՝ հիմնականում պատմական Փոքր Հայքի տարածքները:

[3] **Մարտիրոսեան** 1959, 92:

[4] Տե՛ս նաև **Lewy** 1964: 181-198, **Яковская** 1985: 228-242

ճանապարհները: Միջագետքի, Հայկական լեռնաշխարհի և Փոքր Ասիայի միջև տարաբնույթ հարաբերություններ վկայված են դեռևս նորքարեդարյան շրջանից: Սակայն այդ փոխհարաբերություններն առավել հստակ և նպատակամղված բնույթ են ստացել Հայկական Տավրոսից հարավ ընկած հյուսիսմիջագետքյան տարածաշրջանում վաղ պետականությունների ձևավորումից հետո: Այս առումով Աշշուրից դեպի Քանեշ և Փոքր Ասիայի այլ շրջաններ միջազգային առևտուրն իր նպաստն է բերել նաև Հայաստանի արևմըտյան շրջանների տնտեսական զարգացմանը[5]:

Քանեշի տեքստերը և հնավայրը

«Կապադովկյան» սեպագիր աղբյուրները առաջին տեղական գրավոր աղբյուրներն են Փոքր Ասիայի արևելյան և Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջանների պատմության վերաբերյալ: Այս առումով կարելի է ասել, որ դրանք տարածաշրջանի գրավոր պատմության սկիզբն են: Ի տարբերություն այլ հնավայրերից հայտնաբերված արխիվների, Քանեշի արխիվը հիմնականում անձնական նամակագրությունից է բաղկացած և որպես այդպիսին ամենախոշորն է Մերձավոր Արևելքում: Տեքստերը (նամակներ, առևտրային հաշվարկներ, դատական տեքստեր և այլ բնույթի տեքստեր) հիմնականում գրված են Փոքր Ասիայում գործող աշշուրյան համայնքի անդամների կողմից: Դրանց քիչ քանակն է պատկանում միայն տեղացիներին, որոնք օգտագործում էին ներմուծված սեպագիր գրային համակարգը: Տեղացիները հիմնականում քաղաքային վարչակազմին պատկանող անձինք էին, մասամբ էլ՝ վաճառականական տների ներկայացուցիչներ[6]:

---

[5] **Ղազարյան** 2013, 38-45:

[6] Քանեշի հնավայրում հայտնաբերվել է առևտրական գործունեության վերաբերյալ ավելի քան 23.000 տեքստ: Բացի Քանեշից, «կապադովկյան»

Քանեշի հնավայրի ուսումնասիրությունները սկսվել են դեռևս 19-րդ դարի 70-ական թթ., երբ տարբեր վայրերում ի հայտ եկան, այսպես կոչված, «կապադովկյան աղյուսակները»՝ հիմնականում ոչ օրինական ճանապարհով ձեռք բերված: 1881 թ. Բրիտանական թանգարանի մասնագետ Թ.Զ. Պինչեսը, հրապարակում է Ստամբուլից գնված մի աղյուսակի տեքստ, որը, համաձայն իր տեղեկության, ծագում էր Կապպադովկիայից: Պինչեսը նշում է, որ նմանատիպ մի աղյուսակ կա նաև Փարիզի Ազգային գրադարանում: Նա այդ աղյուսակները կոչում է «կապադովկյան»[7]: Շուտով հայտնվում են նաև նմանատիպ այլ աղյուսակներ (հիմնականում գնվում էին արևելյան շուկաներում՝ Կեսարիայում, Կ.Պոլսում և այլուր), որոնք Կեսարիայի շրջանից էին բերված: Աղյուսակներում հիմնականում շրջանառվում էր մեկ տեղանուն՝ Քանեշը:

Ձեռք բերված «կապադովկյան» 24 սեպագիր աղյուսակներն առաջինը հրատարակել է ռուս եգիպտագետ Վ. Գոլինիշչևը, որը դրանք համեմատել է Թել էլ-Ամառնայի

աղբյուրներ են հայտնաբերվել նաև այլ վայրերում՝ Ալիշարում (խեթ. Ամկուվա, մոտ 150 աղյուսակ) և դրա մերձակայքում, Բողազքոյում (Խաթթուսա, գտնվել է 72 տեքստ), Ադանայի մերձակա տարածքներում (25 աղյուսակ. պահվում են Ադանայի թանգարանում): Հայտնաբերվել են նաև տվյալ ժամանակաշրջանի աշշուրցի առևտրականների կնիքներ Աջեմհոյուքից (հավանաբար, Պուրուսխանդա): Փոքր Ասիայից դուրս «կապադովկյան» աղյուսակներ են հայտնաբերվել Աշշուրում (54 աղյուսակ), Նուզիիում (Միջագետք, 27 աղյուսակ): Մի քանի աղյուսակներ և կցաբեկորներ են հայտնաբերվել նաև Հյուսիսային Սիրիայի տարածքում: Ընդհանուր առմամբ, բոլոր թանգարաններում, մասնավոր հավաքածուներում կա մոտ 25.000 աղյուսակ, որի միայն քիչ հատվածն է ուսումնասիրվել և հրատարակվել: Քանեշում հայտնաբերված աղյուսակների մեծագույն մասը հայտնաբերվել է Քանեշի միջնաբերդից դուրս գտնվող առևտրական գաղութ-բնակավայրի՝ Կարումի տարածքի մասնավոր տներում:

[7] Anatolia's prologue, Kultepe Kanesh Karum: 7.

սեպագիր աղյուսակների հետ[8]: Այնուհետև «կապադովկյան» աղյուսակների ուսումնասիրության գործին լծվեցին նաև այլ արևելագետներ:

1925 թ. խեթագիտության հիմնադիրներից Բ. Հրոզնին Քյուլթեփե բլրի ստորոտին տարածվող դաշտավայրում պեղեց առաջին աղյուսակները: Նրա պեղումները հաստատեցին, որ Քյուլթեփե հնավայրի տեղում եղել է Քանեշ քաղաքը: Բ. Հրոզնին իր խեթերեն լեզվի վերծանողի համբավին ավելացրեց նաև տաղանդավոր և կարևոր հայտնագործություն իրականացրած հնագետի փառքը[9]:

1930 թ. Է. Ֆոռերը, այնուհետև 1956 թ. Հ. Գյուտերբոկը ապացուցեցին նաև, որ խեթական աղբյուրների Նեսան և «կապադովկյան» աղբյուրների Քանեշը միևնույն քաղաքի անուններն են՝ տրված տարբեր ժամանակաշրջաններում[10]:

Քանեշի հնավայրը բաղկացած է երկու՝ Վերին և Ստորին մասերից: Վերին մասը 21 մ բարձրությամբ բլուր է և ունի մոտ 500-550 մ շրջագիծ (զբաղեցնում էր մոտ 30 հեկտար տարածք): Այն բնակեցված է եղել վաղբրոնզեդարյան ժամանակաշրջանից մինչև հռոմեական ժամանակաշրջանը: Ստորին քաղաքը, որը ասորեստանյան աղբյուրներում

---

[8] **Голенищев** 1890: 5-8; **Golénischeff** 1891. Տե՛ս նաև **Струве** 1960: 6-7.

[9] **Волков, Непомнящий** 2004: 67-86. Զարմանալի է, որ այսօր շատ դեպքերում, հատկապես թուրքական գրականությունում տեղեկություն չի տրվում այդ մասին: Պատճառը, հավանաբար, այն է, որ Բ. Հրոզնին իր հուշերում պատմել է այն դժվարությունների մասին, որոնց նա հանդիպել է մինչև պեղումները սկսելը և դրանց ընթացքում: Նա նշել է, թե ինչպես են տեղացիները թշնամաբար ընդունել եվրոպացիներին, և ինչպես են տեղի թուրք պաշտոնյաները խանգարել հնագիտական պեղումներին: Ավելին, Կեսարիայի նահանգապետը հրամայել էր ձերբակալել չեխ հնագետներին: Ազատ արձակվելուց հետո Բ. Հրոզնու ուղեկից, ճարտարապետ Յ. Ցուկրի վրա մահափորձ էր կատարվել, որը միայն երջանիկ պատահականությամբ էր ավարտվել բարեհաջող նրա համար:

[10] **Güterbock** 1958: 46-50

հայտնի է որպես կարում (քառացի՝ հանգրվան), շրջապատել է բլուրը (այն զբաղեցրել է մոտ 20 հեկտար, սակայն հնարավոր է, որ այն ավելի մեծ տարածք է ունեցել): Բլրի և շրջակա քաղաքի շրջագիծը կազմում է մոտ 2.5 կմ: Կարումը, ըստ հնագիտական տվյալների, բնակեցված է եղել մոտ 300 տարի: Դա, այսպես կոչված, «Աշշուրի առևտրական գաղութների» ժամանակաշրջանն է[11]:

Փոքր Ասիայի տարբեր շրջաններ արդեն մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կեսերից թևակոխեցին վաղ պետականության դարաշրջանը, առաջացան քաղաք-պետություններ, որոնք հիշատակվում են նաև միջագետքյան աղբյուրներում: Դրանցից աչքի էին ընկնում Քանեշը, Պոդուսխանդան, Զալպան, Կուսսարը, Անկուվան, Խաթթուսան և այլն[12]: Աշշուրցի առևտրականների գործունեության փուլում արևելյան Փոքր Ասիայի, Հյուսիսային Ասորիքի և Հայկական լեռնաշխարհի արևմտյան տարածքներում գործում էր շուրջ 40 առևտրական գաղութ (*kārum*) և կայան (*wabartum*): Այդ համակարգը կարելի է բնորոշել նաև որպես աշշուրցիների առևտրային սփյուռք:

Աշշուրցի առևտրականները գլխավորապես զբաղվում էին մետաղի հումքի ներմուծմամբ. ինչից Միջագետքը զուրկ էր: Ներմուծում էին նաև ընտանի կենդանիներ, բուրդ, կաշի, փայտանյութ: Արտահանում էին գերազանցապես արհեստագործական պատրաստի արտադրանք՝ գործվածքներ, հագուստ, կաի-կարասի, ինչպես նաև անագ: Երկար ժամանակ Փոքր Ասիայում բրոնզ ստանում էին տեղական անագի և պղնձի հումքով, սակայն անագի հանքերի մի մասի սպառման պատճառով աշշուրցի առևտրականները

---

[11] **Barjamovic** 2011: 4

[12] Փոքրասիական քաղաք-պետությունների պատմության ամփոփ ուսումնասիրությունը տե՛ս **Lewy** 1965: 1-29; **Orlin** 1970, **Larsen** 1976, **Bryce** 1999 21-36, **Barjamovic** 2011 և այլն:

սկսեցին Փոքր Ասիա ներմուծել նաև անագ: Երկաթի հանքավայրերի տեղը գաղտնի էր պահվում, իսկ երկաթի արտահանումը մինչև մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջը արգելված էր, ինչի պատճառով օտարերկրյա առևտրականները զբաղվում էին նաև երկաթի մաքսանենգ արտահանմամբ: Մաքսանենգ ճանապարհով արտահանվում կամ ներմուծվում էին նաև շատ այլ ապրանքներ[13]:

Սակայն առևտրական այդ հարաբերությունները կարող էին ծաղկել միայն այն դեպքում, երբ տարածաշրջանում գոյություն չուներ հզոր պետություն: Միջազգային առևտուրը դադարեց կամ նվազեց, երբ Փոքր Ասիայի արևելքում և Հայկական լեռնաշխարհի արևմուտքում առաջացավ խեթական պետությունը (մ.թ.ա. 18-րդ դ.), իսկ Հյուսիսային Միջագետքում առևտրական ճանապարհների վերահսկողությունը անցավ խուռիացիներին: Դեպի Փոքր Ասիա առևտուրը դանդաղեց, այնուհետև կանգ առավ: Առևտուրը հիմնականում ուղղորդվեց դեպի արևելամիջերկրածովյան տարածաշրջան: Աշշուրի համար սա տնտեսական մեծ հարված էր: Քանեշի աշշուրցի առևտրականների գործունեության դադարեցմանը զուգահեռ դադարեցին նաև «կապպադովկյան» գրավոր աղբյուրները:

Քանեշի աղբյուրները Հայկական լեռնաշխարհի արևմուտքում գտնվող բնակավայրերի վերաբերյալ

«Կապադովկյան» սեպագիր սալիկներում կան տեղեկություններ նաև Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջանների վերաբերյալ: Այդ աղբյուրներում հիշատակված բնակավայրերի մեծ մասը (բացի Սամուխայից) հստակ չի տեղորոշվում, սակայն կան մի քանի քաղաքներ, որոնք աշխարհագրական առումով գտնվել են Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասում և որոշակի հետաքրքրություն են

[13] **Янковская** 1988. 71-84, **Barjamovic** 2011: 169-180

ներկայացնում Լեռնաշխարհի՝ մ.թ.ա. 2-րդ հազարամյակի առաջին կեսի պատմության համար:

Առաջին քաղաքը, որի մասին բազմաթիվ հիշատակումներ կան Քանեշի աղբյուրներում, Սամուխան է: Համաձայն «կապադովկյան» աղյուսակների՝ քաղաքն ակտիվ առևտրային կապեր է ունեցել տարածաշրջանի առևտրական այլ կենտրոնների՝ Քանեշի, Լուխուզատտիյայի, Կարահնայի և այլ քաղաքների հետ: Սամուխայում կար նաև ասորեստանյան վաճառականների կայան (*wabartum*): Համաձայն վերոհիշյալ աղբյուրների՝ այն հանդիսացել է տարածաշրջանում բրդի և անագի առևտրի կենտրոններից մեկը, հետագայում նաև՝ խեթական պետության հյուսիսարևելյան մասի կարևորագույն վարչական և հոգևոր կենտրոնը:

Նորագույն մասնագիտական գրականությունում Սամուխան սովորաբար տեղորոշվում է ներկայիս Սեբաստիա (Սըվազ) նահանգում՝ Քայալըփընար բնակավայրի մոտ գտնվող հնավայրի տեղում (Հալիս գետի հյուսիսային ափին է՝ Սեբաստիայից մոտ 45 կմ հարավ-արևմուտք)[14]: Հնավայրը մոտ 20 հեկտար տարածք է զբաղեցնում[15]:

Սամուխայի հնավայրից գտնվել են նաև արձանագրություններ: Դրանցում առկա տեղեկություններն ունեն հիմնականում ծիսակարգային նշանակություն: Հնավայրում հայտնաբերվել է նաև «կապադովկյան» ժամանակաշրջանով թվագրվող մի աղյուսակի մաս (Kp 05/120)[16]:

---

[14] Պետք է նշել, որ որպես հնավայրի գտնվելու վայր նշվել է արևելյան Կապադովկիան, այնինչ այն Փոքր Հայքի տարածքում է՝ Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածում (Հայկական լեռնաշխարհի արևմտյան սահմանների մասին տե՛ս **Зограбян** 1979. 14):

[15] Տե՛ս **Ղազարյան** 2017, 116-124:

[16] Արձանագրության մեջ նշվում է, որ ոմն Տամուրիյա գնում է կատարել աշխուրցի մի առևտրականից: Առևտրի օբյեկտ են հանդիսացել մարդիկ, տե՛ս **Sommerfeld** 2006: 231-233; **Barjamovic** 2011: 152

Քանեշի աղբյուրներում հիշատակվել են նաև այլ բնակավայրեր, որոնք կարելի է տեղորոշել Հայկական լեռնաշխարհի արևմուտքում: Դրանցից մեկն է Թեգարաման, որի վերաբերյալ նույնպես առաջին տեղեկությունները հայտնվել են «կապադովկյան» աղյուսակներում: Հավանաբար, բնակավայրը գոյություն է ունեցել դեռևս մ.թ.ա. 3-րդ հազարամյակում: Քաղաքն առևտրային կապեր է ունեցել տարածաշրջանի շատ բնակավայրերի հետ: Թեգարաման տարածաշրջանում կարևոր առևտրական տարանցիկ կենտրոններից մեկն է եղել: Առևտրական ճանապարհը, որ սկսվում էր Աշշուրում, անցնում էր Թեգարամայով և հասնում Քանեշ: Քաղաքում կար աշշուրական առևտրական գաղութ և գաղութի վարչակազմ (*bēt kārim*): Եթե Քանեշի աղբյուրներում տրված է, որ Թեգարաման բնակավայր է, ապա հետագա խեթական աղբյուրներում այն նշված է որպես և՛ երկիր, և՛ քաղաք: Խեթական տերության անկումից (մ.թ.ա. 1180-ական թթ.) հետո Թեգարաման հիշատակվել է նաև ասորեստանյան, հայկական աղբյուրներում և Աստվածաշնչում:

Համադրելով «կապադովկյան», խեթական և ասորեստանյան աղբյուրները՝ Թեգարաման կարելի է տեղորոշել Վերին Եփրատի հովտում, գետի աջ ափին, Կարգամիսից (ներկայիս Ջերաբլուս հնավայրի տեղում) հյուսիս, Իսուվայից (հայկական Ծոփքը) արևմուտք, խեթական Վերին երկրից հարավ և Քանեշից արևելք[17]: Հարկ է նշել, որ մասնագետների մեծ մասը համակարծիք են Թեգարաման Մելիտենեի արևմուտքում տեղադրելու հարցում: Թեգարամա երկիրը, փաստորեն, տեղադրվում է հետագայի Երկրորդ Հայքի (Հուստինիանոս I կայսեր վարչական փոփոխություններից հետո՝ Երրորդ Հայք) տարածքում[18]: Հետազոտողների

[17] **RGTC, VI:** 383-384

[18] Տե՛ս **Երեմյան** 1963, 100: Երրորդ Հայքում հիշատակվել են Մելիտենե, Արկա, Արաբիսոն, Արիարաթիա, մյուս Կոմանա և Կուկիսոն քաղաքները:

մեծ մասը Թեգարաման տեղորոշում են ներկայիս Գյուրուն բնակավայրի տեղում[19] կամ Գյուրունից հարավ՝ Էլբիստանի (Ալբիստանի) հովտում[20]:

«Կապադովկյան» աղբյուրներում կարևոր տեղեկություններ են պահպանվել նաև Կուսսարա (Կուասար) քաղաքի մասին, որը նույնպես ներքաշված էր Աշշուր–Քանեշ միջազգային առևտրում: Քաղաքը հետաքրքրություն է ներկայացնում նաև այն առումով, որ հետագայում հիշատակվել է որպես առաջին խեթական արքաների նստավայր[21]:

Կուսսարան նույնպես առևտրական ճանապարհով կապված էր Քանեշի հետ: Քաղաքում եղել է աշշուրյան առևտրականների կայան՝ վաբարտում: Ըստ «կապադովկյան» աղբյուրների՝ Կուսսարան ունեցել է իր կառավարիչ-արքան, այսինքն՝ հանդիսացել է առանձին քաղաք-պետության կենտրոն: Այդ աղբյուրները հստակ տեղեկություն չեն տալիս քաղաքի տեղադրության մասին: Սակայն ակնհայտ է, որ Կուսսարան գտնվել է Քանեշից արևելք: Մենք գիտենք նաև, որ Կուսսարան խեթական Պիթխանա և Անիտտա արքաների նստավայրն էր: Ըստ խեթական աղբյուրների՝ Խաթթուսիլի I-ը (մ.թ.ա. 16-րդ դար) այնտեղ պալատ է ունեցել, և նրա կառավարման վերջին տարիներին քաղաքը հանդիսացել է նրա նստավայրը: Ե՛վ Պիթխանան, և՛ Խաթթուսիլի I-ը հիշատակվել են որպես Կուսսարի «մարդ» կամ արքա: Հետագայում Խաթթուսիլի III-ը (մ.թ.ա. 1267-1237

Տե՛ս **Ադոնց** 1987, 191-192, 198: Տե՛ս նաև **Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա**, հ. 1, 200-201:

[19] Gürün-ը (հայ.՝ Կիւրին, Կյուրին) բնակավայր է Սեբաստիայի նահանգում: Տե՛ս **Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան**, հ. 1, 924: Այս տեղադրությունն առաջին անգամ առաջարկել է Է. Ֆոռերը (**Forrer** 1920: 75)

[20] Թեգարամայի վերաբերյալ աղբյուրների և տեղադրության մասին տե՛ս **Քոսյան** 2004, 92 93: **Ղազարյան** 2016, 19-30: **Ցականյան** 2017, 161-180:

[21] **Ghazaryan** 2017: 1391-1395

թթ.) նույնպես նշել է, որ իր նախնիները Կուսսարից են: Փաստորեն, խեթական արքաները որևէ այլ քաղաք չեն հիշատակել որպես իրենց տոհմի բնօրրան, բացի Կուսսարայից:

Քաղաքի տեղորոշումն առայժմ անհնարին է, սակայն ըստ մասնագետների մեծ մասի տեսակետի՝ այն գտնվել է պատմական Փոքր Հայքի տարածքի հարավում: Օրինակ, Թ. Բրայսը գտնում է, որ Կուսսարան գտնվել է Հալիսից հարավ-արևելք՝ Անտիտավրոսի լեռների շրջանում, ներկայիս Şar քաղաքի տեղում (Կոմանա Կապադովկիայում)[22]: Ըստ Օ. Գրնիի՝ Կուսսարան տեղորոշվում է Տավրոսի լեռների հատվածում (հավանաբար, Անտիտավրոսի - Ռ. Ղ.)՝ Խուրմա և Լուխուզատտիյա քաղաքների մոտ[23]: Գ. Բարյամովիչը Կուսսարան տեղորոշում է Էլբիստանի հովտից[24] հյուսիս (Լուխուզատտիյայից դեպի Սամուխա տանող ճանապարհի վրա)[25]. այդ տեղորոշումն այսօր ընդունելի է մասնագետների մեծ մասի կողմից:

Փաստորեն, Կուսսարան Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան հատվածի հնագույն քաղաքներից մեկն էր, և կարելի է արձանագրել, որ խեթական տերության ակունքները գտնվում էին Հայկական լեռնաշխարհի արևմուտքում՝ պատմական Փոքր Հայքի հարավային տարածքներում:

Հայկական լեռնաշխարհի արևմուտքում գտնվող և «կապադովկյան» տեքստերով փաստվող մյուս տեղանուններն են Խախխումը[26], Լուխուզատտիյան[27], Զալպան[28], Խու-

---

[22] **Bryce** 2005: 35-36

[23] **Gurney** 2003: 123, n. 24

[24] Ալբիստանի կամ Էբիստանի վերաբերյալ տե՛ս **Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան**, 1986, հ. 1, 71:

[25] **Barjamovic** 2011: 143-150

[26] **Նույն տեղում**, էջ 87-107:

րաման[29]: Սակայն դատելով «կապադովկյան» աղբյուրների տվյալներից՝ կարելի է փաստել, որ վերոնշյալ քաղաքները գտնվել են Քանեշից արևելք՝ Եփրատից մինչև Քանեշ ընկած տարածքում: «Կապադովկյան», ինչպես նաև խեթական աղբյուրները առավել հստակ տեղորոշման հնարավորություն չեն տալիս:

Եզրակացություններ

Այսպիսով, կարող ենք ենթադրել, որ Սեբաստիայի և Մալաթիայի միջակայքում գտնվող տարածքը, այսինքն՝ հալիս-եփրատյան շփման գոտին, կարևոր դերակատարում է ունեցել հինաշշուրյան առևտրական գործունեության ժամա-

---

[27] Մասնագիտական գրականության մեջ քաղաքը հիմնականում տեղորոշվում է Քանեշ Աշշուր առևտրական հիմնական մայրուղու վրա՝ Խախխումի և Քանեշի միջև: Մեկ այլ ճանապարհով քաղաքը կապված էր նաև Սամուխայի հետ: Հավանական է, որ այն ընկած էր Թեգարամայից դեպի Խաթթում (Խաթթուսա) ճանապարհի վրա՝ Խուրամայից դեպի Խախխում տանող ճանապարհի վրա: Լուխուզատիյան տեղորոշվել է Խախխում-Քանեշ գլխավոր ճանապարհից դուրս, այսպես կոչված՝ «Նեղ ուղու» վրա (այդ ճանապարհի վերաբերյալ տե՛ս **Barjamovic** 2011: 133-143)

[28] «Կապադովկյան» աղբյուրների Զալպան հիշատակվում է Խախխում, Թեգարամա քաղաքների մոտ: Զալպան, ինչպես Խախխումը, աշշուրյան աղբյուրներում նշված է որպես կարևոր առևտրային կետ, որտեղ աշշուրցի առևտրականներն ունեին իրենց տները և պահեստները: Ինը կապադովկյան տեքստեր նշում են «Զալպա երկրով» (*māt Zalpa*) անցնելու մասին, որը փաստում է տվյալ ժամանակաշրջանում Զալպա քաղաքպետության գոյության մասին: Զալպան հետագայում գրավվում է Խաթթուսիլի I-ի կողմից և օգտագործվում որպես հենակետ՝ գրոհելու Խախխումը: Տե՛ս **Barjamovic** 2011: 107-122

[29] Հավանաբար, քաղաքը, ինչպես և Քանեշը, պատկանել է նեսիախոս ընակչությամբ արեալին: Քաղաքի գլխավոր աստվածն էր Խանտիդասուն: Խուրաման խեթական աղբյուրներում նշվել է որպես խեթերի կողմից առաջին նվաճված քաղաքներից մեկը: Քաղաքը խեթական պետության պատմության ընթացքում պահպանել է իր քաղաքական և հոգևոր նշանակությունը: Այն տեղորոշվել է Անտիտավրոսի լեռների շրջանում, Եփրատից արևմուտք: Տե՛ս **Orlin** 1970: 79

նակաշրջանում և իր նպաստն է բերել նաև Հայաստանի արևմտյան շրջանների տնտեսական զարգացմանը:

Հատկապես պատմական Ծոփքի և Աղձնիքի հնավայրերի նյութերը ցույց են տալիս, որ քաղաքային մշակույթը, առնվազն մ.թ.ա. 3-րդ հազարամյակից, ակտիվ զարգացում է ապրել և շարունակվել նաև հետագա դարերում[30]: Տեղի հնավայրերում հայտնաբերված բազմաթիվ փոքրասիական և միջագետքյան առարկաները վկայում են այն մասին, որ չնայած այս կենտրոնները գտնվել են Աշշուր-Քանեշ հիմնական առևտրական ճանապարհից հյուսիս, սակայն նրանք նույնպես ակտիվ կերպով ներգրավված են եղել տարանցիկ միջազգային առևտրում: Առավել ևս, որ Հայաստանի այդ տարածքները հարուստ են մետաղահանքերով (հայտնի էին հատկապես Անգեղտուն գավառի Արկնիի (Էրգանի-Մադեն) պղնձահանքերը)[31], որոնք հնուց ի վեր շահագործվել են և, բնականաբար, չէին կարող աշշուրցի առևտրականների տեսադաշտից դուրս մնալ:

Հավանական է, որ այդ կապերը չեն սահմանափակվել միայն Հայաստանի հարավարևմտյան մասերով, այլ հասել են մինչև նրա կենտրոնական և հյուսիսային շրջանները՝ իրենց մեջ ներգրավելով նաև Տուրուբերանի, Բարձր Հայքի և Այրարատի տարածքները: Միջինբրոնզեդարյան ժամանակաշրջանում առևտրական ուղիները հասել են նաև մինչև Հայաստանի հյուսիսային և Վրաստանի արևմտյան շրջանները, որտեղ գտնվող մետաղահանքերը նույնպես հնուց ի վեր շահագործվել են:

Կարելի է եզրակացնել, որ Հայկական լեռնաշխարհի՝ մ.թ.ա. 2-րդ հազարամյակի առաջին կեսի ակտիվ առևտրատնտեսական կապերը հարևան տարածաշրջանների (Փոքր Ասիա, Միջագետք) հետ նպաստել են Հայաստանի արև-

---

[30] **Քոքոխյան** 1999, 260-268:
[31] **Kuhrt** 1998. 25

մըտյան հատվածում պետականությունների առաջացմանը՝ ի դեմս Հայասա-Ազզիի, Ալզիի, Իսուվայի: Այս գործընթացներում իր կարևոր նշանակությունն է ունեցել, անշուշտ, Աշշուր-Քանեշ միջազգային տարանցիկ առևտրուղին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ադոնց Ն. 1987, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում: Քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, Երևան, 639 էջ

Բոբոխյան Ա. 1999, Ծոփքը մ.թ.ա. III - II հազարամյակների սահմանին, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, N 1, էջ 260 268:

Երեմյան Ս. 1963, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 154 էջ:

Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա: Հայաստանը հնագույն ժամանակներից մինչև Ք.հ. 298 թվականը, հ. 1, Երևան, 2007, Երևանի համալսարանի հրատարակչություն: Կազմողներ՝ Պ.Հ. Հովհաննիսյան, Ա.Ե. Մովսիսյան, 550 էջ.

Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Թ.Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախշյան, Հ.Խ. Բարսեղյան: Երևան, 1986, Երևանի համալսարանի հրատարակչություն, հ. 1:

Ղազարյան Ռ. 2013, Հայաստանը միջազգային առևտրի ոլորտում Ք.ա. II հազարամյակի առաջին կեսին, Հայաստանի քաղաքակրթական ավանդը Մետաքսի ճանապարհի պատմության մեջ, Միջազգային գիտաժողովի նյութեր, 21-23 նոյեմբերի 2011 թ., Երևան, էջ 38 45:

Ղազարյան Ռ. 2016, Խեթական պետության հարավարևելյան սահմանային շրջանը, ՄՄԱԵԺ, XXX, էջ 19-30:

Ղազարյան Ռ. 2017, Սամուխա քաղաքի պատմության որոշ հարցերի շուրջ, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, N 1, էջ 116-124:

Մարտիրոսեան Ն. 1959, Խարբերդի շրջանները՝ Հայոց հնագոյն օրրանը: Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը: Յուշամատեան ազգային պատմական մշակութային եւ ազգագրական: Աշխատասիրեց եւ կազմեց Վահէ Հայկ, Նիւ Եորք, էջ 92-166.

Ցականյան Ռ. 2017, «Տուն Թորգոմա»-ն սկզբնաղբյուրներում, Արևելագիտությունը Հայաստանում: Հատոր 3: Հին և միջնադարյան Հայաստանը և իր հարևանները (Ժողովածուն նվիրվում է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գագիկ Սարգսյանի ծննդյան 90 ամյակին), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, էջ 161-180:

Քոսյան Ա. 2004, Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական աղբյուրների), Երևան, «Զանգակ 97» հրատարակչություն, 168 էջ:

Волков А., Непомнящий Н. 2004, Хетты. Неизвестная империя Малой Азии, Москва, Издательский дом «Вече», 288 с.

Голенищев В.С. 1890, Археологические результаты путешествия по Египту зимой 1888/89г. Записки Восточнаго отдѣленія Русскаго археологическаго общества (ЗВОРАО), т. V, вып. 1, с. 5-8.

Зограбян Л. Н. 1979, Орография Армянского нагорья (опыт орографического анализа морфоструктуры), Ереван, издательство АН Арм. ССР, 120 с.

Струве В. 1960, Значение В.С. Голенищева для египтологии. Очерки по истории русского востоковедения, Сборник III, Москва, Издательство Восточной литературы, 69 с.

Янковская Н.Б. 1985, Торговая община Каниша и свободный рынок (Малая Азия XIX в. до н.э.), Древняя Анатолия, Москва, с. 228 242.

Янковская Н.Б. 1988, Контрабанда в торговом обьединении Каниша (архивы Кюль-тепе, Малая Азия XIX в. до. н. э.), Древний Восток, 5, с. 71-84.

Anatolia's prologue, Kultepe Kanesh Karum, Assyrians in Istanbul [Exhibition Catalogue]. Editors Fikri Kulakoğlu, Selmin Kangal. Kayserı Metropolitan Municipality Cultural Publication No 78, Kayseri, 2011, 360 p.

Barjamovic G. 2011, A Historical Geography of Anatolia in the Old Assyrian Colony Period. Museum Tusculanum Press, Copenhagen, 519p.

Barjamovic G. 2014, The size of Kanesh and the Demography of Early Middle Bronze Age Anatolia, pp. 55-68, in Current Research at Kultepe-Kanesh: An Interdisciplinary and Integrative Approach to Trade Networks, Internationalism, and Identity, Levent Atici, Fikri Kulakoglu, Gojko Barjamovic, Andrew Fairbairn, Series: The Journal of Cuneiform Studies Supplemental Series, Copyright Date.

Barjamovic G. 2017, A Commercial Geography of Anatolia: Integrating Hittite and Assyrian Texts, Archaeology and Topography, in L. Ullmann and M. Weeden (eds.) Hittite Landscape and Geography. Leiden: Brill. Chapter 23, pp. 311-318.

Bryce T., The Kingdom of Hittites, Oxford, Clarendon Press, 1999, 464 p. (2005, New edition, 554 p.).

Dercksen J. G. 2008, Subsistence, surplus and the market for grain and meat at ancient Kanesh, Altorientalische Forschungen (AoF), 35/1, pp. 86 102

Forlanini M. 1992, Am mittleren Kizilirmak, in H. Otten et al. (eds.), Hittite and Other Anatolian and Near Eastern Studies in Honour of Sedat Alp, Ankara, pp. 171-179.

Forrer E. 1920, Die Provinzeinteilung des assyrischen Reiches, Leipzig, J.C. Hinrichs.

Ghazaryan R. 2017, Kussara - the cradle of Hittite state, The English Historical Review, Issue 559 (2), December, Volume 132, Oxford University Press, pp. 1391-1395

Golénischeff W. S. 1891, Vingt quatre tablettes Cappadociennes de la collection Golénischeff. SPb.

Gurney O. R. 2003, The Upper Land, mātum elītum. Hittite Studies in Honor of Harry A. Hoffner Jr. on the Occasion of His 65th Birthday. Ed. By Gary Beckman, Richard Beal and Gregory McMahon, pp. 119-126.

Güterbock H.G. 1958, Kaneš and Neša: Two Forms of One Anatolian Place Name?, Eretz Israel, 5, pp. 46-50.

Klengel H. 2005, Studien zur hethitischen Wirtschaft: Einleitende Bemerkungen, AoF, 32, S. 3-22.

Klengel H. 2006, Studien zur hethitischen Wirtschaft, 2: Feld und Gartenbau, AoF, 33, S. 3 21.

Klengel H. 2007, Studien zur hethitischen Wirtschaft, 3: Tierwirtschaft und Jagd, AoF, 34, S. 154-193.

Kuhrt A. 1998, The Old Assyrian Merchants. Trade, Traders and the Ancient City, Helen Parkins and Christopher Smith, London and New York, Routledge, pp. 15 30.

Michel C. 2014, Considerations on the Assyrian settlement at Kaneš. L. Atici; F. Kulakoğlu; G. Barjamovic; A. Fairbairn. Current Research at Kultepe/Kanesh. An Interdisciplinary and Integrative Approach to Trade Networks, Internationalism, and Identity, ASOR, Lockwook Press, pp. 69-84, Journal of Cuneiform Studies Supplemental Series.

Larsen M.T. 1976, The Old Assyrian City-State and its Colonies, Studies in Assyriology, 4, Mesopotamia, Copenhagen.

Lewy H. 1964, Notes on the Political Organization of Asia Minor at the Time of the Old Assyrian Texts, Orientalia, vol. 33, f. 2-3, pp. 181-198.

Lewy H. 1965, Anatolia in the Old Assyrian Period, Cambridge Ancient History, I, Ch. XXIV, pp. 1-29.

Orlin L.L. 1970, Assyrian Colonies in Cappadocia, The Hague - Paris. Mouton, 272 p.

RGTC, VI. Del Monte G., Tischler J., Répertoire Géographique des Textes Cunéiformes, № VI. Die Orts-und Gewässernamen der hethitischen Texte, Wiesbaden, 1978, 596 S.

Sommerfeld W. 2006, Ein altassyrisches Tafelfragment aus Kayalipınar, pp. 231-233. In Müller-Karpe A. et al., Untersuchungen in Kayalipinar 2005.

Ռոբերտ Ղազարյան - *պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, Հին Արևելքի բաժին, առաջատար գիտաշխատող,*
rghazaryan@orient.sci.am

THE WESTERN REGIONS OF THE ARMENIAN HIGHLAND ACCORDING TO THE 20TH-18TH CC BC KANEŠ SOURCES

Keywords: *Kaneš, Aššur, Asia Minor, Armenian Highland, Samuha, Tegarama, Kussar, Trade, Hittite State, Cappadocian tablets.*

The city of Kaneš or Nesa was located in the east of Asia Minor. The city had been inhabited since the Chalcolite Age and flourished especially at the beginning of the second millennium (20th-18th centuries BC), when it was the center of the Assyrian merchants in the region and the capital of the state of Kaneš. For some time it was also the capital of the Hittite state (18th century BC).

Invaluable sources for the history of Asia Minor and the surrounding areas are the so-called "Cappadocian tablets" from Kaneš, to be more precise from the Kültepe (Arm. Zrzort). These are tens of thousands of cuneiform tablets written in Akkadian, representing mainly the activities of Aššur trade colonies located in different regions of Asia Minor in the 20th-18th centuries BC. These are the earliest written documents that reveal the history of the region at that time and partially cover the history of the western regions of the Armenian Highland.

Robert Ghazaryan - PhD, *Institute of Oriental Studies NAS RA, Department of Ancient Orient, Leading Researcher,*
rghazaryan@orient.sci.am

ՎԱՆԱ ԼՃԻ ԱՎԱԶԱՆԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ (ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ՍՅՈՒԺԵՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՈՒ ՏԻՊԱԲԱԺԱՆՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՓՈՐՁ)[1]

ՀԱՍՄԻԿ ՀՄԱՅԱԿՅԱՆ

Բանալի բառեր՝ *առասպել, Վան, ծես, Վանա լճի ավազան, վիշապամարտ, արևային առասպել, Հայոց ձոր, դիցարան, վախճանաբանական:*

Հայտնի է, որ աշխարհագրական միջավայրը, բնակլիմայական պայմանները շատ բանով պայմանավորում են տվյալ տարածաշրջանի բնակչության մշակույթի բնույթը և առասպելաբանական պատկերացումները: Ինչպես նշում է Ի. Վայնբերգը. «Իհարկե, բնությունը, բնակլիմայական-աշխարհագրական միջավայրը ոչ ամբողջապես է պայմանավորում մշակույթի մակարդակը և բնույթը, սակայն, անկասկած, ազդեցություն է գործում նրա ձևավորման վրա՝ դառնալով վերջինիս զարգացման նախադրյալը: Այդ ազդեցությունը հիմնականում դրսևորվում է տեղական մշակույթի առանձնահատկություններում»[2]: Այս առումով հատկանշական է Գ. Սրվանձտյանցի հետևյալ ձևակերպումը. «Վանա ժողովրդական կենցաղը և իրենց շուրջ եղած բնության տեսարանը ազդած է իրենց լինել ճարտարամիտ և բանաստեղծ: Տեղ մը՝ որ ջրեն առավել գինի կա, խոտեն առավել՝ ծառ և միրգ. ամպերն անգամ վարդ ու ծաղիկ են. հոդն անդադար թռչունք գույնզգույն և ձայն ի ձայն կը ճխան, կը ճախրեն. ծով ու ձուկ ունին, բարձր բերդ և շեն քաղաք, ծաղ-

[1] Հոդվածը հրատարակվում է ՀՀ ԳՊԿ թեմատիկ ֆինանսավորման 18T-6A139 գիտական թեմայի շրջանակներում:

[2] **Вайнберг 1986,** 22

կավետ լերինք, շուշանավետ հովիտք, որսականով և որսով լիք. ջրիեղեղի դարեն հիշատակներ և զրույցներ ունին իրենց մեջ. աշխարհի փորձեր և մարդկային զանազան հնարքներ տեսած անցուցած, ինչե՞ր չեն կրնար ստեղծել երևակայությամբ կամ պատմել ավանդությամբ ու ավելորդությամբ, որոնց մեջ արդեն միշտ նոր և սովորական է սնոտիապաշտություն և ոգիներու երևույթն ու գործողություն մարդոց հետ. հրեղեն մարդոց, ձիոց և ամեն էակաց ու անմահական վայելչությանց գաղափարն այնքան հասարակ է նրանց խոսակցության մեջ, ինչպես հացի և ջրի գաղափարն»[3]:

Եվ տրամաբանորեն շարունակելով Սրվանձտյանցի միտքը՝ նշենք այն հայտնի իրողությունը, որ Վանա լճի ավազանի հետ են կապվում բազմաթիվ ավանդազրույցներ, առասպելներ, հավատալիքներ, ծեսեր, որոնց մեծ մասը հավանաբար սկզբնավորվել է դեռ խեթական, ուրարտական, վաղնջահայկական ժամանակներում և շատ դեպքերում գոյատևել մինչև քսաներորդ դարը: Հարկ է նշել, որ, ըստ Ա. Բոբոխյանի, Վանա լճի ավազանը ընդհանրապես շատ կարևոր քաղաքակրթական դերակատարում է ունեցել Հայկական լեռնաշխարհի հնագույն մշակույթների ձևավորման գործընթացում[4]: Բազմաթիվ ուսումնասիրողներ, այդ թվում և մենք, բազմիցս և տարբեր տեսանկյուններից անդրադարձել են Վանա լճին առնչվող բանահյուսական ժառանգությանը, սակայն, կարծում ենք, այդ առասպելաբանական նյութերը կարիք ունեն համակարգման՝ ըստ առասպելաբանական սյուժեների, որի արդյունքում առավել ամբողջական պատկերացում կարող ենք կազմել Վանա լճի ավազանի բնակիչների առասպելաբանական մտածողության, աշխարհընկալման մասին: Մեր նպատակն է թե՛ սե-

[3] **Սրվանձտյանց 1978,** 1, 170.
[4] **Բոբոխյան** 2013, 25-47:

պագրական ժամանակաշրջանից հասած, թե՛ հայկական աղբյուրներում պահպանված, թե՛ տարբեր ուսումնասիրողների կողմից դիտարկված նյութերի մեկտեղման արդյունքում ընդհանրական և նախնական ձևով տիպաբաժանել ու դասակարգել այն հիմնական առասպելական սյուժեները, որոնք մեծ մասամբ վերաբերում են Վանա լճին, Վան քաղաքին և Վասպուրական նահանգին: Նյութի համակարգման արդյունքում, ըստ նախնական ուսումնասիրության, կարելի է ասել, որ հիմնական առասպելական սյուժեները հետևյալն են.

1. Աշխարհի տեսքի, կառուցվածքի և բնատեսքի առասպելներ (Զագրոշի և Տավրոսի մարտը, Վանա լճի առաջացումը):

2. Ազգածագմանն առնչվող կամ անվանադիր նախնիներին առնչվող առասպելներ (Հայոց ձոր գավառի և Հայկաշենի անվանումների առաջացումը հայոց նախնի Հայկի անունից):

3. Արևային առասպելներ (Վանա լիճը՝ արևի ննջարան, Վանը Արևի աստծո, աստվածուհու հնագույն պաշտամունքավայր և այլն):

4. Վիշապի և Վիշապամարտի առասպելներ (Վանա լճում բնակվող վիշապների. նրանց մոխրացմանն առնչվող առասպելներ):

5. Մեռնող-հառնողին և սիրո ու պտղաբերության դիցուհուն նվիրված առասպելներ (Արա Գեղեցիկ և Շամիրամ, ինչպես նաև Արտամետին առնչվող այլ դիցուհիներին նվիրված սյուժեներ):

6. Կատարածաբանական առասպելներ (Վանա ժայռը որպես Միերի փակվելու վայր և նրան առնչվող վախճանաբանական պատկերացումները):

Այժմ, առավել մանրամասն անդրադառնանք վերոնշյալ թեմաներին: Առաջինում մենք ընդգրկել ենք աշխարհի տեսքին, կառուցվածքին և բնատեսքին վերաբերող առասպելները, որոնցում մասնավորեպես կարելի է ընդգրկել Զագրոշի և Տավրոսի մենամարտի արդյունքում Վանա լճի առաջացման առասպելը: Այն կարելի է համարել բնատեսքի առասպել, որը հետևյալն է. «Այս լեռները առաջ եղջյուրներով վիշապներ են եղել: Զագրոշն ուզում է ուտել Տավրոսին և կռվի է ելնում նրա դեմ: Կռիվը տեղի է ունենում Հաքյարի մեջ, Արգեոսի և Ջուտիի կողմերում: Տավրոսը թեև տարածությամբ փոքր էր, բայց ավելի ուժեղ լինելով, այնպես է հարվածում Զագրոշի ճակատին, որ նրա եղջյուրները պոկվում են: Մի եղջյուրը թռչում, ընկնում է Արգեոսից հեռու և ցցվում է գետնի մեջ, որ մինչև այսօր Մասիուս է կոչվում, իսկ մյուս եղջյուրը թռչում և խրվում է Արարատի կողը, որ մինչև այսօր Մասիս է կոչվում: Զագրոշը շշմած՝ մեջքը դեմ է տալիս Տավրոսի Առնոս և Արտոս եղջյուրներին: Տավրոսը բարկացած՝ այնպես ուժեղ է խփում նրա մեջքին ու փորին, որ մի մեծ ձոր է բացում Կոթուտից սկսած մինչև Տիարտխուբ: Այդ ձորը, իբրև վկա, մինչև օրս էլ մնում է, որով հոսում է Զաբ գետը: Ասում են, թե այդ գետը Զագրոշի արյունն է, որը թեև վշշում է, բայց անուշ ու անմահական ջուր է: Նրա հարվածից նոր լեռներ են բարձրանում, նա բաժանում է իրարից ջրերը, և Զագրոշի փորոտիքի աղի ջրերի մի մասը գնում է Վան ու կազմում Վանա ծովը: Այդ օրվանից սկսած, Զագրոշը իր գլուխն առած քաշվում է մի կողմ: Նրա մարմնի մի ծայրը հասնում է Արարատ, իսկ գլուխը՝ Շիրազ ու Հնդստան»[5]:

Այս ավանդազրույցում արտացոլված է այդ տարածաշրջանի բնատեսքի՝ լեռների, գետերի ու լճի՝ Վանա լճի, Զաբ

[5] **Ղանալանեան** 1969, 23-24:

գետի, Մասիսի և Մասիուսի առաջացման առասպելաբանական պատկերացումները:

Կետ 2-ում ընդգրկված են ազգածագմանն ու անվանադիր նախնուն առնչվող առասպելները: Այս առումով բավականին նյութ է պահպանված: Առասպելներից մեկը պատմում է Վասպուրականում գտնվող Հայկաշեն բնակավայրի առաջացման մասին, որ կապվում է հայոց նախնի Հայկի հետ, ով ըմբոստանալով Բելի դեմ, իր տոհմով գալիս է հյուսիսում գտնվող Արարադի երկիրը, որտեղ բնակություն են հաստատում նրա որդիները, և ի թիվս այլ բնակավայրերի, շինում է մի գյուղ, որ իր անունով կոչվում է Հայկաշեն[6]: Հայկի հետ է կապվում նաև Հայկավանքի առաջացումը, որտեղ Բելի դեմ կռիվ գնալուց առաջ, Հայկը թողել է իր ծանր ու մեծ իրերը և այնպես մեկնել մարտի դաշտ, իսկ գյուղն իր անունով կոչվել է Հայկավանք[7]: Նմանատիպ մի ավանդազրույց էլ պահպանվել է Վանի Հայկավանք եկեղեցու հետ կապված, որտեղ օթևանել է Հայկ նահապետը, և եկեղեցին կոչվել է իր անունով:[8] Սրվածտյանցը ևս նշում է, որ Վանի թաղերից մեկը Հայկավանք է կոչվում որպես Հայկի իջևանած վայր, նշում է նաև Հայոց ձորի մասին, որտեղ տեղի է ունեցել Հայկի և Բելի պատերազմը, և ավելացնում. «Այն տեղն է Տըրշող գետը, ուր Հայկի լայնալիճ նետով բացված հսկա Բելի զրահապատ կողի պատուհանեն շողը կտեսնվեր. այնտեղ է Հայկ և Աստվածաշեն անունով գեղերը: Աստվածաշինու առջևն կա մի հնաշեն բերդածև մի բլուր, հավանաբար Հայկի դաստակերտ ամրոցն է»[9]:

Կետ 3-ում դիտարկել ենք արևային առասպելները: Նշենք, որ Վանա լճի ավազանը, որպես Արևի հնագույն

---

[6] **Նույն տեղում**, 191-192:
[7] **Նույն տեղում**, 192:
[8] **Նույն տեղում**, 245:
[9] **Սրվանձտյանց** 1969, 1, 78-79:

պաշտամունքավայր, քննարկվել է բազմիցս տարբեր գիտնականների, այդ թվում և մեր կողմից[10]: Ի մի բերելով այդ նյութերը՝ կարելի է նշել, որ Արևի պաշտամունքի հնագույն օրրան է Վանա լճի ավազանը, և այդ մասին վկայող վաղագույն հավատալիքները, հավանական է, կապվում են խեթական աշխարհի հետ: Խեթական միջին թագավորության շրջանից պահպանված աղբյուրները ներկայացնում են Արևին նվիրված հիմներ[11], Օվկիանոսի կողմից Արևի առևանգման[12], Արևի և Օվկիանոսի մասին առասպելներ[13], որոնցում առկա են ծովից-օվկիանոսից բարձրացող և նրա մեջ սուզվող արևի մասին պատկերացումներ, որոնք, կարող են վերաբերվել հենց Վանա լճին[14]: Եվ այս խեթական առասպելներում արտացոլված պատկերացումները ուղղակի նույնական են հայկական ավանդապատումներում Վանա լճի, որպես արևի ննջարան ընկալումների հետ: Մասնավորապես հետևյալ խեթական առասպելը, որտեղ պատմվում է, թե ինչպես է arunan[15] մեծ լիճը կամ ծովը, որը, ինչպես նշեցինք, ի թիվս այլոց, կարող է լինել հենց Վանա լիճը, հյուրընկալում արևին՝ նրա համար պատրաստելով գահ, փղոսկրյա սեղան, իսկ արևը երկնակամարով ճանապարհ է ընկնում aruna-յի մոտ և իջնում ներքև հանգստանալու[16], իր ուղղակի զուգահեռն ունի հայկական պատկերացումների հետ: Այստեղ նշենք միայն Սրվանձտյանցի բերած հետևյալ

---

[10] **Համայկյան Ս.** 1990, 46; **Պետրոսյան** 2010, 66: **Համայկյան Հ.** 2008, 93-98: **Համայկյան Հ.** 2012, 54-57:

[11] **Taracha** 2009, 108.

[12] **Иванов** 1977, 54-55

[13] **Иванов** 1977, 154

[14] **Гамкрелидзе, Иванов** 1984, II, 896

[15] Aruna բառով խեթերենում նշվում են մեծ լճերը կամ ծովերը, ըստ որոշ տեսակետների՝ Միջերկրական, Սև կամ Կասպից ծովերը. տե՛ս, օրինակ՝ **HED**, Vol. 1, Vol, 2, p. 181-182, իսկ tarmanas arunaš արտահայտությունը վերաբերում է հավանաբար հենց Վանա լճին, տե՛ս **Tischler** 2001. 25

[16] **Иванов** 1977, 154

ավանդազրույցը: «Վարագա լեռը, որո գագաթին վրա ելլողը կը տեսնա եղեր, թե ինչպես արևը վերջալույսին կը մտնե ծովը, կը լողնա, մաքրվելու և հանգչելու ըրած ուղևորությունեն: Թե՝ այն ժամուն հարևմուտս երևցած շառագույն, մոխրագույն և ձյունագույն ծալ ծալ ամպերը արևուն անկողնո քողը և վարագույրներ են: Թե՝ անոր անկողինը ծովուն տակը ձգված է փրփուրի վրա»[17]: Հայտնի է, որ ուրարտական ժամանակներում մայրաքաղաք Վան-Տուշպան հանդիսանում էր Արևի աստված Շիվինիի և նրա կնոջ Տուշպուեայի պաշտամունքավայր, ինչը մանրամասնորեն քննարկվել է մասնագիտական գրականության մեջ[18]: Այս առումով մենք կհավելեինք պարզապես, որ Վանա լճի ավազանի Արճակ լճի հետ է կապվում մի ավանդազրույց, ըստ որի Արճակի ջրերում են ապրում մի հրեղեն տղամարդ, մի հրեղեն կին և մի հրեղեն ձի[19]: Սա Արևային աստվածային զույգի և նրանց խորհրդանիշը համարվող հրեղեն ձիու պաշտամունքի մասին եղած պատկերացումների ակնհայտ արձագանք է: Հայտնի է, որ հնդեվրոպական առասպելաբանություններում արեգակը պատկերացվում էր ձիեր լծած կառքով: Հայերին ևս բնորոշ է արևի աստծո և ձիերի կապը: Քսենոփոնը վկայում է, որ հայերը արևին կամ արևի աստծուն ձիեր էին զոհաբերում:[20] Ի դեպ, ուրարտական Շիվինի աստծո խորհրդանիշներն էին արևի թևավոր սկավառակը, կեռխաչն ու ձին[21]: Մենք չենք անդրադառնա այլ առասպելների և զրույցների, որոնք վկայում են Վանա լճում արևի պաշտամունքի տարածվածության մասին, պարզապես կուզենայինք մատնանշել, որ այս հավատալիքների արձագանքները հասել են

---

[17] **Սրվանձտյանց** 1978, 1, 76:
[18] **Համակայկան Ս.** 1990, 44-46:
[19] **Ղանալանյան** 1969, 83:
[20] **Անաբասիս**, 11: Տե՛ս նաև էջ 261-261, տողատակ 25, 26:
[21] **Համայակյան Ս.** 1990, 45:

անգամ մինչև 20-րդ դար և դրսևորվել վանեցիների մի հարսանեկան սովորույթի մեջ, երբ հարսանիքի հաջորդ օրն՝ արևածագին նորապսակներին բարձրացրել են տան տանիքին՝ դեմքով դեպի արևը շրջելով և արևին ուղղված ձոներգով՝

Էգ (այգ), բարև, ա՛յ էգ բարև,
Էգն արևուն տանք բարև,
Տա թագավորին շատ արև,
Վահե՛, Վահե՛:
Էգ, բարև, այ, էգ, բարև,
Էգն արևուն տանք բարև,
Տա թագուհուն շատ արև,
Վահե՛, Վահե՛:

արև են խնդրել թագավորի ու թագուհու՝ այսինքն, հարս ու փեսայի համար[22]: Այն, որ այս սովորույթն իր արմատներով հանգում է հնագույն արևապաշտական մի ծեսի, մենք ամենայն մանրամասնությամբ ներկայացրել ենք մեր զեկուցումներից մեկում[23], այստեղ պարզապես կնշենք, որ այն իր բացահայտ զուգահեռն ունի խեթական արևին նվիրված ծեսերի հետ. խեթական ծեսերում առկա էր պալատի կամ տաճարի տանիքից արևի աստծուն դիմելու սովորույթ, և նման ծես խեթերն իրականացնում էին բացառապես արևի աստծուն դիմելիս[24]:

---

[22] **Լալայան** 1911, 44: **Լեո** 1966, 1, 269: Այս առումով հետաքրքրական են նաև ընդհանրապես հայոց ավանդույթներում առկա Արևին նվիրված ծիսական երգ-հիմները՝ սահարիները, որոնք մանրամասն քննարկված են Հ. Պիկիչյանի և Լ. Երնջակյանի աշխատությունում, տե՛ս **Երնջակյան, Պիկիչյան** 1988:
[23] **Համայակյան Հ.** 2008, 54-57:
[24] **KUB** XXX, 43, 11-14 (CTH 177-178), **Ардзинба** 1982, 65

Հաջորդիվ քննարկել ենք Վիշապին և վիշապամարտին նվիրված առասպելները, որ համարվում են հնդեվրոպական հիմնական առասպել և մեծապես տարածված են նաև հայկական հավատալիքներում: Հայտնի է, որ Վանա լիճը համարվում է նաև վիշապների բնակավայր, որոնց հրեշտակները շղթայակապ բարձրացնում են արևի մոտ, որը մոխրացնում է նրանց[25]: Այս ավանդապատումներում արևի կողմից վիշապների մոխրացման առասպելը կարծես ուղղակիորեն ակնարկում է Վահագնին, որը հայոց դիցարանում բացի ամպրոպային հատկանիշներից, ինչպես նշում են ուսումնասիրողները, ուներ նաև արևային հատկանիշներ և հանդիսանում էր Վիշապամարտիկ: Եվ մենք այստեղ գործ ունենք արևային աստծո և վիշապի պայքարի արձագանքի հետ, որը հնդեվրոպական հիմնական առասպելական սյուժեներից է: Հետաքրքրական է, որ Վահագնի արևային հատկանիշներ ունենալու մասին վկայող հետևյալ տողերը՝ «նա հուր հեր ունէր, (ապա թէ) բոց ունէր մօրուս, և աչկունքն էին արեգակունք»[26], ըստ Վ. Իվանովի, իր ապշեցնող զուգահեռն ունի խեթական տեքստերում պահպանված արևի հիմներից մեկում արևի աստծո, հատկապես նրա լազուրե մորուքի նկարագրության հետ, և ուսումնասիրողը հարց է տալիս, թե արդյո՞ք սա խեթանախահայկական մշակութային և կրոնական փոխազդեցությունների արտացոլում չէ[27]:

Հետաքրքրական է, որ և՛ Վանում[28], և՛ ընդհանրապես Հարքում[29] արևի խավարումը վերագրվում էր չար վիշապին, որն ուզում է կուլ տալ արեգակը, և խավարման ժա-

---

[25] **Սրվանձտյանց** 1978, 1, 68-70: **Ղանալանյան** 1969, 82-83:
[26] **Խորենացի** 1913, գլուխ ԼԱ:
[27] **Иванов** 1983, 40
[28] **Սրվանձտյանց** 1978, 161:
[29] **Լալայան** 1911, 31:

մանակ մարդիկ հրացաններ էին արձակում ու ծնծղաներ զարկում վիշապներին փախցնելու համար: Հայտնի է, որ Արևը համարվել է նաև կյանքի, արդարության, վերածննդության և առատության խորհրդանիշ, և այս ասպեկտներով բազմիցս քննարկվել է մասնագետների կողմից, մենք կհավելենք մի գողտրիկ սովորույթ, որ տարածված է եղել Հարքի հայերի շրջանում, երբ ձմեռային արևադարձից հետո արևի շողն առաջին անգամ տան պատին է ընկել, տանեցիները յուղ ու ալյուր են քսել պատի այդ մասին, որ եկող տարի յուղն ու հացը առատ լինեն[30]:

Անդրադառնանք մեռնող-հարություն առնող աստվածությանը և սիրո ու պտղաբերության աստվածուհու պաշտամունքին առնչվող սյուժեներին: Սա ևս առասպելաբանական այն հիմնական սյուժեներից է, որ առկա է տարբեր ժողովուրդների առասպելներում և մեծապես վկայված է նաև Վանա լճի ավազանում՝ մատնանշելով հնագույն, դեռևս հինարևելյան ակունքներ: Խոսքը, բնականաբար, Արա Գեղեցիկ և Շամիրամ առասպելույթի մասին է: Այս հարցերը ևս բազմիցս քննարկվել են գիտության մեջ, մեր կողմից նույնպես: Հայտնի է, որ ըստ Պատմահոր վկայության Շամիրամն է ընտրել հողեր Վանա լճակի մոտ և կառուցել տվել քաղաքն իր դաստակերտներով, այգիներով ու ջրանցքներով, այստեղ է նաև տեղի ունեցել Շամիրամի մահը: Վանա լճի ավազանի հետ է կապվում Շամիրամին և Արային վերաբերող հետևյալ ավանդազրույցը. օրինակ՝ Վասպուրականի Լեզք գյուղում է Շամիրամը դնում Արայի դին, որպեսզի արալեզները վերակենդանացնեն նրան[31]: Շամիրամի և նրա վարսերի հետ է կապվում Վասպուրականի Արտամետ գյուղի մոտ գտնվող Ծամքար քարաժայռը, որի հետ կապված ավանդույթներն ու սովորույթները կեն-

[30] **Նույն տեղում:**
[31] **Ղանալանյան** 1969, 23:

դանի էին Վանա կանանց ու աղջիկների շրջանում մինչև 20-րդ դարը. «Այսօր, երբ ուղևոր մը Վանի կողմեն Արտամետը մտնե, գյուղի սկզբնամասին մոտիկ, ճամբու եզերքին, փոսի մը մեջ տեղավորված մոտ 10 կանգուն բարձրությամբ և 20 կանգուն շրջագծով հսկա քարի մը կը հանդիպի: Ծամքարն է այդ, որը Շամիրամ թագուհին իր գլխու ծամերու մեջ դրավ և ձգեց Առնակի ետևեն, զայն սպաննելու նպատակով:

Արտամետցին այդ քարի մասին շատ հաճույքով կը պատմե հայտնի առասպելը:

Այդ քարի կողերուն վրա քանի մը շարք խիստ նուրբ և մազանման փորվածքներ կամ տեղերն են Շամիրամի մազերուն (ծամերուն):

Արտամետի հայ աղջիկներ կհավատան, որ Ծամքարը օժտված է Շամիրամի մազերու հմայիչ զորութենեն, որ այժմ աներևույթ կերպով կմնա իր մեջ: Կարճ մազեր ունեցող աղջիկները ջերմ հավատքով Ծամքարին կմոտենան և իրենց մազերը կփռեն անոր վրա, որպեսզի երկարի, և կամ՝ Շամիրամի առվեն (որը Ծամքարի մոտեն կանցնի) կուժ մը ջուր կբերեն ու մազերը քարին վրա փռելով կլվանան, որ երկարին, նուրբ ու դիմացկուն ըլլան, Շամիրամի պես շնորհք ունենան... Իսկ ծամաշատ աղջիկները ուխտի կուգան Ծամքարին, որ իրենց ծամերը ավելի երկարին ու դիմացկուն, գեղեցիկ ըլլան, Շամիրամի ծամերու հմայքն ունենան»[32]: Այլ առասպելներ էլ են Շամիրամին կապում Վանի և նրա շրջակայքի հետ:

Հարկ է նշել, որ ինչպես ցույց են տալիս մեր ուսումնասիրությունները, Արտամետ ավանը և նրա շրջակայքը եղել են հնագույն մայր դիցուհու մի պաշտամունքավայր, որ տարբեր ժամանակներում առնչվել է Աստղիկի, նրա վիպա-

---

[32] **Ղանալանյան** 1969, 431, ծան. 188:

կան ժառանգորդը հանդիսացող Վիպասանքի Սաթենիկի, Շամիրամի, ինչպես նաև հունա-փոքրասիական Արտեմիսի անվան ու կերպարի հետ, ինչն իր դրսևորումն է գտել նաև քրիստոնեական ժամանակներից պահպանված ավանդազրույցում: Եվ այս հարցերը մենք մանրամասն քննարկել ենք մեր երկու հոդվածներում՝ փորձ անելով վերականգնել մի արխայիկ առասպել, ըստ որի, այս տարածքներում տարածված է եղել մի հնագույն մայր դիցուհու պաշտամունք, որն առնչվել է պատանիների ինիցիացիային, մազերի զոհաբերման երևույթին, ջրի պաշտամունքին, ծիսական լոգանքին[33]: Ի դեպ, Վանա լճի ավազանի գետակներն ու լճակները հայտնի են իրենց փերիներով և այնտեղ ապրող հրեղեն աղջիկներով, մասնավորապես Նազիկ և Խաչլու լճակները, ըստ Սրվանձտյանցի, իրենց մեջ ունեն հրեղեն աղջիկ, հրեղեն ձիեր և գոմեշներ, որոնցից հղիանում են երբեմն գյուղերի մատակներն ու ծնում ճեփ-ճերմակ քուռակներ[34]:

Թվարկված սյուժեներն ամփոփում են կատարածաբանական առասպելները, որոնք հայկական հավատալիքներում հիմնականում կապվում են Արտավազդի և Միերի հետ: Հայտնի է, որ Վանա ժայռը համարվում է Միերի բնակավայրը և կոչվում է Միերի դուռ, որից ներս է մտել աշխարհի անարդարությունից խռոված Փոքր Միերը՝ ըստ Սասնա ծռեր էպոսի և հայկական հավատալիքների: Միերը հնագույն մեռնող-հարություն առնող աստծո մի կերպար է և քրայրում նրա փակվելը, ըստ ուսումնասիրողների, հին պատկերացմամբ դիտվել է իբրև ժամանակավոր մահ, իսկ նրա ժայռից դուրս գալը կապվել է հարության, վերջին դատաստանի, և արդարների հարության ու մեղավորների պատժման հետ[35]: Հայտնի է, որ Միերի դուռն առնչվել է

---

[33] **Հմայակյան Հ.** 2012, 88-101: **Hmayakyan H.** 2013-2014, 191-197

[34] **Սրվանձտյանց** 1978, 394-395:

[35] Միերի կապը վախճանաբանական պատկերացումների հետ քննարկել

ուրարտական դիցարանը գլխավորող Խալդի աստծո հետ, որի կերպարը սինկրետվել է Միթրայի և հայկական Միհրի հետ, ինչը բազմիցս քննարկվել է գիտության մեջ[36]:

Հիմնականում այս սյուժեներն ենք առանձնացրել ներկա աշխատանքում, սակայն սա վերջնական չի կարելի համարել, ինչպես նշվեց, այս ուսումնասիրությունը Վանա լճի ավազանին առնչվող առասպելական սյուժեների տիպաբաժանման նախնական փորձ է և առավել մանրամասն ուսումնասիրության, գուցե ճշգրտումների կարիք է զգում, ինչի արդյունքում հնարավոր է բացահայտել այլ սյուժեներ ևս, սակայն վերոնշյալ դասակարգումն արդեն իսկ ցույց է տալիս, որ այս տարածաշրջանում լիովին ներկայացված են առասպելաբանության մեջ հիմնական համարվող կարևորագույն առասպելները, սյուժեները, որոնք պահպանվել և փոխանցվել են սերնդեսերունդ՝ հասնելով մինչև քսաներորդ դարի եղերական իրադարձությունները, և այդ ավանդույթների մի մասը վկայված է դեռևս խեթական, ուրարտական, վաղնջահայկական ժամանակաշրջանից, այստեղ առկա է նաև խուռի-սեմական ազդեցություն (մասնավորապես Շամիրամի կերպարի հետ կապված), որ մենք մանրամասնորեն քննարկել ենք մեր հոդվածներից մեկում[37], ինչը կարող է վկայել ոչ միայն այն մասին, որ Վանա լճի ավազանը դեռևս վաղնջական ժամանակներից եղել է հոգևոր մշակույթի հնագույն օրրան, այլ նաև վկայել տարաէթնիկ մշակութային փոխազդեցությունների և ժառանգականության ու ավանդույթների անընդհատության մասին, ինչն առավել հեռուն գնացող եզրակացությունների հնարավորություն է ընձեռում:

է Ս. Հարությունյանը, տե՛ս **Հարությունյան 2000,** 452-482:

[36] **Дьяконов** 1983, 191-192; **Համայկյան Ս.** 1990, 38; Տե՛ս նաև **Петросян** 2004

[37] **Համայկյան Հ.** 2011, 239-252:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Անաբասիս 1970, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան:

Բոբոխյան Ա. 2013, Վասպուրականը Հայկական լեռնաշխարհի բրոնզ երկաթեդարյան մշակույթի զարգացումների համատեքստում, Հայաստանի մայրաքաղաքները, գիրք I-Վան, Երևան, էջ 25-47:

Երնջակյան Լ., Պիկիչյան Հ. 1988, Հիմն Արևին, «Սահակ-Մեսրոպին» հայ երաժշտական մշակույթում, Երևան:

Լալայան Ե. 1911, Վասպուրական, Թիֆլիս, էջ 44:

Լեո 1966, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան.

Հարությունյան Ս. 2000, Հայ առասպելաբանություն, Բեյրութ:

Համայակյան Հ. 2008, Արևապաշտությունը Վանա լճի ավազանում, Մերձավոր Արևելք, Երևան, էջ 93-98:

Համայակյան Հ. 2012, Արևապաշտությանն առնչվող որոշ ընդհանրությունների շուրջ խեթական և հայկական հավատալիքներում, Միջազգային գիտաժողով՝ նվիրված ակադեմիկոս Հովսեփ Օրբելու ծննդյան 125-ամյակին: Զեկուցումների դրույթներ, Երևան, էջ 54-57:

Համայակյան Հ. 2012, Հունական Արտեմիս և հայկական Աստղիկ դիցուհիների մի շարք ընդհանրությունների շուրջ, Մերձավոր Արևելք, Պատմություն, քաղաքակրթություն, մշակույթ, VIII, հոդվածների ժողովածու, Երևան, էջ 88-102:

Համայակյան Հ. 2011, Խուռիական *Ša(w)uš(k)a աստվածուհու անվան և կերպարի դրսևորումները հայկական առասպելական նյութերում, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ (ՄՄԱԵԺ), հ. XVIII, Երևան, էջ 239-252:

Համայակյան Ս. 1990, Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990:

Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց 1913, աշխատութեամբ Մ. Աբեղյանի եւ Ս. Հարությունյանի, Տփղիս:

Ղանալանյան Ա. 1969, Ավանդապատում, Երևան:

Պետրոսյան Ա. 2010, Խեթերենի հետքերը Հայկական լեռնաշխարհի Արևելքում և Հարավ արևելքում, Խալդյան զորությամբ..., Հոդվածների ժողովածու նվիրված Բորիս Պիոտրովսկու

100-ամյակին, Երևան, էջ 65-77:

Սրվանձտյանց Գ. 1978, Երկեր, հ. 1, Երևան:

Ардзинба В. 1982, Ритуалы и мифы Древней Анатолии, Москва.

Вайнберг И. 1986, Человек в культуре Древнего Ближнего Востока, Москва.

Дьяконов И.М. 1983, К вопросу о символе Халди, Древний Восток, IV, Ереван, ст. 190 194.

Гамкрелидзе Т., Иванов В. 1984, Индоевропейский язык и индоевропейцы, Реконструкция и историко-типологический анализ праязыка и прокультуры, Тбилиси, т. II.

Иванов В. 1977, Луна, упавшая с неба, Древняя литература Малой Азия, Москва.

Иванов В. 1983, Выделение разных хронологических слоев в древнеармянском и проблема первоначальной структуры текста гимна Вахагну, ИФЖ (ՊԲՀ), 4, с. 22-43.

Петросян А. 2004, Армянский Мхер, западный Митра и урартский Халди. Հայկական «Սասնա ծռեր» էպոսը և համաշ խարհային էպիկական ժառանգությունը, Երևան:

Hmayakyan H. 2013-2014, The Goddesses of Artamet, Aramazd Armenian Journal of Near Eastern Studies, v. VIII, Issues 1-2, The Black and White, Studies of History, Archaeology, Mythology and Philology in honor of Armen Petrosyan in occasion of his 65th birthday, pp. 191 197.

HED, Hittite Etymological Dictionary by Jaan Puhvel1984, Vol. 1, Word beginning with A; Vol. 2, Word beginning with E, Berlin, New York, Amsterdam.

Taracha P. 2009, Religions of Second Millennium Anatolia, Wiesbaden.

Tischler J. 2001, Hethitisches Handwörterbuch, Innsbruck.

Հասմիկ Հմայակյան - *պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, Հին Արևելքի բաժին, ավագ գիտաշխատող,*
hhmayakyan@yahoo.com

MAIN MYTHS RELATED TO THE LAKE VAN BASIN (PRELIMINARY ATTEMPT OF CLASSIFICATION AND TYPOLOGICAL DIFFERENTIATION OF MYTHOLOGICAL NARRATIVES)

Keywords: *Myth, Van, ritual, Lake Van basin, Dragon-Fight, Solar myth, Hayots Dzor, Pantheon, Eschatological.*

As known, geographical environment, climatic conditions stipulate any region's population's culture and mythological imagination to a significant extent.

A great deal of myths, legends, beliefs, most of which probably originated in Hittite, Urartian, Early Armenian periods mostly survived to the twentieth century. Many researchers, including us, have discussed this mythological heritage on different occasions and from various perspectives; however, we believe that it's necessary to make a systematization of the region's mythological material per mythological narratives which may contribute to more comprehensive understanding of the Lake Van basin's inhabitants' mythological thinking and world view.

The preliminary study leading to the systematization of the material shows that the following mythological narratives can be singled out:

1. Appearance of the world, its composition, myths related to the nature and landscape (Fight between Zagros and Taurus, emergence of the Lake Van).
2. Myths related to ethnogenesis or the toponyms derived from nation forefathers' names (Province of Hayots Dzor and Haykashen deriving from Hayk's forefather's name).
3. The solar myths (the Lake Van as the Sun's bedroom, the Lake Van as an ancient Sun god and goddess cult centers).
4. Dragon and Dragon-Fight myths (Dragons inhabit in the Lake Van, myths about their incineration).
5. Myths devoted to dying-resurrecting love and fertility goddess (Ara the Beautiful and Shamiram, as well as other myths related to settlement of Artamet).

6. Eschatological myths (the Mount Van as the place where Mher has been locked) and eschatological ideas related to him.

Not claiming that this systematization is final, nevertheless it shows that all the main mythological narratives found in mythology were passed from generation to generation of Armenians and survived until the Armenian Genocide. The above narratives bear Hurrian and Semitic influence, particularly related to the character of Semiramide (that we have discussed in one of our previous articles). This may serve as evidence that the Lake Van basin has not only been a cradle of spiritual culture from the times immemorial which saw multiethnic cultural inter-relations, but also heredibability of the ancient heritage and ongoing continuity of the traditions.

Hasmik Hmayakyan - *PhD, Institute of Oriental Studies, Department of Ancient Orient, Senior Researcher,*
hhmayakyan@yahoo.com

ԱՐՔԱՅԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՐԳՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՕՐԻՆԱԿ ԱՍՍՈՒՐԱ-ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՌՈՒՍԼԱՆ ՑԱԿԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ *Իրավահավասարություն, աստված, տեր, ծառա, եղբայր, որդի, Եգիպտոս, Խաթթի, Միտրաննի, Ասորեստան, Ուրարտու:*

Ներածություն

Մ.թ.ա. VII դարի ուրարտա-ասորեստանյան հարաբերությունների մասին պատմագիտությանը շատ քիչ բան է հայտնի: Ասորեստանյան հետախուզական բնույթի տեքստերի, մասամբ նաև վիմագիր արձանագրությունների սուղ տվյալների քննության միջոցով վաղուց ցույց է տրվել, որ մ.թ.ա. VII դարի երկրորդ կեսին ասսուրա-ուրարտական հարաբերություններում կատարվել է կտրուկ շրջադարձ հօգուտ Ասորեստանի:

Երկու ախոյան երկրների ուժերի հարաբերակցության փոփոխությունն անմիջականորեն արտացոլվել է նաև դրանց տիրակալների պաշտոնական փոխհարաբերությունների բնույթի ու բովանդակության վրա: Անուղղակիորեն՝ այդ շրջադարձն իր արտացոլումն է գտել Ասորեստանի արքա Աշշուրբանիպալի (մ.թ.ա. 669-627 թթ.) «Տարեգրության» (*Ռասսամի գլան*) մեջ[1]:

«Տարեգրության» մեջ Աշշուրբանիպալը նշում է, որ ուրարտական արքայից պատվիրակության միջոցով «*ծանր ընծաներ*» է ստացել և, որ արքան այդ ամենը կատարել է «*պարկառանքով ու հնազանդությամբ*»: Համաձայն Աշշուր-

---

[1] **Borger** 1996: 71f., 250, A X, ll. 40-50, **Luckenbill** 1927: § 834, **Streck** 1916: Cylinder A, Col. X, l. 40, 85

բանիպալի «Տարեգրության»՝ ուրարտական առաքելությունը տեղի է ունեցել Շամաշ/Նաբու-դանինաննիի էպոնիմատի տարում[2]: Մասնագիտական գրականության մեջ այն տատանվում է մ.թ.ա. 647/646-638/637 թթ. միջև[3], իսկ ուսումնասիրողներից ոմանց կարծիքով՝ համապատասխանում է մ.թ.ա. 643/642 թ.[4]:

Պետք է արձանագրել նաև, որ «Տարեգրության» վկայությունն անուղղակի է, քանզի խոսքը վերաբերում է միայն Ասորեստանի արքային Ուրարտուի արքա Սարդուրի III (կամ IV)-ի պաշտոնական դիմելաձևի փոփոխությանը: Դրա հնարավոր քաղաքական ենթատեքստի բացահայտման նպատակով «Տարեգրության» մեջ նշված եզրույթները դիտարկել ենք Հին Մերձավոր Արևելքի երկրների դիվանագիտական հարաբերություններում դրսևորված էթիկետի, մասնավորապես՝ ինքնիշխան և հպատակ արքաների փոխադարձ դիմելաձևի համեմատական դաշտում:

«Տարեգրության» խնդրո առարկա հատվածը.

«Տարեգրության» մեզ հետաքրքրող հատվածում Ասորեստանի արքան հայտնում է.

«40. *Իշթար-դուրին՝ Ուրարտուի արքան,*
41. *որի արքա-հայրերն արքաներին՝ իմ հայրերին,*
42. *դիմում էին իբրև **«եղբայր»**,*
43. *այժմ արդեն Իշթար-դուրին լսելով իմ զորության և գոր-*
ծերի մասին,

---

[2] **Frame** 1982: 157ff., **Brinkman** 1984: 107f.
[3] **Ադոնց** 1972, 143-144; **Арутюнян** 1970: 330; **Арутюнян** 1976: 98-114; **Salvini** 1995: 111, **Salvini** 2007: 158, **Reade** 1998: 256f., **Roaf** 2010: 76ff.
[4] **Grayson** 1981: 231, 235, **Na'aman** 1991: 254, **Fuchs** 2012: 137-138, 144-145, 149, **Hellwag** 2012: 228, **Գրեկյան** 2008, 301:

44. *որ աստվածները բաժին էին հանել ինձ որպես ճակատագիր,*
45. *(և) **ինչպես որդին է հորը դիմում** որպես իր «**փիրոջ**»,*
46-47. *այդպես էլ նա, այսուհետև, սկսեց մշտապես գրել՝*
48. ***«արքային՝ փիրոջս»:***
49-50. *Պատկառանքով և հնազանդությամբ նա բերում է այստեղ իր ծանր ընծաները*[5]:

Աշշուրբանիպալի «Տարեգրության» համաձայն՝ դեսպանություն ուղարկող ուրարտական արքան եղել է Իշտարդուրին/*Իսսարդուրին*/Սարդուրին (Սարդուրի (IV(?) Ռուսաորդու(?), Սարդուրորդու(?)) (մ.թ.ա. 645-635(?) թթ.[6]): Աշշուրբանիպալը հպարտությամբ է փաստում ասուրա-ուրարտական հարաբերություններում տեղի ունեցած տեղաշարժը և հատկապես, որ ի տարբերություն նախկինի, երբ ուրարտական թագավորներն իր նախնիներին եղբայրական ողջույններ էին ուղարկում, Սարդուրիին՝ ***«kîma ša mâru ana abûšu»*** *«ինչպես որդին իր հորը»*, գրում է՝ ***«lu šulmu-mu ana šarri bêliya»*** *«Ողջու՛յն թագավորին՝ իմ փիրոջը»* և ուղարկում նվերներ:

Աշշուրբանիպալի «Տարեգրության» քննության առարկա հատվածը հետաքրքիր է ոչ միայն նրանով, որ այնտեղ հիշատակվում է Ասորեստանի և Բիայնիլիի նախորդ արքաների միջև նամակագրական կապի վերաբերյալ, այլև նրանով, անմիջականորեն խոսում է երկու երկրների արքաների պաշտոնական հարաբերություններում կատարված կտրուկ բեկման մասին:

---

[5] «Տարեգրության» համապատասխան տողերի հայերեն թարգմանության համար տե՛ս **Գրեկյան** 2008, 301, ինչպես նաև՝ **Borger** 1996: 71f., 250, A X, II 40-50; **Luckenbill** 1927. § 834
[6] **Տականչյան** 2018, 250:

Վերոշարադրյալը վկայում է, որ Աշշուրբանիպալի նախորդներն իսկապես նամակագրական կապ են ունեցել Ուրարտուի արքաների հետ, և նրանց միջև կապը եղել է հավասարը հավասարին սկզբունքով՝ ինչպես *եղբայրը եղբորը*:

Դեռ ավելին՝ կարելի է ենթադրել, որ Աշշուրբանիպալն էլ իր հերթին, նամակագրական կապ է ունեցել Սարդուրիի հետ: Դեռևս, 1951 թվականին իր «Ասսուրա-բաբելական աղբյուրները Ուրարտուի պատմության վերաբերյալ» աշխատանքում՝ Ի. Մ. Դյակոնովը նույնպես չի բացառում նմանատիպ հնարավորությունը: Հայտնի ABL, № 1242[7] նամակը, Ի. Մ. Դյակոնովը վերնագրել է որպես «Աշշուրբանիպալի նամակը Սարդուրի III-ին՝ Ուրարտուի արքային»[8]:

Այսպիսով՝ ABL № 1242 նամակի առաջին տողերը կարելի է վերականգնել՝

«1. [Նամակն Աշշուրբանիպալի, արքայի]՝ Աշշուր (Ասորեստան) երկրի
*2. [Իշտարդուրիին՝ արքային Ուրարտու երկրի՝ **իր որդուն***
3. [Պալատն իմ և ամբողջ Ասորեստանում ամեն ինչ լավ է,
4. [Թող որ ամեն ինչ լավ լինի] քո պալատում ու երկրում»[9]:

Աշշուրբանիպալի «Տարեգրության» վերոնշյալ հատվածից պարզորոշ երևում է, որ գործ ունենք Ուրարտուի պատմության մեջ անչափ շրջադարձային իրողության՝ քաղաքական ինքնիշխանության կամավոր զոհաբերության փաստի հետ: Հայտնի է, որ վեհապետ-վասալներ ուղղածիգ հարաբերությունները սովորաբար ձևավորվում էին գերազանցա-

---

[7] **Harper** 1913: № 1242

[8] **Дьяконов** 1951: № 79; նույն կարծիքին է նաև Գ. Բ. Լանֆրանկին (**Lanfranchi** 2009: 138, հմմտ. նաև՝ **Waterman** 1930: № 1242

[9] **Parpola** 2018 № 78

պես ուժի և հարկադրանքի միջոցով[10]: Սակայն մինչ օրս հայտնի չէ որևէ մի աղբյուրագիտական տվյալ, որը կվկայեր ուրարտական առաքելությանը նախորդած ժամանակահատվածում Ուրարտուի դեմ Ասորեստանի հաղթական պատերազմի կամ հաջողված քաղաքական հարկադրանքի մասին: Այդ իսկ պատճառով մասնագետները մինչ օրս խիստ տարակարծիք են ասսուրա-ուրարտական հարաբերությունների համապատկերում Սարդուրիի վերոնշյալ դեսպանության նպատակների հարցում[11]: Այդուհանդերձ, ուրարտական արքայի կողմից Ասորեստանի տիրակալին դիմելածևի փոփոխության մասին Աշշուրբանիպալի «Տարեգրության» հաղորդումը հազիվ թե կարելի է վերջինիս փառամոլությամբ բացատրել, քանի որ նրանում գործածված եզրույթները, մեր խորին համոզմամբ, հստակ քաղաքական ենթատեքստ են պարունակում և ակնարկում են երկու երկրների հարաբերությունների հիմնային մակարդակում կատարված ինչ-որ փոփոխության մասին:

Խնդրի վերաբերյալ հնչեցված կարծիքների մեջ, թերևս ամենաուշագրավը՝ Ե. Գրեկյանինն է, ըստ որի, Աշշուրբանիպալը կարող էր լինել Սարդուրիի աներհայրը: Նա նշում է, որ վերոհիշյալ փաստը կարող է վկայել ոչ միայն ասորեստանյան ազդեցության, այլև երկու արքայատների միջև տեղ գտած դինաստիական հնարավոր կապի մասին: Սարդուրին, Աշշուրբանիպալին դիմելով որպես իր «հոր», հնարավոր է՝ նկատի ուներ իր աներհորը[12]: Հետևաբար, ինչպես ենթադրում է Ե. Գրեկյանը՝ կարող ենք ենթադրել, որ ուրարտական թագուհիներից առնվազն մեկը ասորեստանյան արքա Աշշուրբանապալի դուստրն էր: Այս դինաս-

---

[10] **Մելիքյան** 2016, 69-81:

[11] **Ադոնց** 1972, 43-144; **Меликишвили** 1954: 318, **Арутюнян** 1970: 330-331, և այլք:

[12] **Գրեկյան** 2013, 94:

տիական ամուսնությունն ամենայն հավանականությամբ հետապնդում էր քաղաքական նպատակներ՝ ամրապնդելու ասորեստանյան ազդեցությունը Ուրարտուում[13]:

Տեսականորեն՝ Ե. Գրեկյանի վարկածը միանգամայն հիմնավոր է թվում: Այն, որ երկու արքայատների միջև դինաստիական ամուսնության երևույթը կարող էր տեղ գտնել՝ չենք բացառում: Այս դեպքում ուրարտական արքան, իսկապես, Աշշուրբանիպալին կարող էր դիմել իբրև «*հոր*»:

Այդուհանդերձ, Աշշուրբանիպալի «Տարեգրության» քննարկվող հատվածում, մասնավորապես նրա 44-50 տողերում առկա ձևակերպումների պատշաճ կարևորումը վերոնշյալ վարկածի դեմ հարուցում է սկզբունքային առարկություններ: Նախ՝ «Տարեգրության» մեջ Ասորեստանի արքային Սարդուրիի երկու դիմելաձևերի միջև իբրև ջրբաժան հիշատակվում է ոչ թե դինաստիական ամուսնությունը, այլ Ասորեստանի արքայի «*...զորությունն ու աստվածների կողմից որպես ճակատագիր բաժին հանված գործերը*»: Բացի այդ, հարկ է ուշադրություն դարձնել նաև Աշշուրբանիպալի նշած համեմատության վրա. «*...**ինչպես որդին է հորը դիմում** որպես իր «**փիրոջ**», այդպես էլ նա, այսուհետև, սկսեց մշտապես գրել՝ «**արքային՝ փիրոջս**»*:

Նախադասության առաջին մասում, ինչպես տեսնում ենք, ուրվագծվում է ընտանիքի (նահապետական ընտանիքի) մոդելը, որտեղ հայրը հեղինակության և նույնիսկ տիրության իրավունք ունի որդու նկատմամբ: Բայց այս տեսանկյունից անհերևակայելի է, որ մի տերության արքան ընդամենը դինաստիական ամուսնության հողի վրա ընդուներ իր առջև՝ մյուս երկրի արքայի հայրական գերագահությունը:

Վերոնշյալի լույսի ներքո մենք հակված ենք Աշշուրբա-

[13] **Գրեկյան** 2008, 303:

նիպալի «Տարեգրության» մեջ Ուրարտուի արքա Սարդուրիի կողմից «*փեր*» դիմելաձևի մեջ ոչ թե մեծարանք, այլ բացառապես քաղաքական իմաստ տեսնելուն: Դեռ ավելին՝ «*այժմ արդեն*», արտահայտություն էլ իր հերթին վկայում է մինչ արձանագրության ստեղծումն ընկած ժամանակահատվածի ինչ-որ պահից հետո տեղի ունեցած կոնկրետ շրջադարձային փոփոխության մասին: Ըստ այդմ էլ, մենք հակված ենք՝ Աշշուրբանիպալի «Տարեգրության» վերոնշյալ հատվածում տեսնելու **ասսուրա-ուրարտական հորիզոնական հարաբերությունները ուղղաձիգ հարաբերություններով փոխարինվելու իրողությունը**:

Հարկ ենք համարում Աշշուրբանիպալի «Տարեգրության» վերոնշյալ հատվածում հիշատակված «*եղբայրը եղբորը*» և «*որդին հորը*» դիմելաձևերը քննության առնել Հին Մերձավոր Արևելքի երկրների միջպետական հարաբերություններում դրանց կիրառության համեմատական մեթոդաբանության հիման վրա:

«Եղբայրը-եղբորը»

Հին Մերձավոր Արևելքի երկրների դիվանագիտական հարաբերությունների ծիսական, իրավական և էթիկետային կողմերը վաղուց են դարձել գիտական մանրազնին հետազոտության առարկա: Տարաբնույթ վավերագրերի քննության միջոցով հնարավոր է պատկերացում կազմել նաև տարբեր երկրների արքաների միջև դիվանագիտական էթիկետի ու քաղաքական աստիճանակարգության մասին:

Ընտանեկան հարաբերությունների հայեցակարգի եզրույթաբանությունը մեծ նշանակություն ուներ Հին մերձավորարևելյան երկրների դիվանագիտական ու պալատական հարաբերություններում: Ընտանիքի գաղափարը գործում էր ոչ միայն երկու արքաների, այլև նրանց ընտանիքի այլ անդամների միջև տեղ գտած նամակագրություններում:

Նմանատիպ օրինակները բազմաթիվ են: Այսպես,

օրինակ, Ռամզես II-ի (մ.թ.ա. 1279-1213 թթ.) որդին՝ Սութահափշափը, Խաթթիի արքա Խաթուսիլիսի III ին (մ.թ.ա. մոտ 1266-1236 թթ.) դիմում է որպես *«հոր»*՝

«§1 (ԴԿ. 1-2) *[Այսպես է ասում] Սութահափշափ, որդին Մեծ արքայի, Եգիպտոսի արքայի*
§2 (ԴԿ. 3-4) *Ասա Խաթթուսիլիսին՝ Մեծ արքային, Խաթթիի արքային՝* ***հորս****:*
§3 (ԴԿ. 5-7) *Թող որ դուք, Մեծ արքադ, Խաթթիի արքան,* ***իմ [հայրը]****, լավ լինի, և թող ձեր [երկիրը] լավ լինի:*
§4 (ԴԿ. 8-10) *[Հիմա ես,* ***քո որդին****], լավ եմ և [երկիրը] Մեծ արքայի, Եգիպտոսի արքայի,* ***քո եղբոր****՝ լավ է»*[14]:

Նույն Ռամզես II-ը Խաթթիի արքայազն Թաշմի-Շարրումմային դիմում է որպես *«որդու»*՝

«§2 (5-6) [Ասա] Թաշմի-Շարրումմային՝ իմ ***որդուն****: §3 (7-8) Թող որ դու, որդին Խաթթիի Մեծ արքայի՝* ***իմ եղբոր****, լավ լինես»*[15]:

Բերենք ևս մի օրինակ որտեղ Խաթթի արքայազն Ցիտան դիմում է Եգիպտոսի փարավոնին՝

«1. *Ասա Տիրոջը, Եգիպտոսի արքային, 2.* ***իմ հորը****, 3. Այսպես է ասում Ցիտան, արքայազնը՝ 4.* ***քո որդին****, 5. Տիրոջս ու* ***հորս*** *հետ՝ 6. թող ամեն ինչ լավ լինի»»*[16].

Ըստ Հ. Ա. Հոֆֆների, նամակում Ցիտան ընդգծված հարգանքով է վերաբերվում փարավոնին[17]: Սակայն նա փարավոնին դիմում է որպես *«հայր»*, ոչ միայն այն պատճառով, որ փարավոնը եղել է տարիքով ավելի մեծ, այլ նաև այն պատճառով, որ Ցիտան արքա չէր, այլ՝ արքայազն (DUMU.LUGAL):

---

[14] **Beckman** 1996. № 22A, §§ 1-2
[15] **Նույն տեղում**, № 22C, §§ 1-2.
[16] **Mynářová** 2007, EA № 44 198, **Moran** 1992, EA № 44, **Hoffner** 2009, № 97
[17] **Hoffner** 2009, 281.

Երկու իրավահավասար արքաների միջև նույն դիմելաձևը հանդես էր գալիս *«եղբայրության»* սկզբունքով[18]: Վերջինիս վառ վկայությունը կարող է հանդիսանալ Մուրսիլիս III-ի (մ.թ.ա. մոտ 1275-1267 թթ.) մի վկայությունը, որտեղ խոսվում է նրա կարգավիճակի փոփոխության մասին: Խաթթիի գահին բազմելուց անմիջապես հետո նա հայտարարում է՝

«... հիմա ես Խաթթիի արքան եմ, այլ ոչ թե Ուրխի-Թեշշուբը»[19]:

Այստեղ ակնհայտ է, որ Մուրսիլիս III-ն ավանդույթի ուժով, որպես Խաթթիի մեծ արքա՝ պետք է պահանջեր, որպեսզի իրեն դիմեն որպես իրավահավասար արքայի:

Թել-էլ-Ամարնայի արխիվից մենք ունենք *«եղբայրը-եղբորը»* փոխադարձ դիմելաձևի բազում դեպքեր: Այսպես, Եգիպտոսի փարավոն Ամենհոտեպ III-ը (մ.թ.ա. 1390-1352 թթ.) գրում է Բաբելոնի արքա Կադաշման-Էնլիլ I-ին (մ.թ.ա. 1374-1360 թթ.)՝

«1. Կադաշման-Էնլիլ[ի]ին, Կարադունի[ա]շեի (Բաբելոնի - Ռ.Ց.) *արքային՝*
*2. **իմ եղբորը**, խոսքն այս [ասում է] Նիբմուառեան* (Ամենհոտեպ III - Ռ.Ց.), *Մեծ արքան,*
3. Միծրիի (Եգիպտոսի - Ռ.Ց.) *արքան, **քո եղբայրը**՝ ինձ մոտ ամեն ինչ լավ է»*[20]:

Նույն կերպ, Եգիպտոսի փարավոն Ամենհոտեպ III-ին որպես *«եղբայր»* է դիմում նաև Կադաշման-Էնլիլ I-ի հաջորդ Բուրնա-Բուրիաշ II-ը (մ.թ.ա. 1359-1333 թթ.)

---

[18] **Bryce** 2003, 74.
[19] **Նույն տեղում**, 84.
[20] **Mynářová** 2007, EA №№ 1-2; **Moran** 1992, EA №№ 1-2.

«1. Նապխուրիային՝
2. Եգիպտոսի արքային՝ ***իմ եղբորը****, խոսքն*
3. այսպես [ասում է] Բուրնա-Բուրիաշը, Կարդունիաշի արքան,
4. ***քո եղբայրը****՝ ինձ մոտ ամեն ինչ լավ է»*[21]*:*

Եգիպտոսի փարավոնին Ամենհոտեպ IV-ին (մ.թ.ա. 1352-1336 թթ.) նույն կերպ է գրում նաև Խաթթիի արքա Սուպպիլուլիումաս I-ինը (մ.թ.ա. 1345-1322 թթ.)՝

«1. [Այսպես է ասում Արևս]՝ Շուպպիլուլիումաի, Մ[եծ] արքան, 2. [արքան Խաթ]թիի. Ասա Խուրիային[22] *3. Միծրիի [արքային]՝* ***իմ եղբորը****»*[23]*:*

Նույն կերպ էին իրար դիմում Եգիպտոսի փարավոն Ռամզես II-ն ու Խաթթիի արքա Խաթթուսիլիս III-ը[24], Խաթթուսիլիս III-ն ու Բաբելոնիայի արքա Կադաշման-Էնլիլ III-ը[25], Խաթթիի և Միտտանիի արքաները, և այլն:

Հետաքրքիր է նաև Ալաշայի (Կիպրոս կղզի - Ռ.Ց.) արքայի նամակը Ամենհոտեպ IV-ին, որտեղ արքաները հանդես են գալիս որպես իրավահավասար կողմեր՝ միմյանց «եղբայր» անվանելով՝

«1. *Եգիպտոսի արքային՝* ***իմ եղբորը***

---

[21] **Mynářová** 2007: EA №№ 7-11, **Moran** 1992. EA №№ 7-11

[22] Հստակ չէ. թէ կոնկրետ որ փարավոնի մասին է խոսքը: Այն կարող էր հասցեագրված լինել թե՛ Ամենհոտեպ IV (մ.թ.ա. 1352-1336 թթ.), և թե՛ Թութանհամոնին (մ.թ.ա. 1336-1327 թթ.)՝ **Moran** 1992:115, n. 2

[23] **Mynářová** 2007: EA № 41, p. 197; **Moran** 1992: EA № 41, **Hoffner** 2009 № 96

[24] **Beckman** 1996: № 15, § 1, № 22C, № 22G

[25] **Beckman** 1996 № 23, **Oppenheim** 1967. 139f

2. *Այսպես է ասում Աշշիայի արքան՝* ***քո եղբայրը***»[26].

Խաթթիի, Բաբելոնիայի ու Միտտանիի արքաներից ետ չէր մնում նաև Ասորեստանի արքա Աշշուր-ուբալլիտ I-ը (մ.թ.ա. 1354-1318 թթ.), որի կառավարման ընթացքում Ասորեստանը ոչ միայն դուրս եկավ իր բնական սահմաններից և սկսեց միջամտել հարևան երկրների ներքին գործերին[27]: Աշշուր-ուբալլիտ I-ը նույնպես *«եղբայր»* է անվանում Եգիպտոսի փարավոնին՝

«1. *Նա[խխուր]իային՝ Մեծ արքային]*
2. Եգիպտոսի արքային, ***իմ եղբորը***
3. Այսպես է ասում Աշշուր-ուբալլիտը, Ասորեստանի արքան,
4. Մեծ արքան՝ ***քո եղբայրը***»[28]:

Հետաքրքիր է նաև KUB 21.38[29] բովանդակությունը, ուղարկված Խաթթի արքա Խաթթուսիլիս III-ի այրի՝ Պուդուխեպա թագուհու կողմից՝ Եգիպտոսի փարավոն Ռամզես II-ին (մ.թ.ա. 1279-1213 թթ.)՝

«(0[30]) Այսպես է ասում Պուդուխեպան, Մեծ թագուհին, թագուհին Խաթթիի երկրի. ասա Ռեամաշեշային, Մեծ արքային, Եգիպտոսի երկրի արքային՝ ***իմ եղբորը***»[31]:

Պահպանվել է նաև Ռամզես II-ի նամակը Պուդուխեպային, որտեղ փարավոնը թագուհուն *«քույր»* է անվանում[32]:

---

[26] **Mynářová** 2007: EA № 33, **Moran** 1992: EA № 33, ինչպես նաև՝ №№ 34, 35, 37-40, և այլուր:
[27] **Տականդան** 2014, 237:
[28] **Mynářová** 2007: EA № 16, p. 190, **Moran** 1992: EA № 16
[29] Նամակի վերականգնման համար տե՛ս **Hoffner** 2009: 281.
[30] Տողի հավանական վերակազմություն համար տե՛ս **Hoffner** 2009 281
[31] **Beckman** 1996 № 22E, **Hoffner** 2009 № 98
[32] **Beckman** 1996 № 22F

Բավականին վնասված KUB 26.91՝ տեքստի համաձայն՝ Ախխիյավայի արքան իրեն հավասարազոր է դասում Խաթթիի արքային՝

«(1) Այսպես է ասում [...], մեծ արքան, արքան Ախխիյավա երկրի. Ասա [...], մեծ արքային, Խաթթիի երկրի արքային՝ ***իմ եղբորը***»[33]:

Հայտնի է նաև, որ պարբերական նամակագրական կապի մեջ են եղել նաև Եգիպտոսի թագուհի Նապտերան (Նեֆերտարի) և Խաթթի թագուհի Պուդուխեպան: Վերջիններս իրար դիմում էին որպես «*քույրը-քրոջը*»՝

«Եգիպտոսի Մեծ թագուհի Նապտերանի (Նեֆերտարի) ասում է. «Ասա իմ քրոջը Պուդուխեպային, Խաթթիի Մեծ թագուհուն: Ես, քո քույրը նույնպես լավ եմ»[34]:

Սակայն միջազգային հարաբերությունների կտրուկ շրջադարձի պայմաններում՝ միշտ չէ, որ այսպիսի *«ընտանեկան»* վերաբերմունքը պահպանվում էր: Միտտանիի արքա Վասաշատան այլևս չկարողանալով դիմակայել օր-օրի հզորացող և դեպի արևմուտք ծավալվող Աշշուրի տիրակալների գործողություններին՝ փրկության ելքը տեսնում է իր նախկին հակառակորդ Խաթթիի գերիշխանության ընդունման մեջ: Բնականաբար՝ դրանից հետո նրանց *«եղբայրական»* հարաբերությունների հորիզոնական առանցքը պետք է վերափոխվեր *«հոր և որդու»* կամ *«տիրոջ և ծառայի»* ուղղաձիգ առանցքով:

Խաթթիի արքա Մուվաթալլիս II-ը կամ Մուրսիլիս III-ն (Ուրխի-Թեշշուբ) էլ իր հերթին՝ հրաժարվում է *«եղբայր»* անվանել Ասորեստանի արքա Ադադ-նիրարի I-ին (մ.թ.ա. 1295-1264 թթ.) նշելով, որ իր պապն ու հայրը նրա նախորդներին *«եղբայր»* չեն անվանել և, որ իրեն բարկացնում է

---

[33] **Hoffner** 2009 № 99, 291
[34] **Beckman** 1996 № 22B

Ասորեստանի արքայի կողմից նման վերաբերմունքը[35]:

Հին մերձավորարևելյան պաշտոնական վավերագրերում բազմաթիվ են նաև փեսա և աներհայր երկու հավասարազոր արքաների փոխադարձ դիմելաձևերի օրինակները: Հայտնի է, որ Միտտանիի արքա Արտադամա I-ի դուստրը կնության էր տրված Եգիպտոսի փարավոն Թութմոս IV-ին, Շուտտարնա II-ի դուստր Գիլուխեպան՝ Ամենհոտեպ III-ին, իսկ Թուշրատտա I-ի (մ.թ.ա. 1350-1325 թթ.) դուստր Տադուխեպան՝ Ամենհոտեպ III-ին, ապա Ամենհոտեպ IV-ին, Խաթթիի արքա Խաթթուսիլիս III-ի դուստր Մաաթորնեֆերուռան՝ Ռամզես II-ին[36], Աշշուր-ուբալլիտ I-ի դուստր Մուբալլիտատ-շերուան կնության էր տրված Բաբելոնիայի արքա Բուրնա-Բուրիաշ II-ին, և այլն:

Գիտենք նաև, որ միջդինաստիական ամուսնությունների ավանդույթը հարատևել է, և այդ պրակտիկան լայնորեն կիրառվել է նաև Աքեմենյան Իրանում, Հելլենիստական աշխարհում, և մասնավորապես Պտղոմեոսյան Եգիպտոսի ու Սելևկյան տերության միջև և այլն:

Բերենք սակայն մի օրինակ, որտեղ Միտտանիի արքա Թուշրատտա I-ը դիմում է Եգիպտոսի փարավոն Ամենհոտեպ IV-ին՝

*«1. [Ինմ]մուռեային, [Միծրիի] արքային՝ **իմ եղբորը, <u>իմ փեսային</u>**,*
2. [ում ես սիրում եմ և ով սիրում է ինձ:
*3. Այսպես է ասում Թուշրատտան, Միտտանիի] արքան, **<u>քո աներհայրը</u>**.*

---

[35] **Hoffner** 2009: № 104.

[36] **Bryce** 2003: 105; **Dodson, Hilton** 2004. 142f., 146, 155, 157, 171, **Liverani** 2014: 292f.; **Oppenheim** 1967: 61f.· Միջդինաստիական ամուսնությունների համար տե՛ս նաև՝ **Houwkin** 1996. 40-75

4. [ով սիրում է քեզ, ***քո եղբայրը*** *...»*[37].

Այս տեքստը լավագույնս է ներկայացնում երկու իրավահավասար արքաների միջև հարաբերությունը: Դժվար կլիներ պատկերացնել, և անկախ արքաների տարիքից, որ Թուշրատտա I-ը փարավոնին դիմեր որպես որդու, փոխարենը Միտտանիի արքան հանդես է գալիս որպես նրբանկատ և խոհեմաբար դիմում որպես «*եղբոր*» և շեշտում, որ միաժամանակ նա իր դստեր ամուսինն է դիմելով որպես «*փեսայի*»: Այս էլ այն դեպքում, երբ ինչպես արդեն նշվեց՝ Թուշրատտա I-ի դուստր Տադուխեպան սկզբնապես կնության էր տրված Ամենհոտեպ III-ին և վերջինիս մահից հետո, ամենայն հավանականությամբ, համալրել էր Ամենհոտեպ III-ի որդի Ամենհոտեպ IV-ի կանանոցը[38]:

Նույն տրամաբանությամբ՝ դժվար կլիներ պատկերացնել, որ Բաբելոնի արքա Բուրնաբուրիաշ II-ին, որի դուստրը Խաթթիի արքա Սուպպիլուլիումաս I-ի կինն էր, և ավելի ուշ շրջանից՝ Նաբուգոդոնոսոր II-ը (մ.թ.ա. 605-562 թթ.), որն ամուսնացած էր Մարաստանի արքա Կիաքսարի (մ.թ.ա. 625-585 թթ.) դուստր Ամիտիդայի և միաժամանակ եգիպտական արքայադստեր՝ Նիտոկրիսի հետ, Հայոց արքա Տիգրան II Մեծը (մ.թ.ա. 95-55 թթ.) Պոնտոսի արքա և իր աներհայր Միհրդատ VI Եվպատորին (մ.թ.ա. 111-63 թթ.), կամ Պարթևստանի արքայից արքա և Տիգրան II Մեծի փեսա Միհրդատ II-ը (մ.թ.ա. 123-87 թթ.) դիմեին որպես «*հոր*» և «*փիրոջ*»: Սակայն, ներկայացվող որևէ երկրի արքային որպես «*եղբայր*» կամ նրա ընտանիքի անդամներին ինչպես «*քույր*», «*որդի*» կամ «*դուստր*» դիմելը՝ չպետք է ընկալել որպես ինքնին հասկանալի և տրամաբանական երևույթ, այն

---

[37] **Mynářová** 2007 EA № 20; **Moran** 1992: EA № 20, ինչպես նաև՝ №№ 21, 23, 24, 27-29, և այլուր:

[38] **Bryce** 2003. 75.

դեռ պետք էր վաստակել: *«Եղբայրը - եղբորը»* դիմելաձևի պարագայում, ինքնին արդեն հասկանալի է դառնում, որ տվյալ արքան արդեն ձեռք էր բերել *«մեծ արքայի»* կարգավիճակ, դեռ ավելին՝ *«եղբայրության»* համար անհրաժեշտ էր նաև կարգավիճակի իրավահավասարություն[39]:

Դիվանագիտական էթիկետի այս նորմը, ինչպես երևում է, հարատևել է նաև հետագայում. այսպես էին միմյանց դիմում հելլենիստական միապետերը[40], իսկ ավելի ուշ՝ նաև Պարսից Սասանյան արքաներն ու հռոմեական կայսրերը[41]:

«Հայր-որդի», «տեր-ծառա», «աստված-երկրպագող»

Ի տարբերություն վերոնշյալ իրավահարաբերության՝ ***«հայր-որդի»*** դիմելաձևն արդեն իսկ ուրվագծում է ուղղահայաց մի հարաբերություն, որտեղ խիստ պարզորոշ է առա-

---

[39] **Նույն տեղում** 75.

[40] **Бикерман** 1985: 180, прим. 474, Սելևկյան պետության արքաներ Ալեքսանդր I Բալասը և Դեմետրիոս II Նիկատորը *«եղբայր»* էին անվանում Հովնաթան Մակաբայեցուն՝ I Մակաբայեցիներ, 10:18; II Մակաբայեցիներ, 11:30:

[41] **Аммиан Марцеллин** 2005: XVII. 5. 3.՝ Պարսից Սասանյան տերության արքայից արքա Շապուհ II-ը (309-379 թթ.) *«եղբայրական»* ողջույն է հղում Հռոմի կայսր Կոստանդիանոս I Մեծին (306-337 թթ.)՝

*«Ես, արքայից արքա, աստղերին էակից Շապուհս, Արեգակի և Լուսնի **եղբայրը**, ողջույն եմ հղում իմ **եղբորը**՝ Կոստանդիոս Կեսարին»*:

Կոստանդիանոս I Մեծ կայսրը եղբայրական դաշինք է կնքում Հայոց արքա Տրդատ III Մեծի (298-330 թթ.) հետ՝

*«Սոյնպէս եւ արքային Տրդատայ, իբրեւ **եղբայր** սիրելոյ, սէր ցուցեալ ուրախութեամբ մեծաւ, մանաւանդ վասն աստուածածանութեան նորա՝ առաւել դաշինս կռէր ընդ նմա...»՝* **Ագաթանգեղայ** 1983, ՃԻԶ, 877:

Նույն կերպ՝ Շապուհ II-ը եղբայր է անվանում Հայոց Տիրան արքային (338-350 թթ.).

*«Մազդեզանց քաջ եւ բարձակից արեգական Շապուհ արքայից արքայ. ի բարւոջ մերում յիշեալ **եղբայր** սիրելի Տիրան Հայոց արքայ. ողջոյն շատ»՝* **Մովսէս Խորենացի** 1913, III. ԺԷ:

ջինի գերակա իրավունքը վերջինի նկատմամբ[42]: Այսպես՝ Խաթթիի արքա Սուպպիլուլիումաս I-ի և Հայասայի արքա Խուկկանայի միջև կնքված պայմանագրում նշված է.

«1-5) *Այսպես (ասում է) Արևս՝ Սուպպիլուլիումասը, Խաթթիի արքան: Տե՛ս, քեզ՝ Խուկկանայիդ, շարքային հերոսիդ[43] ... ընտրեցի և քրոջս քեզ կամովին կնության տվեցի*»[44]:

«8-11) *Դու, Խուկկանա՛, միայն Արևիս կամովին պիտի ճանաչես որպես տեր: Եվ որդուս, ում Արևս կասեմ՝ «Բոլորդ սրան պիտի ճանաչեք»: Եվ նրան կընտրեմ, դու, Խուկկանա, նրան ճանաչի՛ր*»[45]:

Մակեդոնիայի արքա Լիսիմաքոսը (մ.թ.ա. 285-281 թթ.) ցանկանալով օգնել Անտիպատրոսին՝ Եգիպտոսի արքա Պտղոմեոս I Սոտերի (մ.թ.ա. 305-282 թթ.) անունից նամակ է ուղարկում Էպիրոսի արքա Պյուռռոսին (մ.թ.ա. 296-272 թթ.)՝ կոչ անելով դադարեցնել պատերազմը: Վերջինիս համար ոչ մի դժվարություն չի առաջանում կեղծիքը բացահայտելու համար, քանզի նամակում ընդունված «***հայրը ողջունում է որդուն***» արտահայտության փոխարեն գրված էր. «*Պտղոմեոս արքան ողջունում է Պյուռռոս արքային*»[46]:

Երկու արքաների միջև ուղղաձիգ հարաբերություն էր պարունակում նաև *«տեր - ծառա»*, *«ասրված - հեպևորդ»* դիմելաձևերը: Այսպես, օրինակ, Եգիպտոսի փարավոնին արդեն թուլացած Միտտանիի արքա Տեխու-Թեշշուբը *տեր* է կոչում, իսկ իրեն *ծառա* անվանում[47]: Խաթթիի արքա Խա-

---

[42] **Մանասերյան** 1997, 81: **Մելիքյան** 2008, 35:
[43] Խուկկանայի այսպիսի կարգավիճակի համար տես՝ **Քոսյան** 2016, 42:
[44] **Քոսյան** 2016, ԴԿ I, §1, 20-21; **Beckman** 1996. № 3, §1, 23
[45] **Քոսյան** 2016, ԴԿ I, §2, 20-21; **Beckman** 1996. № 3. §2, 23
[46] **Плутарх** 1990: Пирр, VI.
[47] **Moran** 1992 EA № 58

թուսիլի I-ը *ծառա* է անվանում Տուկանիայի արքա Տունիա-յին (Տունիպ-Թեշշուբին)՝

«*(1-3) Ասա Տունիային, իմ **ծառային**. այսպես է ասում Լաբարնան, Մեծ արքան. (4-7) **Դու իմ ծառան ես***»[48]:

Նույն կերպ են դիմում նաև հռոմեական կայսրերը Հա-յոց արքա Տիրանին ու նրա հաջորդին՝ Արշակ II-ին՝

«*Ինքնակալ Յուլիանոս, ծնունդ Ինաքայ, Արամազդայ որդի, և ճակատագրեալ յանմահութիւն. Տիրանայ մերում գործակալի խնդալ*»[49], և

«*Արշակ արքայ Հայոց Մեծաց և ամենայն նախարարք Արամեան ազգիս. փեսառն մերում ինքնակալի Վաղեսի Աւգուստոսի և որդւոյ քում Գրատիանոսի՝ խնդալ*»[50]:

«Ասպված - հետևորդ» դիմելածևի վառ օրինակ է Հռոմում՝ բազմության առջև Տրդատ Արշակունու ելույթը ուղղված Ներոն կայսեր՝

«*Ես, ո՛վ վեհապետ, Արսակեսի հետևորդն եմ, Վոլո-գեսոս և Պակորոս թագավորների եղբայրը, **իսկ քո՝ ծա-ռան**: Ու եկել եմ ես դեպի քեզ, **իմ աստծուն, երկրպագելու քեզ,** ինչպես Միթրային, և թող ինձ համար կատարվի այն, ինչ դու ինքդ կկամենաս. քանզի դու ես իմ վիճակը և իմ բախտը*»[51]:

Հռոմեացի պատմիչը նշում է նաև Ներոն կայսեր պա-տասխանը Տրդատին՝

«*... և այն ամենը, ինչ ոչ քո հայրը քեզ ժառանգություն թողեց, ոչ ևս քո եղբայրները քեզ տալուց հետո պահպա-նեցին, ես բոլորը քեզ պարգևում եմ և դարձնում Հայաս-տանի թագավոր, որպեսզի թե՛ դու և թե՛ նրանք հասկանաք,*

---

[48] **Hoffner** 2009: 2.1, 7f

[49] **Մովսէս Խորենացի** 1913, III, ԺԵ:

[50] **Նույն տեղում**, III, ԻԹ:

[51] **Դիոն Կասիոս**, 1976, LXIII, 5.2-3:

թե ես կարող եմ ***թագավորությունները և՛ վերցնել, և՛ պարգևել***»[52]:

Տիգրանակերտի արձանագրության մեջ Հայոց Տրդատ III արքան, բացի իրեն արքա օծած Դիոկղետիանոս կայսրից (284-305 թթ.)՝ երեք անգամ «***աստված***» է կոչում նաև արքայից արքա Ներսեհին (293-302 թթ.)՝ որի նկատմամբ վասալական պարտավորություններ էր հանձն առել՝ Հայաստանի պարսկահպատակ մասի կառավարումը ստանձնելով[53]:

Ա. Մելիքյանը նշում է, որ I-ից մինչև IV դ. սկզբները հայոց արքայի (կախյալ արքաների) կողմից հռոմեական կայսերն «աստված» կոչելը սովորական դարձած երևույթ էր, որն արտահայտում էր նրանց ստորադաս վիճակը վեհապետի հանդեպ: Միաժամանակ հեղինակը ուշադրություն է հրավիրում այն փաստին, որ այդ ամբողջ ընթացքում Իրանի արքաների հետ հայոց արքաները հարաբերվում էին որպես «եղբայր», այսինքն՝ իբրև իրավահավասար կողմ: Այս տարբերությամբ արտահայտվում էր մեկից հայոց արքայի իրավաքաղաքական կախումը, մյուսից՝ կատարյալ սուվերենությունը[54]:

Այսպիսով, Հին Մերձավոր Արևելքի պաշտոնական վավերագրերից քաղած վերոնշյալ միջպետական (միջարքայական) հարաբերությունների մեջ պաշտոնական դիմելաձևը ամենուրեք և անկախ պատմական ժամանակից, ունեցել է հստակ քաղաքական բովանդակություն: Այն մշտապես համապատասխանել է հարաբերվող արքաների իրավաքաղաքական կարգավիճին: Եթե այն եղել է հավասարազոր, ապա հարաբերությունն էլ կայացել է հորիզոնական առանցքի շուրջ՝ ինչպես «*եղբայրը եղբորը*»:

---

[52] **Նույն տեղում**, LXIII, 5.3:
[53] **Մելիքյան** 2008, 141:
[54] **Նույն տեղում**, 141:

Դրան հակառակ՝ վեհապետի ու վասալի հարաբերությունները մշտապես կառուցվել են ուղղաձիգ սկզբունքով և, համապատասխանաբար, նրանց պաշտոնական դիմելաձևն էլ ձևակերպվել է «*հոր*» և «*որդու*», «*փիրոջ*» և «*ծառայի*», «*աստծու*» և «*երկրպագողի*» ձևաչափով:

Ձևական տարբերություններն այստեղ արդյունք են ընդամենը այն բանի, որ առաջին և երկրորդ դեպքերում ուղղահայաց հարաբերությունը դիտարկված է ընտանիքի օրինակով, երրորդ դեպքում՝ հավատո հարաբերությունների:

Կասկածից վեր է, որ Ասորեստանը անհաղորդ չի եղել Հին Մերձավոր Արևելքում դարերով կենցաղավարած քաղաքական մշակույթին ու նրա՝ վերը քննարկված էթիկետային տարրին: Վերջինս, ինչպես տեսանք վերը բերված օրինակներում, միջպետական հարաբերություններում բավականին առանցքային նշանակություն ուներ և, հետևաբար, Ասորեստանը, կամա թե ակամա, այն պետք է ընդուներ՝ հավասարազոր և հպատակ քաղաքական սուբյեկտների հետ իր հարաբերությունները կառուցելու համար: Այս տեսանկյունից կատարելապես բացառվում էր, որ Աշշուրբանիպալն իր «Տարեգրության» մեջ օգտագործեր քննարկված եզրույթները սոսկ ինքնափառաբանման նկատառումով:

Ամփոփում

Ելնելով մ.թ.ա. VII դարի ասսուրա-ուրարտական դիվանագիտական, հարաբերությունների ընդհանուր օրինաչափությունից՝ կարելի է եզրակացնել, որ քաղաքական գերծանր պայմաններում գահ բարձրացած Սարդուրին Ուրարտուի փրկության ելքը տեսել է Ասորեստանի հովանավորության և աջակցության մեջ և դրա ակնկալությամբ դեսպանության միջոցով Ասորեստանին հավաստել է իր հպատակությունն ու հավատարմությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ագաթանգեղայ 1983, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանանյանցի, աշխ. թարգմ. և ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան:

Ադոնց Ն. 1972, Հայաստանի պատմություն, Ակունքները X-VI դդ. մ թ.ա., Երևան:

Գրեկյան Ե. 2008, Կինն Ուրարտում. Ուրարտուի թագուհիները: Շնորհի ի վերուստ, առասպել, ծես և պատմություն, հոդվածների ժողովածու նվիրված Սարգիս Հարությունյանի 80-ամյակին, 292 307:

Գրեկյան Ե. 2013, Ասորեստանը Ք.ա. VIII VI դդ., Հայաստանի հարակից երկրների պատմություն, հ. 1: Հին շրջան, պատասխանատու խմբագիր՝ Ա. Վ. Քոսյան, Երևան, 80-98:

Դիոն Կասիոս 1976, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, № 9, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան:

Մանասերյան Ռ. 1997, Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, Երևան:

Մելիքյան Ա. 2016, Սալմաստի ժայռաքանդակը (Պատմական Հայաստանի Սասանյան մի հուշարձանի վերամեկնաբանություն), Երևան:

Մելիքյան Ա. 2008, Տիգրանակերտի հունարեն արձանագրության ժամանակի և նշանակության մասին, Բանբեր. Գիտական աշխատություններ, № 3, Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ, Վանաձոր, 2008, էջ 132-144:

Մովսէս Խորենացի 1913, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Տփղիս:

Յակոբյան Ռ. 2014, Ասորեստանի պատմության պարբերացման հարցի շուրջ, Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ, № IX-X, էջ 229-246:

Յակոբյան Ռ. 2018, Էթնոքաղաքական տեղաշարժերը Մերձավոր Արևելքում և Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. VII-VI դդ., Երևան:

Քոչյան Ա. 2016, Մ.թ.ա. XIV դարի խեթա-հայասական միջպետական պայմանագրերը, Երևան

Аммиан Марцеллин 2005 Римская история Пер с лат Ю Кулаковского и А Сонин, Москва

Арутюнян Н. В. 1970 Биайнили (Урарту), Военно-политическая история и вопросы топонимики, Ереван

Арутюнян Н. В. 1976 Некоторые вопросы последнего периода истории Урарту, Древний Восток, № 2, с. 98-114

Бикерман Э. 1985: Государство Селевкидов, Москва.

Дьяконов И. М. 1951: Ассиро-вавилонские источники по истории Урарту, Вестник древней истории, № 3, с. 205-252

Меликишвили Г. А. 1954 Наири-Урарту, Тбилиси

Плутарх 1990: Избранные жизнеописания в двух томах Т. 1, Москва

Beckman G. M. 1996 Hittite Diplomatic Texts, Atlanta

Borger R. 1996. Beiträge zum Inschriftenwerk Ashurbanipals, Die Prismenklassen A, B, C = K, D, E, F, G, H, J, und T sowie andere Inschriften, Wiesbaden

Brinkman J. A. 1984 Prelude to Empire. Babylonian Society and Politics, 747-626 B.C., Philadelphia

Bryce T. 2003 Letters of the Great Kings of the Ancient Near East The Royal Correspondence of the Late Bronze Age, London - New York

Dodson A., Hilton D. 2004: The Complete Royal Families of Ancient Egypt, Thames and Hudson

Frame G. 1982: Another Babylonian Eponym, Revue d'Assyriologie et d'Archéologie Orientale, № 76, 157-166

Fuchs A. 2012: Urartu in der Zeit, BIAINILI-URARTU, The Proceedings of the Symposium held in Munich 12-14 October 2007, Ed. by S. Kroll, C. Gruber, U. Hellwag, M. Roaf & P. Zimansky, Peeters, 135-161.

Grayson A. K. 1981: The chronology of the reign of Asurbanipal, Zeitschrift für Assyriologie und Vorderasiatische Archäologie, № 70, 226-254

Harper R. F. 1913: Assyrian and Babylonian Letters Belonging to the Kouyunjik Collections of the British Museum, Part XII, Chicago.

Hellwag U. 2012 Der Niedergang Urartus, BIAINILI-URARTU, The Proceedings of the Symposium held in Munich 12-14 October 2007, Ed. by S. Kroll, C. Gruber, U. Hellwag, M. Roaf & P. Zimansky, Peeters, 227-241

Hoffner Jr. H. A. 2009: Letters from the Hittite Kingdom, Writings from the Ancient World, Society of Biblical Literature, № 15, Atlanta

Houwkin ten Cate 1996 Dynastic Marriages of the Period between ca. 1258 and 1244 B.C., Altorientalische Forschungen, № 23/1, 40-75

Lanfranchi G. B. 2009 A Happy Son of the King of Assyria Warikas and the Çineköy Bilingual (Cilicia) // in Luukko, M., Svärd, S. and Mattila, R. (eds.), Of God(s), Trees, Kings, and Scholars: Neo-Assyrian and Related Studeis in Honour of Simo Parpola, Studia Orientalia 106, Helsinki, 2009

Luckenbill D. D. 1927: Ancient Records of Assyria and Babylonia, Vol. 2, Chicago

Moran W. L. 1992: The Amarna Letters, Baltimore and London.

Mynářová J. 2007 Language of Amarna – Language of Diplomacy Perspectives on the Amarna Letters, Prague

Na'aman N. 1991: Chronology and History in the Late Assyrian Empire (631-619 B.C.), Zeitschrift fur Assyriologie und Vorderasiatische Archäologie, № 81, 243-267

Oppenheim Leo A. 1967 Letters from Mesopotamia, Chicago-London

Parpola S. 2018: The Correspondence of Assurbanipal, Part I: Letters from Assyria, Babylonia, and Vassal States, State Archives of Assyria, XXI, Helsinki

Reade J. 1998: Assyrian Eponyms, Kings and Pretendersm 648-605 B.C., Orientalia, № 67/2, 255-265

Roaf M. 2010. Thureau-Dangin, Lehmann-Haupt, Rusa Sardurihi and Rusa Erimenahi, Aramazd Armenian Journal of Near Eastern Studies, № V/1, 66-82

Salvini M. 1995: Geschichte und Kultur Urartäer, Darmstadt

Salvini M. 2007: Argišti, Rusa, Erimena, Rusa und die Löwenschwänze. Eine urartäische Palastgeschichte des VII Jh. v. Chr., Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies, № II, 146-162

Streck M. 1916 Assurbanipal und die letzten assyrischen Könige bis zum Untergang Nineveh's, Teil II, Leipzig.

Waterman L. 1930 Royal Correspondence of the Assyrian Empire Translation and transliteration, Part II, Ann Arbor

Ռուսլան Ցականյան - *պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, Հին Արևելքի բաժին, գիտաշխատող,*
ruslantsakanyan@rambler.ru

A SAMPLE OF MANIFESTATION OF ROYAL SUBORDINATION IN RELATIONSHIP BETWEEN ASSYRIA AND URARTU

Keywords: *Equality, God, Lord, servant, brother, son, Egypt, Hatti, Mittani, Assyria, Urartu.*

According to the "Chronicle" (Cylinder A, Col. X, ll. 40-50) of the Assyrian king Ashurbanipal (669-627 B.C.) in 647-637 B.C., he was received the ambassadors of the king of Urartu Ishtar-duri/Issarduri/Sarduri III (IV (?) (645-635(?) B.C). In the Chronicle, Ashurbanipal notes that earlier the Urartu kings sent him ancestors fraternal greetings, and now Sarduri "***kîma ša*** DUMU (***mâru***) ***ana*** AD-***šú*** (***abûšu***)" - "*as a son to his father*" constantly writes "***lu šulmu-mu ana*** LUGAL (***šarri***) EN-***ia*** (***bêliya***)" - "*to the King, my Lord*" and presents gifts. By means of evidence from similar Ancient Near Eastern and Ancient Diplomatic Sources, the problem of the status of the Urartu State and the King is investigated

Based on the fact in the above inscription of Ashurbanipal, as well as from many similar Parallels in Ancient Near Eastern lithographic sources and in Interstate relationship - it is clearly seen that the mutual appeal of the two rulers as "*brother to brother*" was peculiar to absolutely independent States. Meanwhile, here the vertical "*father-son*" relationship of the sovereign over the vassal takes place, which are formed mainly by force and coercion.

This crucial change in diplomatic etiquette demonstrates the voluntary donation of the political sovereignty of the State of Urartu.

Ruslan Tsakanyan - *PhD, Institute of Oriental Studies NAS RA, Department of Ancient Orient, Researcher,*
ruslantsakanyan@rambler.ru

ԳՈԹԱՐԶ II-Ի ՍԱՐՊՈԼ-Ի ԶՈՀԱԲԻ ԺԱՅՌԱՔԱՆԴԱԿԸ

ԱՐԹՈՒՐ ՄԵԼԻՔՅԱՆ

Բանալի բառեր՝ *Սարպոլ-ի Զոհաբ, Հոլվան, ժայռաքանդակ, Գոթարզ I, Գոթարզ II, Հոնգ-ի Աժդար, պարթևներ, Արշակունիներ, ճակատային ոճ, դիադեմա:*

Պարթևական դարաշրջանից հայտնի իրանական շուրջ մեկուկես տասնյակ ժայռաքանդակների շարքում ուրույն տեղ է գրավում Սարպոլ-ի Զոհաբի հուշարձանը: Այն հայտնի է դեռևս 19-րդ դարից, սակայն գիտական ուշադրության առարկա է դարձել միայն 20-րդ դ. 20-ական թթ. սկսած: Ցավոք, գրեթե մշտապես այն քննության է առնվել մեկուսի՝ իրանական կերպարվեստի, հատկապես պարթևական ժայռաքանդակային արվեստի գեղարվեստական զարգացման համատեքստից դուրս: Որոշ անվանի հետազոտողներ, ինչպես, օրինակ, Ն. Դիքվոյզը, Լ. Վանդեն Բերգը Հին Իրանի մշակույթի վերաբերյալ իրենց ուսումնասիրություններում նույնիսկ հարկ չեն համարել անդրադառնալ այս հուշարձանին, կամ էլ բավարարվել են սոսկ նրա հիշատակությամբ:

Ժայռաքանդակի տեղադրությունն ու նկարագրությունը

Քննության առարկա պարթևական ժայռաքանդակը գտնվում է Քերմանշահից 147 կմ հեռու՝ ներկայիս Սարպոլ-ի Զոհաբ քաղաքի հյուսիսային եզրին: Այն կերտվել է Հոլվան գետի ձախ ափին բարձրացող Միյան Կալ լեռան հյուսիս-արևմտյան ծայրամասի ժայռաբլրի արևմտյան երեսին[1]: Այս

[1] **Abbas Rezaei Nia** 2014: 471; **Մելիքյան** 2017, հավելված 1, նկ.16:

տեղանքը հնուց ի վեր ունեցել է բացառիկ կարևոր ռազմավարական նշանակություն, քանի որ նրա հարևանությամբ էր գտնվում Զագրոսյան լեռների կարևորագույն լեռնանցքներից մեկը: Է. Հերցֆելդի կողմից դիպուկ կերպով «Ասիայի դարպասներ»[2] կոչված այս լեռնանցքով էր անցնում Բաբելոնից Էկբատան տանող հինավուրց և բանուկ մայրուղին: Բայց այս շրջանը ռազմական և տնտեսական կարևորությունից զատ վաղնջական ժամանակներից կատարել է նաև իրանական և միջագետքյան քաղաքակրթությունների հաղորդակցության յուրօրինակ կամրջի դեր: Պատահական չէ, որ դեռևս Ք.ա. III-II հազարամյակների սահմանագծին լուլուբեյների արքա Անուբանինին ու նրա ևս երեք ցեղակիցներ այս լեռան նույն երկար, ուղղանկյուն ժայռը (Անուբանինիի արձանագրության մեջ այն կոչված էր Բադիր[3]) ընտրել են իրենց հաղթանակի և ինվեստիտուրայի թեմայով ժայռաքանդակները կերտելու համար[4]: Սրանք, ինչպես նաև Անուբանինիի ժայռաքանդակից մոտ 30 մ ներքև[5] կերտված պարթևական հուշարձանը, այսօր ներառված են Սարպոլ-ի Զոհաբի տարրական դպրոցի տարածքի մեջ և դարձել են նրա հրապարակի հյուսիսային բնական պատի անգնահատելի դեկորները (պատկ. 1):

Սարպոլ-ի Զոհաբի պարթևական հուշարձանը մեր օրերն է հասել բավականին վնասված վիճակով. դարերի ընթացքում հողմնահարվելուց ու ողողմամաշվելուց բացի՝ այն լրջորեն վնասվել է նաև 1980-1988 թթ. Իրան-իրաքյան պատերազմի ընթացքում՝ իրաքյան բանակի ռմբակոծությունների պատճառով[6]:

---

[2] **Herzfeld** 1920: 53

[3] **Дьяконов** 1956: 102, прим. 4

[4] **Posgate and Roaf** 1997: 151, FIGS 6-7; **Westenholz** 2000: 108-109

[5] **Mohammadifar** 2007: 120

[6] **Mohammadifar** 2007: 120

Ժայռաքանդակի հորինվածքը բաղկացած է ձիավորի և հետիոտնի պատկերներից, որոնց չափերը մոտ են բնականին: Հեծյալը ներկայացված է թիկնոցով, պարթևական երկարաթև վերարկուով և լայնափողք տաբատով, որի հատկանշական ծալքերն արտահայտված են փորագրագծերի միջոցով: Նրա գոտուց կախված սուր է նշմարվում: Հեծյալի գլուխը զարդարված է երկար երիզավոր դիադեմայով, որը պարզորոշ վկայում է, որ ներկայացված է պարթևական վեհապետ: Հողմահարությունը զգալիորեն մաշել է հեծյալի՝ առանց այդ էլ փոքր խորություն ունեցող և ոչ ռեալիստական պատկերը: Այդ պատճառով էլ նրա դիմագծերի մասին կարելի է դատել միայն ընդհանրական ձևով՝ մեծ, ասես չռված աչքեր, թավ բեղեր, իսկ մորուքը երկատված է այն ոճով, որ տեսնում ենք Ք. ա. I դ. երկրորդ քառորդին Էյումայիսում գահակալած Կամնասկիրես IV-ի դրամների երեսին[7]: Քանդակի մաշվածության պատճառով չի երևում նաև, թե հեծյալն աջ ձեռքով ձիու սանձը, թե սրի դաստակն է բռնել:

Ձիու պատկերն ունի 215 սմ երկարություն[8] և նույնպես հեռու է իրապաշտական լինելուց: Նախ՝ նրա իրանի առանցքը ոչ թե հորիզոնական, այլ թեք է մոտ 10 աստիճանով, որի հետևանքով խախտվել է առջևի և հետևի ոտքերի երկարության համամասնությունը: Բացի այդ, անհամամասն են նաև ձիու ոտքերի ու իրանի չափական հարաբերությունը, որի պատճառով էլ խախտված է նաև կենդանու բարձրության և երկարության համամասնությունը: Ուշագրավ է ձիու դիրքը: Այն ներկայացված է կողանց, բայց ոչ թե աջ ոտքը իսպանական քայլի (Spanish pace) ոճով

---

[7] **Ira and Larry Goldberg Auctioneere** 83, 2015: lot 257. **Մելիքյան** 2016, հավելված, նկ. 10բ: Չի բացառվում, որ դա ժայռաքանդակի վնասվածքի հետևանք լինի:

[8] **Յազդանփանահ** 2016, 241: Հմմտ. **Gropp** 1968: 315.

առաջ մեկնած, ինչպես որ տեսնում ենք Միհրդատ I-ի Հոնգ-ի Աժդարի ժայռաքանդակի վրա և պարթևական շատ քաղքուաների դարձերեսներին[9], այլ ստատիկ կանգնվածքով, որն առկա է պարթևական արքա Հրահատակի (Ք. ա. 2 - Ք. հ. 4 թթ.) քաղքուսի[10], Արտավան III-ի (10-38 թթ.) արծաթե դրահմայի[11], ինչպես նաև Էլյումայիսի Հրահատ արքայի Հոնգ-ի Կամալվանդի ժայռաքանդակի վրա[12]:

Հեծյալի դիմաց ներկայացված է տղամարդու պատկեր, որի գլուխը և իրանը ներկայացված են ճակատային դիրքով՝ մինչդեռ ոտքերը պրոֆիլ դիրքով են: Այս պատկերի հագուստը ևս պարթևական է և բաղկացած է մինչև ծնկները հասնող պարթևական վերարկուից, գոտուց և ծալքազարդ լայն փողքերով տաբատից: Նա արմունկից ծալված և դեպի հեծյալն ուղղված աջ ձեռքով օղակ է բռնել, իսկ ձախ ձեռքն իջնում է ազդրին: Ուսումնասիրողներից ոմանց կարծիքով հետիոտն պատկերի գոտուց դաշույն կա կախված[13]: Սակայն հուշարձանի արդի վիճակը դրանում վստահանալու հնարավորություն չի տալիս: Ցավոք դարերի ընթացքում ողողամաշման հետևանքով այս պատկերի գլխի մասում առաջացել է խորշ, ինչի հետևանքով ամբողջապես եղծվել է ոչ միայն նրա դիմապատկերը, այլև գլխի հարդարանքը:

Ժայռաքանդակի վերին ձախ անկյունում և աջակողմյան եզրամասում առկա են երկու պահլավերեն արձանագրություններ, որոնք անկասկած ստեղծվել են լուսաբանողական նշանակությամբ:

---

[9] **Sellwood** 1980 8 2, 11 6, 15. 5-6; 16 27; 16. 30, 20 7, 24 33-36, 26 25, 27 6, 30 31

[10] **Sellwood** 1980 57 15

[11] **CNG** 60, 2002, lot 1026; **Ira and Larry Goldberg Auctioneere** 83, 2015, lot 309; **Curtis** 2007. 17, Fig. 17

[12] **Vanden Berghe** 1983. 45, Fig. 5

[13] **Յարդանեանի** 2016: 241:

Հուշարձանի ստեղծման ժամանակի և ժանրային պատկանելության հարցը

Հ. Ռոուլինսոնը, ով առաջինն է նկարագրել այս ժայռաքանդակը, ինչպես և ֆրանսիացի հնագետ ու գեղանկարիչ Է. Ֆլանդենը, հավատացած էին, որ տվյալ ժայռաքանդակն ստեղծվել է Սասանյան դարաշրջանում[14]: Հուշարձանի ստեղծման ժամանակի վերաբերյալ վերջինիս համոզմունքը, ըստ երևույթին այն աստիճան խորն է եղել, որ ժայռաքանդակի մատիտանկարի ստեղծման ժամանակ նա ազատորեն վերափոխել է պատկերների առանձին դետալները՝ հարմարեցնելով դրանք սասանյան կերպարվեստում ընդունված ոճական սկզբունքներին: Այսպես, երկու մարդկային պատկերների գլուխներն էլ ներկայացվել է պրոֆիլ, մինչդեռ ակնհայտ է, որ երկուսն էլ քանդակված են ճակատային դիրքով: Բացի այդ, հեծյալը ներկայացվել է միթրայով, մինչդեռ իրականում նա դիադեմայից բացի գլխի այլ պատիվ չի կրում: Մատիտանկարում հեծյալի պատկերն ավելի մեծ է ներկայացված, քան հետիոտնինը: Վերջապես՝ ձիու հետևի ձախ ոտքը ներկայացված է ծալված, ասես թե քայլքի մեջ, մինչդեռ, ակնհայտ է, որ ժայռաքանդակի վրա այն ուղիղ է՝ ընդամենը մի փոքր ավելի կարճ, քան աջ ոտքը[15]:

Գիտական հանրության պատկերացումները խնդրո առարկա հուշարձանի մասին դարձան ավելի հստակ այն բանից հետո, երբ 1904 թ. Փարիզում լույս տեսած «Լեզվաբանական ուսումնասիրությունների» 5-րդ պրակում Ժ. դը Մորգանն առաջին անգամ հրապարակեց Սարպոլ-ի Զոհա-

---

[14] **Rawlinson** 1846. 280; **Flandin et Coste** 1851. 147

[15] Քանդակագործը, ըստ երևույթին, իր համեստ հնարավորությունների պայմաններում փորձել է այդ ձևով խորություն հաղորդել իր ստեղծագործությանը.

բի պարթևական հուշարձանի լուսանկարը[16]: Այնուամենայնիվ, պահանջվեց ևս մեկուկես տասնամյակ, մինչև որ խնդրո առարկա ժայռաքանդակը դարձավ գիտական ուսումնասիրության առարկա:

Է. Հերցֆելդն առաջինն էր, որ ժայռաքանդակին կից արձանագրության վարձանման փորձ կատարեց և հաստատեց այս հուշարձանի պարթևական ծագումը: Հեղինակը հեծյալի թիկունքում կերտված պահլավերեն արձանագրության մեջ «Գոթարզ Գևի որդի» ընթերցման հիման վրա հեծյալի պատկերը նախապես նույնացնում է Գոթարզ II-ի (40-51 թթ.) հետ[17], իսկ հետիոտնին՝ պարթևական նահանգապետի, որը վեհապետից կառավարչական լիազորություններ է ստանում: Բայց հետագայում նա, հրաժարվելով այս մեկնաբանությունից, ձիավորին նույնականացրեց Արտավան V-ի՝ Պարթևական տերության վերջին վեհապետի (213-224 թթ.) հետ[18]: Այս երկրորդ մեկնաբանությունը գիտության մեջ պաշտպանություն չստացավ:

Վ. Հենինգը Սարպոլ-ի Զոհաբի պարթևական ժայռաքանդակը վերագրում է II դարին՝ աղերսելով այն գահակալական պայքարում Միհրդատ IV արքայի (128-147 թթ.) դեմ Վաղարշ II-ի (105-147 թթ.) տարած հաղթանակին[19]:

Հետագա ուսումնասիրողները՝ Լ. Տրյումփելմանը[20], Յ. Մոհամմադիֆառը[21], Մ. Յազդանփանահը[22] և այլք պաշտպանեցին Է. Հերցֆելդի առաջին վարկածը:

Սարպոլ-ի Զոհաբի ժայռաքանդակի ուսումնասիրության գործում շոշափելի է նաև Գ. Գրոպպի ներդրումը[23]:

---

[6] **De Morgan** 1904. 151
[7] **Herzfeld** 1920. 53
[18] **Herzfeld** 1926: 228
[9] **Henning** 1952: 41
[20] **Trümpelmann** 1976. 16, Pls. 9a, 10
[21] **Mohammadifar** 2007. 119-132
[22] **Յազդանփանահ** 1916. 243
[23] **Gropp** 1968. 315-319, **Gropp** 1976: 16

Հուշարձանի ոճական և հորինվածքային առանձնահատկությունների քննությունից ու նրա անհամեմատ բարձրորակ լուսանկարների հրապարակումից բացի, հեղինակը փորձել է վերծանել նաև նրա վիմագիր արձանագրությունները: Հեծյալ արքայի թիկունքում՝ քանդակային մակերեսի վերին ձախակողմյան մասում առկա պահլավերեն արձանագրությունը նա ընթերցում է.

(1) Ptkr ZNH (2) NPŠH gwtrz (3) MLK' (4) RB[] (5) BRY gyw (6) MLK' (7) [RB]'

«Սա պատկերն է մեծ արքա Գոթարզի՝ որդու Գևի՝ Մեծ արքայի»[24]:

Գ. Գրոպի այս վերծանությունը ուսումնասիրողների շրջանում ընդունվել է առանց առարկությունների[25]: Հեղինակը խնդրո առարկա հուշարձանի ժամանակագրությունը ճշտելու նպատակով զուգահեռներ է տանում նրա և նույն Գոթարզ Գևաորդու կողմից Բեհիսթունում ստեղծված մարտական տեսարանով ժայռաքանդակի միջև և հանգում է երերուն եզրակացության. «Թեև «մեծ արքաներ» Գևի և Գոթարզի ժամանակագրությունը դժվարություն է ներկայացնում, այնուամենայնիվ, ես հակված եմ կարծելու, որ (Սարպոլ-ի Զոհաբի ժայռաքանդակի վրա –Ա.Մ.) ներկայացված արքան նույնական է Գոթարզ I-ի (Ք. ա. 90-78 թթ.) հետ»[26]:

Ժայռաքանդակի աջակողմյան մասի արձանագրությունում, անկասկած, լուսաբանված է եղել հետիոտն պատկերի ինքնությունը: Դեռևս Հ. Ռոուլինսոնի ժամանակներում այն համարվում էր անընթեռնելի, իսկ մեր օրերն է հասել էլ ավելի եղծված վիճակով: Այդուհանդերձ, Գ. Գրոպը փորձել է վերականգնել նաև այս վիմագիրը և հանգել է հետևյալին.

---

[24] **Gropp** 1968: 317
[25] **Trümpelmann** 1977: 14-15, Taf.10; **Mohammadifar** 2007: 123.
[26] **Gropp** 1968. 318

(1) P[tkÞr ZN[H] (2) N[P]ŠH (3) s[]š]rwn (4) [h]ewndz? (5) [dz]dr

Սա պատկերն է Ս...րովանի՝ Հովյան բերդի բերդապահի?

Սակայն ընդամենը երկու տարի անց հրատարակած մեկ այլ ուսումնասիրության մեջ հեղինակը թերահավատություն է հայտնում իր իսկ առաջարկած վերծանության հանդեպ[27]:

Թ. Կավամին խնդրո առարկա հուշարձանի ժանրային պատկանելության հարցում ընդհանուր առմամբ պաշտպանում է Է. Հերցֆելդի տեսակետը: Սակայն մատնացույց անելով այն իրողությունը, որ ժայռաքանդակին կից արձանագրության մեջ նշված չէ Արշակունիների «արքայից արքա» տիտղոսը, նա ենթադրում է. «ժայռաքանդակը հավանաբար ստեղծվել է Արշակունիներից անվանապես կախյալ կառավարչի կողմից, որը ներկայացրել է Բեհիսթունի ժայռաքանդակներից հայտնի Գոթարզ I-ի (Ք. ա. 91-87 թթ.) անունն ու պատկերը՝ սեփական իշխանության օրինականությունը բարձրացնելու նպատակով»[28]: Չբացառելով, որ այս հուշարձանը կարող է ստեղծված լինել I դ. սկզբներից հետո, Թ. Կավամին ավելի հավանական է համարում II դարը, երբ Պարթևական տերության տեղական կառավարիչները նկատելիորեն անկախ էին Արշակունիներից[29]: Մերի Բոյսը ևս գտնում է, որ «Ելնելով ոճական իրողություններից՝ քանդակը չի կարող թվագրվել մեր թվականության երկրորդ դարից ավելի վաղ ժամանակներով և, հավանաբար, վերաբերում է ուշ պարթևական դարաշրջանին»[30]:

Այսպիսով, ուսումնասիրողների գերակշիռ մասը Սարպոլ-ի Զոհաբի պարթևական ժայռաքանդակի հորինվածքը

---

[27] **Gropp** 1976, 200
[28] **Kawami** 1987, 48
[29] **Նույն տեղում**·
[30] **Boyce** 2003, 31-32

համարում է սովորական ինվեսիտուրայի տեսարան, որում հեծյալ արքան իշխանությամբ է օժտում հետիոտնին: Արտաքուստ այս մեկնաբանությունը թվում է հիմնավոր. առկա է պարթև արքայի պատկեր, որի վեհապետական աստիճանը երևում է արձանագրության «մեծ արքա» տիտղոսից[31] և երկար երիզներով դիադեմայից[32]: Դրա մի վկայությունն էլ արքայի հեծյալի դիրքով պատկերաձևն է: Հելլենիստական դարաշրջանի պալատական էթիկետի ոլորտում վեհապետների և նրանց հպատակ արքաների նվիրապետական հարաբերությունների մասին գրավոր աղբյուրների հաղորդումները[33] բավարար հիմք են տալիս կարծելու, որ հեծյալ դիրքով պատկերվելու իրավունքը եղել է վեհապետի[34] կամ առվազն սուվերեն արքայի մենաշնորհը[35]: Սրանից բխող

---

[31] Բովանդակային առումով այն նույնական է «արքայից արքա» տիտղոսին:

[32] Պարթևական դարաշրջանում հպատակ արքաների և սատրապների դիադեմաները կամ զուրկ էին երիզներից, կամ էլ ունեին կարճ երիզներ (**Peck** 1993. 408)

[33] **Plutarchus** 1964: Lucull, XXX, 6, **Josephus** 1963: XX, 60.

[34] Պարթևական արվեստում այդօրինակ տարբերակման եզակի նմուշ է Հոնգ-ի Աժդարի ժայռաքանդակը, մինչդեռ Սասանյան ժայռաքանդակային արվեստում այն դրսևորված է Նախշ-ի Ռուստամ I, Նախշ-ի Ռաջափ I, Բիշապուհ I հուշարձանների վրա: Վեհապետի հեծյալ և հպատակի հետիոտն դիրքերի հակադրման պատկերագրական սխեմայով է ստեղծված նաև Սալմաստի վաղսասանյան ժայռաքանդակը, որի վրա ներկայացված են Սասանյան վեհապետներ Արտաշիր I-ը և Շապուհ I-ը՝ իրենց գահաժառանգ որդիներին՝ Շապուհին և Որմիզդ-Արտաշիրին Հայաստանի նկատմամբ իշխանությունը (իշխանության օղակը) հանձնելիս (**Մելիքյան** 2016, 164, հավելվ., նկ. 1-4):

[35] Այս առումով միանգամայն իրավացի է Վ. Գ. Լուկոնինը, որը պերսեպոլիսյան փորագրանկարների վրա Արտաշիրի հոր՝ Պապակի հեծյալ դիրքը գնահատում է իբրև պարթև Արշակունիների գերիշխանության դեմ ուղղված (**Луконин** 1969: 156-157, рис. 25 (1,2)) մարտահրավեր: Ամենայն հավանականությամբ նման ենթատեքստ ունի նաև Հոնգ-ի Կամալվանդի էլյումայիսյան ժայռաքանդակը, որի վրա հեծյալ դիրքով ներկայացված է

տրամաբանությամբ կարելի էր մտածել, թե Սարպոլ-ի Զոհաբի ժայռաքանդակի վրա պարթևական արքան պատկերվել է ձիուն նստած՝ իրանական հանրությանն ի տես դնելով իր վեհապետական կարգավիճակը, իսկ հետիոտնն էլ նրա հպատակն է, որը իշխանությամբ է օժտվում նրա կողմից:

Սակայն Սարպոլ-ի Զոհաբի ժայռաքանդակի վրա առկա, բայց ուսումնասիրողների ուշադրությունից զարմանալիորեն վրիպած կամ ըստ հարկի չարժևորված մի շարք պատկերագրական իրողություններ ստիպում են մեզ չհամաձայնել ընդունված մեկնաբանության հետ:

Առաջին հերթին նկատենք, որ խնդրո առարկա ժայռաքանդակի հորինվածքում հեծյալի զբաղեցրած դիրքն ու պատկերաձևը չեն համապատասխանում իշխանությամբ օժտողի այն կարծրատիպային պատկերաձևերին, որոնք առկա են սովորական կամ արքայական ինվեստիտուրայի ենթաժանրով Ք. ա. I – Ք. հ. III դդ. ստեղծված հուշարձանների վրա[36]: Այսպես, նման հորինվածքներում իշխանությամբ օժտողի և այն ստացողի աստիճանների տարբերությունն արտահայտված են կոմպոզիցիայում նրանց ստատիկ տեղաբաշխմամբ. իշխանություն շնորհող կողմը մշտապես ներկայացված է հորինվածքի աջ, իսկ իշխանություն ստացողը՝ ձախ կողմում[37]: Մինչդեռ Սարպոլ-ի Զոհաբի ժայռաքանդակի հորինվածքում հեծյալ արքան և հետիոտնը ունեն հակառակ դասավորությունը: Բացի դրանից, հարկ է

Էյումայիսի արքա Հրահատը՝ արքայական իշխանության խորհրդանիշերով (**Vanden Berghe** 1983, 45, Fig 5, **Kawami** 1987, 72-73)

[36] **Մելիքյան** 2016: 71-93:

[37] **CNG** 55 2000, lot 1217; **CNG** 58 2001, lot 119; **Peus Auction** 374 2003, lot 695, **Fritz Rudolf Künker Auction** 133 2007, lot 8791-8792, **Mattingly** 1940 pl 29, N 2, **Sear** 2002, 43, **Mattingly**, **Sydenham** 1930· N° 512; **Mathiesen** 1992 123-124, **Salaris** 2014, 102-103, Fig. 6.5, **Kropp** 2013: 31, Fig. 7, **Abramzon** 2002 240, Fig. 1, **Mattingly** 1940: 204-205, N° 1274-1275; **Colledge** 1986: 16, pl. XVIII, **Մելիքյան** 2016, 95, հավելվ. նկ. 1, 18բ, 20-27, 32:

նկատել, որ եթե տվյալ հորինվածքում իշխանություն շնորհողի դերը իսկապես վերապահված լիներ հեծյալ արքային, ապա նա պետք է ներկայացված լիներ կամ աջ ձեռքով հետիոտնին հպվելիս[38], կամ էլ նրան իշխանության նշան մեկնած, ինչպես որ տեսնում ենք Արտավան V-ի օրոք ստեղծված՝ այսպես կոչված Հվասակի ստելայի[39], կա՛մ էլ, օրինակ, Սալմաստի վաղասասանյան ժայռաքանդակի վրա[40]: Մինչդեռ նա աջ ձեռքով ոչ թե իշխանության խորհրդանշան է բռնել, այլ ձիու սանձը կամ սրի կոթը: Հին առաջավորասիական պատկերագրության քննությունը պարզորոշ ցույց է տալիս, որ թե՛ առաջինը (զենք բռնելը), թե՛ երկրորդը (ձիու սանձեր բռնելը) եղել են խիստ իմաստավորված. Առաջին դեպքում ընդգծվել է ներկայացված իրադարձությանը վեհապետի մասնակցության ուժային[41], իսկ մյուս դեպքում՝ նրա գործողության վարչարարական բնույթը[42]: Հետևաբար, Սարպոլ-ի Զոհաբի ժայռաքանդակի վրա էլ հեծյալի աջ ձեռքի դիրքը հազիվ թե կարելի է համարել նկարիչ-քանդակագործի գեղարվեստական քմահաճույքի արտահայտություն:

Սարպոլ-ի Զոհաբի ժայռաքանդակի հորինվածքի և նրա վերաբերյալ տարածված մեկնաբանության անհամաձայնությունը նկատել են Յ. Մոհամմադիֆառն ու Մ. Բոյսը, որոնք փորձել են շտկել այն. «Հեծյալի դիմաց ամբողջա-

---

[38] Բացի Հվասակի ստելայից, այսպիսի սխեմայով են ստեղծվել նաև Հոնգ-ի Յար Ալիվանդի էյումայիսյան ժայռաքանդակն (**Mathiesen** 1992 123-124. Համմտ. **Messina, Mehr Kian** 2015: 149, 152, Fig. 3) ու Տանգ-ի Սերվակի հուշարձանախմբի առաջին քարաբեկորի արևելահայաց կողմի՝ այսպես կոչված BN ժայռաքանդակը (**Salaris** 2014· 102-103, Fig 6 5)

[39] **Ghirshman** 1962· 56-57, fig. 70; **Potts** 1999: 401- 402; **Colledge** 1986· 16, pl XVIII

[40] **Մելիքյան** 2016, 95-96, հավելվ., նկ. 1:

[41] **Մելիքյան** 2016, 48.

[42] **Մելիքյան** 2016, 49:

պես ճակատային ոճով պատկերված է մի անձնավորություն, որը մեկնել է ձեռքը՝ նրանից ինչ-որ իր ստանալու համար»[43]: Այսինքն, նշված հեղինակների կարծիքով պարթևական այս հուշարձանի կերտողը արձանագրել է ենթադրյալ ինվեստիտուրայի արարողության այն պահը, երբ վեհապետն արդեն հանձնել է իշխանության խորհրդանշանը, իսկ նորաթուխ պաշտոնյան էլ արդեն ստացել է այն: Ցավոք, այսօրինակ «խմբագրումը» ոչ թե նպաստում է հուշարձանի մեկնաբանության գործին, այլ, ընդհակառակը, հեռացնում է դրանից: Վերոնշյալ մեկնաբանության մեջ կատարելապես անտեսված է տվյալ ժայռաքանդակի պատմողական նշանակությունը: Ինվեստիտուրայի երկու ենթաժանրերի ստեղծագործություններում մշտապես ընդգծված է տալու-ստանալու, երբեմն, միայն տալու գործողությունը, որով հորինվածքում ընգծվում էր իշխանության աղբյուրի (աստվածություն, վեհապետ) գերակա դիրքը[44]: Խնդրո առարկա ժայռաքանդակը ստեղծող պարթևական արքան էլ պետք է հոգար, որ դիտորդները նրա հորինվածքի հիմնարար գաղափարը «տարընթերցելու» հնարավորություն չունենան, այլ իր պատկերագիր տեքստը ընկալեն «բառացի»: Մինչդեռ Յ. Մոհամմեդիֆառն ու Մ. Բոյսը, զանց առնելով ժայռաքանդակի

[43] **Mohammadifar** 2007: 132, **Boyce** 2003: 31-32

[44] Հվասակի ստելայի վրա Շոշի այս կառավարիչը պատկերվել է Արտավան V-ի՝ առաջ մեկնած իշխանության օղակը բռնած, բայց դեռևս չստացած (**Colledge** 1986: 16, pl. XVIII): Ռավալփանդում հայտնաբերված և Բրիտանական թանգարանում պահվող քուշանա-սասանյան արծաթե ափսեի զարդանկարի վրա իշխանության թեկնածուն ներկայացվել է աջ ձեռքը իշխանության օղակին թեթևակի հպած, բայց առանց այն բռնելու (**Herper** 1981. 109, Fig 35): Այս պատկերագրական սխեման, որն իր կանոնական նշանակությունը պահպանեց նաև Սասանյան կերպարվեստում, հորինվածքների կենտրոնում ներկայացվող իշխանությամբ օժտելու գործողությունը դարձնում էր ավելի դինամիկ՝ հնարավորություն տալով դիտորդին հստակորեն զանազանելու իշխանություն շնորհող և այն ստացող կողմերին (**Մելիքյան** 2016, 94):

պատկերագրական իրողությունը (ոչ թե հեծյալ արքան է ինչ-որ իր հանձնում հետիոտնին, այլ հետիոտն է աջ ձեռքով օղակ մեկնել հեծյալին), առաջարկում են նրա հորինվածքի մի «տարընթերցում», որի դեպքում դիտորդը ոչ թե ինվեստիտուրայի, այլ հեծյալ վեհապետին հետիոտնի անձնատվության պատկերացում պիտի կազմեր[45]: Սյուս կողմից էլ քննարկվող հուշարձանի երկու պատկերների միջև կայացող գործողության այսպիսի ընկալմանը պետք է խոչընդոտեր այնպիսի ակնառու պատկերագրական իրողություն, ինչպիսին հեծյալ վեհապետի նկատմամբ հետիոտնի չափական գերազանցությունն է: Սարպոլ-ի Զոհաբի ժայռաքանդակի մեկնաբանության գործում այս պատկերագրական իրողությանը անհրաժեշտ է ելակետային նշանակություն վերապահել, քանզի, ինչպես Է. Փորադան է նկատում, հինմերձավորարևելյան կերպարվեստի բազմապատկեր հորինվածքների «ոսկե օրենքը» պատկերների չափի և կարևորության ուղիղ համեմատականության սկզբունքն է[46]: Իրանական կերպարվեստում հեծյալ և հետիոտն պատկերների

---

[45] Այս մոտիվի պատկերագրական արտահայտությունները տեսնում ենք Սասանյան արքա Շապուհ I-ի՝ հաղթանակի թեմայով ստեղծված Բիշապուհ II և Բիշապուհ III ժայռաքանդակների վրա: Դատելով Բիշապուհ II-ի վրա Շապուհ I-ին օղակ մեկնած պատկերի հագուստից ու գլխի հարդարանքից (տե՛ս **Луконин** 1969: 73, рис. 11)՝ նրան պետք է նույնացնել պարսկա-հռոմեական շփման գոտում գտնվող որևէ երկրի կամ քաղաքապետության արքայիկի հետ: Բիշապուհ III-ի արքայից արքա Շապուհին օղակ մեկնած պատկերներն արդեն առնվազն չորսն են (տե՛ս **Hinz** 1969: 180, Tafel 105)՝ Ա. Սուդավարը նրանցից առաջինին, որը ներկայացված է հորինվածքի կենտրոնական մասում՝ Փիլիպպոս Արաբի թիկունքում, նույնացնում է քուշանների արքայի հետ (**Soudavar** 2012: 32) Բիշապուհ III ի մյուս երեք օղակավոր պատկերները տեղաբաշխված են հուշարձանի՝ Աներանը ներկայացնող աջակողմյան մասի վերևից առաջին և երկրորդ բաժիններում և, անկասկած, կերպավորում են պակաս նշանակալից կառավարիչների:

[46] **Porada** 1965 203

նմանօրինակ չափական անհամամասնության օրինակներ են Ք.ա. II դ. 20-ական թթ. ստեղծված Հոնգ ի Աժդարի և Հայաստանի Սասանյան արքա Որմիզդ-Արտաշիրի ստեղծած Սալմաստի ժայռաքանդակների վրա[47]:

Անվիճելի է, որ չափի և կարևորության համեմատականության պատկերագրական կանոնը դրսևորված է նաև Սարպոլ-ի Զոհաբի ժայռաքանդակի վրա. այստեղ հետիոտն պատկերն ունի մոտ 180 սմ բարձրություն[48] և չափերով նկատելիորեն մեծ է, քան արքան՝ ձիուն նստած: Իսկ դրանից բխող եզրակացությունը չի կարող միանշանակ չլինել. Սարպոլ-ի Զոհաբի պարթևական ժայռաքանդակի հորինվածքի աջ կողմում ներկայացված, չափերով հեծյալ վեհապետին գերազանցող և նրան օղակ մեկնած հետիոտնը չի կարող մարմնավորել պարթևական արքային ստորադաս անձնավորության՝ գավառապետի կամ բերդապահի: Դա ակնհայտ է նաև հետիոտն պատկերի կեցվածքից, որը չի համապա-

[47] Աստվածային ինվեստիտուրայի ժանրով ստեղծված Հոնգ-ի Աժդարի ժայռաքանդակի աջակողմյան մասում ներկայացված դիցական քառյակի (ձախից աջ՝ Ահուրամազդա, Վերեթրագնա, Միթրա, Տիր) պատկերները չափական առումով գերազանցում են ոչ միայն աջակողմյան հետիոտնի, այլև հեծյալ դիրքով ներկայացված Միհրդատ I-ի պատկերներին (**Մելիքյան** 2017, հավելված 1, նկ. 2): Սովորական ինվեստիտուրայի ժանրով ստեղծված Սալմաստի հուշարձանի վրա հեծյալ դիրքով ներկայացված Սասանյան վեհապետեր Արտաշիր I-ն ու Շապուհ I-ը դարձյալ չափական առումներով գերազանցում են իրենցից իշխանության նշաններ ստացող հետիոտններին (**Մելիքյան** 2017, հավելված, նկ. 1): Վերոնշյալ տարբերակման ոճական-հորինվածքային երկրորդ ուղին ներկայացված է Հվասակի ստելայի վրա: Այստեղ Շոշի կառավարիչ Հվասակի պատկերը նույն չափի է, ինչ որ Արտավանի գահին բազմած պատկերը: Բայց այստեղ էլ Հվասակի հանդեպ Արտավանի գերագահությունը հորինվածքում նրա աջակողմյան դիրքով և օղակ հանձնելու կանոնական տարրով արտահայտվելուց բացի, հստակ ընդգծված է նաև Արտավանի իշխանության նշանների (դեկորատիվ գահ, տիարա, երկար երիզներով դիադեմա) միջոցով:

[48] **Յազդանփանահ** 2016, 241:

տասխանում հպատակի, ստորադասի, խնդրարկուի պատկերագրական կարծրատիպերին, որոնք լավ հայտնի են ոչ միայն կերպարվեստի ստեղծագործություններից, այլև գրավոր աղբյուրներից:

Վերոնշյալ պատկերագրական իրողությունները պահանջում են հիմնովին վերանայել Սարպոլ-ի Զոհաբի պարթևական հուշարձանի կերպարների նույնականացման, ժանրային պատկանելության և, ինքնաբերաբար, նաև հուշարձանի ստեղծման ժամանակի խնդիրները:

Որոշ պատկերագրական դիտարկումներ Սարպոլ-ի Զոհաբի ժայռաքանդակի կերպարների նույնականացման շուրջ

Քննարկվող ժայռաքանդակի մեկնաբանության տիրույթում ծնվող առաջին հարցը, որն արդեն մեկ դար զբաղեցնում է ուսումնասիրողներին, այն է, թե Ք.ա. I – Ք.հ. I դդ. Պարթևստանում կառավարած երկու Գոթարզներից որ մեկին է կերպավորում հեծյալ արքան: Չեռնպահ մնալով ուսումնասիրողների կողմից մինչ օրս բերված փաստարկները կրկնելուց՝ հարկ ենք համարում ուշադրություն հրավիրել դրամագիտական և պատկերագրական որոշ իրողությունների վրա, որոնք ցայսօր վրիպել են նախորդ հետազոտողների ուշադրությունից, բայց կարող են լույս սփռել խնդրո առարկա հուշարձանի առեղծվածի վրա: Այսպես, Էկբատանի, Մարգիանայի, Ռագայի և Շոշի դրամահատարաններում թողարկած դրամների վրա Գոթարզ I-ը կրում է ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ ΑΡΣΑΚΟΥ ΘΕΟΠΑΤΟΡΟΣ ΝΙΚΑΤΟΡΟΣ տիտղոսը[49], մինչդեռ նրանից 130-140 տարի հետո կառավարած Գոթարզ II-ի դրամների վրա առկա է ΒΑΣΙΛΕΩ[Σ] ΒΑΣΙΛΕΩ[Ν] / ΑΡΣ[ΑΚΟΥ] ΕΥΕΡΓ[ΕΤΟΥ] /

[49] **Sellwood** 1980 Type 33; **Peus** 374 (Apr 2003), Lot 142, **Peus** 388 (1 Nov 2006), lot 374, **Triton** VII (12 Jan 2004), lot 428

[ΔΙΚΑΙΟΥ] / ΕΠΙΦΑ[ΝΟΥΣ] ΦΙΛΕΛΛΗ[ΝΟΣ][50] տիտղոսը: Թվում է, թե այստեղից կարելի է եզրակացնել, որ խնդրո առարկա հուշարձանը ստեղծել է հենց Գոթարզ I-ը: Սակայն հարկ է նկատել, որ ΒΑΣΙΛΕΩ[Σ] ΒΑΣΙΛΕΩ[Ν] և ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ տիտղոսները խորքային առումով հավասարազոր վեհապետական տիտղոսներ էին, և Ք. ա. II դ. վերջերից մինչև I դ. վերջերը Արշակունիներն այն կիրառել են բավականին անհետևողականորեն[51]:

Սարպոլ-ի Զոհաբի ժայռաքանդակի հեծյալի նույնականացման հարցում ավելի մեծ նպաստ են բերում Գոթարզ I-ի և Գոթարզ II-ի դրամական դիմապատկերների հետ նրա համեմատությունները: Դրամների դիմերեսին Գոթարզ I-ը կրում է եղջրազարդ սաղավարտաձև տիարա, իսկ նրան համակցված դիադեմայի ժապավեններն էլ ծանրորեն կախված են ծոծրակին արված հանգույցից: Մինչդեռ Գոթարզ II-ը ներկայացված է միայն դիադեմայով, որի երիզները հանգույցից հետո ավելի թեթևորեն են իջնում մեջքին, ինչպես որ քննարկվող ժայռաքանդակի վրա է: Այս պատկերագրական տարբերությունը մեծացնում է հավանականությունը, որ Սարպոլ-ի Զոհաբի հուշարձանի կերտողը եղել է Գոթարզ II-ը:

Անշուշտ, անհնարին է չնկատել, որ թե՛ Գոթարզ I-ը և թե՛ Գոթարզ II-ը իրենց դրամների դիմերեսին ներկայացված են կիսադեմ, մինչդեռ Սարպոլ-ի Զոհաբի ժայռաքանդակի հեծյալը ճակատային դիրքով է: Թվում է, թե այս ոճական տարբերության տեսանկյունից պետք է բացառել հուշարձանի հետ և՛ Գոթարզ I-ի, և՛ Գոթարզ II-ի առնչության հնարավորությունը և հուշարձանի ստեղծումը, ինչպես Յ. Մոհամմեդիֆառն ու Մ. Բոյսն են առաջարկում, տանել II դար, երբ պարթևական արվեստում ճակատային ոճն ար-

[50] **Sellwood** 1980 Type 65.
[51] **Sellwood** 1980 Types 23, 41.

դեն տիրապետող էր: Սակայն պարթևական կերպարվեստում ճակատային ոճի առաջացման, զարգացման և հատկապես նրա վաղ փուլում ճակատայնության տարբերակիչ (դետերմինատիվ) նշանակության ժամանակագրության մասին մեր պատկերացումները[52] թույլ են տալիս առաջադրել այլ լուծում:

Պարթևական կերպարվեստում, որքանով որ կարելի է դատել մեզ հասած հնագիտական և դրամագիտական նյութերից, ճակատային ոճի որոշ հիմնատարրեր սկսել են կիրառվել Ք.ա. II դ. կեսերից սկսած: Մինչև նույն դարի վերջին քառորդը հորինվածքներում կերպարների դիրքերը բաշխվում էին կանոնական սկզբունքով, ըստ որի լիադեմ կամ երեք քառորդ դիրքով ներկայացվում էին դիցերն ու աստվածացված նախնիները, իսկ մահկանացու տիրակալները, անկախ իրենց փառքից ու զորությունից, ներկայացվում էին միայն կիսադեմ դիրքով[53]: Առաջին անգամ այս սկզբունքը խախտել է Արտավան I-ը (Ք.ա. 126-122 թթ.)՝ Շոշի դրամահատարանում թողարկելով արքայական լիադեմ պատկերով դրահմաներ[54]: Ք.ա. 70 թ. «անծանոթ արքան» (ըստ Վ. Ռոթի) կամ Դարեհ Մարաստանցին (ըստ Դ. Սելվուդի) Էկբատանի, Ռագայի և Նիսայի դրամահատարաններում թողարկել է երեք (ըստ Դ. Սելվուդի) կամ երկու (ըստ Վ. Ռոթի) շարք դրահմաներ ու քաղքուսներ, որոնց դիմերեսին արքայական պատկերները ներկայացված են լիադեմ դիրքով[55]:

---

[52] **Մելիքյան** 2017, 40 119:

[53] **Նույն տեղում**, 82-119:

[54] **Le Rider** 1965: 359, 374. N°97, Pl 91, 1-4, **Sellwood** 1980: 12 30. Դրամական այս թողարկումները Գ. Լը Ռիդերն ու Դ. Սելվուդը վերագրում են Միհրդատ I-ին, իսկ Օ. Մյորկհոլմը՝ Արտավան I-ին (**Morkholm** 1965: 151): Հետագայում Գ. Լը Ռիդերն ընդունեց Օ. Մյորկհոլմի տեսակետը (**Le Rider** 1978 35):

[55] **Sellwood** 1980: Type 35; **CNG 57**, 2001. lot 674. **Assar** 2006: 92, Figs. 43-47 **Peus** 366, 2000: lot 255; **CNG** 57, 2001, lot 675. Գ. Ասսարը հնարավոր է

Ցավոք, մինչ օրս հստակ չեն պարթևական կերպարվեստի կանոնական սկզբունքից վերոնշյալ շեղումների պատճառները[56]: Բայց փաստերը, որ խնդրահարույց դրամները թողարկած Արտավան I-ն ու Դարեհը (կամ Հրահատ III-ը) դրամներ են հատել նաև դիմերեսի աջադարձ կամ ձախադարձ կիսադեմ պատկերաձևերով[57], ցույց է տալիս, որ աշխարհիկ տիրակալներին լիադեմ ներկայացնելու փորձը պարթևական դրամական պատկերագրության ոլորտում գեղարվեստական ավանդույթ չի դարձել: Մոնումենտալ քանդակագործության բնագավառում, ինչպես երևում է Միհրդատ I-ի Հոնգ-ի Աժդարի և Միհրդատ II-ի Բեհիսթունի ժայռաքանդակներից, վաղհելլենիստական պատկերագրական ավանդույթն ավելի կայուն է գտնվել:

Հելլենիստական դարաշրջանի կերպարվեստում ճակատային ոճի տարբերակիչ նշանակությունը սկսում է վերանալ Ք.ա. I դ. երկրորդ կեսից՝ ամենայն հավանականությամբ, Կոմմագենեում (Անտիոքոս I Կոմմագենցու Նեմրութի սրբավայրի կենտրոնական արձանախումբ) ապա և Ք. հ. I դ. կեսերին Դուրա Եվրոպոսում (Զևս-Թեոսի տաճարի խորանի որմնանկար[58]) կատարված ոճական տպավորիչ փոփոխությունների ազդեցությամբ: Ինչպես երևում է, այս երկու մշակութային կենտրոններում կայացած գեղարվեստական նորույթն արագորեն յուրացվում է պարթևական

համարում, որ վերոնշյալ դրամները հատել է Հրահատ III-ը, որը զբաղեցրել էր Մարաստան-Ատրպատականն այն բանից հետո, երբ Պոմպեոսը Ք.ա. 66 թ. գերեվարել ու Հռոմ էր ուղարկել Դարեհին (**Assar** 2000, **Assar** 2006: 92): Հեղինակը ճակատային դիրքով դիմապատկերի դրոշմելը պայմանավորում է Ատրպատականի արքաների դրամահատական ավանդույթով: Սակայն երկարատև փնտրտուքից հետո մենք չկարողացանք նախորդած ատրպատականյան արքաների դրամների մեջ այդօրինակ մեկ այլ դրամ գտնել:

[56] **Alram** 1986: 536-540

[57] **Վարդանյան** 1992: 112

[58] **Rostovtzeff** 1935: 73; **Кошеленко** 1966: 184

կերպարվեստի կողմից: Ընդ որում, եթե դրամական պատկերագրության մեջ այն շարունակել է կիրառվել դիպվածաբար[59], ժայռաքանդակային արվեստում ամենակարճ ժամանակամիջոցում դարձել է տիրապետող: Դատելով այն փաստից, որ Գոթարզ Գևաորդու մյուս՝ Բեհիսթունում ստեղծած հաղթական թեմայով ժայռաքանդակի[60] վրա պատկերները կիսադեմ են, կարելի է ենթադրել, որ պարթևական կերպարվեստում հենց այդ արքայի օրոք էլ ճակատայնության պատկերագրական տարրի տարբերակիչ նշանակությունը վերջնականապես կորսվել է և կատարվել է վճռական շրջադարձը հին իրանական (Աքեմենյան) կիսադեմ ոճից դեպի նոր՝ ճակատային ոճին:

Այսպիսով՝ պարթևական կերպարվեստի ճակատային ոճի վերաբերյալ վերոնշյալ դիտարկումների տեսանկյունից Սարպոլ-ի Զոհաբի ժայռաքանդակի նկատմամբ Գոթարզ II -ի հեղինակության հավանականությունը խիստ աճում է:

Սարպոլ-ի Զոհաբի ժայռաքանդակի մյուս պատկերագրական իրողությունը, որը մինչ օրս դուրս է մնացել ուսումնասիրողների տեսադաշտից, ձիու ստատիկ կանգնվածքով պատկերաձևն է: Պարթևական դրամահատության մեջ այն մուտք է գործել Ք. ա. I դ. երկրորդ կեսին[61]՝ փոխարինելով աջ ծունկը ծալած ձիու պատկերաձևին և կիրառական է մնացել մինչև Ք. հ. I դ. 80-ական թթ. կեսերը: Այլ խոսքով՝ վերոնշյալ պատկերագրական տարրի ժամանակագրությունը լիովին բացառում է ոչ միայն Սարպոլ-ի Զոհաբի ժայռաքանդակի կերտող Գոթարզ Գևաորդու հետ Գոթարզ I-ի նույնականացումը, այլև այս հուշարձանը Ք.ա. I դ. առաջին կես կամ Ք.ա. II դար տանելու հնարավորությունը: Փոխա-

---

[59] **Sellwood** 1980: 63. 1-5; 67. 1-5; 79. 51, 80. 26-27; 84. 105; 86 3-7; **CNG** 60, 2000: 1026, **Ira & Larry Goldberg Auctioneere** 89, 2016. lot 179,

[60] **Дибвойз** 2008. 154, рис. 46

[61] **Sellwood** 1980. 45. 36-37, 45 38, 46 27

րենը այն լիովին համապատասխանում է Գոթարզ II-ի գործունեության ժամանակաշրջանին:

Վերը նշվածի հիման վրա էլ մենք համակարծիք ենք Լ. Տրյումփելմանի, Յ. Մոհամմեդիֆառի և այլոց այն տեսակետին, որ Սարպոլ-ի Զոհաբի հեծյալը արքայից արքա Գոթարզ II-ն է:

Սարպոլ-ի Զոհաբի ժայռաքանդակի ժանրային պատկանելիության և հատկապես նրա պատմողական նշանակության բացահայտման առումներով առավել կարևոր է հուշարձանի հետիոտն պատկերի նույնականացումը: Արդեն նշել ենք, որ այս պատկերի կեցվածքը չի համապատասխանում հպատակի, ստորադասի, խնդրարկուի իրանական և առհասարակ հին առաջավորասիական պատկերագրական կարծրատիպերին: Փոխարենը՝ պարթև վեհապետի նկատմամբ նրա չափական գերազանցությունը և նրան իշխանության օղակ շնորհելու պատկերագրական իրողությունը բավարար հիմք են տալիս նրան աստվածության հետ նույնականացնելու համար: Հետիոտն պատկերի այսպիսի նույնականացման օգտին է խոսում նրա ծոծրակին առկա և դիադեմայի հանգույց հիշեցնող քանդակածո դետալը: Ինչ խոսք, ժայռաքանդակի կատարողական մակարդակը շատ ցածր է, շատ չնչին է քանդակի խորությունը և միևնույն ժամանակ, ամբողջապես վնասված է այս պատկերի գլուխը: Այդուհանդերձ՝ քանդակային մակերեսի հղկման աստիճանը գերազանց է: Հենց դրանից էլ համոզմունք է ծնվում, որ վերոնշյալ պատկերագրական տարրը ոչ թե քանդակագործական խոտանի արդյունք է, այլ հետիոտնի գլուխը զարդարած դիադեմայի հանգույցի մնացորդ: Բավական է նշել, որ պատկերագրական այս տարրն առկա է նաև Հոնգ-ի Աժդարի ժայռաքանդակի վրա՝ Ահուրամազդայի գլխի հար-

դարանքի մեջ[62]: Հետևաբար, ինչպես Միհրդատ I-ի վերոնշյալ հուշարձանի վրա, նույնպես և Սարպոլ-ի Զոհաբի ժայռաքանդակի վրա հեծյալ վեհապետին օղակ մեկնած հետիոտն կերպարին պետք է նույնականացնել ոչ թե պարզապես աստվածության, այլ գերագույն աստվածության (աստվածների արքայի)՝ Ահուրամազդայի հետ: Այս դեպքում պետք է համարել, որ Սարպոլ-ի Զոհաբի ժայռաքանդակը ներկայացնում է ոչ թե արքայական ընդունելության, այլ աստվածային ինվեստիտուրայի տեսարան:

Սկսած Ք. ա. II դ. կեսերից աստվածային ինվեստիտուրան պարթևական դրամահատության մեջ ամենատարածված մոտիվներից մեկն էր: Սովորաբար դրամների դարձերեսին ներկայացվող այսօրինակ տեսարաններում գահին բազմած վեհապետերին իշխանության նշան շնորհող աստվածությունների դերում տեսնում ենք հունա-հելլենիստական դիցուհիների, ինչը լիովին համահունչ էր Արշակունիների պաշտոնական տիտղոսներում տեղ գտած ΦΙΛΕΛΛΗΝΟΣ էպիտետին և հելլենական բնակչության նկատմամբ նրանց քաղաքականությանը: Սա հավասարապես վերաբերում է նաև Գոթարզ II-ին: Տիգրիսի վրայի Սելևկիայում նրա թողարկած չորեքդրամների դարձերեսին ներկայացված է Տյուխեի կողմից գահին բազմած Գոթարզին՝ հանգուցված դիադեմա շնորհելու տեսարան[63]: Հաղթանակի թեմայով Բեհիսթունում ստեղծված ժայռաքանդակի վրա Տյուխեն պսակ է մեկնել Գոթարզի գլխին՝ դիտորդին պարզորոշ դարձնելով, որ ներկայացված ճակատամարտն ավարտվել է նրա հաղթանակով:

Կասկածից վեր է, որ Արշակունիների իրանցի հպատակները դրամների դարձերեսներին ներկայացված հունական դիցական պատկերները վերաիմաստավորել և ընկալել

---

[62] **Messina** 2014, 343, Pl. 3. **Մելիքյան** 2017, 19-20, 225-226:
[63] **Sellwood** 1980, 65.2, 65.4, 65.23; 65.25-27; 65.36, 66.2

են սեփական դիցաշխարհի տեսանկյունից: Մ. Քոլիջն ու Ֆ. Ուչարը նույնիսկ համարում են, որ պարթևական դարաշրջանում իրանական աստվածությունների մարդակերպացման համար բնօրինակ են ծառայել հունական կերպարվեստում ստեղծված նախատիպերը: Ամեն դեպքում փաստը մնում է այն, որ դրամական պատկերագրության մեջ հունական դիցերի պատկերները դրոշմելով՝ պարթևական գեղարվեստական և կրոնական մտածողությունն արդեն իսկ հաղթահարել է աստվածությունների պատկերագրության ավանդական կարծրատիպերը: Ազգային ինքնագիտակցության վերելքի հաջորդ փուլում պարթևները օրինաչափորեն պետք է հանգեին սեփական իրանական աստվածություններին մարդակերպ ներկայացնելու անհրաժեշտությանը: Առաջին անգամ դա արտահայտվել է Միհրդատ I-ի Հոնգ-ի Աժդարի ժայռաքանդակի վրա[64]: Ինչպես երևում է, զրադաշտական գերագույն դիցը երկրորդ անգամ մարդակերպ է ներկայացվել արդեն Սարպոլ-ի Զոհաբի պարթևական հուշարձանի վրա:

Մեր առաջարկած մեկնաբանության տեսանկյունից այլ կերպ է իմաստավորվում պատկերների նաև դիրքային հարաբերությունը: Աստվածային ինվեստիտուրայի պատկերագրության ավանդական կանոնին համապատասխան՝ աստվածությունը ներկայացված է հորինվածքի աջակողմյան մասում: Բայց, միևնույն ժամանակ, վաղ հելլենիստական պատկերագրության մեջ հաստատված կանոնով նա պատկերվել է ամբողջապես ճակատային դիրքով: Նա աջ ձեռքով իշխանության օղակը մեկնել է հեծյալին, բայց հայացքն ուղղված է ոչ թե օղակի հասցեատիրոջը, այլ հանդիսատեսին: Ձին քանդակված է կողանց դիրքով, բայց նրա վրայի հեծյալը պատկերագրական նոր կարգի պահանջով ներ-

[64] **Մելիքյան** 2017, 233-234:

կայացվել է իրանով և դեմքով դեպի դիտողը շրջված, ասես նրան բնավ էլ չի հետաքրքրում աստծու շնորհը: Արդյունքում, իշխանության օղակը, որը ժայռաքանդակի հորինվածքային և գաղափարական կենտրոնն է, և որը (ինչպես, օրինակ, սասանյան ինվեստիտուրային քանդակների պարագայում) պետք է իր վրա բևեռեր ժայռաքանդակի երկու պատկերների ուշադրությունը, կարծես անտարբերության է մատնված: Դրա հետևանքով կորել է ուղղակի կապը իշխանություն շնորհող աստվածության և իշխանությամբ օժտվող արքայի միջև: Ընդ որում, թեև հեծյալի դեմքը բավական ջնջված է, նկատելի է, որ քանդակագործն իր համակ ուշադրությունը կենտրոնացրել է հեծյալի գլխի վրա՝ փորձելով իր հնարավորությունների սահմաններում ընդգծել հեծյալի դեմքի մանրամասները՝ բեղերը և հատկապես աչքերը, որոնք ասես չռված նայում են դիտողին: Այլ խոսքով՝ արևելցի քանդակագործն իր համեստ հնարավորությունների սահմաններում փորձել է Սարպոլ-ի Զոհաբի ժայռաքանդակի վրա կիրառել այն ոճական տարրերը, որոնք ավելի վաղ դրսևորվել էին պարթևական դրամահատության բնագավառում, բայց մոնումենտալ չափերի մեջ առաջին անգամ կիրառվել էին Կոմմագենեի Նեմրութ լեռան սրբավայրում և Դուրա Եվրոպոսի Զևս-Թեոսի տաճարի որմնանկարի վրա: Այսպիսով՝ Գոթարզ Գևորդու հուշարձանը պարթևական ժայռաքանդակային արվեստում մեզ հայտնի առաջին հուշարձանն է, որի վրա արքան (մահկանացուն) ներկայացված է լիադեմ: Իհարկե, այն դեռևս կրում է անցումային փուլի հատկանիշ. արքայի մարմինը դեռևս ճակատային է մասնակիորեն: Բայց միևնույն ժամանակ երևան են հանվում ձևավորվող «պարթևական արվեստի» այնպիսի կարևոր ոճական տարրեր, ինչպիսիք են գծայնությունը, կրոնականությունը, վերիզմը և կենդանիների կողանց ներկայացման

կանոնը[65]: Հետևաբար, բացի պատմողական նշանակությունից, այս ժայռակերտ հուշարձանը հարկ է կարևորել նաև պարթևական կերպարվեստում ճակատայնության ոճական տարրի նոր բովանդակության արմատավորման առումով:

Սարպոլ-ի Զոհաբի պարթևական ժայռաքանդակի վերամեկնաբանություն

Ոչ մի պատմական հուշարձան ինքնանպատակ չի ստեղծվել: Դա վերաբերում է նաև Սարպոլ-ի Զոհաբի պարթևական ժայռաքանդակին: Այստեղից բնականոն հարց է առաջանում, թե որն է եղել պարթևական այս հուշարձանի նշանակությունը: Ելնելով նմանատիպ հուշարձանների ու դրանց ստեղծման վայրերի միջև ուղղակի կապի առկայության աքսիոմայից, կարծում ենք, որ այս հարցի պատասխանը հնարավոր է գտնել միայն Հոլվան գետի հովտում Գոթարզ II-ի գործունեության համատեքստում: Դա իրենից մեծ խնդիր չի ներկայացնում:

Հայտնի է, որ Գոթարզ II-ը վերջնականապես հաստատվել է Արշակունիների գահին Վարդանի (40-47 թթ.) սպանությունից հետո: Սակայն նրա դաժանությունից դժգոհ պարթևական ավագանին Կլավդիոսի կայսեր համաձայնությամբ 47 թ. որպես գահի օրինական թեկնածու առաջադրեց Վոնոն I-ի որդուն՝ Հռոմում իբրև պատանդ գտնվող Միհրդատին: Համաձայն Կոռնելիոս Տակիտոսի հաղորդման՝ հակառակորդների միջև վճռական բախումը տեղի է ունեցել 50 թ.՝ Կորմա կոչվող գետի հովտում և ավարտվել է Միհրդատի բանակի ջախջախումով[66]: Կ. Տակիտոսի հիշատակած Կորմա գետը ներկայումս կոչվում է Ալվանդ սու կամ Հոլվան[67]: Այլ խոսքով՝ բոլոր հիմքերը կան Սարպոլ-ի Զոհա-

[65] **Кошеленко** 1966. 195-196
[66] **Tacitus** 1963. XII, 13 ff.
[67] **Abbas Rezaei Nia** 2014. 475

բի ժայռաքանդակը հաղթանակի առթիվ հուշակոթող ստեղծելու հինավուրց ավանդույթի արտահայտություն համարելու համար[68]:

Խնդրո առարկա հուշարձանի ժանրային պատկանելիությունը և Գոթարզ II-ի գահակալության համար բախտորոշ նշանակություն ունեցող վերոնշյալ իրադարձության հետ տեղագրական ուղղակի կապը հավաստում են, որ այս հուշարձանի տեղեկատվական նշանակությունը ոչ թե գավառական, այլ, ընդհակառակը, համապետական նշանակություն է ունեցել: Այն ստեղծվել է ողջ իրանական հանրությանն ի տես դարձնելու Գոթարզ II-ի նկատմամբ դիցական հովանավորությունը, նրա իշխանության աստվածատուր բնույթն ու օրինականությունը, մի գերխնդիր, որը Արշակունիների հարստությանն ուղղակիորեն չպատկանող այս արքայի իշխանության ամենախոցելի կողմն էր:

Դժվար է հստակեցնել, թե Հոլվան գետի հովտի որ մասում կամ Միյան Կալ լեռից ինչ հեռավորության վրա է տեղի ունեցել վերոնշյալ ճակատամարտը: Փոխարենը՝ կարելի է հստակ պատկերացնել, որ Գոթարզ II-ի աստվածընտրյալության գաղափարի առավելագույն մասսայականացման նկատառումով է, որ խնդրո առարկա ժայռաքանդակը ստեղծվել է ժամանակի ամենաբանուկ՝ Մետաքսի ճանապարհի եզրին: Չի բացառվում, որ պարթևական արքան, իր ժայռաքանդակը կերտելով վաղուց առասպելականացած լուսնբյան արքաների հուշարձանների հանրությամբ, ցանկացել է իր փառքը դասել նրանց փառ-

[68] Այս տեսանկյունից միանգամայն անընդունելի է դառնում հուշարձանի վայրի ընտրության և նշանակության վերաբերյալ Թ. Կավամիի բացատրությունը. «Ժայռաքանդակը փաստում է ինչպե՛ս այդ արքայի իրավասությունը, այնպե՛ս էլ նրա դիմաց կանգնած պաշտոնյայի հեղինակությունը, մյուս կողմից այն, որ Մետաքսի ճանապարհի այդ ստրատեգիական հատվածը վերահսկում է մեծ արքան» (**Kawami** 1987: 48)

քին հավասար, իսկ իր հուշարձանի արտաքին հմայքի պահպանն էլ փոխհատուցել՝ նրան խորհրդավորություն հաղորդելու միջոցով: Այդ նպատակով նա հուշարձանը կերտել է տվել ժայռի ստորոտին, որտեղից այն տեսանելի է միայն օրվա որոշակի ժամի՝ երբ արևի ժառագայթները լուսավորում են ժայռի այդ մասը[69]:

Սարպոլ-ի Զոհաբի պարթևական ժայռաքանդակը:
https://commons.wikimedia.org/wiki/File:Anubanini_Rock_Relief_3.jpg

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մելիքյան Ա. 2016, Սալմաստի ժայռաքանդակը. Պատմական Հայաստանի սասանյան մի հուշարձանի վերամեկնաբանություն, Երևան:

[69] **Kawami** 1987. 48.

Մելիքյան Ա. 2017, Հոնգ-ի Աժդարի ժայռաքանդակը. Հելլենիստական դարաշրջանի մի հուշարձանի պատմամշակութային քննություն, Երևան:

Յազդանփանահ Մ. 2016, Իրանի ժայռաքանդակները Սելևկյանների և պարթևների ժամանակ, Կանթեղ, N 1, էջ 234-244.

Варданян Р. 1992: Аршакидский поворот, Вестник древней истории 4 (203), с. 106 115.

Дибвойз Н. К. 2008: Политическая история Парфии, Санкт-Петербург.

Дьяконов И. М. 1956: История Мидии от древнейших времен до конца IV века до н. э., Москва Ленинград.

Кошеленко Г. А. 1966: Культура Парфии, Москва.

Луконин В. Г. 1969: Культура Сасанидского Ирана, Москва.

Abbas Rezaei Nia, 2014, The Preliminary Report on Soundings in the Site of Qalelh Gabri in Sarpol-e Zahab, in: Proceedings of the 8th International Congress on the Archaeology of the Ancient Near East 30 April - 4 May 2012, University of Warsaw, Ed. by P. Bielński, M. Gawlıkowski et all, V. 2, Wiesbaden, pp. 471-486

Abramzon M. G. 2002: The "Coronation" Coin of the Tracian King Rhoemetalces III, TALANTA. Proceedings of the Dutch Archaeological and Historical Society. Vol. XXXII-XXXIII (2000-2001), Amsterdam, pp. 239-242.

Alram M. 1986: Nomine proprio Iranica in Nummis: Materialgrundlagen zu den iranischen Personennamen auf antiken Münzen, Iranisches Personennamenbuch, Band 4, Vien.

Assar G. R. F. 2000: Recent Studies in Parthian History, P. I. http://www.cais-soas.com/CAIS/History/ashkanian/assar/assar_new_parthian-st.htm

Assar G. R. F. 2006: A Revised Parthian Chronology of the Period 91-55 BC, Pathica 8, pp. 55-104.

Boyce M. 2003: Gōdarz, i. In: Enciclopaedia Iranica, Vol. XI, Fasc. 1, pp 31 33.

CNG Auction 55. (13 Sept. 2000), https://issuu.com/cngcoins/docs/cng_55

CNG Auction 57, 2001, Inc. Lancaster, PA. Mail Bid Sale, April 4

CNG Auction 58 (19 Sept. 2001),

https://www.vcoins.com/en/stores/ancient numismatic enterprise/9/product/classical numismatic group cng_58 september 19 2001_auction catalogue__prl__larissa drachms thebes staters by magistrate_william_j_conte_collection_of saxon_part_i/676954/Default.aspx

CNG Auction 60 (22 May 2002),

https://www.cngcoins.com/Coins_archive.aspx?CONTAINER_ID=37&ITEM_IS_SOLD=1

Colledge M. A. R. 1986: The Parthian Period, Iconography of Religions XIV, 3, Leiden.

Curtis V. S. 2007: The Iranian Revival in the Parthian Period. In: The Idea of Iran, Vol. 2. The Age of the Parthians, London-New York, pp. 7-25.

De Morgan J. J. M. 1904: Mission scientifique en Perse – Études linguistiques, t. V, Paris.

Flandin E. et Coste P. 1851: Voyage en Perse, Vol. 2, Paris

Fritz Rudolf Künker Auction 133 (12 October 2007),

https://issuu.com/kuenkercoins/docs/a133/227

Ghirshman R. 1962: Iran, Parthies et Sassanides, Paris.

Gropp G. 1968: Die Parthische Inschrift von Sarpol-e-ẓohāb, Zeitschrit der Deutschen Morgenländischen Gesellschaft, CXVIII, Wiesbaden, S. 315-319.

Gropp G. 1976: Sarpol-i Zohab. Die Felsreliefs V (Iranische Dankmäler. Reihe II, Iranisches Felsreliefs C, Lieferung 7, Berlin

Henning W. B. 1952: The Monuments and Inscriptions of Tang-i-Sarwak, Michigan university publication.

Herper P. O. 1981: Silver Vessels of Sasanian Period, New York.

Herzfeld E. 1926: Reisebericht, Zeitschrit der Deutschen Morgenländischen Gesellschaft **(ZDMG),** LXXX, Wiesbaden.

Herzfeld E. 1920: Am Tor Von Asien. Berlin.

Hinz W. 1969: Altiranishe Funde und Fourschungen, Berlin.

Ira and Larry Goldberg Auctioneere 83 (7-10 January 2015), http://www.goldbergcoins.com/content/?page_id=3145

Ira & Larry Goldberg Auctioneere 89, 2016. http://images.goldbergauctions.com/php/toc_auc.php?site=1&sale=89&lang=1

Josephus 1961-1963: **Flavius Josephus,** Opera (with an Engl. translation), v. 4-9, De Antiquitatibus Iudaicum, Cambridge/London.

Kawami T. S. 1987: Monumental Art of the Parthian Period in Iran, Acta Iranica 26, Textes et Memoires, 13, Leiden.

Kropp A. J. M. 2013: King without Diadems-How the Laurel Wreath Becoame the Insignia of Nabatean Kings, Archäologischer Anzeiger 2. Halbband, VI (246), pp. 21 41.

Le Rider G. 1965: Susa sous les Séleucides et les Parthes, *Mémoires de la Mission Archéologique en Iran* 38, Paris.

Le Rider G. 1978: Deux nouveaus tétradrachmes frappés à Suse, Revue numismatique VI, 20, pp. 33-37.

Mathiesen H. E., 1992: Sculpture in the Parthian Empire. A Study in Chronolgy, I-II, Aarhus.

Mattingly H. 1940: Coins of the Roman Empire in the British Museum, vol. IV, London.

Mattingly H., Sydenham E. 1930: Roman Imperial Coinage (RIC), Vol. 3, Antoninus Pius to Commodus, AD 138-192, London.

Messina V. 2014: A New Proposal for Identifying the Kings Represented on the Hung e Azhdar Rock Relief, Iranica Antiqua, vol. XLIX, pp. 331-345.

Messina V. and Mehr Kian J. 2015: Laser-Scanner Survey at Kong-e Yār 'Alivand. Research of the Iranian-Italian Joint Expedition in Kūzestān, Electrum, Vol. 22, pp. 143-154.

Mohammadifar Y. 2007: Reconstruction of the Parthian Relief in Sar -e Pol-e Zohab, Journal of the Faculty of Letters and Hummanities (University of Isfahan). Vol. 2, N. 50, pp. 119-132.

Mørkholm O. 1965: A Greek Coin Hoard from Susiana, Acta Archaeologica 36, pp. 127-156.

Peck E. H. 1993: Crown II. From the Seleucids to the Islamic Conquest, *Enciclopaedia Iranica*, Vol. VI, Fasc. 4, 408-418.

Peus Auction 366 (29 October 2000)
https://www.acsearch.info/search.html?term=&company=33&auction=56
Peus Auction 374, (23 April 2003),
http://www.parthia.com/pdc_peus374.htm
Peus Auction 388 (1 November 2006),
https://www.acsearch.info/search.html?term=&company=33&auction=542
Plutarchus 1964: Vitae Parallelae, Vol. 1 2, Lipsiae
Porada E. 1965: Ancient Iran, London.
Posgate N., Roaf M. D. 1997: The Shaikhan Relief. In: Al-Rāfidān, Vol. XVIII (1997), pp. 143 156.
Potts D. T. 1999: The Archaeology of Elam: Formation and transformation of an Ancient Iranian State, Cambridge.
Rawlinson H. C. 1846: The Persian Cuneiform Inscriptions at Behistun, London.
Rostovtzeff M. 1935: Dura and the Problem of Parthian Art, Yale Classical Studies, Vol. V, pp. 155 304.
Salaris D. 2014: Space and Rite in Elymais. Considerations on Elymaean Religious Architecture and Rock Reliefs during the Arsacid Period, Sydney.
Sear D. R. 2002: Roman Coins and their Values, Vol. II, London
Sellwood D. 1980: An Introduction to the Coinage of Parthia, 2-nd ed., London.
Soudavar A. 2012: Looking through The Two Eyes of the Earth: A Reassessment of Sasanian Rock Reliefs, Iranian Studies, vol. 45, number 1, Jan., 29 58
Tacitus Cornelius 1963: Annalium ab excessu divi Augusti quae supersunt, Frauenfeldae.
Triton Auction VII (12 Jan 2004),
https://www.cngcoins.com/Coins_archive.aspx?CONTAINER_ID=115&ITEM_IS_SOLD=1
Trümpelmann L. 1976: Sar-i Pol-I Zohab, Die Felsreliefs I-IV. Die Parthischen Felsreliefs. ID Lieferung 7, Berlin.

Vanden Berghe L. 1983: Relief Rupestres De L'Iran Ancien, Bruxelles

Westenholz J. 2000: The King, the Emperor, and the Empire: Continuity and Discontinuity of Royal Representation in Text and Image. In: Sanna Aro - R. M. Whiting, eds. *The Heirs of Assyria*. Helsinki, pp. 99-125.

Արթուր Մելիքյան - *պ.գ.թ., Վանաձորի պետական համալսարանի պատմաաշխարհագրական ֆակուլտետի,*
arthurmelikyan@rambler.ru

THE ROCK RELIEF OF GOTARZES II IN SARPOL-E ZOHAB

Keywords: *Sarpol-e Zohab, Holwan River, rock relief, Gotarz I, Gotarz II, Hong-e Azhdar, Parthians, Arsacides, frontal style, diadema.*

According to accepted opinion, the Parthian rock relief of Sarpol-e Zohab was created by Parthian King Gotarzes I and it represents a scene of investiture of the local governor by the Great King. But a comparative analysis of the iconographical realities of the rock relief (positional and quantitative relations of images, the direction of action in the composition), as well as the chronology of the frontality of the images and the horse's static position show that this rock relief does not actually belong to ordinary, but to subgenre of divine investiture, and was created not by Gotarzes I, but by Gotarzes II. It was created to mark the victory over Mitridates, the claimant of the Arsacid trone in Holvan River valley in 50 AD, and it was actually intended to show the Iranian society that Gotarzes enjoyed the protection of the gods and therefore his power was legal.

It is known that besides Sarpol-e Zohab's rock relief, earlier Gotarzes II, on the same occasion, created another rock relief

on Behistun mount, which was notable by traditional profile style. Hereafter, the rock relief of Gotarzes II of Sarpol-e Zohab should be valued not only for historical value, but also for a proper understanding of the process of establishing the frontal style in Parthian art.

Arthur Meliqyan - *PhD, Vanadzor State University,*
The faculty of History and Geography,
arthurmelikyan@rambler.ru

ՆԵՍՏՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԻԱԲՆԱԿՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՊԱՅՔԱՐԸ. ԲԱՐԾՈՒՄԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽՈՐԻԿՅԱՆ

Բանալի բառեր՝ *Բարծումա, նեստորականներ, դավանանք, Հայաստան, Պարսկաստան, Բյուզանդիա, միաբնակ, երկաբնակ, Եդեսիա, Պերոզ, քաղկեդոնականություն:*

Նեստորականների և միաբնակների միջև դավանաբանական պայքարը V դարում սուր բանավեճերի առարկա է դառնում: Ջուտ դավանաբանական վեճերը էլ ավելի են խորացնում հիշյալ ոտղությունների միջև գոյություն ունեցող անջրպետը: Այս առումով անհրաժեշտ է ուշադրություն դարձնել միաբնակ ասորիների և հայ եկեղեցու հարաբերություններին, ինչը հայագիտության մեջ բավականին լավ է ուսումնասիրված, բայց արտասահմանյան հետազոտություններում մասնակի է լուսաբանված:

Նեստորականության կատաղի թշնամի Սիմեոն Բեթ-Արշամացին հույներից, հայերից և ասորիներից ամբողջ Իրանով մեկ վավերաթղթեր էր հավաքում, որ նրանք դեմ են Նեստորի վարդապետությանը: Սիմեոն Բեթ-Արշամացին մասնակցում է 506 թվականի Դվինի եկեղեցական ժողովին և հայերից էլ դավանական թուղթ է վերցրել, որ նրանք հեռու են նեստորականությունից[1]: Իրանից եկած պատգամավորները դավանության նման թղթեր վերցրել են նաև ժողովին մասնակից վրացիներից և աղվաններից[2]: Հովհաննես Գաբեղենցու՝ Աղվանից եպիսկոպոսներին ուղղված մի նամակից[3] պարզվում է, որ նեստորականությունը և քաղկեդոնականությունը զորացել էին Աղվանքում: Նամակում նզովվում

[1] **Տեր-Մինասյան** 1971(բ), 39:
[2] **Նույն տեղում**, 42: **Գիրք թղթոց** 1901, 183:
[3] **Գիրք թղթոց** 1901, 81-84.

են բոլոր հերձվածողները, հատկապես՝ նեստորականության հիմնադիրներն ու Քաղկեդոնի ժողովը՝ Լևոնի տոմարով հանդերձ: Աղվանք է ուղարկվում Մատթեոս քահանան հերձվածողների դեմ պայքարելու համար, Աղվանից եպիսկոպոսներին առաջարկվում է հերձվածողներին հալածել, վռնդել և երեք կամ ավելի եպիսկոպոսների ուղարկել Հայաստան՝ հավատի վերաբերյալ ճշմարտությանը վերահասու լինելու համար[4]:

Միաբնակ ասորիների, օրինակ, հովիանիտների խընդրանքով հայոց եկեղեցին դավանաբանական վեճերում պաշտպանում էր նրանց, և հայոց կաթողիկոսն էլ ձեռնադրում էր նրանց եպիսկոպոսներին: Ներսես Բ կաթողիկոսը ձեռնադրում է հուլիանիտ Աբդիշոյին, որն այդ մասին թուղթ ստանալով՝ գալիս է Ասորիք[5]: Հայոց եկեղեցու այս դիրքորոշումը վախեցնում էր նեստորականներին: Ընդհանրապես կարելի է տեսնել, որ ասորական եկեղեցիները «ամենամեծ արժեքն են տալիս իրենց հայ հարևանների կարծիքին և շարունակ աշխատում են հաղորդակցություն պահպանել նրանց հետ. կամ եթե չունին այդ հաղորդակցությունը, որևիցե կերպով աշխատում են այդպիսի հարաբերություն ստեղծել»: Շարունակելով իր միտքը՝ Ե. Տեր-Մինասյանցը գրում է. «Եվ այդ հասկանալի է. ասորի հարևանները տեսել էին, թե ինչպես հայոց եկեղեցին իր հավատի համար հզոր պարսիկների դեմ ազատ համարձակ կռվի էր ելել և երկարատև անհավասար պայքարից պատվով և իբրև հաղթական դուրս եկել: Նրանք տեսնում էին, որ պարսիկներն անգամ հայերի հետ ուրիշ կերպ են վարվում՝ նրանց զորեղ իշխաններից ականաձելով: Ուրեմն ինչո՞ւ չպահպանել այդ եկեղեցու հետ եկեղեցական հաղորդակցություն, մանավանդ որ ամեն հարաբերություն հունականի հետ արդեն դադարել

[4] **Տեր-Մինասյան** 1971 (ա), 377-378:
[5] **Տէր-Մինասեանց** 2009, 86, 102: **Айвазян** 1976, 63

էր»[6]: Պատահական չէ, որ միաբնակության գլխավոր կենտրոն Մար-Մաթայի վանքի մետրոպոլիտները ձեռնադրվում էին հայոց կաթողիկոսների կողմից[7]:

Եդեսիայի նշանավոր եպիսկոպոս Ռաբուլասի[8] մահից հետո՝ նրա հաջորդ Իբասի օրոք, Եդեսիայում ուժեղանում է նեստորականների ազդեցությունը: 457 թվականին նրա մահն առաջ է բերում զորեղ ընդդիմություն, և բոլոր նեստորական վարդապետները հալածվում են Եդեսիայից պարսից հողը: Վերջնական հարվածը հասցվում է նրանց՝ Եդեսիայի հռչակավոր, պարսկական կոչված դպրոցի՝ նեստորականության այդ հենարանի փակմամբ 489 թվականին[9]: Որքան թուլանում են հունական հողերում Նեստորիոսի կողմնակիցները, այնքան զորանում են նրանք պարսից իշխանության տակ՝ վայելելով մանավանդ Պերոզ թագավորի հովանավորությունը:

Պարսիկներն իրենց պետության սահմաններում ապրող քրիստոնյաների նկատմամբ որոշակի քաղաքականություն չեն ունեցել, չնայած պարսիկ պաշտոնյաները միշտ էլ կասկածանքով են վերաբերվել քրիստոնյաներին և գտել են, որ նրանք իրենց երկրում Բյուզանդական կայսրության համար ամուր հենարան են: Նրանք երբեմն ուժեղ հալածանքներ են կազմակերպել քրիստոնյաների դեմ, սակայն երբեմն նաև նպաստել են նրանց գործունեությանը:

Այդ մեղմությունն արդյունք էր այն իրողության, որ քրիստոնյաները պարսկական տերության մեջ արհեստների, ապրանքների արտադրության, հատկապես միջազգային առևտրի ասպարեզում Պարսկաստանին ի նպաստ շատ կարևոր գործ էին կատարում և, բացի այդ, գանձվող

---

[6] **Տէր-Մինասեանց** 2009, 89:
[7] **Նույն տեղում**, 102, 109:
[8] **Atiya** 1968, 248
[9] **The Church of the East** 2003, 26

հարկերով հարստացնում էին արքունի գանձարանն ու վերնախավի գրպանները: Իրադրությունը փոխվեց, երբ Պարսկաստանի գահին բազմեց Հազկերտ Բ-ն (438-457 թթ.), որն իր ներքին նոր քաղաքականությամբ փորձում էր բոլոր միջոցները կենտրոնացնել պարսիկների ձեռքը և քրիստոնյաներին դավանափոխ անելով՝ վերջնականապես զրկել նրանց մշակութային ու քաղաքական այլ հարաբերություններից և կապել Պարսկաստանի հետ: Բայց նրա այդ գործելակերպը չարդարացրեց իրեն, և նրան հաջորդած Պերոզ արքայից արքան (459-484 թթ.) ավելի ճիշտ ուղու վրա կանգնեց: Նա, հետևելով պարսկական նախկին քաղաքականությանը, նորից փորձեց օգտվել քրիստոնեական եկեղեցիների մեջ առաջացած հակասություններից: Ասորական աղբյուրներն այդ փոփոխության պատճառը, այսինքն՝ Պերոզին հուշողը, ասում են, որ եղել է Մծբինի եպիսկոպոս Բարծուման[10]: Այդ է պատճառը, որ ասորի նեստորական հեղինակները բարձր գնահատական են տալիս Պերոզին[11]՝ հավանաբար նկատի ունենալով պարսկական եկեղեցական քաղաքականության մեջ տեղի ունեցած այս փոփոխությունը: Եռանդուն Բարծուման կարողանում է ներշնչել Պերոզին այն միտքը, որ քրիստոնյաները երբեք սրտով չեն կպչի պարսից իշխանությանը և աչք չեն դարձնի կայսրերից, մինչև որ դավանանքի խրամատը չանջրպետի նրանց[12]: Պետք է, ուրեմն, առաջ տանել, խրախուսել նեստորականությունը, այլադավան քրիստոնյաներին բռնի ուժով ստիպել հարելու նեստորական՝ իբր պետական եկեղեցուն[13]:

---

[10] **Chronique de Michel le Syrien** 1901, 123 Բարծուման ծնունդով Կորդվաց աշխարհից էր և ծագումով ստրուկ, ազատվել ու եկել էր՝ սովորելու Եդեսիայի եպիսկոպոս Իբասի օրոք Եդեսիայի հայտնի դպրոցում (տե՛ս **Ասորական աղբյուրներ** 1976, 246, ծնթ. 49):

[11] **Sources Syriaces** 1908, 147

[12] **Ադոնց** 2006, 33:

[13] **Labourt** 1904, 135

«Պարսիկների դպրոցի» շնորհիվ առաջ գնալով՝ Բարծուման բացառիկ ուշադրություն էր դարձնում կրթությանը: 457 թվականին՝ Իբասի մահից հետո, երկրենակության հակառակորդները Եդեսիայում ակտիվանում են[14], Բարծուման հեռանում է քաղաքից, որպեսզի Ակադեմիա կազմակերպի Մծբինում, որտեղ էլ հաստատվում են մեծ թվով ուսուցիչներ և աշակերտներ Եդեսիայի դպրոցից[15]: Մծբինը, շնորհիվ իր դպրոցի, դառնում է նեստորական եկեղեցու հոգևոր կենտրոնը, թեև կաթողիկոսի նստավայրը գտնվում էր Սելևկիա-Տիզբոն մայրաքաղաքում[16]: Բարծուման, անշուշտ, պարսկական արքունիքին քաղաքական նման գիծ թելադրելով, ոչ միայն ծառայություն էր մատուցում պարսկական կառավարությանը, այլև ուզում էր նման միջոցառումներով պարսկական տերության մեջ գտնվող քրիստոնեական եկեղեցիները և հավատացյալներին համախմբել նեստորական եկեղեցու գերիշխանության ներքո: Բարծումայի նման միջոցառումները ձեռնտու էին պարսիկների համար, որովհետև այդ ուժերի կենտրոնացումով ու համախմբումով ուժեղ ճակատ կարելի էր ստեղծել Բյուզանդիայի և նրա անմիջական հովանավորության տակ գտնվող բյուզանդական եկեղեցու դեմ: Զրադաշտական հոգևորականների ազդեցության տակ գտնվող Պերոզը հովանավորում է Բարծումային Իրանում գտնվող եկեղեցին պաշտոնապես նեստորական դարձնելու գործում[17]: Ուստիև այս առումով քրիստոնյաների սպանություններն ավելի շուտ ուղղված էին Իրանի քրիստոնյա եկեղեցիների միաձուլման և միասնականության դեմ, քան թե արգելում կամ խոչընդոտում էին քրիստոնեության տարածումը և զարգացումը:

---

[14] **Նույն տեղում**, 130-152:
[15] **Macomber** 1958, 143-144, **Пигулевская** 1956, 340
[16] **Տեր-Պետրոսյան** 1979, 82:
[17] **Macomber** 1958, 147, **Խորիկյան** 2017, 113:

Ասորի պատմիչը պատմում է, որ իր նպատակին հասնելու համար Բարծուման դիմում էր տարբեր միջոցների, որպես պարսկական զորահրամանատար[18] բանակի օգնությամբ գործի էր դնում բռնի ուժը, հալածանքը, աքսորն ու բանտարկությունը. նա նեստորական եկեղեցու կաթողիկոս Բաբուայի՝ Բյուզանդիայի կայսրին գրած նամակը (նամակում գրված էր, թե՝ «Աստված մեզ անիծված թագավորություն է տվել») հանձնում է արքայից արքա Պերոզին, և Բարծումայի այս մատնության հետևանքը լինում է այն, որ կաթողիկոսը մեղադրվում է լրտեսական գործունեության մեջ և գլխատվում[19]: Ասորական աղբյուրներից երևում է, որ նա այդ քայլին էր դիմել, որպեսզի ինքը բազմի կաթողիկոսական աթոռին, բայց դա չի հաջողվում, որովհետև նրա այդպիսի արարքներն ասորի եկեղեցականության ու ժողովրդի մեջ ատելություն են առաջացնում, և նրան չեն ընտրում[20]:

Բարծումայի մասին հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում հայկական աղբյուրները: Համաձայն Թովմա Արծրունու՝ Բարծուման եկավ Հայաստան՝ Արզնարգուն և Մոկաց աշխարհը, որպեսզի այնտեղ ցանի նեստորական աղանդի սերմերը[21]: Այն հանգամանքը, որ հայ նախարար-

---

[18] **Пигулевская** 1967, 99

[19] **Chronique de Michel le Syrien** 1901, 123. Տե՛ս նաև **Labourt** 1904, 130

[20] Բաքուան նախկինում եղել էր զրադաշտական, ինչը պարսից արքու նիքում դժգոհություն էր առաջ բերել, և նա նույնիսկ մինչև մահը երկու տարի բանտում էր անցկացրել:

[21] **Թովմա Արծրունի և Անանուն** 1985, 130: Բարծումայի Հայաստան գալու մասին հաղորդում է նաև ասորի պատմիչ Գրիգոր Բարհեբրեոսը, միայն այն տարբերությամբ, որ Բարծուման Հայաստան մտնելու վրա էր, երբ սպառնական նամակ ստացավ հայ նախարարներից իր մտադրություններից հետ կանգնելու պահանջով (տե՛ս **Տէր-Մինասեանց** 2009, 72: **Տեր-Մինասյան** 1971 (ա), 348-349): Ինչևէ, Հայաստանում նրա առաջխաղացումն արգելվում է (տե՛ս **Լեո** 1947, 110):

ներն անհանգստանում են և միջոցներ ձեռնարկում խափանելու Բարծումայի նեստորական քարոզը Հայաստանում, ցույց է տալիս, որ այդ քարոզչությունը երևի որոշ հաջողություն ունեցել է և մտքերի պղտորում ու շփոթություն է առաջացրել հայ եկեղեցու շրջանակներում, հակառակ դեպքում որևէ կանխիչ կամ հալածական միջոցի ձեռնարկումը հիմնավորված չէր լինի, նույնիսկ անկարելի կլիներ[22]:

Թովմա Արծրունու տեղեկությունները հիմք են տվել եզրակացնելու, որ Բարծուման նեստորական հերձվածն ուժեղ կերպով տարածելու և հայ նախարարների կողմից երևի բուռն ընդդիմության հանդիպելու պատճառով քսությամբ բանսարկություններ է կատարել նրանց մասին Պերոզ թագավորի առաջ և շատ արյունահեղությունների պատճառ դարձել, որովհետև հայ նախարարներին ու կաթողիկոսին իբրև ապստամբներ է ներկայացրել Պարսից թագավորի առջև, իբրև թե նրանք ուզում են Հունաց թագավորի հպատակության ներքո մտնել[23]: «Գիրք թղթոց»-ի տեղեկությունները[24], ի թիվս այլ իրողությունների, ցույց են տալիս, որ հայոց եկեղեցին մերժում է որևէ հաղորդակցություն նեստորականների և նրանց դավանության հետ ու նզովում է նեստորականներին:

Դավանաբանական վեճերում ևս առանձնահատուկ տեղ ուներ Բարծուման՝ Եդեսիայի եպիսկոպոս Իբասի աշակերտը, որը Թեոդորոս Մոպսուեստացու գաղափարների տարածողն էր: Միջնադարյան եկեղեցական դպրոցի ուսուցման հիմքում ընկած էր Սուրբ Գրքի մեկնաբանությունը, հետևաբար կարևոր էր այն հարցը, թե ո՛վ և ինչպե՞ս է մեկնաբանում աստվածաշնչյան տեքստերը, ինչպիսի՞ հայացքներ են կրում Եդեսիայի և Մծբինի դպրոցների ուսուցիչները:

---

[22] **Տեր-Մինասյան** 1971 (ա), 349:

[23] Մանրամասն տե՛ս **Տեր-Մինասյան** 1971 (ա), 349-351:

[24] « **Գիրք թղթոց**» 1901, 41-46:

Բարծումայի գործունեությունը նշանակալից էր ոչ միայն Մծբինի Ակադեմիայի պատմության համար, այլև որպես եպիսկոպոս՝ նա գրավում է բացառիկ տեղ ասորական եկեղեցու գործիչների շարքում:

Իրանի արքայից արքան Բարծումային մասնակից է դարձնում Բյուզանդիայի հետ սահմանների վերաբերյալ բանակցություններին[25], բայց միաժամանակ Պերոզ շահի հրամանով նրան վերահսկում էր մարզպան Քարդակը[26]:

Որպես եպիսկոպոս՝ Բարծուման զբաղեցնում էր նշանակալից տեղ պարսից պետությունում և իր հայացքներով հարում էր նեստորականությանը: Այն դեպքում, երբ կաթողիկոսներ Բաբուն և Ակակիոսը ամուսնությունն անհամատեղելի էին համարում եպիսկոպոսի աստիճանի հետ, Բարծուման կուսակրոնության վերաբերյալ ուներ իր հատուկ մոտեցումը և «ինչպես բոլոր պարսիկները, ամուսնացած էր»[27]: Միաբնակները, որոնց հենարանը վանքերն էին, Բարծումային համարում էին հակառակորդ և՛ դավանաբանական ուսմունքի, և՛ եկեղեցական կանոնների առումով:

Միաբնակների և նեստորականների միջև պայքարը V դարի վերջին - VI դարի առաջին կեսին հանգեցնում է ասորական եկեղեցու բաժանմանը երկու ճյուղերի, որոնցից յուրաքանչյուրը զարգացնում էր իր հայացքները և համոզմունքները: Այդուհանդերձ, դավանաբանական այս հակասությունները չէին խանգարում ասորական մշակույթի զարգացմանը: Քրիստոնեության այս երկու ուղղությունների միջև պայքարը, այսպես կոչված միսիոներական էքսպանսիան, ոչ միայն դավանաբանական էր, այլև անզիջում պայքար էր մղվում տարածապես ընդարձակվելու և նոր հետևորդներ ձեռք բերելու համար: Օրինակ, նեստորական-

[25] **Chabot** 1902, 529, **Пигулевская** 1979, 201
[26] **Chabot** 1902, 526-529
[27] **Пигулевская** 1979, 201

ները պայքարում էին արաբական ցեղերի շրջանում միաբնակության ուժեղ ազդեցությունը թուլացնելու համար[28]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ադոնց Ն. 2006, Մաշթոց և նրա աշակերտները ըստ օտար աղբյուրների, Երկեր, հ. Բ, Երևան, էջ 7 34:

Ասորական աղբյուրներ, 1976, հ. Ա, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագր. Հ.Գ. Մելքոնյանի, Երևան:

Գիրք թղթոց, 1901, Թիֆլիս:

Դորֆման-Լազարև Ի. 2004, Ասորական քրիստոնեական մշակույթը և միաբնակ եկեղեցիների ծագումը, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 2, էջ 84-92:

Թովմա Արծրունի և Անանուն, 1985, Պատմութիւն տանն Արծրունեաց, բնագիրը հրատ. պատրաստեց, աշխարհաբար թարգմ. և ծանոթագր. Վ. Վարդանյան, Երևան:

Լեո, 1947, Հայոց պատմություն, երկրորդ հատոր, Երևան:

Խորիկյան Հ. 2017, Իրանի քրիստոնեական եկեղեցու ձևավորումը Ե դարում, «Հայաստանը և արևելաքրիստոնեական քաղաքակրթությունը. Բ»: Հայագետ-բյուզանդագետ Կարեն Յուզբաշյանի (1927-2009) ծննդյան 90-ամյակին նվիրված Միջազգային գիտաժողով (դեկտեմբերի 7-8, 2017 թ.): Զեկուցումներ և զեկուցումների դրույթներ, Երևան, էջ 107-113·

Տեր-Մինասյան Ե. 1971 (ա), Նեստորականությունը Հայաստանում, «Պատմա-բանասիրական հետազոտություններ», Երեվան, էջ 330-393:

Տեր-Մինասյան Ե. 1971 (բ), Բաբգեն կաթողիկոսի ժողովի թվականը և տեղը, «Պատմա-բանասիրական հետազոտություններ», Երևան, էջ 31-44:

Տեր-Պետրոսյան Լ. 1979, Հայերը միջնադարյան Մծբինում և Մեծ Հայքի հարավային նահանգներում, ՊԲՀ, № 3, էջ 80-92.

---

[28] **Пигулевская** 1964, 274, **Դորֆման** 2004, 86:

Տէր-Մինասեանց Ե. 2009, Հայոց եկեղեցու յարաբերութիւնները ասորւոց եկեղեցիների հետ, 2 րդ հրատ., Ս. Էջմիածին:

Айвазян К. В. 1976, «История Тарона» и армянская литература IV-VII веков (Историко-филологическое исследование), Ереван

Пигулевская Н. В. 1956, Города Ирана в раннем средневековье, М.-Л

Пигулевская Н. В. 1964, Арабы у границ Византии и Ирана в IV-VI вв., М.-Л

Пигулевская Н. В. 1967, История Нисибийской Академии, Переднеазиатский сборник, вып. 17/80, Л., с. 90-109

Пигулевская Н. В. 1979, Культура сирийцев в средние века, Москва

Atiya S. A. 1968, A History of Eastern Christianity, London

Chabot J. B. 1902, Synodicon Orientale, Paris

Chronique de Michel le Syrien. 1901, ed. J.-B. Chabot, T. II, Paris.

Labourt J. 1904, Le Christianisme dans l'empire Perse sous la dynastie Sassanide (224-632), Paris

Macomber W. F. 1958, The Christology of the Synod of Seleucia-Ctesiphon, A. D. 486, "Orientalia Christiana Periodica (Roma)", №. XXIV (I-II), pp. 142-154.

Sources Syriaces. 1908, Mšiḫa Zkha, par A. Mingana, V. I, Leipzig

The Church of the East: A Concise History. 2003, ed. W. Baum, D. W. Winkler, London, New York.

Հովհաննես Խորիկյան - *պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ*
արևելագիտության ինստիտուտ, Իրանի բաժին,
առաջատար գիտաշխատող,
hovkhor78@mail.ru

THE STRUGGLE BETWEEN NESTORIANS AND MONOPHYSITES: BARSAUMA'S ACTIVITY

Keywords: *Barsauma, Nestorians, confession, Armenia, Persia, Byzantium, Monophisit, Dyophisit, Edessa, Peroz, chalcedonism.*

Nestorianism antagonized the official Byzantine church, spreading out from Mesopotamia. It was the creed of the merchants, the class who sought independency and confronted Zoroastrianism in

Iran. The Armenian Church, being national in nature, had an intolerant position against the Byzantine church and Barsauma. At the time when the Christian church was divided into Monophysites and Dyophysites, and the Byzantines persecuted the Nestorians, the latters settled in Iran and from that time on the Persians changed their attitude towards the Christians and started to patronize the Nestorians, who were the enemies of Byzantine chalcedonism.

In ancient and medieval ages, the ethnic affiliation was directly related to the practicing religion, the Syrians were Christians, and the Persians were Zoroastrians. This factor forced the Syrians to have their own establishment and under its patronate they could exist. They were unified around the church and the union of the craftsmen ensured the financial support.

Hovhannes Khorikyan - *PhD, Institute of Oriental Studies NAS RA, Department of Iran, Leading researcher,*
hovkhor78@mail.ru

XVII ԴԱՐՈՒՄ ԻՐԱՆԱՀԱՅ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԱՌԱՋԱՏԱՐ ԴԵՐԸ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՐՑԵՐՈՒՄ

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

Բանալի բառեր՝ *Նոր Ջուղա, առևտուր, շահ Աբբաս Ա, հայ առևտրական բուրժուազիա, Հայաստան, Իրան, կաթողիկոս, գրատպություն, Էջմիածին:*

Հայ ժողովուրդը դարեր շարունակ բռնի հարկադրանքի ճնշման տակ կամ կամովին, օտար նվաճողների ավերիչ ասպատակությունների, Հայաստանում խաղաղ աշխատանքի պայմաններ չլինելու, կյանքի և գույքի անապահովության երաշխիքների բացակայության և այլ պատճառներով հարկադրված է եղել պարբերաբար գաղթել հայրենիքից և հանգրվան գտնել օտար երկնակամարների տակ:

XVII դարը ևս հայության համար սկսվեց ողբերգական իրադարձություններով: Իրանի տիրակալ շահ Աբբաս Ա-ը (1587-1629 թթ.) իրանա-թուրքական հերթական պատերազմի ժամանակ Արևելյան Հայաստանից, մասամբ նաև Արևմտյան Հայաստանի շրջաններից հարյուր հազարավոր հայերի բռնի տարագրեց Իրան, ամբողջովին հայաթափ անելով Արաքսից հյուսիս ընկած հայկական տարածքները[1]: Այդ իրադարձությունը, որը պատմության մեջ է մտել «մեծ սուրգուն» («մեծ գաղթ») անունով, իր թափով ու ընդգրկման ծավալով նախադեպը չունեցող մի իրադարձություն էր, որը կոչել են «նոր ժամանակների ժողովուրդների գաղթ»: Այն իր անջնջելի դրոշմն է թողել հայ ժողովրդի հետագա ճակատագրի վրա: Հայության բնօրրանի մարդաթափ լինելն ու

[1] **Դավթիժեցի** 1884, 35-41:

ամայացումը, որին հետևեց վաչկատուն քոչվորական ցեղերի զանգվածային ներխուժումն ու հաստատումը հայկական տարածքներում ունեցավ այն հետևանքը, որ երկիրը ենթարկվեց նոմադականացման՝ նրա կենսունակությանը հասցնելով մեծագույն հարված: Տևական ժամանակի ընթացքում արհեստականորեն կասեցվեց Հայաստանի արևելյան հատվածի բնականոն զարգացման ընթացքը:

Նման պայմաններում հայ ժողովրդի տարաբնույթ խավերը՝ սկսած շինականներից ու արհեստավորներից, վաճառականներից ու ամեն տեսակի գործարար տարրերից մինչև գործունեության եռանդ կուտակած մտավորականությունը, այսուհետև իրենց գոյությունը ստիպված էին շարունակել և գործունեության ասպարեզ դարձնել իրանական գաղթաշխարհը, որտեղ առկա էին ապրելու և իրենց ստեղծագործական ներուժը գործի դնելու հարաբերականորեն բարենպաստ պայմաններ:

Հետևաբար XVII դարը հայոց պատմության մեջ դիտարկվելու է ոչ միայն որպես մեծ գաղթի ու տարագրության, քաղաքական աղետալի անցքերի ու ազգակործան ցնցումների դար, այլև հայոց վերընձյուղման, տնտեսական ու մշակութային կյանքի աշխուժացման, հարաբերական վերանորոգման ու վերակենդանացման դարաշրջան:

Հիրավի, դա մի դարաշրջան էր, երբ բուն Հայաստանում տիրապետող համատարած ավերի, տնտեսական քայքայման, մտավոր աղքատացման պայմաններում հայ գաղթօջախները և նրանց մեջ առաջին հերթին Նոր Ջուղան դարձան տնտեսական ծաղկման և մտավոր վերածնության կղզյակներ:

Առհասարակ, տարբեր ժամանակներում, աշխարհի տարբեր երկրներում ստեղծված հայկական գաղութներն ու գաղթօջախները, որոնք անկասկած հայ ժողովրդի պատմության անբաժանելի մասն են կազմում, դարեր շարունակ

անմիջական ազդեցություն են ունեցել բուն Հայաստանի կյանքի վրա: «Հայոց ժամանակակից պատմության ամենախոշոր, ամեն ինչ վճռող և բացատրող հատկությունն այն է, - գրում է Լեոն, - որ նա կազմվում է հայ գաղութների հզոր ազդեցության տակ, համարյա նրանց ձեռքով միայն: Բուն Հայաստանն ապրել է սկսում իր գաղութներում ստացած գաղափարներով, ցուցումներով, ներշնչված շարժումներով... Հասկանալ և բացատրել այն ամենը, ինչ XIX-XX դարերում կատարվեց բուն Հայաստանում այնպիսի արագահոս ուժգնությամբ, որպիսին չի տեսել հայոց պատմությունն իր առաջին օրերից, երբեք չի կարելի, եթե նրանից անջատենք գաղութները: Այս բոլորովին անհնարին է, որովհետև ժամանակակից պատմության ընթացքում գաղութների և մայր երկրի կյանքը միախառնված, ամբողջացած է և անկարելի է բաժանարար գծեր դնել երկու կողմերի մեջ»[2]:

XVII դարը հայոց պատմության մեջ բնութագրվում է նաև որպես բուրժուական արտադրահարաբերությունների սաղմնավորման կամ, որ միևնույնն է, կապիտալի նախասկզբնական կուտակման շրջան: Հայ իրականության մեջ այդ գործընթացը, իբրև կանոն, տեղի էր ունենում ամենից առաջ առևտրական կապիտալի ձևով: Հայ առևտրական բուրժուազիայի ծագումնաբանության ու ձևավորման խընդրին անդրադառնալիս հարկ է ընդգծել, որ XVII դարի սկզբից առավելապես վերևում նկարագրված իրադարձությունների, կամ բուն Հայաստանում պատմական աննպաստ պայմանների պատճառով այդ դասը կազմավորվել է և ստիպված է եղել գործել ոչ թե բուն Հայաստանում, այլ հայրենի բնաշխարհից դուրս, հայ գաղութներում և առաջին հերթին Իրանի մայրաքաղաք Սպահանի մոտ ձևավորված Նոր Ջուղայի գաղթօջախում[3], որը և հայ իրականության մեջ

---

[2] **Լեո** 1984. 73:

[3] **Տէր-Յովհաննեսեանց** 1880: **Բայբուրդյան Վ.** 2007:

հանդիսացավ կապիտալի նախասկզբնական կուտակման կենտրոն, ծնունդ տալով հայ դրամատիրական դասի ձևավորմանը: Հետևաբար XVII դարի հայ «առևտրական բուրժուազիա» և «առևտրական կապիտալ» ասելով ամենից առաջ պետք է նկատի ունենալ Նոր Ջուղայի կամ ջուղահայ առևտրականներին և նրանց կապիտալը[4]: Հիրավի, ողջ XVII դարի ընթացքում Նոր Ջուղան դառնում է «գաղութային հայ կապիտալի ամենամեծ ու ամենաուժեղ կենտրոնը»[5]:

Հայ առևտրական բուրժուազիայի կամ «խոջայական կապիտալի» ներկայացուցիչների հուժկու մուտքը համաշխարհային շուկա, երբ նա սկսեց հանդես գալ որպես կարևոր գործոն միջազգային ապրանքափոխանակության մեջ և Արևելքը Արևմուտքի հետ տնտեսական կապերով շաղկապելու կարևոր դերակատար, զարմացրել է ժամանակակիցներին:

Արտահայտելով այդ տրամադրությունները, գերմանացի փիլիսոփա Կանտը գրել է. «Մեկ այլ քրիստոնյա ժողովրդի՝ հայերի մոտ տիրապետում է ինչ-որ առանձնահատուկ բնույթի առևտրական ոգի: Նրանք զբաղվում են փոխանակությամբ, հետիոտն ճանապարհորդելով Չինաստանի սահմաններից մինչև Գվինեական ափի Կորսո հրվանդանը: Դա վկայում է այդ խելամիտ ու աշխատասեր ժողովրդի առանձնահատուկ ծագման մասին, որը հյուսիս-արևելքից հարավ-արևմուտքի ուղղությամբ կտրում անցնում է համարյա ողջ հին աշխարհը և կարողանում է սիրալիր ընդունելություն գտնել այն բոլոր ժողովուրդների կողմից, որոնց մոտ լինում է այցելությամբ»[6]:

Անդրադառնալով այդ նույն հարցին՝ անվանի պատմաբան Ն. Ադոնցը նկատում է. «Հայերի գործունեության

---

[4] **Միքոյան** 1983, 63:
[5] **Լեո** 1934: **Байбуртян В.** 1969. **Բայբուրդյան Վ.** 1996: **Baibourtian V.** 2004
[6] **Кант** 1966, 572-573

այդ կողմը սերտորեն կապված է համաշխարհային կարևորություն ունեցող խնդիրների հետ: Համաշխարհային շուկայում հայերի հայտնվելը ժամանակակից քաղաքակրթության հիմքում ընկած նոր ոգու դժվարին փորձությունն է, որը մատնանշում է Հայաստանի կարևորությունը որպես նոր աշխարհի առաջացման գործոն՝ արտացոլված Արևելքի ու Արևմուտքի փոխադարձ հարաբերություններում»[7]:

Արդարև, իրանական, հատկապես Նոր Ջուղայի վաճառականությունը կարողացավ ստեղծել նոր պատմության ժամանակաշրջանի ամենանշանավոր առևտրական համաշխարհային ցանցերից մեկը[8]: Միաժամանակ նրանք կապող օղակ էին հանդիսանում աշխարհի տարբեր ծագերում ցրված հայ գաղթօջախների միջև:

Անկասկած առևտրական կապիտալի երևան գալը զգալիորեն նպաստեց հայ իրականության մեջ հասարակական կյանքի առաջընթացին, որոշակի աշխուժություն մտցրեց հասարակական մտքի մեջ, նպաստեց բուրժուական մտածողության սաղմնավորմանը: Դրանով պետք է բացատրել պատմական այն իրողությունը, որ XVII դարի կեսերին արթնանում է հայ ժողովրդի ինքնագիտակցությունը, իսկ նրա առաջավոր զավակները սկսում են ուղիներ որոնել օտարի լուծը թոթափելու, ինքնուրույն պետականություն հաստատելու համար[9]: Սակայն Հայաստանի զույգ հատվածներում տիրող աղետալի վիճակի, քաղաքական և տնտեսական մասնատվածության, պատերազմների, գերեվարությունների և այլ պատճառների հետևանքով իրական հնարավորություններ գոյություն չունեին նրա վրա ծանրացած բռնատիրական լուծը թոթափելու և ազատություն ձեռք բերելու համար: Միանգամայն բնական է, որ հայրենի բնօր-

[7] **Адонц** 1984, 48
[8] **Aslanian** 2011, **Carswell** 1968, 94
[9] **Միրզոյան** 2001, 94:

րանում տիրող նման վիճակը չէր կարող առաջ չբերել ազատագրական բաղձանքներ: Իսկ առկա՞ էին արդյոք ուժեր, որոնք ընդունակ էին ուղղություն և ընթացք տալու այդ բաղձանքներին, դրանք կյանքի կոչելու համար: Հայ ազգային եկեղեցին, որը պետականությունից զուրկ ժողովրդի հանգամանքներում միակ ազգային-պետական հաստատությունն էր և ստանձնել էր ազգի բնական առաջնորդի դերը, ի վիճակի չէր ազգային հավաքականության անունից հանդես գալու որպես դեկավար ուժ՝ հակադրվելու համար օտար տիրապետողներին, մանավանդ որ այդ շրջանում խաթարվել էր հայ ազգային-եկեղեցական կազմակերպության միասնությունը: Նման պայմաններում հրապարակի վրա եղած միակ ուժը, որն ի վիճակի էր իր վրա վերցնել նման առաքելություն դա բուրժուականացող հայ առևտրային դասն էր, որը Հայաստանում պատմական աննպաստ պայմանների պատճառով ստիպված էր գործել հայրենիքից դուրս, հատկապես Իրանի գաղթօջախում: Հայ ազատագրական միտքը ամենից առաջ ծնունդ է առել հենց այդ գաղթօջախի առևտրական բուժուազիայի շրջանում: Այդ դասն է, որ աստիճանաբար համակվելով հայ բնաշխարհին ազատագրելու տրամադրություններով, սկսում է նաև տոն տալ այդ նպատակով ձեռնարկվող քայլերին: Խոջայական կապիտալը ներկայացնող այդ դասը, որքան հարստանում և ձեռք էր բերում նյութական ուժ, այնքան ավելի ցայտուն էին դրսևորվում օտար լծից ազատագրվելու նրա տրամադրությունները: Գնալով աստիճանաբար վերելք էր ապրում նրա հետաքրքրությունը սեփական ժողովրդի քաղաքական կյանքի ու նրա իրավազուրկ վիճակի նկատմամբ, ուստի նա եռանդուն կերպով լծվում էր նրա ազատագրության գործը առաջ մղելուն:

XVII դարում նախորդ հարյուրամյակի համեմատությամբ ավելի հետևողականորեն էր արծարծվում Արևմուտքի

քրիստոնյա պետությունների օգնությամբ Հայաստանն ազատագրելու գաղափարը[10]: Իրանահայ խոջայական դասը ոչ միայն անմիջապես ներգրավվում է այդ շարժման մեջ, ուղղություն տալիս նրան, այլև անմիջական մասնակցություն ցուցաբերում այդ ուղղությամբ ձեռնարկվող բանավարություններին: Հայտնի է, օրինակ, որ XVII դարի հենց սկզբին Էջմիածնի Մելիքսեթ կաթողիկոսը Նոր Ջուղայի վաճառականության ներշնչումով Հովհաննես Տերզնցու միջոցով Հռոմ է ուղարկում հպատակության թուղթ, որտեղ անդրադարձ է կատարվում նաև հայ ժողովրդի «բազմադիմի տառապանքներին»[11]:

Նման փաստերը համոզիչ կերպով գալիս են հերքելու պատմական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ հայ առևտրական կապիտալի առաջամարտիկը հանդիսացող Նոր Ջուղայի խոջայությունը հայ ժողովրդի քաղաքական շահագրգռություններից հեռու կանգնած, ապաքաղաքական հակումներ ունեցող, կրավորական վարքագծի տեր զանգված էր: Նույնիսկ հայ ազատագրական մտքի փայլուն ուսումնասիրության հեղինակ Աշոտ Հովհաննիսյանը, երբեմն իր տեսադաշտից դուրս թողնելով մի շարք իրողություններ, կամ տուրք տալով մարքսիստական փիլիսոփայության սկզբունքներին, հայ առևտրական բուժուազիայի ընդհանուր մտայնության ցուցանիշ է համարում քաղաքական կոնֆորմիզմը, «գլխապահությունը», «քաղաքական բարեհոգությունն ու քաղաքական օրինապաշտությունը» գտնելով, որ առևտրական բուրժուազիայի դասը «ավելի շատ բռնում էր տիրողների նկատմամբ խոնարհ համակերպության ճանապարհը, քան ճակատ էր տալիս իր ժողովրդի ազատագրման համար»[12]: «Երկյուղած ու տիրապաշտ՝ գաղ-

---

[10] **Հովհաննիսյան** 1959:
[11] «**Հանդէս ամսօրեայ**», 1934, 238:
[12] **Հովհաննիսյան** 1959, 458-459:

թավայրերի մեծափարթամ խոջաները, - գրում է մեծանուն գիտնականը, - չհամակվեցին հայ բնաշխարհի ազատագրական տրամադրություններով: Առևտրական նրանց հաշվեկշիռը չէր համատեղվում մայր երկրում արծարծվող ազատագրական ակնկալությունների հետ»[13]: «Քաղքենի արտոնված մի դաս էր այդ, - շարունակում է նա զարգացնել իր տեսակետը, - որի հասարակական մորալը որոշվում էր համրիչի ցուցանիշներով, մարդիկ, որոնք, գլուխ խոնարհելով տիրողների առաջ, ջանում էին ճանապարհ հարթել դեպի իրենց բարեկեցությունը, անտարբեր դեպի ազգակիցների չարքաշ ու նեղ օրը: Այս կարգի առևտրականները լիակատար հիմք ունեին խուսափելու ազգային քաղաքականության ստորջրյա ժայռերից և պահանջված դեպքում փողի օգնությամբ նվաճել անձնական հարստություն»[14]:

Իրանահայ խոջայության ազգային-քաղաքական անգործունեությունն ու կրավորականությունը ցույց տալու նպատակով պատմական գրականության մեջ վկայակոչվել է XVII դարի հայագետ Յոհաննես Շրյոդերի (Սկրոդեր) «Արամեան լեզուին գանձ» աշխատության մեջ բերված եվրոպացի ոմն Ֆրանչեսկոյի և Նոր Ջուղայից առևտրական գործերով Ամստերդամ ժամանած խոջա Սաֆարի երկխոսությունը, որտեղ եվրոպացին շոշափում է նաև հայ ժողովրդի քաղաքական դրության հարցը: Սակայն ինչպես երևում է երկխոսությունից, զգույշ և հաշվենկատ խոջան օտար տիրապետության հպատակ լինելու պատճառով խուսափել է այդ նյութից, նույնիսկ հայտարարելով, որ հայերը քաղաքական հարց չունեն: «Ուղղորդ այ, - ասում է նա, - մեր ազգն էսօր էլ դինջ այ քանց մեր թագաւորաց վախտին,

---

[13] **Նույն տեղում**, 456:
[14] **Նույն տեղում**, 458:

զարա կռիւ չի գնալ, ու ամէն ազգի հետ ազատ ելումուտ ունի»[15]:

Լեոն խոջայի արտահայտած այդ միտքը մեկնաբանում է հետևյալ կերպ. «Հային հարկավոր էլ չէ սեփական թագավոր. եթե ունենա այդպիսի բան, պիտի պատերազմի գնա, մինչդեռ այժմ նա կռվի չի գնում և ազատ առևտուր է անում բոլոր ազգերի հետ»[16]:

Հավանաբար XVII-XVIII դարերում հայ առևտրավաշխառուական շրջաններում նման մտայնությունը ունեցել է բավականին կողմնակիցներ: Արտահայտելով նրանց տրամադրությունները հոգևորականներից մեկը՝ Գևորգ Մխլեյիմյանը (Մխլեյիմյան Գևորգ վարդապետ, 1681-1758 թթ.) գրում է. «Արևելեան քրիստոնեայք թեպետ առանց թագաւորութեան են, սակայն առաւել երջանկութիւն և անդորրութիւն ունին, քան զնոսա, որք ընդ թագաւորութեամբ են»[17]:

Փաստերի ուսումնասիրությունը աներկբայորեն բերում է այն եզրակացության, որ նման տեսակետները ընդհանրական չէին հայ առևտրական բուրժուազիայի մեծ մասի համար: Ինչ վերաբերում է խոջա Սաֆարի արտահայտած մտքերին, ապա նախ դրանք կարող էին լինել անհատի մասնավոր տեսակետ, իսկ ամենակարևորը զգուշության դրսևորում Սեֆյան պետության նկատմամբ իրենց քաղաքական լոյալությունը կասկածի տակ չդնելու համար: Ի վերջո չպետք է մոռանալ, որ իրանահայ վաճառականությունը և մեծատունները, թեև օգտվում էին Սեֆյան շահերի և առհասարակ հյուրընկալ երկրի բարյացակամ վերաբերմունքից, նրանց կողմից իրենց շնորհված իրավունքներից և արտոնություններից, սակայն միևնույն ժամանակ իրենք ևս

---

[15] **Joh. Joacim Schröderus**, Thesaurus, 1710, 338-339

[16] «**Արարատ**», 1871, 129-139:

[17] **Լեո** 1934, 102:

բռնատիրական վարչակարգի կողմից ենթակա էին ազգային ու կրոնական ճնշման:

Նման բնույթի հալածանքները նույնիսկ «քրիստոնեաների» համբավ վայելող շահ Աբբաս Ա-ի ժամանակ սովորական երևույթ էին, որի պատճառով և Առաքել Դավրիժեցին նրան անվանում է «վիշապ անդնդային»[18]: Այդ բռնակալը իր կողմից գաղթեցված հայ բնակչությանը տնտեսական ու քաղաքական նպատակներով սիրաշահելու հետ մեկտեղ, ժամանակ առ ժամանակ նրանց նկատմամբ վարում էր զանգվածային հետապնդումների և իսլամը պարտադրելու քաղաքականություն[19]: Ուստի խոջայական դասը ստիպված էր միշտ զգույշ և աչալուրջ լինել և մշտապես Սեֆյան իշխանությունների առջև ներկայանալ որպես բարեհույս և չեզոք տարր: Այդ բանը նկատելի էր նույնիսկ կողմնակի դիտորդների համար: Ֆրանսիացի Շարդենը, օրինակ, վկայում է, որ Նոր Ջուղայի խոջաները, որոնք իրազեկ էին Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի բանակցություններին Հռոմի հետ քրիստոնյա պետությունների օգնությամբ Հայաստանի ազատագրման վերաբերյալ, երկյուղի մեջ էին, թե իրանական պետությունը կարող դրա համար վրեժխնդիր լինել և պատժել հայերին[20]:

Հայության քաղաքականապես ամենահասուն և ամենագործուն դասը՝ առևտրական բուրժուազիան, ականատեսն ու վկան լինելով տնտեսական ու բարոյական անտանելի միջավայրում տառապող սեփական ժողովրդի դժգույն ճակատագրին, սկսում է հստակորեն գիտակցել նաև, որ հայ ժողովրդի թշվառությունը հետևանք է սեփական պետականության բացակայության:

---

[18] **Դավրիժեցի** 1884, 148-162:
[19] **Նույն տեղում:**
[20] **Chardin** 1735, 146-147

Քաղաքական այդ տրամադրությունները հատկապես ցայտուն կերպով դրսևորվեցին XVII դարի վերջին և XVIII դարի սկզբին, երբ աննախընթաց կերպով սաստկացել էին Սեֆյան Իրանի կառավարող շրջանների ճնշումները ոչ միայն հայ լայն զանգվածների, այլև առևտրական-խոջայական դասի նկատմամբ: Այդ իրավիճակը իր ցայտուն արտահայտությունն է գտել Նոր Ջուղայում հանդես եկած մատենագիր ու տաղասաց Ստեփանոս Դաշտեցու մոտ[21], որը երազում էր հայ ժողովրդի փրկության և նրա համար մի այնպիսի վիճակի ստեղծման մասին, որն անհամատեղելի լիներ «իրանական և օսմանյան բռնատիրության հետ»[22]:

Հայ ժողովրդի քաղաքական ազատության ձեռքբերման գաղափարը միակը չէր, որ ոգեշնչում էր առևտրական բուրժուազիային: Նա սկսում է մեծ ազդեցություն ու կշիռ ձեռք բերել նաև համազգային նշանակություն ունեցող համարյա բոլոր հարցերում: Ըստ էության նա իր ձեռքն է վերցնում հայ ազգային կյանքի ղեկավարությունը ոչ միայն Իրանի գաղթօջախի, այլ համայն հայության կյանքի շրջանակներում: Համահայկական նշանակության բազմաթիվ հարցեր լուծվում էին նրա գիտությամբ ու միջոցով: Առանց նրա համաձայնության չէր կարող վճռվել ոչ մի նշանավոր ազգային գործ: «Էջմիածինը ենթարկվում էր նրան, կաթողիկոսի ընտրության գործում առաջին ձայնը պատկանում էր Ջուղային»[23]: XVII-XVIII դարերում հայոց կաթողիկոսներից Մովսես Տաթևացին, Փիլիպոս Աղբակեցին, Հակոբ Ջուղայեցին, Նահապետ Եդեսացին, Ստեփանոս Ջուղայեցին, Աղեքսանդր Ջուղայեցին և Աստուածատուր Համադանցին բազմել էին կաթողիկոսական գահին ջուղայեցի խոջաների

---

[21] **Մ. Մաշտոցի անվան Մատենադարան**, ձեռ. թիվ 781, էջ 2-3:
[22] **Հովհաննիսյան** 1959, 463:
[23] **Լեո**, Հայկական տպագրություն, Երկերի ժողովածու, հ. 5, 194:

աջակցությամբ[24]: Նրանք էին կաթողիկոսության թեկնածուների համար Սեֆյան շահերից ձեռք բերում հրովարտակ կամ համաձայնություն իրենց բարձր պաշտոնը ստանձնելու համար: Սեֆյան պետության մեջ ընդունված կարգ էր, որ կաթողիկոսության իրավունքի կամ հոգևոր այլ պաշտոններում հաստատվելու համար պարտադիր կարգով անհրաժեշտ էր ձեռք բերել կառավարության թույլտվությունը՝ ռաղամը: Այդ գործը սովորաբար գլուխ էին բերում խոջայական դասի ազդեցիկ ներկայացուցիչները, որոնք Առաքել Դավրիժեցու հաղորդմամբ «Յոյժ ընդունելիք էին խօջայ Սաֆարս եղբայրն իւր խօջայ Նազարն առաջի Պարսից թագաւորին և իշխանացն նորա»[25]: Հայտնի է, օրինակ, որ 1680 թ. Հակոբ Ջուղայեցու մահվանից հետո Էջմիածնի հոգևորականները կաթողիկոս էին ձեռնադրել Երուսաղեմի հայոց պատրիարք Եղիազար Այնթափցուն, որը մինչ այդ ինքնագլուխ իրեն հռչակել էր հակաթոռ կաթողիկոս: Սակայն քաջ գիտակցելով, որ կաթողիկոսի ընտրության հարցում վերջին խոսքը պատկանում է ջուղայեցիներին, Այնթափցին չէր մեկնում իր պաշտոնավայրը ասելով, թե «ոչ եկից ի սուրբ Աթոռն մինչև ոչ գայցե մանսար Իսպահանու»[26]:

XVII դարի կեսերին Հայաստանում երկար տարիներ քարոզչական գործունեություն ծավալած կաթոլիկ միսիոներ Փիրոմալլին գրում էր, որ «ջուղայեցիներն ի վիճակի են ըստ իրենց ցանկության պաշտոնազրկել որևէ վարդապետի, եպիսկոպոսի և նույնիսկ կաթողիկոսի»:

Ջուղայեցի խոջա Նազարի ջանքերի շնորհիվ 1629 թ. շահ Սեֆին հրապարակեց հրովարտակ Էջմիածինը տարեկան հարյուր թուման «փիշքաշի» (նվիրատվության - Վ. Բ.) պարտավորությունից («մուղադա») ազատվելու մասին, որի

---

[24] **Chougassian** 1998.
[25] **Դավրիժեցի** 1884, 186:
[26] **Երևանցի** 1873, 104, 211:

վճարումը 1617 թ. պարտադրվել էր Մելիքսեթ կաթողիկոսին շահ Աբբաս Ա-ի կողմից[27]:

Հայ առևտրական բուրժուազիան մշտապես աշխատել է զորավիգ կանգնել Էջմիածնին ու հայ Առաքելական եկեղեցուն, գիտակցելով նրա համահայկական ընդգրկումն ու միավորիչ դերը: Նկատի ունենալով, որ XVII դարի երկրորդ տասնամյակից սկսած Էջմիածինը վերածվում էր ազգային-ազատագրական գաղափարների կենտրոնի, հայ առևտրական դասը անմիջապես նեցուկ դարձավ նրա այդ ձգտումներին՝ միաժամանակ հաստատուն կերպով կանգնելով հայոց ազգային եկեղեցու ինքնուրույնության, նրա դավանանքի ու հնամենի ավանդույթների պաշտպանության դիրքերում:

Կարևոր է նաև շեշտել, որ եթե եկեղեցականներն առաջվա պես հայ ժողովրդի ազատագրումը շարունակում էին ակնկալել Հռոմի աթոռից կամ Արևմուտքի քրիստոնյա պետություններից, ապա իրանահայ առևտրական դասը մերժում էր «ֆրանկների միջոցով ազատագրվելու խաբուսիկ ցնորքը»: Այդ մասին մենք բազմաթիվ փաստեր ենք գտնում ստվարածավալ «Քարմելյանների տարեգրությունում»[28]: Կան այդ հանգամանքը հաստատող բազմաթիվ այլ տվյալներ ևս: Այսպես, երբ 1613 թ. Մելիքսեթ կաթողիկոսը, առանց Նոր Ջուղայի խոջաների համաձայնության պաշտոնական նամակ է ուղարկում Հռոմ, որտեղ պատրաստակամություն էր հայտնում ընդունելու Հռոմի պապի գերագահությունը, խոջաները անմիջապես համոզում են Աբբաս Ա-ին ձերբակալել կաթողիկոսին և չեղյալ հայտարարել շահի որոշումը[29]: Այնուհետև, 1607 թ. շահ Աբբաս Ա-ը հրաման է արձակում Էջմիածնի եկեղեցին քանդելու և նրա քարերն ու

---

[27] **Դավրիժեցի** 1884, 232:

[28] **A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII and XVIII Centuries.**

[29] **Գալեմքարեան** 1915, 44:

սրբազան մասունքները իր մայրաքաղաք Սպահան տեղափոխելու վերաբերյալ, որպեսզի այնտեղ կառուցվի «նոր Էջմիածին» գաղթեցված հայ բնակչությանը ընդմիշտ Իրանի հետ կապելու համար: Ընդ որում, շահը իր այդ որոշումը կայացրել էր Սպահանում գտնվող կաթոլիկ միսիոներների հրահրմամբ, որոնք հույս ունեին այդ ճանապարհով հարված հասցնել հայ ազգային եկեղեցու հիմքերին, միաժամանակ հեշտացնելով «անհավատներին» դարձի բերելու գործը: Դարձյալ խոջաների ջանքերի շնորհիվ խափանվում է հայ Առաքելական եկեղեցու դեմ ուղղված այդ սքողված ու վտանգավոր դավը[30]:

Առհասարակ եվրոպական տարբեր պետությունների շահերն արտահայտող Կապուչինյան, Ֆրանցիսկանյան, Քարմելյան, Դոմինիկյան, Օգոստինյան, Ճիզվիթական և այլ կրոնական միաբանություններին պատկանող միսիոներները, քաջ գիտակցելով Նոր Ջուղայի և նրա առևտրական բուրժուազիայի կշիռը համահայկական գործերում, եռանդուն կերպով աշխատում էին նրանց մտցնել կաթողիկե եկեղեցու ծոցը: Այդ գործում նրանց աջակցում էր գաղթօջախի կաթոլիկ համայնքը Շահրիմանյան ընտանիքի գլխավորությամբ: Միսիոներները իրենց այդ քարոզչական գործունեությանը տալիս էին քաղաքական երանգ, զարգացնելով այն տեսակետը, որ իբր հայ ժողովուրդը կորցրել է իր քաղաքական ազատությունը հռոմեական եկեղեցու «Սուրբ գրքից» հեռանալու պատճառով և որ իր կորցրածը վերագտնելու համար նա պետք է կրկին վերադառնա «Ճշմարիտ հավատը» ներկայացնող հռոմեական եկեղեցու գիրկը:

XVII-XVIII դարերի հայ իրականության մեջ հակակաթոլիկական կամ հակամիարարական պայքարի գաղափարական կենտրոնը և դրոշակակիրը հանդիսանում էր Նոր

---

[30] **Տէր Յովհաննեաց** 1880, 51-56:

Ջուղան[31]: Այստեղ այդ պայքարի հիմնական կազմակերպիչը հայ հոգևորականությունն էր և նրան գաղտնի ու բացահայտ աջակցություն ցույց տվող խոջայական դասը: Նոր Ջուղայի վաճառականության այն խմբավորումը, որը հավատարիմ մնաց հայ Առաքելական եկեղեցու դավանանքին ու նրա սկզբունքներին, վճռական պայքար ծավալեց Իրանում կաթոլիկ միսիաների գործունեության դեմ: Իրենց այդ պայքարով նրանք պաշտպանում էին հայոց եկեղեցու ու դավանանքի, հետևաբար և հայ ժողովրդի ինքնուրույն գոյության իրավունքը[32]:

Չափազանց մեծ էր նաև իրանահայ բուրժուազիայի դերը հայ հոգևոր գարթոնքի գործում: XVII դարի սկզբից մինչև պատմության նոր դարաշրջանի արշալույսը հայ առևտրական բուրժուազիայի խոշորագույն կենտրոնը՝ Նոր Ջուղան եղել է համայն հայության կյանքի ուղենիշ աստղը, նրա տնտեսական, քաղաքական, գաղափարական, գիտական ու մշակութային կյանքի ամենանշանավոր կենտրոնը: Նա է տոն ու ընթացք տվել համահայկական տարողություն ունեցող գրեթե բոլոր երևույթներին, նպաստել հայության շրջանում նոր որակներ յուրացնելու, եվրոպական և ասիական քաղաքակրթությունների լավագույն ձեռքբերումների տարածմանը: Այն առանձնահատուկ տեղ է գրավում նաև հայ ժողովրդի քաղաքական ինքնագիտակցության ձևավորման գործում:

XVII-XVIII դարերի ընթացքում իրանահայ առևտրական բուրժուազիան էր ուղղություն տալիս Հայաստանի հասարակական, քաղաքական, գաղափարական և գիտամշակութային կյանքին: Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքին կից հիմնվում է դպրոց կամ ինչպես այն ժամանակ էին կոչել՝ համալսարան, ուր դասավանդում էին բազմաթիվ առարկա-

---

[31] **Միքայան** 2001, 11:

[32] **Բայբուրդյան Ա.** 1988: **Բայբուրդյան Վ.** 1989:

ներ, այդ թվում նաև եվրոպական և ասիական լեզուներ: Այդ դպրոցում ուսանել են բազմաթիվ նշանավոր գործիչներ, որոնք կարևոր դեր են խաղացել համայն հայության լուսավորական և մշակութային կյանքում: Նոր Ջուղան հանդիսացել է հայ գիտական մտքի աչքի ընկնող կենտրոններից մեկը: Այստեղ ապրել և ստեղծագործել են գիտության տարբեր բնագավառների գործիչներ: Հատկապես ծաղկում է ապրել հայ պատմագիտական և փիլիսոփայական միտքը: Այդ բնագավառում հայտնի դեմքերից են Խաչատուր Ջուղայեցին, Սիմեոն Ջուղայեցին, Հովհաննես Մրքուզը և ուրիշներ: Սիմեոն Ջուղայեցու թողած փիլիսոփայական ժառանգությունը դուրս է գալիս ազգային շրջանակներից: Առաքել Դավրիժեցին վկայում է, որ ջուղայեցի ազդեցիկ դեմքերից մեկը՝ խոջա Սաֆարը «էր աւագ ոչ միայն ջուղայեցւոց, այլ և ամենայն ազգին հայոց՝ որք կային ի ներքոյ թագաւորութեանն պարսից»: Արդարև, շնորհիվ իրանահայ բուրժուազիայի գործունեության, Նոր Ջուղայի հասարակական-մշակութային կյանքը դուրս գալով համայնքային նեղ շրջագծից, ձեռք բերեց ազգային բովանդակություն և նկարագիր: Անժխտելի է իրանահայ առևտրական բուրժուազիայի խաղացած հսկայական դերը նաև եվրոպական և ասիական մշակույթների մերձեցման և քաղաքակրթությունների շփման գործում: Նրանք Եվրոպայից Արևելք էին բերում ոչ միայն բազմապիսի ապրանքներ, այլև նոր ու թարմ գաղափարներ: «Հայը կայաններ ուներ Եվրոպայի և Ասիայի ամենանշանավոր կենտրոններում. այդ կայանները միայն վաճառականական շահին չէին ծառայում, այլև երբեմն մտավոր գործի օջախներ էին հանդիսանում», - գրում է Լեոն[33]:

Անուրանալի է նաև հայ առևտրական բուրժուազիայի դերը հայ գրատպության գործում: Դեռևս XVI դարի վերջե-

[33] **Լեո** 1986. 153:

րին հին ջուղայեցի վաճառականների նյութական օժանդակությամբ Մարսելում, Հովհաննես Տերզնցին հրատարակում է մի շարք գրքեր: Ավելի ուշ Նոր Ջուղայում և բողոքական Հոլանդիայում ստեղծվում է հայկական տպագրություն: Ամստերդամում, Մարսելում, Վենետիկում և եվրոպական այլ կենտրոններում XVII-XVIII դարերի ընթացքում լույս են տեսել աշխարհիկ և կրոնական բնույթի բազմաթիվ գրքեր, վաճառականական տեղեկատուներ, հաշվեմատյաններ, աշխարհագրական քարտեզներ և այլն:

Անկասկած, հայ իրականության մեջ գրատպությունը ինքնանպատակ չէր: Այն ուներ ազգային-քաղաքական երանգ և գալիս էր իր նպաստը բերելու հայ ազատագրական շարժմանը: Տպարանները ֆինանսավորող խոջաների համար գիրքը միայն վաճառքի առարկա չէր, այլ հզոր միջոց՝ հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչների փայփայած քաղաքական իղձերը կենսագործելու համար: Պատահական չէ, որ Ամստերդամում լույս է տեսնում հայ դասական պատմագրության գլուխգործոցը՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»: Այդ հրատարակությունների նպատակն էր հայրենասիրության ոգով կրթել ու դաստիարակել այն հայ երիտասարդներին, որոնք, ինչպես գրում էր Թովմա Վանանդեցին, «գտնվում են խավարի մեջ և ապրում են բռնակալական լծի տակ»:

Այսպիսով, ակներև է, որ XVII դարում գրատպությունը ևս արտահայտում էր հայ ժողովրդի՝ վերելք ապրող ազատագրական ձգտումները և արտացոլում օտար լուծը թոթափելու նրա քաղաքական իղձը:

XVII դարի կեսերին իրանահայ առևտրական բուրժուազիայի քաղաքական տրամադրությունների մեջ ակնառու բեկում է նկատվում: Դա պայմանավորված էր առաջին հերթին Իրանի տնտեսական և քաղաքական խորը ճգնաժամով: Այդ երկրի կառավարող շրջանները սկսում են

սահմանափակել հայ առևտրական-խոջայական դասի առևտրական ու քաղաքական իրավունքները, տնտեսական հարվածներ հասցնում նրան, ենթարկում ազգային ու կրոնական հալածանքների: Շահական կառավարության քաղաքականությունն է դառնում «ոչ թե պաշտպանել խոջայական առևտուրը, այլ հարստահարել ու կողոպտել նրան»[34]: Նոր Ջուղան վերածվում է ամեն տեսակի բռնավորների կողոպուտի ու հարստահարությունների թիրախ, որոնք բռնությունների ու տանջանքների ենթարկելով հարուստ վաճառականներին, նրանցից հափշտակում էին իրենց ունեցվածքը: Ստեփանոս Ռոշքայի վկայությամբ՝ Նոր Ջուղայի մեծահարուստ վաճառականներից մեկի՝ Մուրադ Շահրիմանյանի որդի Նազարը «...անօրեն հրամանաւ տանջեալ... ողորմեա ինձ Աստուած եւ զերից մանկանց օրհնութիւնն երգելով հանգեաւ ի Քրիստոս»[35]: Եսայի կաթողիկոսը, որպես նման դեպքերի ականատես, գրում է. «Որքան դժվաթովորս և մեծանունս աչօք մերովք տեսաք ի Ջուղայ և յԵրևան, որ ի վերջին աղքատութիւնն և թշվառութիւնն հասեալ էին, և հարցեալ զպատճառս տեղեկացուք, որ վասն ուրացողացն և յափշտակութեան ընչից իւրեանց եղեալք այնպէս»[36]:

Այս բոլորը իրենց անմիջական ազդեցությունն են ունենում իրանահայ առևտրական բուրժուազիայի քաղաքական տրամադրությունների վրա: Նրա քաղաքական անբավականության զգացումը սկսում է շեշտակի վերելք ապրել, որի տրամաբանական հետևանքն է դառնում ազգային-ազատագրական պայքարի ուղիների ակտիվ որոնումները: Իրանահայ առևտրական բուրժուազիայի այդ տրամադրությունները պարարտ հող են գտնում ոչ միայն Իրանի հայ

---

[34] **Լեո** 1934, 171:
[35] **Ոսկեան** 1968, 11:
[36] **Եսայի կաթողիկոս** 1839, 19:

զանգվածների շրջանում, այլև բուն Արևելյան Հայաստանում, որտեղ տիրապետող Սեֆյան Իրանի իշխանությունների ճնշումների ուժեղացման հետևանքով բարձրանում էր ազատագրական շարժման ալիք:

Ուշագրավ է, որ իրանահայ առևտրական բուրժուազիայի քաղաքական տրամադրությունները համահունչ էին նաև արևմտահայերի շրջանում խմորվող տրամադրություններին: Արևմտահայ «առևտրական բուրժուազիան զարգացման համար կաշկանդված լինելով թուրքական տիրապետության պայմաններում, առաջ էր քաշել նոր ուղեգիծ, նպատակ ունենալով ընդմիշտ դուրս գալ օսմանյան ավատականության խեղդող մթնոլորտից և ուրիշների նման ունենալ իր շահերն ապահովող հարազատ իշխանություն: Հենարան ընտրելով կայսրության մեջ ապրող երիցս դժգոհ՝ տանջվող ու կեղեքվող հայ աշխատավորական տարրը, նա իր քաղաքական ծրագիրը հիմնում էր արևմտահայ ժողովրդի ազատագրման և Հայաստանի անկախության վերականգնման գաղափարի ու ծրագրերի վրա»[37]: «Արևմտահայ ազատագրական շարժման դրոշակակիրն, ուրեմն, - նշում է Հակոբ Անասյանը, - մեծ ուժ ներկայացնող հայ բուրժուազիայի առաջավոր թևն էր, այլ խոսքով, շարժման մղիչ ուժը՝ արևմտահայ առևտրական բուրժուազիան էր, որը մերձավորարևելյան առևտրի ընդհանուր վերելքի այս դարաշրջանում պետք է լուսավորեր ազգային զարթոնքի և ազատագրական ճիգերի ուղին Արևմտյան Հայաստանում»[38]:

Այսպիսով, միանգամայն ակնհայտ է, որ արևմտահայ, ինչպես նաև արևելահայ (և նրա մի հատվածը կազմող իրանահայ) առևտրական բուրժուազիայի գործունեության և նրա վարքագծի միջև XVII դարում առկա են եղել սերտ աղերսներ: Հայաստանի զույգ հատվածներում էլ այդ դասը հան-

---

[37] **Անասյան** 1961, 40:
[38] **Նույն տեղում**, 41:

դես էր գալիս որպես հայ հասարակության քաղաքական-նապես ամենահասուն և ամենագործուն տարրը: Արևելահայ առևտրական կապիտալի ներկայացուցիչների օրինակով «արևմտահայ խոջայությունը ևս հրապարակ գալով հայրենիքի ազատության նշանաբանով, 1666 թվականից սկսած հանդուգն քայլ էր անում: Նա դիմում էր արտաքին աշխարհին, հայտնելով, որ հայերը, բախտակից ժողովուրդների հետ, պատրաստ են ոտքի կանգնելու և թոթափելու օսմանյան Թուրքիայի ծանր լուծը»[39]:

XVIII դարում Իրանում ստեղծված տնտեսական և քաղաքական անապահով պայմանների պատճառով Իրանից (հատկապես Նոր Ջուղայից) Հնդկաստան տեղափոխված խոջաները ևս բոլորանվեր նվիրվեցին Հայաստանի ազատագրության գործին[40]:

Հանրահայտ իրողություն է, որ գրեթե բոլոր նշանավոր հնդկահայ գործիչները սերում էին Նոր Ջուղայից:

1772 թ. Մադրասում հիմնադրած իր տպարանում Շահամիր Շահամիրյանը տպագրեց «Նոր տետրակ որ կոչի հորդորակ» աշխատությունը, որտեղ քննության էր ենթարկում հայոց պետականության վերականգնման հնարավոր ուղիները: Այդ աշխատությամբ Շահամիրյանը ոչ միայն փորձում էր ցույց տալ այդ մեծ նպատակի իրագործման ուղիները, այլև ուրվագծում էր իր տեսլականը ապագա Հայաստանի վերաբերյալ:

Մտահոգված լինելով սեփական ժողովրդի վերածնության խնդրով, Հնդկաստան տեղափոխված իրանահայ առևտրական բուրժուազիայի ներկայացուցիչները ձեռնամուխ էին եղել քաղաքական եռանդուն գործունեության, որն իր մակարդակով ներկայացնում էր հայկական բուրժուազիայի քաղաքական գործունեության ավելի հասուն շրջանը:

---

[39] **Նույն տեղում**, 83:
[40] **Greppin** 1978, **Seth, Armenians**, 1937; **Balburtian A.** 2009

Նրանց գործունեությունը հատկապես մեծ թափ ու ծավալ է ստանում այն ժամանակ, երբ XVIII դարի ընթացքում անգլիացիները Հնդկաստանում սկսում են հետևողականորեն դուրս մղել իրենց մրցակից հայկական բուրժուազիային[41]: Ելք փնտրելով այդ անբաղձալի վիճակից՝ Շահամիր Շահամիրյանը և Մադրասի հայրենասիրական խմբակի մյուս ներկայացուցիչները առաջ են քաշում Հայաստանի անկախության վերականգնման իրենց հայտնի ծրագիրը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Առաքել Դավրիժեցի 1884, Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ, Էջմիածին:

Անասյան Հ. 1961, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան:

«Արարատ» ամսագիր, 1871:

Բայբուրդյան Ա. 1988, Կարմելյանների միաբանության միսիոներների գործունեությունը իրանահայության շրջանում (XVII դարում), «Լրաբեր հասարակական գիտությունների», № 11, էջ 51-61:

Բայբուրդյան Վ. 1964, Նոր Ջուղայի հայկական գաղութը և կաթոլիկ միսիոներների կազմակերպությունները, «Տեղեկագիր հասարակական գիտությունների», № 9, էջ 39-52·

Բայբուրդյան Վ. 1989, XVII դարում Արևելյան Հայաստանում կաթոլիկ միսիոներների գործունեության պատմությունից, «Պատմա-բանասիրական հանդես», № 2, էջ 147-157:

Բայբուրդյան Վ. 1996, Համաշխարհային առևտուրը և իրանահայությունը XVII դարում, Թեհրան:

Բայբուրդյան Վ. 2007, Նոր Ջուղա, Երևան, 152 էջ:

Գալեմքարեան Գ. 1915, Կենսագրութիւններ, Վիեննա:

Եսայի կաթողիկոս 1839, Պատմութիւն կամ յիշատակ ինչ-ինչ անցից դիպելոց յաշխարհին Աղուանից, Շուշի:

[41] **Armenian Merchants of the Seventeenth and Early Eighteenth Centuries**, 1908

Լեո 1934, Խոջայական կապիտալը և նրա քաղաքական-հասարակական դերը հայերի մեջ, Երևան:

Լեո 1984, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան:

Լեո 1986, Հայկական տպագրություն, երկերի ժողովածու, հ. 5, Երևան.

Հովհաննիսյան Ա. 1959, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, [Հայ ազատագրական մտքի դեգերումները 15-17-րդ դարերում: Տրորված ուղիներով: Նոր ճա նապարհի վրա], 695 էջ:

«Հանդէս ամսօրեայ», 1934.

Միրզոյան Հ. 1983, XVII դարի հայ փիլիսոփայական մտքի վերլուծություն, Երևան:

Միրզոյան Հ. 2001, Հովհաննես Մրքուզ Ջուղայեցի, Երևան·

Մ. Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. թիվ 781, էջ 2-3:

Ոսկեան Հ.Հ, Ստեփանոս Վ. Ռոշքա, Մատթէոս Վ. Ջուղա-յեցի, Վիեննա, 1968, 181 էջ:

Սիմեոն Երևանցի 1873, Ջամբռ, Վաղարշապատ:

Տէր-Յովհաննեանց Յ. 1880, Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան, Նոր Ջուղա:

Адонц Н. 1984, Из истории армянского вопроса. Научно-информационный бюллетень сектора Научной информации АН Армении, серия 3, Ереван

Байбуртян В. 1969, Армянская колония Новой Джульфы в XVII веке (Роль Новой Джульфы в ирано-европейских политических и экономических связях), Ереван.

Кант И. 1966, Сочинения, т. 6, Москва

Aslanian S. D. 2000, From the Indian Ocean to the Mediterranian the Global Trade Networks of Armenian merchants from New Julfa. Berkeley

A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII and XVIII Centuries, vol I (720 p.) - II (721-1376 pp), London, Eyre and Spottiswoode, 1939

Armenian Merchants of the Seventeenth and Early Eighteenth Centuries: English East India Company Sources. Sources XXXVII, edited by Vahe Baladouni, and Margaret Makepeace, Philadelphia, PA: American Philosophical Society, 1998, 294p.

Baibourtian A. 2009, The Emergence of the Armenian Diaspora and Genesis of the Indo-Armenian Community, Diaspora Studies, vol 2, no 1, New Delhi, pp 93-108

Baibourtian V. 2004, International Trade and the Armenian Merchants in the Seventeenth Century New Delhi

Carswell J. 1968, The Armenians and the East-West Trade Through Persia in the Seventeenth Century, Oxford

Chardin Jean 1811, Voyages du Chevalier Chardin, en Perse, et autres lieus de l'orient, t. II, Paris

Chougassian V. S. 1998, The Emergence of the Armenian Diocese of New Julfa in the Seveteenth Century, University of Pennsilvania

Johacim Schröderus 1710, Thesaurus linguae Armenical (Արմենեան լեզուին գանձ), Amsterdam

Seth M. J. 1937, Armenians in India from the earlies times to the Present day, Calcutta

Վահան Բայբուրդյան - *պ.գ.դ., ՀՀ ԳԱԱ*
արևելագիտության ինստիտուտի, Իրանի բաժնի վարիչ,
գլխավոր գիտաշխատող,
V.Bayburdyan1933@gmail.com

THE LEADING ROLE OF THE IRANIAN-ARMENIAN TRADE BOURGEOISIE IN THE XVII CENTURY PAN-ARMENIAN ISSUES

Keywords: *New Julfa, trade, Shah Abbas I, Armenian trade bourgeoisie, Armenia, Iran, Catholocos, typography, Ejmiatsin.*

The XVII century is also characterized in the history of Armenia as the period of formation of the bourgeois relations or the period of initial accumulation of capital. In the Armenian reality, this process as a rule took place primarily in the form of commercial capital. When referring to the origin and formation of the Armenian commercial bourgeoisie, it should be emphasized that due to the unfavorable historical conditions in Armenia at the beginning of the XVII century this class was formed and had to operate not in

Armenia, but outside the native land, in the Armenian colonies and first of all in the community of New Julfa which had formed near Isfahan, the capital city of Iran. In the Armenian reality New Julfa became the center of the initial accumulation of capital, giving birth to the formation of the Armenian capitalist class. Therefore, by saying "commercial bourgeoisie" and "commercial capital" of the XVII century, one must first of all refer to the New Julfa or Julfa-Armenian merchants and their capital. Indeed, throughout the XVII century New Julfa became "the largest and most powerful center of colonial Armenian capital".

The Armenian commercial bourgeoisie always tried to support Ejmiatsin and the Armenian Apostolic Church, realizing its pan-Armenian reach and unifying role. Taking into account the fact that since the second decade of the XVII century Ejmiatsin was turning into a center of national liberation ideas, the Armenian merchant class immediately supported its aspirations, at the same time firmly backing the independence of the Armenian National Church, its faith and ancient traditions.

Vahan Bayburdyan - *Doctor of Sciences, Institute of Oriental Studies of NAS RA, Head of the Department of Iran, Principal Researcher,*
V.Bayburdyan1933@gmail.com

ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

НОВАЯ И НОВЕЙШАЯ ИСТОРИЯ

MODERN AND CONTEMPORARY HISTORY

ԱԲԴ ԱԼ-ԿԱԴԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

ԱՐԱՄ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ *Աբդ ալ-Կադեր, Ալժիր, Ֆրանսիա, ապստամբություն, գաղութ, արաբական երկրներ, «Կադիրիյա», բանակ, բարեփոխումներ:*

Ալժիր ներխուժումից անմիջապես հետո ֆրանսիացիները իրենց դիրքերն ամրապնդելու, հետագա գաղութացումը հեշտացնելու ու գրավված տարածքներում տեղի բնակչությանը հնազանդության մեջ պահելու համար անցան արաբական երկրներում դեռևս չօգտագործված «մարտավարության»: Ֆրանսիացի բարձրաստիճան սպաների անմիջական հրամանատարությամբ իրականացվում էին «պատժիչ» գործողություններ՝ որոնք ուղեկցվում էին անասելի դաժանություններով, արյունահեղությամբ և թալանով: Ֆրանսիական բանակի հանկարծակի հարձակումները գյուղերի և բեդվինների կայանների վրա Ալժիրի պատմագրությունում ստացավ «Ռազիա»[1] անվանումը:

Ֆրանսիական զորքի հրամանատարներից մեկն այս գործելաոճը բնութագրել է հետևյալ կերպ: «Անցնելով սարերը (Քաբիլիայի-Ա.Գ.) մենք հանկարծակիի բերեցինք թշնամուն և խուճապ առաջացրեցինք նրանց շարքերում: Նրանք սկսեցին անկանոն նահանջել, բայց չկարողացան փրկվել մեր սրից և հրից: Դա սպանդ էր, բայց մեր գործը ամբողջովին ավարտված չէր: Եթե գեներալ Բուժոյի հրամանները լիարժեք կատարեինք պետք է սպանեինք 2000 մարդու, փոխարենը սպանեցինք միայն 500-ին, և գերի

[1] Ռազիա բառը վերցված է արաբերենի ղազիյա՝ ասպատակություն, արշավ բառից:

վերցրեցինք չնչին քանակություն բայց բարոյական արդյունքները տպավորիչ էին: Արաբները ահաբեկված էին. քաբիլները փոշու պես անհետացան... Մենք վերցրեցինք անասուններին և մեր ճանապարհի վրա այրեցինք ամեն ինչ»[2]:

Ֆրանսիական իշխանությունների հետապնդումները, սակայն չտվեցին սպասված արդյունքը: Հնազանդվելու փոխարեն, ալժիրցիների գերակշիռ մասը, տեսնելով գաղութարարների անիրավությունները, միացան հակաֆրանսիական պայքարին՝ ապստամբելով նվաճողների դեմ: Ստեղծված նոր պայմաններում հասունանում էր ռազմական գործողությունների միասնական ղեկավարության ստեղծման անհրաժեշտությունը:

1832 թ. Օրանի շրջանի առավել հեղինակավոր շեյխերի և մարաբուտների ժողովը առաջարկեց «Կադիրիյա» միաբանության ղեկավար՝ Մախի ալ-Դինին առաջնորդել հակաֆրանսիական ապստամբությունը[3]: Սակայն, վերջինս, հստակ պատկերացնելով երկրում առկա միջցեղային տարաձայնությունները հրաժարվեց ստանձնել ղեկավարությունը՝ առաջարկելով կրկին դիմել Մարոկկոյի սուլթանին համարելով որ վերջինս ավելի ընդունելի կլինի Ալժիրում բնակվող բոլոր ցեղային միությունների համար: Մերժելով, առաջարկը, այսուհանդերձ, Մախի ալ-Դինը կոչով դիմեց Ալժիրի և, մասնավորապես, Օրանի շրջանի բնակիչներին համախմբման և սրբազան պատերազմ սկսելու կոչով[4]: Նա նաև աշխարհազորային ջոկատներ կազմավորեց իր առաջնորդության տակ գտնվող ցեղերից, որոնք սկսեցին ակտիվ ռազմական գործողություններ իրականացնել ֆրանսիացիների դեմ, որոնց ժամանակ իր քաջությամբ և անձնվիրու-

---

[2] **Abou-Khamseen, Manssour** 1983: 114-115
[3] **Хмелева** 1973. 29
[4] **Նույն տեղում:**

թյամբ աչքի ընկավ Մախի ալ-Դինի որդի՝ Աբդ ալ-Կադերը: Վերջինիս մարտի դաշտում ցուցաբերած հմտությունները և ընտրված ճիշտ մարտավարությունը հնարավորություն տվեցին ալժիրցիներին մի շարք կարևոր հաղթանակներ տանել ֆրանսիացիների նկատմամբ[5]: Այս ռազմական հաջողությունները ոչ միայն ամրապնդեցին արաբների վստահությունը իրենց ուժերի հանդեպ, այլ նաև մեծապես բարձրացրեցին Աբդ ալ-Կադերի հեղինակությունը որպես տաղանդավոր հրամանատարի և քաջարի ռազմիկի:

1832 թ. Մասկարայի մոտակայքում տեղի ունեցած Ալժիրի արևելյան ցեղերի հավաքի ժամանակ կրկին բարձրացվեց միասնական ղեկավարության խնդիրը[6]: Այս անգամ առավել քան ակնհայտ էր թե ինչպիսի ընտրություն տեղի կունենա: 1832 թ. նոյեմբերի 21-ին Աբդ ալ-Կադերը ընտրվեց արաբական ցեղերի ռազմական միավորման էմիր (առաջնորդ)[7]: Աբդ ալ-Կադերի ընտրությամբ ալժիրցիների հակաֆրանսիական պայքարը թևակոխեց նոր փուլ՝ վերածվելով միասնական և ուժեղ ազատագրական շարժման: Օգտագործելով սրբազան պատերազմի գաղափարները Աբդ ալ-Կադերը ձգտում էր հաղթահարել միջցեղային թշնամանքն ու միավորել երկրի տարբեր շրջանները, ինչն անխուսափելիորեն մեծ ազդեցություն կունենար ազգային-ազատագրական գաղափարների ձևավորման և տարածման վրա:

Իր ընտրությունից անմիջապես հետո Աբդ ալ-Կադերը լրջորեն սկսեց զբաղվել կանոնավոր բանակի ստեղծմամբ: Նա ցանկանում էր վարժեցնել բանակը եվրոպականի օրինակով, համալրել այն ժամանակակից և արդիական զենքերով՝ քաջ գիտակցելով, որ այս պատերազմում անհնար

---

[5] **Луцкий** 1965: 151
[6] **Marçot** 2011 284
[7] **Ланда** 1976 67

կլինի հաղթել միայն հավատով և ռազմական հին մեթոդների կիրառմամբ:

Այդ գերնպատակի իրականացման համար Աբդ ալ-Կադերը ներդրեց իր ողջ ջանքերն ու հնարավորությունները: Իր վերահսկողության տակ գտնվող տարածքներում արդյունավետ կառավարում իրականացնելու համար Աբդ ալ-Կադերը ձևավորեց կենտրոնական իշխանություն Ջինվորական խորհրդի գլխավորությամբ, բաղկացած 6 անդամից, անցկացվեց մարդահամար ճիշտ հարկային գանձումներ կատարելու նպատակով, որի եկամուտների գերակշիռ մասը պետք է ուղղվեր բանակի ստեղծման և վերազինման գործին[8]:

Սակայն, կենտրոնացված իշխանության հիմնումն, առաջ բերեց որոշ խոշոր ավատատերերի դժգոհությունն ու ընդդիմությունը, որոնք չէին ցանկանում հրաժարվել միանձնյա իշխանությունից և իրենց ավանդական՝ գրեթե անսահմանափակ իրավունքներից:

Անհրաժեշտ է նշել նաև, որ մի շարք ցեղապետեր չճանաչեցին Աբդ ալ-Կադերի էմիրությունը և զինված դիմադրություն ցույց տվեցին, դրանով իսկ թուլացնելով ազատագրական շարժումը և դանդաղեցնելով պետականաշինության գործընթացը:

Չնայած դրան, Աբդ ալ-Կադերի իրականացրած բարեփոխումները տվեցին իրենց արդյունքները: Նորաստեղծ էմիրությունը ոչ միայն կարողացավ ապացուցել իր կենսունակությունը, այլ նաև հզորությունը: Մի քանի տարվա ընթացքում տարբեր միջոցներով՝ ուժով, խորամանկությամբ և խոստումներով նրան հաջողվեց իր վերահսկողությունը հաստատել Օրանի շրջանի գրեթե բոլոր բնակավայրերի վրա:

---

[8] **Хмелева** 1973 32

Արդեն 1833 թ. էմիր Աբդ ալ-Կադերը մի շարք հաղթանակներից հետո իր նորաստեղծ բանակով, որի թիվը մոտավորապես հասնում էր 10.000-ի, գրոհ ձեռնարկեց ֆրանսիացիների հսկողության տակ գտնվող Օրան քաղաքի վրա[9]: Սակայն արաբների հարձակումն անհաջող էր, վերջիններս ետ շպրտվեցին, իսկ ֆրանսիական զորքերը օգտվելով իրավիճակից գրավեցին նաև Օրանի հարևանությամբ գտնվող Արզև և Մոսթագանեմ քաղաքները:

Այդուհանդերձ ապստամբների ուժերը գնալով աճում էին: Հաշվի առնելով այն հանգամանքը որ ֆրանսիական զորքերը շատ վատ էին մատակարարվում և գրեթե ամբողջովին կախված էին տեղի ապրանքներից, Աբդ ալ-Կադերը կազմակերպեց գրաված քաղաքների արգելափակումը, ինչը դժվարին կացության մեջ դրեց ֆրանսիական զորքերին: Դրա հետ մեկտեղ Աբդ ալ-Կադերի հրովարտակով դադարեցվեց ցանկացած առևտուրը ֆրանսիացիների հետ: Այս մարտավարությունն ահռելի ազդեցություն ունեցավ վերջիններիս մարտունակության վրա:

Ձեռնարկած քայլերը տվեցին իրենց սպասված արդյունքը: Շատ շուտով գեներալ Դեմիշելը, զգալով վիճակի անելանելիությունը, ամեն կերպ ջանում էր զինադադար կնքել Աբդ ալ-Կադերի հետ: Բայց վերջինս հրաժարվեց բանակցություններ վարել ֆրանսիացիների հետ:

Դեմիշելը մի քանի անհաջող մարտերից հետո, ստիպված եղավ այս անգամ արդեն Աբդ ալ-Կադերից խաղաղություն խնդրել[10], ինչը ձեռնտու էր նաև ապստամբների առաջնորդին: Մի քանի օր տևած բանակցություններից հետո կողմերը եկան համաձայնության և 1834 թ. ստորագրեցին «Դեմիշելի» խաղաղության պայմանագիրը[11]:

---

[9] **Куропаткин** 1877: 19
[10] **Abou-Khamseen, Manssour** 1983: 58
[11] **Marston, Petzon** 2013: 31

1834 թ. պայմանագիրն ուներ երկու տարբերակ. մեկը հանրային, արաբերեն և ֆրանսերեն և երկրորդը գաղտնի՝ միայն արաբերեն, որի գոյության մասին Դեմիշելը չէր հայտնել Փարիզ: Այս հնարքի շնորհիվ գեներալը կարողացավ հայտնել իշխանություններին Օրանի ազատագրման և ազատ առևտրի մասին: Սակայն իրականում նա փաստորեն ստորագրեց մի համաձայնագիր, որով ճանաչում էր Աբդ ալ-Կադերին որպես «ամիր ալ-մումինին» (ուղղադավանների առաջնորդ-Ա.Գ.) երաշխավորելով տնտեսական մենաշնորհ Արզևի նավահանգստում[12]:

Պայմանագրում մասնավորապես նշվում էր, որ կողմերը դադարեցնում են ռազմական գործողությունները, Աբդ ալ-Կադերի իշխանությունը ճանաչվում է իր վերահսկողության տակ գտնվող տարածքներում,[13] հռչակվում է առևտրի և կրոնի ազատությունը, ինչպես նաև ապահովվում է ֆրանսիացիների և եվրոպացի ճանապարհորդների անվտանգությունը[14]:

Խաղաղության պայմանագրի ստորագրումից հետո Աբդ ալ-Կադերը ողջ ուշադրությունը կենտրոնացրեց նորաստեղծ արաբական պետության ներքին գործերի, բանակի կազմավորման և պետական կառույցների հիմնման վրա, անցկացվեց նաև հարկային բարեփոխումներ: Եկամուտներ ավելացնելու համար Աբդ ալ-Կադերը մեծ ուշադրություն էր դարձնում արտաքին առևտրի վրա[15]: Կարևոր նշանակություն ուներ նաև զենքի, զինամթերքի և հատկապես հրետանու գնումը և ներմուծումը:

---

[12] **Ageron** 1991: 12

[13] Այդ ժամանակաշրջանում Աբդ ալ-Կադերի վերահսկողության տակ էր գտնվում Արևմտյան Ալժիրի գրեթե ողջ տարածքը, բացառությամբ մի քանի ծովափնյա քաղաքների:

[14] **Abou-Khamseen, Manssour** 1983. 58

[15] **Аникин, Вайлов** 2016. 60

Խաղաղության հաստատումը հնարավորություն ընձեռեց նաև շարունակել պայքարը առանձին անհնազանդ շեյխերի և ցեղապետերի ընդվզումների դեմ: Աբդ ալ-Կադերին անհրաժեշտ էր հնազանդեցնել վերջիններիս, քանի որ, ինչպես արդեն ասվել էր, նրանք ոչ միայն թուլացնում էին պետությունը[16], այլ նաև հաճախ անցնում էին ֆրանսիացիների կողմը՝ պառակտելով ազատագրական շարժումը: Այս համատեքստում պետք է արձանագրել, որ Աբդ ալ-Կադերը չէր կարող և իր առջև նպատակ չէր դնում վերացնել ավատատիրական համակարգը, բայց նա վերջ դրեց վերջիններիս ինքնիշխանությանը:

Այդ նպատակով նա իրականացրեց վարչական բարեփոխումներ: Իր վերահսկողության տակ գտնվող տարածքը բաժանվեց մի քանի շրջանների որոնց ղեկավարությունը հանձնվեց իր կողմից նշանակված խալիֆներին: Նրանք ենթարկվում էին միայն կենտրոնական իշխանությանը և պատասխանատու էին իրենց վստահված շրջանների կարգուկանոնի պահպանման և հարկահանության համար: Խալիֆներն ունեին բավական մեծ իշխանություն, նրանք էին ղեկավարում տեղի զինված ուժերը և իրավունք ունեին շեյխերին զրկել ցեղի ղեկավարությունից: Միաժամանակ անցկացվեց նաև դատական մարմինների բարեփոխում[17]:

Աստիճանաբար Աբդ ալ-Կադերն իր իշխանությունը տարածեց գրեթե ողջ Ալժիրի արևելյան շրջանների վրա՝ Մարոկկոյի սահմանից մինչև Ալժիր քաղաք, վերածվելով ֆրանսիացիների ամենավտանգավոր հակառակորդի:

Պետք է անդրադառնալ ևս մեկ կարևոր հանգաման-

---

[16] Կարելի է առանձնացնել 1835 թ. «Դերկավիյա» կրոնական միաբանության շեյխերի ապստամբությունը, որոնք այդ ժամանակ չէին աջակցում ազատագրական պայքարին և թշնամաբար էին վերաբերվում «Կադիրիյա» միաբանությանը, որին պատկանում էր Աբդ ալ-Կադերը:

[17] **Abou-Khamseen, Manssour** 1983 215

քի. ֆրանսիական գաղութային իշխանությունները ստիպված էին պայքարել ոչ միայն Աբդ ալ-Կադերի դեմ այլ նաև Ալժիրի արևմուտքում գտնվող Կոնստանտինայի բեյլիքության բեյ Ահմեդի դեմ, ով չճանաչելով Ֆրանսիայի գերիշխանությունը և չցանկանալով հնազանդվել, անդադար հարձակումներ էր իրականացնում ֆրանսիացիների գրաված տարածքների վրա[18]: Եթե համեմատության մեջ դիտարկենք Աբդ ալ-Կադերի և բեյ Ահմեդի հնարավորություններն, ապա ակնհայտ է, որ առաջինի նորաստեղծ պետությունն իր մեջ ներառում էր ավելի մեծ տարածքներ, ուներ ավելի լավ կազմակերպված և զինված բանակ, ինչպես նաև, ինչն առավել կարևոր է, Աբդ ալ-Կադերը վայելում էր Ալժիրի բնակչության գերակշիռ մասի վստահությունը՝ դիտարկելով վերջինիս որպես ազգային-ազատագրական շարժման միակ ղեկավար:

Այսուամենայնիվ, բեյ Ահմեդը ևս հավակնում էր գլխավորել հակաֆրանիական շարժումը[19], և ի վերջո ինքնավարություն ձեռք բերել, սակայն նա իր նպատակների իրականացման համար հենվում էր ոչ թե ալժիրցիների, այլ Օսմանյան կայսրության աջակցության ու հովանավորության վրա:

Այսպիսով Աբդ ալ-Կադերի պետության ստեղծումը պայմանավորված էր օտարերկրյա նվաճողների դեմ պայքարի անհրաժեշտությամբ: Նրա ողջ արտաքին և ներքին քաղաքականությունը ուղղված էր այդ նպատակին: Միաժամանակ ներքին բարեփոխումները նպատակ ունեին որոշակի թեթևացնել հասարակ բնակչության հոգսերը, ովքեր և կազմում էին ազգային-ազատագրական պայքարի կորիզը, իսկ մյուս կողմից դրանք պետք է ամրապնդեին կենտրոնական իշխանության դիրքերը:

---

[18] **Куропаткин** 1877: 21
[19] **Ланда** 1999: 12

Նորաստեղծ պետության կառավարումը գրեթե ամբողջովին տարբերվում էր օսմանյան վարչակարգի կառավարումից: Վերջինս կախվածության մեջ էր Ալժիրի սահմաններից դուրս գտնվող ղեկավարներից, իսկ սոցիալական հիերարխիան ստորադասում էր տեղաբնիկներին, ետին շարք մղելով, թե՛ վարչական ապարատում, և թե՛ տնտեսական ոլորտում: Իշխանությունների քաղաքականությունը պարտադրված էր օտարերկրյա զինվորների միջոցով, իսկ կառավարման լճացած համակարգն անհնարին էր դարձնում քաղաքական կամ սոցիալական որևիցե առաջընթաց: Աբդ ալ-Կադերն ընդհակառակը, ցանկանում էր կյանքի կոչել իր նվիրվածությունն իսլամին, կառուցելով հասարակություն հիմնված իսլամական սկզբունքների վրա: Աբդ ալ-Կադերի համար չկար տարանջատում կրոնի և պետության միջև և, ինչպես այդ ժամանակաշրջանի մուսուլմանների մեծամասնության համար, իր համար ևս լավ կառավարումը հիմնված էր կրոնի ու դավանանքի ճիշտ ընկալման վրա:

Քարտեզը վերցված է ***Abou-Khamseen, Manssour A.*** *1983: 225. գրքից: Տեղանունների թարգմանությունն իրականացվել է հեղինակի կողմից:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Аникин В., Вайлов А. 2016. Историческая трансфрмация стран Магриба (алжирский вариант), Москва

Куропаткин А. Н. 1877 Алжирия, С.-Петербург

Ланда Р. Г. 1976 Борьба алжирского народа против европейской колонозации (1830-1918), Москва

Ланда Р. 1999, История Алжира XX век, Москва.

Луцкий В. 1965 Новая история арабских стран, Москва.

Ըստ էության «Թյուրքական ընկերությունը» թեև որոշակի տեղ էր հատկացնում քաղաքական համաթյուրքականությանը, սակայն առաջնային ուշադրության կենտրոնում էին գտնվում մշակութային հարցերը: Ընկերությունը և ամսագիրը՝ ի դեմս համաթյուրքական հայացքներով մտավորականների, հիմնականում քարոզում էին մշակութային համաթյուրքականութեանը վերաբերող գաղափարներ՝ այդպիսով փորձելով դրանք տարածել հասարակության մեջ և ինստիտուցիոնալացնել հասարակական ու պետական կառույցներում: Մյուս կողմից նկատելի է, որ քաղաքական հարցերին վերաբերող խնդիրներում հետևում էին օսմանականության քաղաքականությանը: Ամենայն հավանականությամբ սա կապված էր այն հանգամանքի հետ, որ այս շրջանում երիտթուրքերը դեռևս ամբողջությամբ չէին կողմնորոշվել դեպի պանթյուրքիզմը, և երկրորդ՝ թյուրքականության գաղափարները այնքան էլ տարածված չէին հասարակության մեջ, ինչ-որ տեղ դրանք դեռևս անհասկանալի էին, անգամ ղեկավարող շրջանակների համար, այսինքն՝ համաթյուրքականությունը հիմնականում մնում էր մտավորական շարժում: Նման պայմաններում մշակութային համաթյուրքականության քարոզումն առաջին հերթին կայսրության թուրքականացման նպատակ էր հետապնդում:

«Երիտասարդ գրիչներ» շարժումը և համաթյուրքականության գաղափարները

Քննարկվող ժամանակաշրջանում սկիզբ առավ «Երիտասարդ գրիչներ» շարժումը (Genç Kalemler Hareketi), և Սալոնիկում սկսվեց հրատարակվել նույնանուն ամսագիրը: Ինչպես շարժումը, այնպես էլ ամսագիրը գտնվում էր «Միություն և առաջադիմություն» կուսակցության հովանու ներքո: Ամսագիրն առաջին անգամ հրատարակվել է երիտթուրքական կուսակցության ֆինանսական աջակցությամբ[19], միաժամանակ այն երիտթուրքերի երկրորդ կարևոր օրգանն էր հանդիսանում: «Երիտասարդ գրիչներ» ամսագիրը սկսել են հրատարակել հայտնի պանթյուրքիստ Զիյա Գյոքալփը և ընկերները 1911 թ.: Ամսագրի էջերում հիմնականում քննարկվում էին թուրքերեն լեզվի պարզեցման և թուրքական ազգայնականության վերաբերյալ հարցեր: «Երիտասարդ գրիչներ» ամսագիրն առաջ էր քաշում հիմնականում մշակութային համաթյուրքականության գաղափարը: Այդու, «երիտասարդ գրիչները» հանդիսանում էին թյուրքականության մի նոր հոսանք, որոնք ևս առաջնային էին համարում լեզվական բարեփոխումը: Նրանց հիմնական նպատակն էր պարզեցնել գրավոր լեզուն և մոտեցնել ժողովրդական լեզվին: Շարժմանն աջակցում էին ժամանակի մտածողներից Ալի Ջանիփը, որն ամսագրի հրատարակիչներից էր, պանթյուրքիստներ Օմեր Սեյֆեթթինը և Զիյա Գյոքալփը: Այս երեք անհատներն էլ գրել են ամսագրում հրատարակված հոդվածների մեծ մասը[20]:

---

[19] **Karpat H. Kemal** 2001· 376

[20] Այս ժամանակաշրջանում թուրքերենի պարզեցման հարցը հետաքրքրում էր թուրք մտավորականության լայն շրջանակներին: Կազանի թաթար մտավորականներից Այազ Իսհաքին (1878-1964 թթ.) 1909 թ. «Sırat-ı Müstakım» ամսագրում հրատարակում է «Լեզվի խնդիրը» («Lısan Meselesı») և «Լեզվի խնդրի վերաբերյալ» («Lısan Meselesıne Daır»)

Ամսագրի առաջին համարում Օ. Սեյֆեթթինը հրատարակեց «Նոր բառ» («Yeni Lisan») խորագրով հոդվածը, որտեղ հեղինակն առաջ էր քաշում ազգային լեզու ու ազգային գրականություն հասկացությունները[21]: Այս հոդվածով սկիզբ առավ «Նոր բառ» շարժումը, որի հիմնական նպատակը թուրքերենի պարզեցումն էր[22]: Շուտով Զիա Գյոքալփը և նրա ընկերները՝ Աթա Գյունդուզ, Աբդուլլա Ջեվդեթ, Հուսեին Ջահիդ (Թանինի խմբագիրն էր) և Հալիդե Էդիփ, հիմնադրեցին ազդեցիկ, ծայրահեղ ազգայնական «Նոր բառ» («Yeni Lisan») ընկերությունը: Վերջինի նպատակներն էին՝ 1. թյուրքական կենցաղից մաքրել արտաքին ու վնասակար ազդեցությունները, վերածնել հին թյուրքական (ասիական) մշակույթը և թուրքերեն լեզուն մաքրել պարսկական ու արաբական բառերից (այստեղից էլ եկել է կազմակերպության անունը - «Նոր բառ»): 2. Գիտականորեն հիմնավորել բոլոր «թուրանցիների»՝ այն է, թյուրքեր, մոնղոլներ, թունգուզներ, ֆիննո-ույղուրներ և այլ ուրալ-ալթյան ժողովուրդների, մեկ էթնիկական ու մշակութային համայնք լինելու հանգամանքը[23]:

«Երիտասարդ գրիչներ» ամսագրում թյուրքականության, թուրանականության և ազգայնականության վերաբերյալ հոդվածներ ու նյութեր է հրատարակել Զիյա Գյոքալփը: Առավել հայտնի է այս ամսագրի էջերում հրատարակված Զիյա Գյոքալփի «Թուրան» («Turan») բանաստեղծությունը[24], որը համաթյուրքականության ու համաթուրա-

---

խորագրով հոդվածները, որոնք երկուսն էլ վերաբերում են թուրքերենի պարզեցման հարցերին: **Demir Ahmet** 2016: 11

[21] **Gazioğlu Can Duran** 2018: 282

[22] **Demir Ahmet** 2016: 9

[23] **Zenkovsky A. Serge** 1960: 107

[24] «Թուրան» բանաստեղծությունն առաջին անգամ հրատարակվել է «Ռումելի» թերթում «Դեմիրթաշ» ստորագրությամբ: Հետագայում հրատարակվել է «Երիտասարդ գրիչներ» ամսագրում «Թեվֆիք Սեդաթ»

նականության ոգով գրված ամենահայտնի ստեղծագործություններից է և մեծ ազդեցություն է թողել թուրք երիտասարդության վրա: Այստեղ հեղինակը ուղղակիորեն նշում է, որ «թուրքերի հայրենիքը Թուրքիան չէ, ոչ էլ Թուրքեստանը, այլև հավերժական ու հսկայական երկիր Թուրանը»[25]: «Երիտասարդ գրիչներ» ամսագրում Գյոքալփի հրատարակումներից նշանակալից էր «Նոր կյանք և նոր արժեքներ» («Yeni Hayat ve Yeni Kıymetler», 1910 թ.) վերնագրով հոդվածը[26]: Հեղինակը խոսում է 1908 թ. հեղափոխության արդյունքում Օսմանյան կայսրությունում ձևավորված նոր կյանքի մասին, որին համապատասխան պետք է ստեղծվեն նոր արժեքներ: Ըստ նրա օսմանյան հասարակությունը նոր կյանք ու մի նոր քաղաքակրթություն է հրապարակ բերում, որը թուրքերինն է[27]:

Հարկ է նշել, որ ամսագրի էջերում որոշակի տեղ էր հատկացվում Օսմանյան կայսրության ներքին ու ատաքին խնդիրների քննարկմանը: Սակայն, ի տարբերություն «Թյուրքական ընկերության», այստեղ արտաքին թյուրքերի մասին ոչինչ չէր գրվում: «Երիտասարդ գրիչներ» ամսագիրը նշանակալի դեր խաղաց թուրքական ազգայնականության գաղափարների ձևավորման գործում: Փաստորեն ամսագրի շուրջ հավաքվել և հոդվածներ էին գրում հայտնի պանթյուրքիստներ Մեհմեթ Էմինը, Յուսուֆ Աքչուրան, Օմեր Սեյֆեթթինը, Ահմեթ Հիքմեթը և այլք: Այս ճանապարհով նրանք ձգտում էին համաթյուրքականության գաղափարները տարածել հասարակության շրջանում:

ստորագրությամբ, իսկ 1912 թ. արտատպվել է «Ոսկե նվեր» (Altın Armağan) ժողովածուի մեջ «Զիյա» ստորագրությամբ: **Гасанова** 1966 128

[25] **Heyd Uriel** 1950: 126

[26] **Gökalp Ziya** 1982 40-46.

[27] **Özyurt Cevat** 2005. 181-182, **Parla Taha** 1985: 57-59

Բալկանյան պատերազմների ընթացքում «Երիտասարդ գրիչներ» շարժման անդամները հեռացան Սալոնիկից և հիմնականում հաստատվեցին Ստամբուլում՝ անդամակցելով «Թյուրքական հայրենիք» և «Թյուրքական օջախներ» ընկերություններին:

Համաթյուրքականության գաղափարների ինստիտուցիոնալացումը «Թյուրքական հայրենիք» ընկերության ու ամսագրի միջոցով

Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող գործընթացներին, ինչպես նաև հայտնի պանթյուրքիստների գործունեությանը հետևում էին եվրոպական տարբեր երկրներում սովորող երիտասարդները: Հենց նրանց կողմից էլ 1910 թ. Ժնևում ստեղծված ազգայնական խմբակը հայտնի դարձավ «Թյուրքական հայրենիք» («Türk Yurdu») անունով: Մեկ տարի անց Լոնդոնում ևս հիմնադրվեց նմանատիպ խմբակ, որից հետո նման խմբակներ բացվեցին Փարիզում, Վենետիկում, Լոզանում և եվրոպական այլ քաղաքներում: Այդ խմբակներն ունեին հարյուրավոր անդամներ և լայն գործունեություն էին ծավալում, սակայն առավել հիշարժան են այս խմբակների կազմակերպած կոնֆերանսները: Նման կոնֆերանսներից առաջինը կազմակերպվեց Լոզանում 1912 թ. ապրիլի 1-2-ին՝ «Թյուրքական ընկերների ընկերություն» խորագրով: Երկրորդ կոնֆերանսը տեղի ունեցավ 1913 թ. մարտի 15-18-ը[28]: Կոնֆերանսներում քննարկվեցին կրթության, թուրքերենին, թյուրքական ժողովուրդների անցյալին վերաբերող հարցեր: 1913 թ. վերջին Փարիզում հիմնադրվեց ևս մեկ խմբակ դարձյալ «Թյուրքական հայրենիք» անունով: Վերջինիս նպատակն էր Փարիզի գրադարաններից ու արխիվներից թյուրքագիտության վերաբերյալ հավաքել նյութեր ու հրատարակություններ և կազմել քար-

[28] **Sarınay Yusuf** 1994: 107-111

տարան: Հարկ է նշել, որ այս խմբակներին անդամակցած երիտասարդների շրջանում լայնորեն քարոզվում էին համաթյուրքականության, թյուրքական աշխարհի, Թուրանի և նմանատիպ գաղափարներ: Պատահական չէր, որ այս երիտասարդներից շատերը՝ Յուսուֆ Քեմալ, Մեհմեթ Էսաթ, Շյուքրյու Սարաջօղլու Ջեննեթ և այլք, հետագայում ակտիվ գործունեություն ծավալեցին Թուրքիայում:

Վերոնշյալ խմբակները սկիզբ և հիմք հանդիսացան 1911 թ. օգոստոսի 31-ին Ստամբուլում «Թյուրքական հայրենիք» անունով ընկերության հիմնադրման համար: Նման ընկերության հիմնադրման միտքը պատկանում էր Մեհմեթ Էմին Յուրդաքուլին, ում հետ ընկերության համահիմնադիրներն են հանդիսանում Ահմեթ Աղաօղլուն, Ալի Հյուսեին-զադեն, Աքիլ Մուհթարը (Özden) և Յուսուֆ Աքչուրան: Հետագայում ընկերությանն է միանում նաև Զիյա Գյոքալփը: Ընկերության նպատակն էր բարձրացնել թյուրքերի մշակութային մակարդակը, սակայն կարևոր էր նաև հիմքեր ստեղծել ազգայնականության և համաթյուրքականության գաղափարների տարածման համար, ինչը նրա նախորդ «Թյուրքական ընկերությունը» չկարողացավ իրականացնել: Սակայն այս ընկերությանը ևս վիճակված չէր կյանքի կոչել վերոնշյալը, քանզի մի քանի ամիս անց այն դադարեց գոյություն ունենալուց, և նրա անդամները միացան հիմնականում «Թյուրքական օջախներ» կազմակերպությանը: Հարկ է նշել, որ ընկերության մնայուն ներդրումը եղավ համանուն ամսագրի ստեղծումը:

«Թյուրքական հայրենիք» ընկերության նպատակների, գաղափարների և ընդհանրապես համաթյուրքականության գաղափարախոսության համակարգման և տարածման համար կարևորագույն դեր է խաղացել «Թյուրքական հայրենիք» խորագրով ամսագիրը: Կարելի է ասել, որ «Թյուրքական հայրենիք» կազմակերպությունը վերածվում է նույնա-

նուն ամսագրի: Այն սկսել է հրատարակվել Ստամբուլում 1911 թ. և սկզբնական շրջանում հանդիսանում էր «Թյուրքական հայրենիք» ընկերության օրգանը: 1912 թ. այս ամսագիրը հանդիսանում է Ստամբուլյան ազգայնական ընկերության օրգանը: Խորհրդային հետազոտող Է. Հասանովայի կարծիքով այն ավելի ուշ վերածվում է «Միություն և առաջադիմություն» կուսակցության «Թյուրքական օջախների» գաղտագիտական-քարոզչական ապարատի[29]: Պանթյուրքիստների համար «Թյուրքական հայրենիք» ամսագիրը հանդիսանում էր գլխավոր հարթակ իրենց գաղափարները ներկայացնելու և քարոզելու համար և ըստ էության ստվերում էր պանթյուրքական ուղղվածությամբ մյուս պարբերականներին[30]: Ինչպես նշում է իսրայելացի հետազոտող Ջ. Լանդաուն՝ ամսագիրը, որը սկսեց հրատարակվել 1911 թ. վերջին (իր «Դեպի ժողովուրդ» հավելվածի հետ) Օսմանյան կայսրությունում մի քանի տարի եղել է պանթյուրքիզմի ամենակարևոր օրգանը[31]:

Նման ամսագրի ստեղծման նախաձեռնությունը պատկանում էր Յուսուֆ Աքչուրային, Մեհմեթ Էմինին, Ահմեթ Հիքմեթին, Ահմեթ Աղաօղլուն, Ալի Հյուսեինզադեին և դոկտոր Աքիլ Մուհթարին: Բոլոր նշվածները կազմում էին խմբագրական խորհուրդը: Երբ 1912 թ. Ահմեթ Հիքմեթը նշանակվեց Բուդապեշտում դեսպան, նրան փոխարինեց Զիյա Գյոքալփը: Ամսագրի հրատարակման թույլտվությունը ձևակերպվել էր Մեհմեթ Էմինի անունով, սակայն 1911 թ. նա

---

[29] **Гасанова** 1966: 60

[30] Այս շրջանում Ստամբուլում պանթյուրքական ուղղվածությամբ հրատարակվում էր «Մեծ զգացմունք» («Büyük Duygu») շաբաթաթերթը: 1913 թ., հայտնի էին նաև «Թյուրքական նահանգ» («Türk İli»), «Թուրան» («Turan») և «Թյուրքական լեզու» («Türk Dili») թերթերը, ընդ որում վերջինը հրատարակվում էր Մակեդոնիայում և Ցարական Ռուսաստանում: Տե՛ս **Landau** 1995: 43-44

[31] **Landau** 1981: 40

նշանակվում է Էրզրումի վալի, և ամսագրի ղեկավարման գործը դրվում է Յ. Աքչուրայի վրա[32]: Վերջինս ամսագիրը խմբագրում է մինչև 1917 թ.[33]: Ըստ ֆրանսիացի պատմաբան Ֆ. Գեորգեոնի, ամսագրի նախապատրաստական աշխատանքներին մասնակցել է նաև երիտթուրքական առաջնորդներից Էնվեր փաշան, ով ամսագրին նյութական ու բարոյական աջակցություն է ցույց տվել՝ այն կապելով «Միություն և առաջադիմություն» կուսակցության հետ[34]: Նշենք, որ սկզբնական ժամանակաշրջանում «Թյուրքական հայրենիք» ամսագիրը որոշակի հեռավորություն էր պահում «Միություն և առաջադիմություն» կուսակցությունից, որը կապված էր հիմնականում քաղաքական իրադրության հետ, սակայն հետագայում կուսակցության հետ հարաբերություններն ավելի են սերտանում, մասնավորապես, երբ երիտթուրքերը որդեգրում են համաթյուրքականության քաղաքականությունը: Երիտթուրքական կուսակցության հետ կապերն ամրապնդելով՝ ամսագրում հրատարակված հոդվածներում պաշտպանվում է բոլոր թյուրքերի քաղաքական միավորման հարցը[35]: Փաստորեն ամսագիրը թյուրքական ազգայնականության, պանթյուրքիզմի գաղափարախոսության ձևավորման և տարածման համար ամենակարևոր դերն է խաղացել: Ըստ էության այն կարևոր դեր խաղաց նաև Թուրքիայում համաթյուրքականության գաղափարների ինստիտուցիոնալացման ուղղությամբ: Այդու՝ ամսագիրն իր հիմնադրման պահից որդեգրել էր համաթյուրքականության ու թյուրքականության գաղափարախոսությունը:

---

[32] **Balkılıç Özgür** 2010: 128
[33] **Temir Ahmet** 1987: 41
[34] **Georgeon François** 1986: 59
[35] **Balkılıç Özgür** 2010: 131

Ամսագրի առաջին համարի հրատարակությունը հովանավորել է Օրենբուրգից Մահմուդ բեյ Հասանովը[36]: «Թյուրքական հայրենիք» ամսագիրը դրամական աջակցություն էր ստանում «Միություն և առաջադիմություն» կուսակցությունից[37]: «Թյուրքական հայրենիք» ամսագիրը լույս էր տեսնում ամիսը երկու անգամ, հրատարակում էր «Թանին» հրատարակչությունը: «Թյուրքական հայրենիք» ամսագրի էջերում քննարկվում էին տարբեր խնդիրներ, ինչպես քաղաքական, այնպես էլ մշակութային բնույթի:

«Թյուրքական հայրենիք» ամսագրի նպատակն այսպես էր ձևակերպվում՝ «ծառայել թյուրքականությանը, ցանկանում ենք գործել ի շահ թյուրքերի: Հիմա սա է մեր մտադրությունը: Նպատակին հասնելու համար, որ ճանապարհներով էլ քայլենք, սակայն մեր ամսագրի բովանդակությունը նշելուց կգտնենք մեր ուսումնասիրությունների շրջանակը: Թանրը մեզ օգնական»[38]: 1911 թ. տեղի ունեցած ժողովի ժամանակ հաստատվեց ամսագրի հրատարակման քաղաքականությունը, որը Յուսուֆ Աքչուրան ներկայացնում է յոթ ուղղություններով. «հնարավորության սահմաններում նպաստել թյուրքական ցեղի շրջանում միմյանց հասկանալուն և մեկ ոճով գրելուն, այդ նպատակի համար պետք է պարզեցնել լեզուն և մեծամասնության համար օգտակար հարցեր ընտրել: Բոլոր թյուրքերի համար մեկ միասնական իդեալ մշակել: Ճանաչել թյուրքերին, նպաստել նրանց տնտեսական ու բարոյական զարգացմանը, ավելի մեծ տեղ հատկացնել գիտության զարգացմանը, իսկ քաղաքականությունը կգա այդ ամենի հետևից: Թյուրքերին միմյանց հետ ծանոթացնելու համար աշխատել ստեղծել միասնական գրականություն և ներկայացնել թյուրքական աշխարհի

---

[36] **Sarınay Yusuf** 1994. 113
[37] **Гасанова** 1966: 61
[38] **Üstel Füsun** 2004 43

բոլոր կողմերում ապրող եղբայրների ուրախությունը կամ վիշտը: Օսմանյան պետության ներքին քաղաքականությունից խոսելուց բացի ոչ մի քաղաքական կուսակցության չպաշտպանել, այլ փորձել կազմակերպել թյուրքականությունը, թյուրքական տարրերի քաղաքական ու տնտեսական շահերի պաշտպանությունը: Օսմանյան թուրքերի շրջանում զարգացնել ու ամրապնդել ազգային ոգին, պայքարել իդեալների բացակայությունից ծնված ծուլության ու հոռետեսության դեմ և ձգտել փրկել այս ազգին Արևմուտքի վախից, որն առաջացել է հենվելու տեղ չունենալուց: Պետությունների միջև քաղաքականության հիմնական գաղափարը թյուրքական աշխարհի շահերը պաշտպանելն է»[39]:

Ամսագրի կարգախոսն էր «նա աշխատում է ի շահ թուրքերի» («Türklerin Faıdesine Çalışır») և այս մասին խոսվում էր առաջին համարին նվիրված ներածությունում: Ամսագիրն ուներ 19 բաժին՝ գրականություն, քաղաքականություն, տնտեսություն, պատմություն և հնագիտություն, կրթություն և դաստիարակություն, տրամաբանություն, լեզվաբանություն, մեր լեզուն, ճանապարհորդություն, քննադատություն և մատենագիտություն, աշխարհագրություն և ազգագրություն, ճարտարապետություն, թյուրքական աշխարհ, թյուրքիզմի ժամանակագրությունը, սեփական թղթակիցների կողմից, նկարազարդումներ և քարտեզներ, կարճ հաղորդագրություն, մամուլ, նամակներ և պատասխաններ: 1913 թ. մտցվեց «քաղաքականություն և սոցիոլոգիա» բաժինը, որին ամենամեծ տեղն էր հատկացվում: Ամսագրի լեզուն շատ մոտ էր թուրքական ժողովրդական լեզվին, նպատակն էր որպեսզի հնարավորինս շատ մարդիկ կարդան այն: Ամսագրում հոդվածներ էին հրատարակվում ամենօրյա քաղաքականության, կրթության արդիականացման, ազգային տնտեսության, լեզվական բարեփոխումների,

[39] **Akçura Yusuf** 1981: 234-235

կանանց խնդիրների վերաբերյալ: Նշենք, որ «Թյուրքական հայրենիք» ամսագրի էջերում քննարկվում էին նաև օսմանիզմի, պանիսլամիզմի ու թյուրքիզմի քաղաքական ծրագրերը: Սակայն քաղաքական իրավիճակը ակնհայտորեն ցույց էր տալիս, որ օսմանիզմի և պանիսլամիզմի քաղաքականությունները ձախողվել են, հետևաբար պանթյուրքիզմն էր ամենաարդյունավետ քաղաքական ծրագիրը, որը նաև ձևավորվող ազգայնականության հիմքն էր: Յուրահատուկ էր մոտեցումը իսլամի նկատմամբ. այն դիտարկվում էր թյուրքական ինքնության կարևոր հիմքերից, և ազգայնականացման համատեքստում իսլամը պետք է վերածվեր թյուրքերի համար ազգային կրոնի[40]: Հարկ է նշել, որ ամսագրի էջերում քննարկվում էր մշակութային և քաղաքական պանթյուրքիզմի խնդիրները: Առաջինը ներկայացնում ու պաշտպանում էր Զիյա Գյոքալփը, իսկ երկրորդը՝ Յուսուֆ Աքչուրան: Գյոքալփը կողմնակից էր օսմանյան թուրքերի շրջանում վեր հանել ու ամրապնդել էթնիկական-մշակութային ինքնության տարրերը, իսկ Աքչուրայի կարծիքով պետք է հասնել նրան, որ աշխարհի բոլոր թյուրքերն ունենան ընդհանուր ինքնություն և կարողանան քաղաքականապես համագործակցել[41]: «Թյուրքական հայրենիք» ամսագիրը բնականաբար բացահայտ չէր պաշտպանում քաղաքական համաթյուրքականության ծրագիրը, սակայն ավելի շուտ փորձում էր ամրապնդել օսմանյան թուրքերի և արյունակից թյուրքական ժողովուրդների միջև մշակութային հարաբերությունները[42]:

«Թյուրքական հայրենիք» ամսագրում հոդվածներ էին հրատարակում ժամանակի հայտնի պանթյուրքիստները և թուրքական ազգայնականության կողմնակից մտավորա-

---

[40] **Balkılıç Özgür** 2010. 134
[41] **Karpat H. Kemal** 2001: 377
[42] **Նույն տեղում**, 377:

կանները, ինչպիսիք էին Մեհմեթ Էմինը, Մեհմեթ Ֆուադ Քյոփրյուլյուզադեն, Ահմեթ Աղաօղլուն, Ալի Հյուսեինզադեն, Զիյա Գյոքալփը, Օմեր Սեյֆեթթինը, Համդուլլահ Սուփհին, Հալիդե Էդիփը, Աքա Գյունդյուզը, Ջելալ Սահիրը և այլք[43]: Նրանք հիմնականում հոդվածներ էին գրում թյուրքական լեզվի, գրականության, պատմության, ազգագրության, կրթության, սոցիալական կյանքի, աշխարհագրության, ավանդույթների և այլ թեմաների վերաբերյալ, ինչպես նաև հատուկ բաժին էր առանձնացված, որտեղ անդրադառնում էին թյուրքական աշխարհում հայտնի դեմքերի, մասնավորապես պանթյուրքիստների կենսագրություններին[44]: Փաստորեն «Թյուրքական հայրենիք» ամսագրի կարևոր խնդիրներից էր, որ թյուրքերը հասնեն ազգային գիտակցության և առայժմ մշակութային միասնության: Բացի այդ, թյուրքականության գաղափարների ինստիտուցիոնալացմանը զուգահեռ ձևավորվում էին ազգայնական, նաև ազգայնամոլական գաղափարները, որոնք արդեն ամբողջովին արտահայտվում են քեմալական շարժման շրջանում:

Հասարակության լայն շրջանակների ընթերցանության համար էր նախատեսված «Թյուրքական հայրենիք» ամսագրի գրական հավելվածը՝ «Դեպի ժողովուրդ» («Halka Doğru») խորագրով: Այն ևս մասամբ հավատարիմ էր պանթյուրքական գաղափարախոսությանը և խմբագրվում էր պանթյուրքական շրջանակների հետ մտերիմ կապեր ունեցող Ջելալ Սահիրի կողմից[45]: «Դեպի ժողովուրդ»-ը լույս էր տեսնում Ստամբուլում 1913 թ. ապրիլի 11-ից: Մի քանի օր անց այն փակվեց, և 1914 թ. ապրիլից Ջելալ Սահիրը սկսեց խմբագրել «Թյուրքական հայրենիք» ամսագրի հավելված հանդիսացող մեկ այլ շաբաթաթերթ՝ «Թյուրքերեն բառ»

[43] **Üstel Füsun** 2004: 46.
[44] **Sarınay Yusuf** 1994. 115
[45] **Landau** 1995. 44, **Sarınay Yusuf** 1994: 199

(Türk Sözü) խորագրով, որը լույս էր տեսնում Ստամբուլում 1914 թ. ապրիլի 13-ից: Կարգախոսն էր «գնալ դեպի ժողովուրդը և աշխատել ժողովրդի համար» («Halka doğru gitmek, halka için çalışmak»)[46]: Հրատարակությանը տրվող նյութերի մեջ հատուկ ուշադրություն էին դարձնում այնպիսիներին, որոնք վերաբերում էին «թյուրքական աշխարհին» և գրված էին համաթյուրքականության ոգով: Ակնհայտորեն, թեև փոխվում է շաբաթաթերթի անունը, սակայն նրա նպատակները շարունակում են մնալ նույնը՝ այն է, համաթյուրքականության գաղափարները հնարավորինս տարածել ժողովրդի շրջանում: Շաբաթաթերթը հիմնելով խմբագիրները, մասնավորապես Յ. Աքչուրան, իրենց առջև դրել էին հետևյալ նպատակը՝ ապահովել մաքսիմալ ընթերցանություն: Բացի այդ նրանք փորձում էին թյուրքական ռասայի շրջանակներում ստեղծել ընդհանուր իդեալ, որն ընդունելի կլիներ բոլոր թյուրքերի համար: Նպատակներից էր թյուրքական տարբեր ժողովուրդներին ծանոթացնել միմյանց հետ, ձևավորել սեր ու հարգանք միմյանց նկատմամբ, ներկայացնել ընդհանուր շահերը, ձգտել առաջընթացի, օսմանյան թուրքերի շրջանում ամրապնդել թուրքական ազգային ոգին, արտաքին քաղաքականության մեջ պաշտպանել թյուրքական ժողովուրդների շահերը: Յ. Աքչուրան իր պանթյուրքիզմի տեսլականով ներկայացնում էր թյուրքական աշխարհը որպես մեկ անբաժանելի միասնություն՝ ակնհայտորեն երկու խորհրդանիշերով՝ մշակութային կապերով (լեզու, պատմություն, ավանդույթներ) և նյութական կապերով (արյուն, ռասա)[47]: «Թյուրք» (Türk) հասկացության տակ Աքչուրան հասկանում է թյուրքական ծագում ունեցողներին, այդ թվում թաթարներին, ազերիներին, ղրղզներին, յակուտնե-

[46] **Landau** 1995: 44
[47] **Akçura Yusuf** 1978: 23-26

րին և այլն[48]: Նրանց բոլորի համար Աքչուրան օգտագործում է «ազգ» (millet) հասկացությունը: «Թյուրքական հայրենիք»-ում հրատարակված Աքչուրայի հոդվածներում մի կողմից բարձրաձայնվում էին արտաքին թյուրքերի խնդիրները և հույսերը, իսկ մյուս կողմից շարունակվում էր պայքարը օսմանիզմի և պանիսլամիզմի գաղափարախոսությունների վերածնման փորձերի դեմ: Կարող ենք եզրակացնել, որ պանթյուրքիզմի գաղափարախոսության ձևավորման և տարածման գործում Աքչուրայի կարևոր ներդրումն է շարժման քաղաքական դերի բարձրացումը և ընդգծումը, թեև միաժամանակ քարոզվում էր նաև մշակութային ասպեկտը: Այդու՝ «Թյուրքական հայրենիք» ամսագիրը համաթյուրքականության գաղափարների տարածման, համակարգման ու ինստիտուցիոնալացման ուղղությամբ զգալի աշխատանք կատարեց, որի արդյունքում այդ գաղափարները տարածվեցին հասարակության մեջ, իսկ ամսագիրն իր մնայուն տեղն ունի մինչ օրս:

«Թյուրքական օջախներ» կազմակերպությունը և համաթյուրքականության գաղափարախոսությունը

Համաթյուրքականության գաղափարախոսության տարածման, ինչպես նաև ինստիտուցիոնալացման առումով մեծ դեր կատարեց «Թյուրքական օջախներ» (Türk Ocaklar) կազմակերպությունը: Նման կազմակերպության հիմնադրման նախաձեռնությունը պատկանում է ռազմաբժշկական ուսումնարանի մոտ 190 ուսանողներին: Սկզբնական շրջանում գաղտնի հանդիպումները կազմակերպվում էին ուսումնարանում, սակայն, երբ ղեկավարության մոտ կասկածներ առաջացան, նրանք հանդիպումները շարունակեցին Ստամբուլի ասիական մասում գտնվող Քարաջաահմեթ գերեզմա-

[48] **Նույն տեղում,** 33-34:

նատանը (Karacaahmet Cemetery)[49]: «Թյուրքական օջախներ» կազմակերպությունը փաստացի հիմնադրվել է 1911 թ. Հունիսի 20-ին, սակայն հիմնադրման պաշտոնական ամսաթիվն է 1912 թ. մարտի 25-ը: Շուտով կազմակերպությանը միանալու հրավեր են ստանում ժամանակի հայտնի մտածողներից Մեհմեթ Էմին Յուրդաքուլը, Ահմեթ Ֆերիթը, Ահմեթ Աղաօղլուն, Ֆուաթ Սաբիթը, Յուսուֆ Աքչուրան և Մեհմեթ Ալի Թևֆիքը: Հետագայում կազմակերպությանը միացան նաև Զիյա Գյոքալփը, Հալիդե Էդիփը, Ֆուադ Քյոփրյուլյուն, ինչպես նաև Թուրքիայի Հանրապետության երկրորդ նախագահ Իսմեթ Ինյոնյուն (վերջինը անդամակցել է 1917 թ.): Այս անհատները սկսեցին ուղղորդել կազմակերպության գործունեությունը, արդյունքում շեշտը դարձյալ դրվեց պանթյուրքական հռետորաբանության վրա: Բացի այդ, նրանք սկսեցին վերակառուցել կազմակերպության կառուցվածքը և ուղենշեցին նրա գործունեության հիմնական բնագավառները՝ առաջնային համարելով ողջ երկրի տարածքում մասնաճյուղերի բացումը: «Թյուրքական օջախներ» ընկերության հիմնադիր կազմն այսպիսին էր. նախագահ՝ Ահմեթ Ֆերիթ (Թեք), փոխնախագահ՝ Յուսուֆ Աքչուրա, քարտուղար՝ Մեհմեթ Ալի Թեվֆիք, գանձապահ՝ դոկտոր Ֆուաթ Սաբիթ[50]: 1913 թ. ընկերության նախագահ ընտրվեց Համդուլլահ Սուփհի Թանրիօվերը (Hamdullah Suphi Tanrıover, 1885-1966): Նա ղեկավարեց ընկերությունը մինչև փակվելը՝ 1931 թ., հետագայում նույն դերը ստանձնեց, երբ 1949 թ. վերաբացվեց «Թյուրքական օջախները»: Սուփհին եղել է արդիականացված թյուրքականության կողմնակից և, ինչպես Գյոքալփը, հավատում էր, որ բոլոր թյուրքերի համար առանցքային նշանակություն ունի մշակույթը: Նրա մշա-

[49] **Üstel Füsun** 2004 52
[50] **Tunaya Tarik Zafer** 1988 432

կույթի կոնցեպցիան հիմնված էր էթնիկ պատկանելիության ու աշխարհիկության սկզբունքների վրա:

«Թյուրքական օջախների» գործունեությունը խրախուսվում էր երիտթուրքական առաջնորդների կողմից, ովքեր ըմբռնել էին կազմակերպության ներուժը և նպատակադրվել էին այն ծառայեցնել իրենց շահերին: Ինչպես նշում է հայտնի օսմանագետ Է. Զյուրխերը՝ 1911 թ. սկսած պանթյուրքիստ ազգայնականներն ունեին իրենց սեփական կազմակերպությունը՝ «Թյուրքական օջախները», որը սերտ կապեր ուներ «Միություն և առաջադիմություն» կուսակցության հետ[51]: «Միություն և առաջադիմություն» կոմիտեի անդամները, հատկապես Էնվերը, որոշեցին «Թյուրքական օջախների» դերը բարձրացնել կազմակերպչական առումով և այն օգտագործել քաղաքականապես[52]: Այս նպատակով ավելի ուշ «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը փորձեց ամբողջությամբ իր վերահսկողության տակ վերցնել ընկերությունը, ուստի առաջադրեց Զիյա Գյոքալփի թեկնածությունը «Թյուրքական օջախների» նախագահի պաշտոնում, սակայն Գյոքալփը ձախողվեց[53]: Անշուշտ, սա չի նշանակում, որ այս կազմակերպությունը չէր համագործակցում երիտթուրքերի հետ: «Թյուրքական օջախներ» ընկերությունը սկզբնական շրջանում կապեր ուներ տարբեր քաղաքական ուժերի, այդ թվում երիտթուրքական կուսակցության հետ: «Թյուրքական օջախների» և «Միություն ու առաջադիմություն» կուսակցության հարաբերություններն ավելի սերտացան Բալկանյան պատերազմներից հետո և Առաջին համաշխարհային պատերազմի շրջանում, քանի որ կուսակցությունը որդեգրեց թյուրքականության ու թուրանականու-

[51] **Zürcher** 2010: 216
[52] **Landau** 1995: 41
[53] **Uzer Umut** 2016: 32

թյան գաղափարախոսությունը[54]: Այս կողմից, այդ սերտացմանը նպաստում էր այն, որ կազմակերպության վերնախավը ևս մտերմիկ հարաբերություններ ուներ կուսակցության վերնախավի հետ, նրանք պատերազմի հարցում կիսում էին նույն կարծիքը և գաղափարապես նախապատրաստում էին երիտասարդությանը:

«Թյուրքական օջախներ» կազմակերպության նպատակները ներկայացված են նրա կանոնադրություններում՝ առաջինն ընդունվել է 1912 թ., իսկ երկրորդը՝ 1918 թ.: Առաջին կանոնադրության երկրորդ հոդվածում այսպես է ձևակերպված՝ «ընկերության նպատակն է իսլամին հետևող թյուրքական ժողովուրդների ազգային կրթության ու գիտության զարգացումը, սոցիալական ու տնտեսական մակարդակի բարձրացումը, թյուրքական ռասայի ու լեզվի կատարելագործումը»[55]: Կանոնադրության երրորդ հոդվածում նշված է՝ «ընկերության նպատակին հասնելու համար Թյուրքական օջախներ անունով ակումբներ, բաց դասեր, կոնֆերանսներ պետք է կազմակերպվեն և հրատարակվեն գրքեր, թերթեր, աշխատություններ: Ազգային հարստությունը պաշտպանելու և ընդլայնելու համար ընկերությունը պետք է համագործակցի բոլոր տեսակի արհեստների ու արվեստների գիտակների հետ, նրանց խորհուրդներ ու օգնություն ցույց տա, որպեսզի ծնվեն նոր հարստություններ ու դրանք ապրեն հնարավորինս երկար»[56]: Համեմատության համար նշենք, որ երկրորդ կանոնադրության երկրորդ հոդվածում նշվում է «ընկերության նպատակն է աշխատել թյուրքերի մշակութային միասնության և քաղաքակրթական զարգացման ուղղությամբ: Օջախի գործունեության շրջանակը, ան-

---

[54] **Üstel Füsun** 2004 69-80

[55] **Նույն տեղում**, 100:

[56] **Sarınay Yusuf** 1994. 137-138

շուշտ, Թուրքիան է»[57]: Մեկ այլ հոդված պնդում էր, որ կազմակերպությունը հեռու է կոալակցության քաղաքականությունից: Սակայն այս տեսակետի հետ մենք համաձայն չենք, ճիշտ հակառակը՝ նրա գործունեությունն ուղղորդվում էր երիտթուրքական կուսակցության, այնուհետև՝ քեմալականների կողմից:

Կազմակերպությունը ենթադրում էր, որ առաջադրված նպատակներին պետք է հասնել ժամանակի ընթացքում՝ հիմնադրելով նորանոր մասնաճյուղեր և հավաքագրելով նոր անդամներ, ընդ որում թիրախում էր գտնվում երիտասարդությունը: Կազմակերպությունը հիմնադրում է տարբեր խմբակներ, անցկացնում երեկոյան դասընթացներ, կազմակերպում դասախոսություններ, գրական ու գեղարվեստական երեկոներ, ինչպես նաև հրատարակում էր գրքեր ու թերթեր: Հարկ է նշել, որ «Թյուրքական օջախների» ամենակարևոր գործողություններից էր հանդիսանում տարաբնույթ կոնֆերանսների կազմակերպումը: Այսպես՝ երկրորդ սահմանադրության ընդունումից հետո ընդհուպ մինչև 1918 թ. կազմակերպվեցին 500-ից ավել կոնֆերանսներ: Դրանցում քննարկվում էին կրթության, լեզվի, գրականության, քաղաքական հիշողությունների, ազգի, կանանց, սանիտարական հարցեր, իրավական ու տնտեսական և թյուրքական աշխարհում առկա խնդիրները[58]:

1914 թ. դրութամբ ընկերությունը 16 կենտրոններ ուներ Օսմանյան կայսրությունում, որոնց անդամների ընդհանուր թիվը հասնում էր 3000-ի: 1916 թ. օգոստոսին օջախների թիվը հասնում է 25-ի, իսկ 1918 թ. Ստամբուլում և վիլայեթներում գործում էին 35 օջախներ[59]: Ամենամեծը Ստամբուլի օջախն էր, որի անդամների թիվը հաշվվում էր ավելի

---

[57] **Նույն տեղում**, 138:
[58] **Hekimoğlu Vecihi Fuat Sefa** 2017: 47
[59] **Sarınay Yusuf** 1994. 134

քան 1800[60]: Այս շրջանում, բացի Ստամբուլից կենտրոնական օջախներ կային նաև Ադանայում, Բուրսայում, Իզմիրում, Քոնիայում, Գիրեսունում, Անկարայում, Գազիանթեփեում, Էրզրումում, Քարահիսարում, Բաքվում և այլ վայրերում: Համդուլլահ Սուփհին 1912 թ. հետո օջախներ բացեց նաև Թուրքեստանում և Չինաստանում, որոնք լայն գործունեություն էին ծավալում մինչև փակվելը (Առաջին աշխարհամարտի ավարտին - Ն. Մ.)[61]: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և անգամ զինադադարից հետո ավելանում է ինչպես օջախների, այնպես էլ դրանց անդամների թիվը: Զինադադարի շրջանում Ստամբուլում և դրսում բացվեցին «Թյուրքական օջախների» 28 մասնաճյուղեր, իսկ Ստամբուլի կենտրոնական օջախի անդամների թիվը անցնում էր 2743-ը[62]: 1920-ական թթ. դրությամբ ընկերությունն ուներ մոտ 30000 անդամ[63]:

«Թյուրքական օջախներ» ընկերության հետ սերտորեն կապված էր «Հետախույզ» (İzci) սկաուտական կազմակերպությունը, որը գտնվում էր Էնվերի անձնական հովանու ներքո: Ջ. Լանդաուն իր գրքում ներկայացնում է բրիտանական հետախուզության զեկույցի տվյալները նրանց մասին. «Կազմակերպության անդամները ստանում են ռազմական պատրաստություն, գործնական աշխատանքի համար նրանց տեղավորում են որպես լիազորություններ չունեցող սպաներ: Նրանց կրծքանշանները, որոնց վրա գրված է անունն ու տիտղոսը, մաքուր թուրքական են և իսլամամետ: Ալին ու Մեհմեդը դառնում են Աքսոնքոր և Թիմուրթաշ: «Սպիտակ գայլը», որը ծնունդ է տվել թյուրքական ժողովուրդների առասպելական նախահայր Օղուզին, չնայած իս-

[60] **Landau** 1995: 42
[61] **Sarınay Yusuf** 1994: 134-135
[62] **Tunaya Tarik Zafer** 1988: 435
[63] **Landau** 1995: 42

լամական արգելքին, պատկերվում է «Հետախույզի» խորհրդանիշերի վրա, նրանց առաջնորդում էր գլխավոր հրամանատարը (Başbuğ), շարք են կանգնեցվում տասնապետերի ու հարյուրապետերի կողմից, աղոթում են ոչ թե Ալլահին այլ Թանրըին, բոլոր թուրանցիներին ընդունում են որպես իրենց եղբայրներ և ողջունում են ոչ թե խալիֆ կամ փադիշահ, այլ թյուրքերի հաքան»[64]:

«Թյուրքական օջախներ» ընկերությունը որոշակի ուշադրություն էր դարձնում օսմանիզմի ու իսլամիզմի գաղափարախոսություններին, սակայն հիմնականում զբաղվում էր համաթյուրքականության քարոզչությամբ՝ ի դեմս ընկերության անդամ հայտնի պանթյուրքիստների: Համաթյուրքականության գաղափարների քարոզչությանն ավելի մեծ տեղ տրվեց Բալկանյան պատերազմներից հետո և Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Այս շրջանում «Թյուրքական օջախներում» նկատելի էր Յուսուֆ Աքչուրայի, Հյուսեինզադե Ալիի ու Զիյա Գյոքալփի գաղափարական ազդեցությունը[65]: Նշված շրջանում ընկերությունը մեծ տեղ էր հատկացնում նաև Թուրանի ու պանթուրանիզմի գաղափարներին: Ընկերության շրջանակներում Թուրանի իդեալը ի հայտ եկավ Բալկանյան պատերազմներից հետո, իսկ Զիյա Գյոքալփի «Թուրան» բանաստեղծությունն ամենաընդունելի ստեղծագործությունն էր[66]: Հարկ է նշել, որ ընկերությունը քեմալական շարժման ու հանրապետության կառուցման գործընթացներում ավելի կենտրոնանում է թուրքական ազգային մշակույթի քարոզչության վրա: Այս գաղափարական աշխատանքները կազմակերպությունն իրականացնում էր «Թյուրքական հայրենիք» ամսագրի միջոցով, որը հանդիսանում էր նրա օրգանը: Այս

---

[64] **Landau** 1981 41
[65] **Sarınay Yusuf** 1994. 153-163
[66] **Նույն տեղում**, 181-182:

շրջանում ընկերությանը և նրա ամսագրին հաջողվեց համաթյուրքականությունը վերածել թյուրքականության ազգայնական դոկտրինայի[67]: Մյուս կողմից ամսագրի շրջանակներում շարունակվում էր լեզվական բարեփոխումների քննարկումը, որը ևս կազմակերպության նպատակներից էր:

«Թյուրքական օջախներ» կազմակերպությունը նախապատրաստեց Թուրքիայի Հանրապետության գաղափարական հիմքը, քանզի այս ընկերության շատ անդամներ միացան *ազգային-ազատագրական* (իրականում ազգայնամոլական - Ն. Մ.) շարժմանը[68]: Քեմալական շարժման հաջողությունից հետո «Թյուրքական օջախների» անդամներն սկսեցին աջակցել Մուսթաֆա Քեմալին պետականաշինության գործընթացում, իսկ վերջինս ընկերությունն օգտագործում էր իր բարեփոխումների կատարման անհրաժեշտությունն ու կարևորությունը ցույց տալու համար: Աթաթյուրքը ֆինանսավորում էր ընկերությանը և ցանկանում էր, որ նա հատուկ ուշադրություն դարձնի Թուրքիայի արևելյան շրջաններին: Կարծում ենք սա պայմանավորված էր այն հանգամանքով, որ արևելյան շրջաններում Քեմալը բախվել էր քրդական ապստամբությունների հետ, ուստի անհրաժեշտ էր այդ տարածքներում գաղափարական աշխատանքներ կատարել:

1924 թ. «Թյուրքական օջախների» գրասենյակը տեղափոխվում է Անկարա և այն կառավարության կողմից բնութագրվում է որպես մի կազմակերպություն, որը «աշխատում է ի նպաստ հասարակությանը»[69]: 1920-ական թթ. ընկերությունը ծրագրել էր իր գաղափարները տարածել ամբողջ երկրով, միաժամանակ նրանք լծվել էին ազգայնականության ու քեմալիզմի գաղափարախոսության քա-

[67] **Niyazi Berkes** 1964: 346.
[68] **Sarınay Yusuf** 1994: 222.
[69] **Uzer Umut** 2016: 34.

րոզմանը, ընդ որում, ինչպես երկրի զարգացած, այնպես էլ հետամնաց շրջաններում: Ըստ էության այս շրջանում «Թյուրքական օջախներ» ընկերությունը միահյուսվել էր Հանրապետական-ժողովրդական կուսակցության հետ և ինչ-որ տեղ դարձել էր նրա գաղափարախոսը: Արդեն 1920-ական թթ. վերջին նկատվում է, որ ընկերությունը սահմանափակում է իր գործունեության ոլորտները, որը կապված էր կառավարության գործողությունների հետ: Այսպես՝ 1926 թ. մասնաճյուղերի թիվը 217-ն էր, իսկ անդամներինը՝ 30000: Նոր մասնաճյուղեր բացվում էին հիմնականում պետության արևելյան և հարավարևելյան շրջաններում: 1927 թ. օջախների ընդհանուր թիվը հասնում էր 266-ի և անդամների թիվը՝ 32000-ի, որից հետո այս թվերն այլևս չեն ավելանում, հակառակը, նկատվում է նվազման միտում[70]:

Քեմալականները շուտով սկսեցին ճնշել բացահայտ պանթյուրքական ցանկություններն ու հայտարարությունները, որը Քեմալի կողմից հայտարարվեց որպես պաշտոնական պետական քաղաքականություն: Սակայն, իրականում համաթյուրքականության գաղափարախոսության ինստիտուցիոնալացումը շարունակվում էր, քանզի այդ գաղափարներն ընկած էին քեմալական շատ բարեփոխումների հիմքում: Նման պայմաններում «Թյուրքական օջախները» նույնացվում են քաղաքական վարչակարգի հետ, քանզի նրանք ոչ միայն ընդհանուր գաղափարներով էին առաջնորդվում, այլև նույն կադրերն ունեին, ավելին՝ «Թյուրքական օջախները» շարունակում էին աջակցել կառավարությանը: Խոսքը վերաբերում է «Թուրքական պատմագիտական ընկերությանը», որի նախատիպ հանդիսացող «Թուրքական պատմության ուսումնասիրման կոմիտեն»

[70] **Sarınay Yusuf** 1994. 245

(Türk Tarihini Tetkik Heyeti) հիմնադրվել է 1930 թ. որպես «Թյուրքական օջախների» մի մաս[71]:

1931 թ. Քեմալը որոշեց ընկերությունը փակել[72], Թանրիօվերը թեև միջամտեց փորձելով թույլ չտալ փակել այն, սակայն հաջողություն չունեցավ, ավելին որպես դեսպան ուղարկվեց Բուխարեստ: Ընկերությունը փակվում է 1931 թ., քանզի կառավարության քաղաքականությունը փոխվել էր, և փոխվել էին ներքին քաղաքականության հիմնական խնդիրներն ու գերակայությունները: Ըստ էության ընկերությունը հաջողությամբ կատարեց իր առջև դրված հիմնական խնդիրները: Փաստորեն «Թյուրքական օջախները» մասնակիցը դարձան թուրքական ինքնության քեմալական տարբերակի մշակմանը և, ըստ էության, քեմալականների գաղափարները սկսեցին տարածել ողջ երկրով:

«Թյուրքական օջախներ» ընկերության հենքի վրա ստեղծվեց «Ժողովրդական տները» («Halk Evleri»): Ընկերության անդամները հիմնականում միացան «Ժողովրդական տներին», որը հիմնադրվեց Հանրապետական-ժողովրդական կուսակցության (այսուհետև՝ ՀԺԿ) կողմից, և 1931 թ. մայիսին տեղի ունեցավ գլխավոր կոնգրեսը[73]: Նշենք, որ «Ժողովրդական տների» գլխավոր նպատակն էր արդիականացումը տարածել երկրի բոլոր բնագավառների վրա:

---

[71] Թուրքական պատմության ուսումնասիրման կոմիտեի ղեկավարն էր Թևֆիք Բըըքըօղլուն, իսկ անդամներն էին Սադրի Մաքսուդի Արսալը, Յուսուֆ Աքչուրան, Ռեշիթ Գալիփը, Իսմայիլ Հաքքը Ուզունչարշըլըն, ով հանրապետության վաղ շրջանում նախապատրաստեց պատմության դասագիրքը:

[72] Հարկավոր է նշել, որ «Թյուրքական օջախներ» ընկերության հետ միասին փակվեցին նաև Թուրքիայում հայտնի մյուս կազմակերպությունները, այդ թվում «Թուրքական ուսուցիչների միությունը», «Թուրքական կանանց միությունը», «Ազգային թուրքական ուսանողների միությունը» և մասնակական կազմակերպությունները: Տե՛ս **Sarınay Yusuf** 1994: 322-325, 329

[73] **Üstel Füsun** 2004 362

«Թյուրքական օջախների» փակման համար կային մի շարք պատճառներ՝ կապված կազմակերպության գործունեության բնագավառների ու նրա նախագահ Համդուլլահ Սուփհիի գործունեության հետ: Պատճառներից է այն, որ համաթյուրքականության գաղափարախոսությունը, հատկապես թուրանականությունը խանգարում էին քեմալականներին խորհրդային իշխանությունների հետ հարաբերությունների զարգացմանը: Անգամ 1930-1931 թթ. Անկարայում Խորհրդային Միության դեսպանը խնդրել է Թուրքիայի արտաքին գործերի փոխնախարարին միջոցներ ձեռնարկել օջախների դեմ, քանզի դրանք ազդեցություն են գործում Ռուսաստանի թյուրքերի վրա[74]: Սակայն, հազիվ թե սա ընկերության փակման պատճառ հանդիսանա, քանզի նշված շրջանում արդեն իսկ կողմերի միջև հարաբերությունները սառել էին: «Թյուրքական օջախների» փակումը նշանակում էր, որ իշխանությունն ամբողջովին կենտրոնացվել է ՀԺԿ-ի ձեռքում, և նման կազմակերպության կարիք իշխանությունն այլևս չունի: Մյուս կողմից, այն ընդհանրապես չի վերացվում, ինչպես վերևում նշել ենք, հիմք է դրվում նոր կազմակերպության՝ «Ժողովրդական տներին»: Այլ կերպ համաթյուրքականության գաղափարական փոխակերպումներին զուգահեռ կերպափոխությունների էին ենթարկվում նաև այդ գաղափարները կրող կազմակերպությունները:

1949 թ. «Թյուրքական օջախներ» ընկերությունը վերաբացվում է և իրեն ընդդիմադիր ուժ է հայտարարում՝ սկսելով համագործակցել ժողովրդավարական կուսակցության (այսուհետև՝ ԺԿ) հետ: 1950 թ. խորհրդարանական ընտրություններում ԺԿ-ն հաղթանակ է տանում և անցնում իշխանության: «Թյուրքական օջախների» նախագահ Թանրիօվերը ԺԿ-ից երկու անգամ ընտրվում է պատգամավոր՝ 1950 թ. Մանիսայից և 1954 թ. Ստամբուլից: 1966 թ. Թան-

[74] **Arikan Mustafa, Deniz Ahmet** 2004: 414

րիօվերի մահից հետո ընկերության նախագահն է դառնում պատմաբան Օսման Թուրանը: «Թյուրքական օջախների» գործունեությունը կրկին արգելվում է 1980 թ. տեղի ունեցած ռազմական հեղաշրջումից հետո: Երրորդ անգամ ընկերությունը վերաբացվում է 1986 թ. և «Մտավորականների օջախ» խմբի հետ զգալի ազդեցություն ունենում «Մայր հայրենիք» կուսակցության ազգայնական պահպանողական թևի շրջանում: 2000 թ. դրությամբ «Թյուրքական օջախներ» ընկերությունն արդեն 50 մասնաճյուղեր ուներ Անատոլիայում և ակտիվորեն համագործակցում էր նահանգներում գործարարների հետ[75]: Խորհրդային համակարգի փլուզումից հետո «Թյուրքական օջախներ» կազմակերպությունը հետաքրքրությունը սևեռեց դեպի թյուրքախոս երկրներ: Ընկերությունը Նուրի Գյուրգյուրի գլխավորությամբ, ով նախագահ էր ընտրվել 1996 թ., փորձում է ազգայնականությունը ներկայացնել որպես քաղաքական վերնախավի գաղափարախոսություն, որը պետք է կիսեին բոլոր քաղաքական կուսակցությունները: Նրա ղեկավարությամբ «Թյուրքական օջախները» ավելի շատ դարձել են պահպանողական և աջակցում են «Արդարություն և զարգացում» կուսակցության կառավարությանը: 2012 թ. ընկերության նախագահ ընտրվեց պրոֆեսոր Մեհմեթ Օզը, ով ևս համագործակցում է կառավարության հետ և աջակցում նրա վարած քաղաքականությանը:

Եզրակացություն

Այսպիսով երիտթուրքական հեղաշրջումից հետո Օսմանյան կայսրությունում պայմաններ ստեղծվեցին համաթյուրքականության գաղափարների տարածման ու ինստիտուցիոնալացման համար: Ըստ էության այս գործընթացների հիմքերը դրել էին առանձին անհատներ, որն էլ շա-

[75] **Uzer Umut** 2016: 36

րունակվեց պանթյուրքական բնույթի կազմակերպությունների ու մամուլի կողմից: Համաթյուրքական գաղափարներով առաջնորդվող կազմակերպությունների և նրանց կողմից հրատարակված մամուլի նպատակն էր այդ գաղափարներն ինստիտուցիոնալացնել հասարակական ու պետական կառույցներում և դրանք վերածել համակարգված գաղափարախոսության: Թերևս այս ամենով էր պայմանավորված, որ «Թյուրքական ընկերություն», «Թյուրքական հայրենիք» և «Թյուրքական օջախներ» կազմակերպությունները հաջորդեցին միմյանց՝ ըստ էության որդեգրելով նույն գաղափարները, նպատակներն ու տեսլականը: Այս կազմակերպությունների շրջանակներում համաթյուրքականության գաղափարները վերածվեցին համակարգված գաղափարախոսության, որը հետագայում ենթարկվում է որոշակի կերպափոխությունների՝ կապված պետական քաղաքականության հետ:

Ամփոփելով վերոնշյալ կազմակերպությունների նպատակները կարող ենք առանձնացնել հետևյալը՝ բոլոր ընկերությունների համար առաջնային էր լեզվական բարեփոխումը, համաթյուրքականության գաղափարների քարոզումն ու տարածումը, որն իրականացվում էր կազմակերպությունների կողմից հրատարակվող ամսագրերի և այլ բնույթի հրապարակումների միջոցով, քննարկվում էր օսմանականության և իսլամականության քաղաքական ծրագրերը, սակայն ընդունելի էր համարվում թյուրքականության ծրագիրը, ուշադրություն էր դարձվում թե՛ մշակութային, թե՛ քաղաքական համաթյուրքականությանը: Համաթյուրքական բնույթի ընկերությունների և մամուլի գործունեության արդյունքում համակարգվեցին և ինստիտուցիոնալացվեցին համաթյուրքականության գաղափարները, որոնք հետագա տարիներին թեև ենթարկվել են կերպափոխությունների,

սակայն հասարակական ու քաղաքական համակարգի մաս են հանդիսանում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Гасанова Э. Ю 1966, Идеология буржуазного национализма в Турции в период младотурок (1908-1914 гг), Баку, Издательство академии наук Азербайджанской ССР

Karpat H. Kemal 2001, The Politization of Islam Reconstructing Identity, State, Faith and Community in the Late Ottoman State, Oxford-New York, Oxford University Press

Heyd Uriel 1950, Foundation of Turkish Nationalism The Life and Teachings of Ziya Gokalp, London, Luzac and Harvill Press

Landau M. Jacob 1995, Pan-Turkism: From Irredentism to Cooperation, Hong Kong, Hurst & Company London.

Landau M. Jacob 1981, Pan-Turkism in Turkey: A Study of Irredentism, London, C. Hurts & Company

Niyazi Berkes 1964, The Development of Secularism in Turkey, New York, MQUP

Parla Taha 1985, The Social and Political Thought of Ziya Gökalp 1876-1924, Leiden, E J. Brill

Uzer Umut 2016, An Intelectual History of Turkish Nationalism, Between Turkish Ethnicity and Islamic Identity, The University of Utah Press Salt Lake City

Zenkovsky A. Serge 1960, Pan-Turkism and Islam in Russia, Cambridge-Massachusetts, Harvard University Press.

Zürcher J. Erik 2010, The Young Turk Legacy and Nation Building From the Ottoman Empire to Atatürk's Turkey, London- New York, I. B. Tauris.

Akçura Yusuf 1978, Türkçülük: Turkçülüğun Tarihi Gelişimi, İstanbul, Türk Kültür Yayını

Akçura Yusuf 1976, Üç Tarz-ı Siyaset, Ankara, Türk Tarih Kurumu Basımevı

Akçura Yusuf 1981, Yeni Türk Devleti'nın Öncüleri, Ankara, Kültür Bakanlığı Yayınları

Balkılış Özgür 2010, Rüşeym Halinde Türk Millıyetçılığı: Türk Yurdu Dergısi (1911-1918), Mülkıye, Cilt 34, Sayı 266, s. 125-170.

Arikan Mustafa, Deniz Ahmet 2004, Türk Ocaklarının Kapatılışı, Borçları ve Emlakının Tasfiyesi, Selçuk Üniversitesi Türkıyat Araştırmaları Dergısi, Sayı 15, s. 401-432

Demir Ahmet 2016, Ayaz İshaki ve Türk Dılının Sadeleşmesı Sorunu Yenı Lısan Hareketı Öncesınde Kazan-İstanbul Hattında Bır Erken Entelektüel Tartışma (1909), Modern Türkluk Araştırmalar Dergısı, Cılt 13 Sayı 1 , s. 7-31

Gazioğlu Can Duran 2018, Türk Derneğı'nın Yenı Lısan Hareketıne Katkıları İhmal mi Edıldı? Uluslararası Beşerı Bılımler ve Eğıtım Dergısı, Cılt 4, Sayı 8, s. 281-297

Georgeon François 1986, Turk Mıllıyetçılığının Kökenlere- Yusuf Akçura - (1876-1935), Ankara, Yurt Yayınları

Gökalp Ziya 1982, Makaleler II, Hazırlayan Süleyman Hayrı Bolay, Ankara, s. 40-46

Hekimoğlu Vecihi Fuat Sefa 2017, Türkıye'de Türkçülük Hareketının Ortaya Çıkması ve Ocakları, BEU Akademik İzdüşüm, Cılt 2. Sayı 1 , s. 41-51

Önem Nizam 2005, İkı Turan Macarıstan ve Turkıye'de Turancılık, Istanbul, Iletışım

Özyurt Cevat 2005, Mılletleşme Sürecınde Zıya Gökalp'ın Medenıyet Arayışı, Doğu Batı Düşünce Dergısi, Sayı 31, s. 179-198

Paçacioğlu Burhan 2001, Türk Derneğı Tasfiyecı mıydı? TÜBİAR-X, s. 218-233

Sarınay Yusuf 1994, Türk Mıllıyetçılerının Tarıhı Gelişımı ve Türk Ocakları 1912-1931, Otuken, İstanbul.

Temir Ahmet 1987, Yusuf Akçura, Ankara, Kultür ve Turızm Bakanlığı Yayınları

Tunaya Tarik Zafer 1988, Türkiye'de Sıyasal Partıler, Cılt 1, İkıncı Meşrutıyet Dönemi, 2. Baskı, Hürrıyet Vakfı Yayınları, İstanbul

Üstel Füsun 2004, İmparatorluktan Ulus-Devlete Turk Mıllıyetçılığı· Turk Ocakları (1912-1931), Iletışım Yayınları, 2. Baskı, İstanbul

Նելլի Մինասյան - *պ.գ.թ., Հայկական պետական մանկավարժական համալսարանի համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն,*
minasyan nelli@yahoo.com

THE IDEAS AND PURPOSES OF THE FIRST PAN-TURKIC ORGANIZATIONS

Keywords: *Pan-Turkism, The Association of the Turks, The Homeland of the Turks, Hearth of the Turks, Young Pencils Movement, Turan, nationalism.*

The main goal of this article is to show the ideas and purposes of the first Pan-Turkic organizations, such as the "Association of the Turks", the "Homeland of the Turks" and "Hearth of the Turks". These organizations and their press started to distribute the ideas of Pan-Turkism. The important goal of all these organizations was the reformation of the Turkish language. They also discussed the political programs of the Osmanism and Pan-Islamism, but they adopted the program of Pan-Turkism.

As a result of activity of the Pan-Turkic organizations the ideas of Pan-Turkism were systematized and institutionalized, which later were transformed but they continued to be part of the public and state system.

Nelli Minasyan - *PhD, Chair of World History and its Teaching Methods of the Armenian State Pedagogical University,*
minasyan.nelli@yahoo.com

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՖՐԱՆՍԻԱ-ԹՈՒՐՔԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 1970-1980-ԱԿԱՆ ԹԹ.

ՔՐԻՍՏԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Բանալի բառեր՝ *ֆրանս-թուրքական հարաբերություններ, արտաքին հարաբերություններ, միջազգային կազմակերպություններ, խորհրդարան, կառավարություն, Սփյուռք, մամուլ, Եվրոպական տնտեսական համագործակցություն, Եվրոպական միություն, եվրոպական ընտանիք, Հայոց ցեղասպանություն, դատապարտում, ճանաչման գործընթաց:*

1920-ական թթ. եվրոպական պետությունները, այդ թվում Ֆրանսիան, ելնելով իրենց ռազմավարական շահերից, պետական քաղաքականության մակարդակով շրջանցել և լռության են մատնել Հայոց ցեղասպանության փաստը: Այս թեմայի նկատմամբ հետաքրքրությունը Ֆրանսիայում վերստին աճել է միայն 1960-ական թվականների կեսերից՝ կապված Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցի հետ: Ավելին՝ պաշտոնական Փարիզի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցի վերաբերյալ բացասաբար է անդրադարձել ֆրանս-թուրքական կապերի վրա:

Նախ, տեղեկացնենք, որ Թուրքիան 1959 թվականից ձգտում էր սերտ համագործակցային հարաբերություններ հաստատել նորաստեղծ Եվրոպական տնտեսական համագործակցություն (European Economic Community, այսուհետև՝ ԵՏՀ) կազմակերպության հետ: Եվ չնայած այն հանգամանքին, որ Սառը պատերազմի ընթացքում Թուրքիան հարում էր արևմտյան պետություններին, սակայն ֆրանս-թուրքական հարաբերություններում ջերմացում չէր գրանցվել: Ավելին՝ Ֆրանսիան արևմտյան այն պետությունների շարքին էր պատկանում, որը միշտ խոչընդոտել է Թուրքիայի եվրոպա-

կան ընտանիք մտնելուն: Երկու պետությունների կողմից ժամանակ առ ժամանակ եղել են փորձեր հարաբերությունները ջերմացնելու ուղղությամբ, սակայն որոշ հարցերի շուրջ տարբեր դիրքորոշումներ ունենալու հետևանքով այդպես էլ արդյունքի չեն հասել: Հետագայում՝ ֆրանս-թուրքական հարաբերություններում տարաձայնությունները էլ ավելի են խորանում: Հատկապես պաշտոնական Անկարան անհանդուրժողականություն է ցուցաբերում ֆրանսիական իշխանությունների՝ Հայոց ցեղասպանության հարցում որդեգրած քաղաքականության նկատմամբ:

Ֆրանսիացիների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործընթացի մեկնարկը տրվել է դեռևս 1965 թ. ապրիլին, երբ հայ ժողովուրդը նշում էր Մեծ եղեռնի 50-րդ տարելիցը: Մասնավորապես հարցը բարձրաձայնվեց ֆրանսիական առաջատար մամուլի կողմից: 1965 թ. ապրիլի 23-27-ին «Le Figaro»-ն, «Le Monde»-ը, «La Croix»-ը, «L'Aurore»-ն, «L'Humanité»-ն անդրադառնում են 1915 թ. դեպքերին՝ դատապարտելով հայերի կոտորածները[1]: Ավելին՝ ապրիլի 24-25-ին «Le Figaro» թերթում Ժորժ Դյուբույի հրատարակած հոդվածում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրականացված կոտորածները որակվում են որպես «Հիսուն տարի առաջ՝ 20-րդ դարի առաջին ցեղասպանություն»[2]: Հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդին[3] էլ ապրիլի 23-

---

[1] **Հայաստանի ազգային արխիվ** (այսուհետ՝ **ՀԱԱ**), ֆ. 57 (Ամենայն հայոց կաթողիկոսի դիվան), ց. 5, գ. 231 (Փաստաթղթեր Հայկական հարցի մասին), թթ. 33-37:

[2] Նույն տեղում, թ. 33:

[3] **Ֆրեդերիկ Արման Ֆեյդի** (1908-1991 թթ.) - ֆրանսիացի հայագետ, Սուրբ Ղազարի ճեմարանի անդամ (1937 թ.), բանասիրական գիտությունների դոկտոր (1973 թ.), Արևելյան լեզուների ու քաղաքակրթությունների ինստիտուտի (նախկին Արևելյան կենդանի լեզուների դպրոց) հայագիտության ամբիոնի վարիչ (1949-77 թթ.):

ին «Le Monde» թերթում տպագրած հոդվածում դատապարտելով Հայոց ցեղասպանությունը՝ գրում էր, որ հայերը հակառակ իրենց փոքրաթիվ լինելուն՝ ամենուրեք նպաստում են համաշխարհային քաղաքակրթության գործին, և միջազգային հանրությունը պարտավոր է բավարարել հայերի արդարացի պահանջը (խոսքը վերաբերում էր Հայոց ցեղասպանության դատապարտմանը - Ք.Մ.)[4]: Արձանագրենք, որ 1965 թ. Հայոց ցեղասպանության շուրջ հայտարարությունները սահմանափակվեցին միայն մամուլի հրապարակումներով, որի միջոցով ֆրանսիացի հասարակությանը հիշեցնում էին 1915 թ. հայերի ողբերգության մասին:

Բացի այդ, ֆրանսահայերի 50-րդ տարելիցի կազմակերպած միջոցառումները և ֆրանսիական մամուլում տեղ գտած հրապարակումները չեն վրիպում թուրքական թերթերի ուշադրությունից: Ավելին՝ այդ ժամանակահատվածում ֆրանս-թուրքական հարաբերություններում կրկին լարվածություն էր նկատվում, և 1968 թ. ապրիլին պաշտոնական այցով Թուրքիա ժամանած Ֆրանսիայի նախագահ Շառլ դե Գոլի այցի հիմնական նպատակն էր վերականգնել ջերմ բարեկամական կապերը երկու երկների միջև[5]: Մինչդեռ այս առաքելությունը սպասված արդյունքը չի գրանցում, և 1970-ական թթ. սկզբին երկկողմ հարաբերություններում կրկին լարվածություն է նկատվում, ինչին առիթ է հանդիսանում 1973 թ. փետրվարի 11-ին Մարսելի Պրադո պողոտայի վրա գտնվող Սուրբ Սահակ և Սուրբ Մաշտոց Թարգմանչաց հայկական տաճարի բակում Մեծ եղեռնի հուշակոթողի[6] բա-

[4] **ՀԱԱ**, ֆ. 57 (Ամենայն հայոց կաթողիկոսի դիվան), ց. 5, գ. 231 (Փաստաթղթեր Հայկական հարցի մասին), թ. 34։

[5] **Бороджина** 2015, 62

[6] Մարսելի Ս. Սահակ և Ս. Մաշտոց Թարգմանչաց հայկական տաճարի բակում կանգնեցված Մեծ եղեռնի հուշակոթողի հեղինակներն են ճարտարապետ Ալեն Բիրյան և քանդակագործ Թորոս Ռասթկելենյանը: Ի դեպ, վերջինս նաև Ֆրանսիայի Էքս ան Պրովանս քաղաքի Հայաստան

ցումը: Կոթողի կառուցման գաղափարն ու իրագործումը ֆրանսահայերի երկարատև ու հետևողական ջանքերի արդյունք էր: Ավելին՝ այս գործում մեծ ներդրում ուներ Մարսելի քաղաքապետը՝ Գաստոն Դեֆերը:

Այս հուշարձանի կառուցման աշխատանքները սկսվել էին դեռևս 1970 թ. մայիսի 31-ին, երբ հիմնարկեքի առաջին քարը դրվել էր Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի կողմից[7]: Հուշակոթողի կառուցման գաղափարը սկզբնական շրջանում լուրջ քննարկման թեմա է եղել Մարսելի քաղաքային պաշտոնյաների շրջանում. նրանք պահանջում էին փոխել հուշարձանի վրա նախատեսված արձանագրության տեքստը (երկլեզու՝ հայերեն և ֆրանսերեն), որում գրված էր. «Ի յիշատակ 1915-ի թուրք ղեկավարներու Ցեղասպանութեան զոհ 1.500.000 հայերուն, ի փառս Ազատութեան և Ֆրանսայի համար զոհուած դիմադրականներուն և մարտիկներուն»[8]: Պաշտոնական Փարիզը վախենում էր, որ դա կարող է լուրջ խնդիրներ առաջացնել Թուրքիայի հետ:

Ի վերջո ֆրանսահայերը ստանում են ֆրանսիական կառավարության աջակցությունը, ինչը խոսում էր այն մասին, որ հուշարձանի բացումը խափանելու՝ թուրքերի դիվանագիտական ճնշումներն ավարտվել էին անարդյունք: Կոթողի բացման արարողությանը, բացի հայ համայնքի ներկայացուցիչներից ներկա էին նաև Ֆրանսիայի վարչապետի ներկայացուցիչ՝ Երիտասարդության և սպորտի հարցերով պետական քարտուղար, խորհրդարանի հետ կապերի պատասխանատու նախարար Ժոզեֆ Կոմիտին, Մարսելի քաղաքապետ Գ. Դեֆերը, Մարսելի կաթոլիկ եկեղեցու արքեպիսկոպոսը, սենատորներ, տարբեր երկրների դեսպանա-

---

հրապարակում 1983 թ. կանգնեցված Հայոց ցեղասպանությանը նվիրված հուշակոթողի հեղինակն է:

[7] **«Էջմիածին»**, օգոստոս, № Ը, 1970, 5:

[8] **«Ազդակ»**, փետրվարի 14, N 285 (12462), 1973:

տների և այլ համայնքների ներկայացուցիչներ: Ի նպաստ Հայ դատի հնչում են ելույթներ[9]:

Պետական նման աջակցությունը հանգեցնում է նրան, որ Թուրքիայի կառավարությունն ի նշան բողոքի Փարիզից հետ է կանչում իր դեսպանին՝ Հասան Իշըգին[10]: Վերջինս ֆրանսիացի լրագրողներին տված հարցազրույցում հայտարարում է. «Չի կարող մնալ մի երկրում, որտեղ վիրավորանք են հասցնում իր պետությանը և որ վերաղառնում է Անկարա խորհրդակցելու»[11]: Թուրքիայի արտաքին գործերի նախարարության բողոքի նոտայում ասվում էր, որ Մարսելում կագնեցված հուշարձանի գրությունը նվաստացնում է Թուրքիային[12]: Ավելին՝ Թուրքիայի արտաքին գերատեսչության ղեկավար Հալուկ Բայոլկեն Թուրքիայի Ազգային մեծ ժողովում ունեցած ելույթում հայտարարում է, որ «խորհրդատվության» նպատակով հետ կանչված դեսպանը երկրում կմնա այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է[13]:

Ֆրանս-թուրքական հարաբերություններում ստեղծված լարված իրավիճակը լայն քննարկման թեմա էր դարձել ֆրանսիական մամուլում: Փարիզում հրատարակվող «Le Figaro», «Le Monde», «La Croix», Մարսելում տպագրվող «La

---

[9] **ՀԱԱ**, Ֆ. 326 (Արտաքին գործերի նախարարության), ց. 1, գ. 519 (Ֆրանսիայի դեսպանատանը կայացած զրույցների գրառումները, 23.02.1973 թ.), թ. 1-2:

[10] **Millet Meclisi Tutanak Dergisi**, 57 nci Birleşim, 14.2.1973, Dışişleri Bakanı Halûk Bayülken'in, Marsilya'da ermeniler tarafından dikilen ve üzerinde aleyhimizde bâzı yazılar bulunan bir anıtın açılış töreni ile ilgili gündem dışı demeci, s. 552, 10.10.2019, https://www.tbmm.gov.tr/tutanaklar/TUTANAK/MM /d03/c033/mm 03033057.pdf

[11] **ՀԱԱ**, Ֆ. 326 (Արտաքին գործերի նախարարության), ց. 1, գ. 519 (Ֆրանսիայի դեսպանատանը կայացած զրույցների գրառումները, 23.02.1973 թ.), թ. 2:

[12] **Միսաքեան**, «Հառաջ», փետրվարի 15, N 12 (641), 1973:

[13] **ՀԱԱ**, ֆ. 326, ց. 1, գ. 519 (Ֆրանսիայի դեսպանատանը կայացած զրույցների գրառումները, 23.02.1973 թ.), թ. 2:

Marseillaise», «Le Provençal» պարբերականները հանդես էին գալիս ի շահ հայերի՝ իրենց էջերում ներկայացնելով 1915 թ. դեպքերը: Կարելի է եզրակացնել, որ ֆրանսիական թերթերում հրատարակվող այդպիսի հոդվածները հասարակության մեջ հստակ կարծիք էին ձևավորում: Այդ են, ի դեպ, վկայում ԽՍՀՄ-ի դեսպանատան գրառումները, որտեղ նշվում է, որ Մարսելում ֆրանսիացիները հանդես են գալիս կառուցված հուշարձանի օգտին և կառավարությանը կոչ են անում չնահանջել թուրքական ճնշման ներքո[14]: Նույն աղբյուրը միաժամանակ հաղորդում էր, որ Ֆրանսիայի իշխանությունները ճնշում էին գործադրում Մարսելի քաղաքապետի վրա՝ հուշարձանի վրայից վերոհիշյալ մակագրությունը հանելու համար: Ավելին, ըստ այդ տեղեկատվության՝ չի բացառվում, որ ստեղծված իրավիճակը նոր բարդություններ առաջացնի[15], - գրված էր փաստաթղթում:

Ինչ վերաբերում է թուրքական մամուլին, ապա այն նույնպես մեծ աղմուկ է բարձրացնում՝ Ֆրանսիային մեղադրելով հայանպաստ քաղաքականության համար[16]: Թուրքիայի խորհրդարանում նույնպես հնչում էին երևույթը դատապարտող հայտարարություններ: Թուրքիայի արտգործնախարարը նշում էր, որ «Մարսելում կանգնեցված հուշարձանն առաջինը չէ, նմանատիպ հուշարձաններ են կանգնեցվել այն բոլոր երկրներում, որտեղ հայերը մեծ համայնքներ ունեն»[17]: Հիշատակում է՝ Բիքֆայայի (Լիբանան,

---

[14] Նույն տեղում:

[15] Նույն տեղում:

[16] **Մխաքեան,** «Հառաջ», փետրվարի 16, N 12 (642), 1973:

[17] **Millet Meclisi Tutanak Dergisi,** 57 nci Birleşim, 14.2.1973, Dışişleri Bakanı Halûk Bayülken'in, Marsılya'da ermeniler tarafından dikilen ve üzerinde aleyhimizde bâzı yazılar bulunan bir anıtın açılış töreni ile ilgili gündem dışı demeci, s 554, 10.10 2019, https://www.tbmm.gov.tr/tutanaklar/TUTANAK/MM__/d03/c033/mm__03033057.pdf

1970 թ.), Մոնթեբելլոյի (Կալիֆորնիա, ԱՄՆ, 1968 թ.), Սան Պաուլոյի (Բրազիլիա,1966 թ.), Դեսին Շարպիի (Լիոն, Ֆրանսիա, 1972 թ.) Հայոց ցեղասպանության զոհերին նվիրված կոթողները[18]: Թուրքիայի ազգային մեծ ժողովի Ստամբուլի պատգամավոր Հ. Դոլլանն էլ իր ելույթում առաջարկել է երկրի երեսից մաքրել Գալիպոլիի ֆրանսիական գերեզմանոցը և հրաժարվել Ֆրանսիայի հետ ունեցած բարեկամական բոլոր հարաբերություններից[19]:

Չնայած Թուրքիայում հնչած հակաֆրանսիական ելույթներին, Ֆրանսիայի քաղաքական շրջանակները շարունակում էին հանդես գալ հայանպաստ հայտարարություններով՝ չթաքցնելով, որ ճանաչում և դատապարտում են Հայոց ցեղասպանությունը, ավելին՝ Մարսելի քաղաքապետն, անտեսելով իր վրա գործադրված ճնշումները, պահպանում է հուշարձանի վրայի մակագրությունը:

Ավելի ուշ՝ 1974 թ. մայիսի 16-ին, Ֆրանսիայի նախագահի թեկնածու Վալերի Ժիսկար դ'Էստենը նախագահական ընտրարշավում Մարսելի հայկական համայնքին հղած նամակում դատապարտում է Հայոց ցեղասպանությունը և հայտարարում. «Կը կարծեմ որ ներկայիս, ինչպէս անցեալին, Ֆրանսա պարտականութիւն ունի գործօն նպաստ մը բերելու աշխատանքի մը, որ սերտօրէն կապուած է իր աւանդութիւններուն: Իր պարտականութիւնը պիտի ըլլայ, ՄԱԿ-էն ներս, թէ այլուր, թիկունք կանգնիլ պատմական ճշմարտութեան և արդարութեան պահպանման»[20]: Ֆրանսիայի նախագահական ընտրարշավում Հայկական հարցի արծարծումը նոր երևույթ չէր: Դեռևս 1965 թ. Հայոց ցեղասպանության 50-ամյա տարելիցի նախօրյակին Հայկական հարցը Ֆրանսիայում առաջին անգամ բարձրացրին կոմու-

---

[18] **Նույն տեղում:**

[19] **Նույն տեղում**, էջ 555:

[20] **Տոնապետեան,** «Արարատ», օգոստոսի 24, N 12598 (210), 1984:

նիստները՝ պահանջելով «Հայոց ցեղասպանությունն անհապաղ ճանաչել և հայերին փոխհատուցում տալ»[21]: Հատկանշական է, որ դա համընկնում էր Ֆրանսիայում անցկացվելիք նախագահական ընտրություններին, որտեղ, ի դեպ, ձախակողմյան՝ սոցիալիստների թեկնածու Ֆրանսուա Միտերանին չհաջողվեց առավելության հասնել Շառլ դը Գոլի նկատմամբ:

1974 թ. Ֆրանսիայում նախագահ է ընտրվում Վ. Ժիսկար դ'Էստենը: Եվ, չնայած մարսելահայերին ուղղված վերը նշված հայտարարությանը՝ իր նախագահության շրջանում Հայոց ցեղասպանության հարցում բավականին զգուշավոր մոտեցում է ցուցաբերում՝ խուսափելով ֆրանս-թուրքական հարաբերությունների սրացումից:

Մինչդեռ արդեն 1980-ական թթ. Ֆրանսիայի բնակչության մեծ մասը դատապարտում էր Հայոց ցեղասպանության փաստը. ավելին՝ Ֆրանսիայի քաղաքական գործիչները բավականին հաճախ են սկսում բարձրացնել Հայոց ցեղասպանության դատապարտման հարցը: Հարկ է նշել, որ Թուրքիայում 1980 թ. իրականացված ռազմական հեղաշրջումից հետո հարաբերությունների վատթարացում է նկատվում ԵՏՀ հետ, ժամանակավորապես սահմանափակվում են Թուրքիայի քաղաքացիների մուտքը Համագործակցության երկրներ: Չի բացառվում, որ դա ևս առիթ է դառնում Ֆրանսիայում հայանպաստ հայտարարությունների շրջանառության և դիրքորոշումների արտահայտման համար:

Հայոց ցեղասպանության հարցի հայտնվելը պաշտոնական Փարիզի օրակարգում նոր երևույթ չէր, սակայն 1980-ականներին այն թևակոխեց նոր փուլ, և, ի տարբե-

---

[21] **ՀԱԱ**, ֆ. 326, ց. 1, գ. 379 (Ֆրանսիայի ԽՍՀՄ դեսպանության առաջին քարտուղարի, Լ. Մանասերյանի և ՀՀԴ կուսակցության առաջնորդ Հրանտ Սամուելյանի միջև կայացած զրույցի գրառումները «կուսակցության գործունեության մասին», 25.08.1965), թ. 3:

րություն 1970-ականների, այս տասնամյակում բավականին ակտիվ մասնակցություն ունեցան երկրի բարձրաստիճան այրերը, որոնք իրենց պարտքն էին համարում 1915 թ. Ցեղասպանության խնդրին տալ արդարացի լուծում: Վերջիններիս այս գործունեությունը դատապարտվում էր Թուրքիայի իշխանությունների կողմից, ավելին՝ թուրքական մամուլը բացահայտ հակաֆրանսիական քարոզչություն էր իրականացնում:

Հիշատակենք նաև, որ 1980 թ. ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանության 65-րդ տարելիցի կապակցությամբ Լիոն քաղաքում կազմակերպվում է ցույց, որին մասնակցում էր երեք հազար մարդ, այդ թվում՝ Ռոնայի դեպարտամենտից խորհրդարանի պատգամավոր Շառլ Էռնյուն, Վիլլորբանի քաղաքագլուխ Ժան Պոպերեն, Ռոնի պատգամավոր Միշել Նուարը: Նրանցից ձևավորված պատվիրակությունը Լիոնում Թուրքիայի հյուպատոս Օքան Ժեզերի կողմից ընդունելության չի արժանանում, թեպետ կար պայմանավորվածություն: Ավելին՝ թուրք դիվանագետը կազմակերպում է հակահայկական ցույց, որտեղ տարածվում են Շ. Էռնյուին, Ժ. Պոպերեին, Մ. Նուարին վարկաբեկող թռուցիկներ[22]: Վերջիններս էլ հասնում են նրան, որ հունիսի 2-ին նախագահ Վ. Ժ. դ՛Էստենը և արտաքին գործերի նախարար Ֆ. Պոնսեն թուրք հյուպատոսին վտարում են երկրից[23]:

1981 թ. Ֆրանսիայի նախագահական ընտրություններում հաղթանակած Ֆ. Միտերանը մինչ այդ, քարոզարշավի ընթացքում, Մարսելի «Ապրիլի 24-ի» Մեծ եղեռնի հուշակոթողի մոտ հայտարարել էր. «Մենք՝ ընկերավարներս (խոսքը սոցիալիստների մասին է - Ք.Մ.) պէտք է պահանջենք, որպէսզի Ֆրանսիան ճանչնայ 1915-ի հայերի ցեղասպանութիւնը եւ հանդէս գանք Հայկական հարցի արդարացի լուծման հա-

[22] **Տոնապետեան,** «Արարատ», օգոստոսի 24, N 12598 (210), 1984:
[23] **Նույն տեղում:**

մար»[24]: Եվ չնայած այն փաստին, որ նախագահը իր նախորդների նման հետագայում խուսափում էր բարձրաձայնել այս հարցը, սակայն նրա կառավարման տարիներին Ֆրանսիայի բարձրաստիճան պաշտոնյաներն ավելի հաճախ են սկսում խոսել Հայոց ցեղասպանության մասին: Բացի այդ, 1980-ական թվականներին Ֆրանսիայում ակտիվ գործունեություն էր ծավալել «Ֆրանս-հայկական համերաշխություն» («Solidarité franco-arménienne») կազմակերպությունը, որը ստեղծվել էր 1976 թ. Փարիզում, և վերջինիս շարքերում էին 200-ից ավելի ֆրանսիացի անվանի գործիչներ:

Թուրքական մամուլն իր հերթին սկսում է հակահայկական և հակաֆրանսիական քարոզչություն: 1980 թ. օգոստոսի 10-ին «Hürriyet» թերթի սյունակագիր Օքթայ Էքիշը գրում էր, որ կառավարությունը համապատասխան քայլեր չի ձեռնարկում իրենց դեմ ուղղված մեղադրանքները հերքելու համար: Նա իշխանություններին մեղադրում է նաև այն հարցում, որ վերջիններս անտարբեր են եղել, և Անկարայի կամ Ստամբուլի հրապարակներից մեկում մինչօրս չեն կանգնեցրել մի հուշարձան, որը կխորհրդանշեր այն վայրագությունները, որ ֆրանսիացիները կատարել են Արևելքում կամ Աֆրիկայում[25]: Ըստ մամուլի՝ կառավարությունը պարտավոր է վճռական քայլեր կատարել չեզոքացնելու համար արտասահմանյան հրապարակումների ազդեցությունը, որոնք վարկաբեկում են Թուրքիային[26]: Ավելին՝ այն կարծիքն է գերակշռում, որ կառավարությունը տարիներ ի վեր անհրաժեշտ կարևորություն չի տվել Հայկական հարցին[27]: Կրկին լայն շրջանառության մեջ է դրվում այն թեզը, որ

---

[24] **Նույն տեղում:**
[25] **Տոնապետեան,** «Արարատ», օգոստոսի 25, N 12599 (211), 1984:
[26] **Նույն տեղում:**
[27] **Ավետիքեան,** «Զարթօնք», սեպտեմբերի 28, N 344 (13022), 1980:

20-րդ դարասկզբին հայ-թուրքական բախումները հրահրել է Արևմուտքը[28]:

Հայկական հարցի հետ կապված ֆրանս-թուրքական հարաբերություններն էլ ավելի են լարվում 1981 թ., երբ Ֆրանսիայի կառավարության անդամները սկսում են նախագահ Ֆ. Միտերանին հիշեցնել նախագահական քարոզարշավի ընթացքում հայերին տված նրա խոստումները: 1981 թ. սեպտեմբերի 18-ին Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Կլոդ Շեյսոնը «Le Figaro» թերթին տված հարցազրույցում ափսոսանք է հայտնում, որ Անկարայի կառավարությունը շարունակում է ժխտել Հայոց ցեղասպանության իրողությունը և միաժամանակ հայտարարում «թե ներկայիս Թուրքիայի կառավարությունը պատասխանատու չէ 60 տարի առաջ հայ ժողովրդի կրած ողբերգության համար»[29]: Արտաքին գերատեսչության ղեկավարի այս տեսակետը սուր քննադատության է ենթարկվում մի շարք նախարարների, հատկապես հայանպաստ հայտարարությամբ հանդես եկող ներքին գործերի նախարար Գ. Դեֆերի և պաշտպանության նախարար Շ. Էռնյուի կողմից: Գ. Դեֆերը շեշտում էր, որ «Ֆրանսիայի կառավարութիւնը կը ճանչնայ ցեղասպանութիւնը, որուն զոհ գնացին հայերը» և վստահեցնում, որ Ֆրանսիան օգնելու է հայերին[30]: Շ. Էռնյուն էլ հիշեցնում էր ֆրանսահայերին տված Միտերանի խոստումները[31]: Այս երկու գործիչները երբեք չեն թաքցրել հայերի նկատմամբ ունեցած իրենց համակրանքը և Հայոց

---

[28] **Նույն տեղում:**

[29] **Տեսպպետեան,** «Արարատ», օգոստոսի 25, N 12599 (211), 1984:

[30] **Նույն տեղում:**

[31] "Les Arméniens Ont Encore Un État De Liberté A Conquérir" déclare M Charles Hernu, «Le Mond», 13 octobre, 1981, 14.10.2019, https://www.lemonde.fr/archives/article/1981/10/13/les-armeniens-ont-encore-un-etat-de-liberte-a-conquerir-declare-m-charles-hernu_2710601_1819218.html

ցեղասպանության ճանաչման հարցում բավականին ակտիվ մասնակցություն են ունեցել:

Գ. Դեֆերի և Շ. Էռնյուի հայտարարությունները մեծ աղմուկ և իրարանցում են առաջացնում թուրքական մամուլում: Եվ, եթե նախկինում իշխանությունները ուշադրության չէին արժանացնում այն հանգամանքը, որ նրանք մասնակցում էին ապրիլի 24-ի միջոցառումներին և հանդես էին գալիս ի պաշտպանություն Հայ դատի, ապա այժմ իրավիճակը փոխվել էր՝ խոսքը գնում էր ուժային նախարարների մասին: 1981 թ. հոկտեմբերին ֆրանս-թուրքական հարաբերություններն այն աստիճան են սրվում, որ Թուրքիայի արտաքին գործերի նախարար Իլթեր Թյուրքմենը Ֆրանսիայի կառավարությանը բողոք հայտնելու նպատակով իր մոտ է հրավիրում այդ երկրի դեսպանին: Նա Շ. Էռնյուին անվանում է «տգետ» ու «խելագար»[32]: Հատկապես թուրքական կողմին զայրացրել էր Շ. Էռնյուի արած այն հայտարարությունը, որ «Գերման վարչապետ մը ծունկի եկավ ներողություն խնդրելու համար հրեաներու դեմ նացիներուն կողմե գործված ոճիրներու համար. ե՞րբ թուրք մը միևնույնը պիտի ընե»[33]: Ավելին՝ «Hürriyet» թերթն էլ հրապարակում է ֆրասիացի քաղաքական հինգ գործիչների՝ Շառլ Էռնյուի, Գաստեն Դեֆերի, Ժան Պոպերենիի, Ժոզեֆ Ֆրանչեսկի, Լուիս Մերմազի նկարները՝ նրանց անվանելով Թուրքիայի թշնամիներ[34]:

Ֆրանսիացի գործիչների պաշտպանությամբ հանդես են գալիս «Le Monde», «Le Figaro», «Paris Match» թերթերը:

---

[32] Le Ministre Turc Des Affaires Étrangères Réagit Très Vivement Aux Propos De M Hernu Sur Les Arméniens, «Le Mond», 15 octobre, 1981, 14 10 2019, https.. www.lemonde.fr archives-article 1981 10 15/le-ministre-turc-des-affaires-etrangeres-reagit-tres-vivement-aux-propos-de-m-hernu-sur-les-armeniens 2710902 1819218.html

[33] **Նույն տեղում:**

[34] **Տե՛ս նաև,** «Արարատ», օգոստոսի 25, N 12599 (211), 1984:

Առաջին երկուսը գրում են, որ վերը նշված ֆրանսիացի գործիչները հավատարիմ են իրենց գաղափարներին և Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում հետաքրքրություն դրսևորել սկսել են ավելի վաղ՝ մինչև սոցիալիստական կուսակցության իշանության գալը[35]: Ավելին՝ «Le Monde»-ը, խոսելով Հայկական հարցի մասին, շեշտում է, որ Թուրքիան ազգային հերոս է համարում Թալեաթ փաշային, որը ծրագրել և իրականացրել է 1915 թ. Հայոց ցեղասպանությունը[36]: «Paris Match»-ն էլ հիշեցնում էր, որ 1914 թ. Օսմանյան կայսրությունում ապրում էր 2 400 000 հայ, մինչդեռ 1920-ական թվականներին երկրում մնացել էր 67 հազար: «Թուրքահայատանը գործնականում ջնջվել է աշխարհագրական քարտեզի վրայից»[37], - ահա թերթի եզրահանգումը: Իսկ Անկարայում Ֆրանսիայի դեսպան Ժ. Ռույոնը թուրք լրագրողներին տված հարցազրույցում հայտարարում է, որ իր երկրի կառավարությունը Թուրքիային բացեբաց տեղեկացրել է, որ համաձայն չէ Հայկական հարցում նրա որդեգրած քաղաքականության ու հատկապես Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին «տեղի ունեցած ողբերգական իրադարձություններին տված գնահատականներին»[38]:

Այսպիսով՝ Հայոց ցեղասպանության հարցում Ֆրանսիայի դիրքորոշումը հստակ էր, չնայած կառավարությունը չէր շտապում այն օրինականացնել: Նկատենք, որ խնդրո առարկա թեման բարձրացվում էր անմիջականորեն ֆրանսիացի գործիչների կողմից, և շատ հաճախ քաղաքական դաշտում ֆրանսահայերը չէին երևում: Եվ այնպիսի թյուր տպավորություն էր ստեղծվում, որ վերջիններս կապ չունեին տեղի ունեցող զարգացումների հետ, և որ երկրի քաղա-

---

[35] **Տոնապետեան,** «Արարատ», օգոստոսի 24, N 12598 (210), 1984:
[36] **Նույն տեղում:**
[37] **Կիրակոսյան** 1983, 451:
[38] **Տոնապետեան,** «Արարատ», օգոստոսի 25, N 12599 (211), 1984:

քական ուժերն ընդամենը պաշտպանում էին իրենց քաղաքացիների շահերը: Մինչդեռ իրականում ֆրանսահայերի դերը բավականին մեծ էր, և երկրի կառավարությունը, այդ թվում՝ նախագահը հաշվի էին նստում նրանց ցանկությունների հետ: 1984 թ. հունվարի 7-ին՝ Սուրբ ծննդյան կապակցությամբ Վիեն քաղաքի հայկական գաղթօջախ այցելության ժամանակ նախագահ Ֆ. Միտերանը, խոսելով Հայոց ցեղասպանության մասին, հայտարարում է, որ դժվար է 1915 թ. ցեղասպանության հետքերը մաքրել և իրենք իրենց պարտքն են համարում հարցի արդարացի լուծումը[39]:

Նույն թվականին, Փարիզի շրջակայքում՝ Ալֆորվիլ քաղաքում, Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձանի բացումը ֆրանս-թուրքական հարաբերություններում նոր ճգնաժամի պատճառ է դառնում: Մայիսի 2-ին՝ կառավարության նիստից հետո, պաշտոնական Անկարան բողոքի նոտա է ներկայացնում Ֆրանսիայի կառավարությանը, իսկ մայիսի 3-ին էլ չեղյալ է հայտարարում առևտրի նախարար Էդիտ Կրեսոնի Անկարա կատարելիք պաշտոնական այցը[40]: Եվ չնայած պաշտոնական Փարիզը ուղիներ էր փնտրում ֆրանս-թուրքական հարաբերությունները բարելավելու նպատակով, այնուամենայնիվ, շարունակում էր հայտարարել, որ Ֆրանսիան ընդունում է 1915 թ. Օսմանյան կայսրությունում ապրող հայերի ցեղասպանության իրողությունը[41]:

---

[39] **Տոնապետեան,** «Արարատ», օգոստոսի 24, N 12598 (210), 1984: **Ալեոիքեան,** «Զարթօնք», օգոստոսի 18, N 261 (14145), 1984: Les Propos De M Mitterrand Sur Le Genocide Des Armeniens En 1915 Suscitent La Réprobation Officielle D'ankara, «Le Mond», 12 janvier, 1984, 14.10 2019, https://www.lemonde.fr/archives/article/1984/01/12/les-propos-de-m-mitterrand-sur-le-genocide-des-armeniens-en-1915-suscitent-la-reprobation-officielle-d-ankara_3001076_1819218.html

[40] **Ալեոիքեան,** «Զարթօնք», օգոստոսի 18, N 261 (14145), 1984:

[41] **Նույն տեղում:**

Չկարողանալով կանխել ցեղասպանության նոր հուշարձանի բացումը՝ Անկարան իր բողոքն է հայտնում ոչ միայն Ֆրանսիայի, այլև ԽՍՀՄ-ի կառավարությանը: 1984 թ. մայիսին Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունը Անկարայում ԽՍՀՄ-ի դեսպան Վլադիմիր Լավրովին իր դժգոհությունն է արտահայտում Վազգեն Ա-ի Փարիզ կատարած այցի կապակցությամբ: Ի պատասխան՝ խորհրդային դիվանագետը հայտնում է, որ Ամենայն հայոց կաթողիկոսն ազատ է իր գործունեության մեջ, և որևէ մեկը իրավունք չունի արգելքներ դնել նրա առջև, հատկապես՝ այցելությունների հարցում[42]:

Այսպիսով՝ Թուրքիայի արտաքին գործերի նախարարության փորձերը՝ Ֆրանսիայում Հայոց ցեղասպանության հարցի շուրջ ընթացող գործընթացները, մասնավորապես 1915 թ. զոհերի հիշատակին նվիրված հուշարձանների տեղադրումը կասեցնելու ուղղությամբ, դրական արդյունք չեն տալիս: Ավելին՝ 1986 թ. փետրվարի 16-ին Մոնպելիե քաղաքում հանդիսավորությամբ բացվում է ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հերթական հուշարձանը, որի վրա հայերեն ու ֆրանսերեն գրված է. «1,5 միլիոն հայ նահատակներու հիշատակին»[43]: Հուշակոթողը կազմված է 12 սյունից, որոնց վրա փորագրված են Եղեռնի զոհ նշանավոր հայերի անունները: Թուրքական մամուլն հուշակոթողի կառուցումը որակում է՝ «Ֆրանսիայի հերթական վիրավորանքը»[44]:

Այսպիսով, կարելի է նշել, որ պաշտոնական Անկարայի նման պահվածքը ֆրանսիական կողմի համար ոչ նոր էր, ոչ էլ՝ անսպասելի: Այդ պատճառով հետագայում ևս Ֆրանսիան շարունակում էր հանդես գալ հայանպաստ հայ-

---

[42] **Նույն տեղում:**

[43] «**Լրաքեր**», մարտի 15, N 23, 1986:

[44] **Նույն տեղում:**

տարարություններով, բավականին հստակ պատկերացնելով Թուրքիայի կողմից կիրառվող հիմնական գործիքները: Ավելին՝ 1998 թ. մայիսի 29-ին Ֆրանսիայի Ազգային ժողովն ընդունեց Հայոց ցեղասպանության ճանաչման մասին օրինագիծը, 2000 թվականի նոյեմբերի 7-ին նմանատիպ օրենք ընդունեց նաև Ֆրանսիայի Սենատը: Իսկ 2001 թվականի հունվարի 29-ին Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակը ստորագրեց մի օրենք, որով Ֆրանսիան բոլոր մակարդակներով պաշտոնապես ճանաչեց Հայոց ցեղասպանությունը: Ֆրանս-թուրքական հարաբերությունների «լարված ձևաչափը» կարելի է ինչ-որ տեղ օրինաչափ համարել այդ ժամանակահատվածում: Բացի այդ, նախագահ Ժակ Շիրակի օրոք սկսված այս գործընթացը որոշակի վայրիվերումներով շարունակվում է մինչ օրս: Դրա վառ վայրենին է 2019 թ. Ֆրանսիայում ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանության հիշատակի օր հռչակելու հետ կապված Անկարայի հերթական դժգոհության հայտնումը:

Մի շարք թուրք և արևմտյան վերլուծաբաններ, անդրադառնալով Հայոց ցեղասպանության հարցում Ֆրանսիայի ղեկավարության քաղաքական որոշմանը, հիմնականում այն դիտարկում էին Ֆրանսիա-Թուրքիա հարաբերությունների ենթատեքստում՝ նշելով, որ Անկարայի՝ Եվրամիության մաս կազմելու փորձերը լուրջ տարածայնություններ են առաջացնում եվրոպական տարբեր պետությունների շրջանում, իսկ դրան առաջին հերթին դեմ էր Ֆրանսիան[45]: Վերլուծաբանների մեկ այլ հատված էլ այս հարցում ֆրանսիական պետության դիրքորոշումը պայմանավորում է միայն հզոր հայկական համայնքով[46]:

---

[45] **Rettman,** Franco-Turkish Relations Hit New Low on Genocide Bill, 22 12 2011, Brussels, 10 10.2019, https://euobserver.com/foreign/114718

[46] **Crumley,** French Draft Law On Armenian Genocide Rocks Franco-Turkish Relations, Time, Jan. 24, 2012, 10.10.2019,

Մինչդեռ վերը շարադրածից եզրակացնում ենք, որ Ֆրանսիայի պարագայում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը նախ և առաջ պայմանավորված է այդ պետության ռազմավարական շահերի գործոնով, սակայն այդ գործում ձեռքբերումները հնարավոր է կլինեին անհամեմատ համեստ, եթե չլիներ Սփյուռքի և Հայաստանի Հանրապետության գործադրած ջանքերը այդ ուղղությամբ: Ավելին՝ այս գործում իրենց ուրույն դերն են խաղացել 1960-1980-ական թթ. ֆրանսիական առաջատար մամուլում հրապարակված հոդվածները, որոնք հստակ դիրքորոշում էին ձևավորում հասարակության շրջանում, ինչն էլ հնարավոր է հետագայում նպաստել է Ֆրանսիայում Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչմանը: Բացի այդ, 1970-ական թվականներից մինչօրս Ֆրանսիայի անզիջում դիրքորոշումն այդ հարցում ցույց է տալիս ողջ աշխարհին, որ Թուրքիայի շանտաժի քաղաքականությունը Փարիզի դեպքում չի գործում: Ֆրանսիան չի վախենում ֆրանս-թուրքական հարաբերությունների վատթարացումից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 57 (Ամենայն հայոց կաթողիկոսի դիվան), ց. 5, գ. 231 (Փաստաթղթեր Հայկական հարցի մասին), 48:

Հայաստանի ազգային արխիվ, Ֆ. 326 (Արտաքին գործերի նախարարության), ց. 1, գ. 519 (Ֆրանսիայի դեսպանատանը կայացած զրույցների գրառումները, 23.02.1973 թ.), 11:

Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 326, ց. 1, գ. 379 (Ֆրանսիայի ԽՍՀՄ դեսպանության առաջին քարտուղարի, Լ. Մանասերյանի և ՀՀԴ կուսակցության առաջնորդ Հրանտ Սամուելյանի

---

http://world.time.com/2012/01/24/french-draft-law-on-armenian-genocide-rocks-franco-turkish-relations.

միջև կայացած գրույցի գրառումները «կուսակցության գործունեության մասին», 25.08.1965), 25:

Ավետիքեան Հ. 1980, Թուրք դեսպանը մը կը վիրաւորուի Փարիզի մէջ, «Զարթօնք», սեպտեմբերի 28, N 344 (13022):

Ավետիքեան Հ. 1984, Մինչ Անքարան կը պնդէր թե «Վազգէն Ա չէր կրնար Փարիզ երթալ առանց Խորհրդային Միութեան արտօնութեան» Մոսկուան կը պատասխաներ «Վազգէն կաթողիկոս ազատ է Փարիզ երթալու կամ չերթալու», «Զարթօնք», օգոստոսի 18, N 261 (14145):

Թուրքիա կը բողոքէ Մոնփէլիէի հայկական յուշարձանին դէմ, «Լրաբեր», մարտի 15, N 23, 1986:

Կիրակոսյան Ջ. 1983, Երիտթուրքերը պատմության դատաստանի առջև, հ. 2, Երևան, 464:

Մարսէյլի նահատակաց հուշարձանէն դէմ բողոքելու համար Թուրքիա ետ կանչեց Փարիզի իր դեսպանը, «Ազդակ», փետրվարի 14, N 285 (12462), 1973:

Միսաքեան Շ. 1973, Անգարա ետ կը կանչէ Փարիզի իր դեսպանը, «Հառաջ», փետրվարի 15, N 12 (641):

Միսաքեան Շ. 1973, Մարսէյլի Յուշարձանը. Թուրքերը և ֆրանսական մամուլը, «Հառաջ», փետրվարի 16, N 12 (642):

Պատմական այցելություն, «Էջմիածին», օգոստոս, N Ը, 1970, 5-6·

Տոնապետեան Վ. 1984, Ներկայ Ֆրանսան և Հայ Դատը, «Արարատ», օգոստոսի 24-25, N 12598 (210) - 12599 (211), 1984·

Бородкина Н. 2015, Франция - Турция: роль стереотипов в двусторонних отношениях в начале XXI в., Вестник Вятского государственного университета, № 99(4), 61-65

Crumley B. French Draft Law On Armenian Genocide Rocks Franco-Turkish Relations, Time, Jan. 24, 2012, 10.10.2019, http_world.time.com/2012/01/24/french-draft-law-on-armenian-genocide-rocks-franco-turkish-relations/

Rettman A. Franco-Turkish Relations Hit New Low on Genocide Bill, 22.12. 2011, Brussels, 10.10.2019, https://euobserver.com/foreign/114718

Le Ministre Turc Des Affaires Etrangères Réagit Très Vivement Aux Propos De M. Hernu Sur Les Arméniens, «Le Mond», 15 octobre, 1981, 14.10.2019, https://www.lemonde.fr/archives/article/1981/10/15/le-

ministre-turc-des-affaires-etrangeres-reagit_tres-vivement-aux-propos-de_m-hernu-sur-les-armeniens_2710902_1819218.html

"Les Arméniens Ont Encore Un Etat De Liberté A Conquérir" déclare M. Charles Hernu, «Le Mond», 13 octobre, 1981, 14.10.2019, https://www.lemonde.fr/archives/article/1981/10/13/les-armeniens-ont-encore-un-etat_de_liberte-a_conquerir_declare_m-charles-hernu_2710601_1819218.html

Les Propos De M. Mitterrand Sur Le Génocide Des Arméniens En 1915 Suscitent La Réprobation Officielle D'ankara, «Le Mond», 12 janvier, 1984, 14.10.2019, https://www.lemonde.fr/archives/article/1984/01/12/les-propos-de-m-mitterrand-sur-le-genocide-des-armeniens-en-1915-suscitent-la-reprobation-officielle-d-ankara_3001076_1819218.html

Millet Meclisi Tutanak Dergisi, 57 nci Birleşim, 14.2.1973, Dışişleri Bakanı Halûk Bayulken'in, Marsılya'da ermeniler tarafından dikilen ve üzerinde aleyhimizde bâzı yazılar bulunan bir anıtın açılış töreni ile ilgili gündem dışı demeci, 10.10.2019,

https://www.tbmm.gov.tr/tutanaklar/TUTANAK/MM__/d03/c033/mm__03033057.pdf

Քրիստինե Մելքոնյան - *պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի, Թուրքիայի բաժնի վարիչի պաշտոնակատար, ավագ գիտաշխատող, ԵՊՀ, Հայաստանի հարակից երկրների ամբիոն,*
chmelkonyan@orient.sci.am

THE QUESTION OF THE ARMENIAN GENOCIDE IN THE CONTEXT OF THE FRANCE - TURKEY RELATIONS IN 1970-1980s

Keywords: *French-Turkish relations, foreign relations, international organizations, parliament, government, Diaspora, press, European Economic Community, European Union, European family, Armenian Genocide, condemnation, the process of recognition.*

The Armenian Genocide was the first genocide of the 20th century. The Armenian people have been striving for the recognition

and condemnation of the Armenian Genocide for several decades However, as a result of their activities in 1960-1980s the issue of the Armenian Genocide became a topic of hot discussions for international organizations, parliaments, governments of different states, as well as means of mass media and turned into an issue of international diplomacy starting the process of recognition and condemnation of the Armenian Genocide.

Currently twenty-four nations have passed measures officially recognizing the Armenian Genocide. France, which recognized the Genocide in 2001, experienced negative turns in relations with Turkey. The Turkish ambassador to France was recalled, according to the Turkish Foreign Ministry "for a short time for consultations over the latest developments about the baseless allegations of the Armenian Genocide". While recalling an ambassador for consultations is an official sign of displeasure that has few immediate, practical repercussions, the Turkish government did not stop at this measure

However, the policy of blackmail and intimidation carried out by Turkey regarding Paris does not work. Such hysterical behavior of the Turks is not news or surprise. In this regard, perhaps, it is worth emphasizing that over the last decades the relations between France and Turkey have been periodically exacerbated, as a rule, in connection with various statements of the official Paris regarding the Armenian Genocide.

Christine Melkonyan - *PhD, Institute of Oriental Studies NAS RA, Senior researcher, Head of Department of Turkish Studies, Yerevan State University,Chair of the History of Armenia's Neighboring Countries,*
chmelkonyan@orient.sci.am

THE ROLE OF ARMY IN THE POLITICAL LIFE OF SYRIA. FROM THE SYRIAN BATTALION TO THE SYRIAN ARAB ARMY

HAYK SAMSONYAN

Keywords: *Syrian Legion, Special Troops, Syrian Army officers, Oriental (Armenian) Legion, Civil war, Arab Spring, Military overturns, United Arab Republic, Baath party.*

Introduction

The eight-year Syrian armed conflict is one of the most devastating conflicts and arresting issues in the international area in the 21st century. Undoubtedly, the investigation of the role of Syrian army has its both scientific and political significance. Indeed, without having scrupulously studied the role of the army it is impossible to perceive in details many aspects of the political history of Syria. In any other Arabic country the army did not play such an outstanding role in the political life as it was in case of Syria. This reality can be proved by the serious inner-political processes that run in contemporary Syria, when the army appears as a substantial factor again. This topic has its actuality in regard of our perception of rather complicated inner-political processes happening in modern Syria today, whereas the army plays an important role as well.

This research deals with certain aspects of the formation of Syrian army, its officer stratum, as well as discusses issues dealing with military overturns in Syria, their reasons and aftermath for the country in the post-independent period, as well as investigates both ethnic and confessional background of the Syrian army.

It is a well-known fact that in the question of gaining independence by the Near Eastern Arabic countries during the period of the mandate status, the army played an outstanding role.

The history of creation of the Syrian state, the formation its army and officer stratum as well as the role of army in the political life of the country can be divided into five main periods: from the independence to unification with Egypt (1946-1958), the three and half years of existence of the United Arab Republic (UAR) (1958-

1961), from the collapse of the UAR till the period of Hafez Al-Assad's come to power (1961-1970) and the Al-Assad family's rule (1970-2000), particularly, that of Hafez Al-Assad, and then Bashar Al-Assad since 2000 onwards.

The most valuable link in military forces was the officer stratum, which was integral part of the governmental system. The Syrian army gradually turned into a serious political factor what is proved by military overturns that occurred in Syria.

For the rich political history of Syria an investigation of the role of army is important not only from the point of Syria's role on both regional and international levels, but also for Armenian Diaspora and Armenian-Syrian relations in the modern times.

Historical background

The process on the formation of Syrian army began in the period between two World Wars. A background of the Syrian army formed the Syrian battalion of the Oriental (Armenian) Legion.[1] The Oriental Legion, which consisted of five battalions, on 18th of January 1919 was divided into two parts: the Armenian Legion with 4 battalions and the Syrian having only 1 battalion. The number of volunteers in the Oriental Legion was nearly 5000 where 4,124 soldiers represented the Armenian battalions while 698 the Syrian one.[2]

On 8th of March 1920 the Syrian national congress declared about the creation of the independent Syrian state. Faysal Ibn Al-Husayn became the King of Syria.[3] Based on the military law issued in December 1919 the government of Hashim Al-Atasi announced the draft and the creation of the military units. Early in the morning of the July 24th 1920 began the battle of Maysalun which the French troops won.[4] As a result Syria lost its independence and turned into a sub-mandate country of France.

---

[1] **Van Dusen** 1971 40

[2] **Գաբամանուկեան** 1998 213

[3] For more details on the Arab nationalists, Al-Kahtaniya and Al-Ahd, See **Գասպարյան** 2016

[4] الأتاسي 2007، 85.

In 1924 the Syrian Legion consisted of 6,500 soldiers. It includes 137 French and 48 local officers who received their military education at the Damascene Military Academy established in 1920. Only in 1932 it was removed to Homs where it then became famous as the Military Academy of Homs.[5] In 1925 the French established the so-called "Troupes Supplétives" that consisted of countrymen and mobile forces, as well as gendarmerie. Before this they had founded the "Troupes Auxiliaires" that mainly consisted of Alawites (Nusayrites), Druzes, Circassians, Armenians and Kurds.[6]

On 20th of March 1930 the Syrian Legion, which was additionally supplied by both "Troupes Supple´tives" and "Troupes Auxiliaires", turned into (Troupes Spéciales du Levant).[7] The "Special Troops", created by the French mandate government, were basically supplied by representatives of the faraway retarded provinces, also by national and religious minorities, for instance, the Alawites, Druzes, Ismailites, Kurds, Circassians, Armenians and others.[8]

The growing tendency of the national movements for independence that rose during the World War II resulted in new elections of the National Parliament of Syria held on 17th of August 1943.[9] The newly elected parliament declared the lieder of "Kutla Al-Wataniya" party, Shukri Al-Kuatli as new president of Syria.[10]

Under the pressure of the Syrian national forces from one side and international community from another one on 8th of July 1945 France announced officially its readiness to withdraw the "Special Troops" to Syria and Lebanon. The transfer of forces was over by the 1st of August 1945. Since that time onwards the 1st of August is the Army day in Syria. By that time the Syrian army numbered 5000, where 3,500 were policemen.[11] A withdraw of French and English troops from Syria began on 15th of April and was over on 17th of

---

[5] **Khoury** 1987, 80
[6] **Drysdale** 1977, 78
[7] **Bou-Nacklie** 1993, 651
[8] **Be'eri** 1969, 334
[9] مردم 1994، 233.
[10] **Winder** 1962, 414
[11] **Torrey** 1964, 44-45

April 1946.[12] That day is a national holiday in Syria. After almost a quarter of century the struggle for liquidation of French mandate and creation an independent state was finally over.[13]

In 1948 Syria, along with its allies Egypt, Lebanon, Iraq and Jordan, took part in the Arab-Israeli war. Syria sent to Palestine multi-units numbering 1,900 soldiers under the command of Abd Al-Wahhab Al-Hakimi. By that time the number of Syrian army was ca. 8,500, though only 5,500 had been trained satisfactorily. The rest 1,070 were the high ranks, 1,500 patrolled the borders while 395 were at the Homs Military Academy. Some time before the "Salvation army" (Jeysh Al-Inqadh Al-Arabi) was created which then became known as "The Arab liberation army" under the command of Taha Al-Hashimi, Ismail Safwati and Fawzi Al-Qawuqji. That army became the military wing of the League of Arab Countries.[14]

In that war Syria, following the example of other Arabic countries, was defeated. In that war the fiasco of Arabic countries appeared as a first trial for the Syrian army and another blow onto the Syrian national and state dignity. Since these times onwards the role of army in the political life of Syria has been growing. The military forces and its most important link, the officers, became an important part of the state system. They gradually turned into a serious factor in the Syrian inner-political life.

The phenomenon of military overturns

The Arab-Israeli war of 1948 opened a way for the military overturns. In 1949-1954 the military top took part in several military overturns in Syria. These were led by Husni Az-Zaim, Sami Al-Hinawi and Adib Ash-Shishakli.[15] These overturns were implemented by various groups of people who based themselves on the military. Due to the frequently organized military overturns of 1949-1954, Syria faced with a difficult political and social-economic situation. The overturns damaged the natural development of Syrian

---

[12] هندي 1962، 183.
[13] لأرسناري 1953، 186-188
[14] For more on the Arab Liberation's Army, See: **Al-Qawuqji** 1972, 27-58
[15] **Carleton** 1950, 1-11

governmental system.[16] In the beginning of January 1958 the military top had secret negotiations where the representatives of 22 military units discussed the question of Syria's unification with Egypt. In the evening of 12th January 1958 a group of 14 military highest ranks made for Cairo to negotiate with Egyptian side about the unification. The delegation was led by the head of the major command Afif Al-Bizri. The latest offered a unification of both states with a federative basis, but the majority of the military delegation that were the allies of Abdel Hamid As-Saraji and Salah Ad-Din Al-Bitari, demanded a total unification. Although the unification had a democratic outlook, indeed, it occurred with the army's direct interference, in fact, as a result of the so-called "semi-military overturn".[17]

On 21st of February 1958 a referendum took place for the question of unification of Syria with Egypt. Gamal Abdel Nasr was elected the president of the UAR. On 5th of March 1958 a temporary UAR Constitution was announced in Damascus. It included 73 articles that were divided into two parts, each dealing with a sole country of Syria and Egypt. The capital of the UAR became Cairo.[18] Right from the creation of the UAR the president initiated a unification of both countries' military forces. According to the order 118 issued on 15th March 1958 the unification of the forces was finished. It dealt with bringing the police, security and Beduin units under one common command. By that time the number of Syrian army was 42,000.[19]

After the officers came over to Egypt in summer of 1959, a small group of the activists from the "Baath" party created a secret military organization, which subsequently became famous as the Military Committee. The command of the Military Committee (Al-Lajna Al-Askariya) consisted of five officers, three of Alawites, i.e. Muhammad Umran from Muharram (Homs), Salah Jadid from Duayr Baabda (Latakia) and Hafez Al-Assad from Kardaha (Latakia) and two Ismailites, particularly, Abd Al-Qarim Al-Jundi from Salamiya (Hama) and Ahmad Al-Mir from Mazyaf (Hama). Subse-

---

[16] معروف 2003، 92-99
[17] شعيبي 2008، 85-88
[18] **Hopwood** 1988, 40-41
[19] **Roberts** 1987, 46-50

quently, when the staff of the Committee was enlarged, Salim Hatum and Hamad Ubayd both from Jabal Druz became the members of the organization.[20]

On 28th of September 1961 a military overturn took place and Syria broke the alliance with Egypt. On 12th of November 1961 a temporary Constitution of Syria was declared by which the country was announced as constitutional democratic republic. On 14th of December new presidential elections took place where Nazım Al-Qudsi became the president of Syria.[21] On 28th of March 1962 another military overturn occurred in Syria organized by Abd Al-Qarım An-Nahlawi. The commander of Syrian army Zahr Ad-Dın dissolved the Constitutional parliament. Both legislative and executive power passed to the highest military commandership.[22] However, this overturn did not bring peace to the country either.

A transfer of power in Iraq to "Baath" party in February of 1963 strengthened the positions of the Syrian "Baath" followers who greeted openly the overturn and new regime in that country. One month after the overturn of the 8th February 1963 in Iraq, a new overturn happened in Syria on 8th March 1963.[23] By that time the Syrian army had 65,000 soldiers. The military forces consisted of land forces, air forces and limited naval forces. The program for the overturn was worked out by the leaders of the Military Committee Muhammad Umran, Salah Jadid and Abd Al-Qarim Al-Jundi. One can conclude that after the overturn in Iraq, and that one of the 8th of March 1963 conducted in Syria, the Syrian authorities were aspiring to strengthen their power as well as to spread the influence of the "Baath" over other Arabic countries.[24]

On 23rd of February 1966 the military units led by the members of the dissolved regional "Baath" bureau implemented the next overturn. The power now came to the temporary regional "Baath" authorities that included the representatives of the left, revolutionary democratic wing of the party. Salah Jadid was

---

[20] **Van Dam** 1981, 49
[21] **Rathmell** 1995, 159
[22] طلاس، 264-267
[23] **Abu Jaber** 1966, 66-67
[24] مناقيخي، السدي 2009، 133.

appointed its general secretary, while Nur Ad-Din Al-Atasi became a new president of the SAR.[25]

The Arabs were defeated in the 6 day Arab-Israeli war of 1967. As a result Israel could seize from the Arabs huge territories that embraced some around 70.000 km^2. Israel seized from the UAR the Sinai Peninsula having provided for itself an access to the right bank of the Suez Channel. They also captured Sharm Ash-Shaykh, the western bank of the Jordan River, Al-Kuneytra and the Golan Hills that had preciously belonged to Syria. The Israeli troops were standing at a distance of 40 km from Damascus.[26] After the Arab-Israeli war of 1967 Syria was in a deep inner-political and social-economic crisis. Because of an anti-tolerant attitude towards the policy of the left wing of the "Baath" party in the post-war period, the army faced with both moral and psychological crisis.

On 17th of September 1970 a bloody engagements took place between the followers of the Movement of Resistance of Palestine, military forces of the Liberation Front of Palestine and the army of Jordan. In historiography these events received the name "Black September". With a purpose to help the Palestinians, on 20th of September 1970 Syria interference into those events by means of sending there its "As-Saika" troops. These were followed by Syrian tank divisions that carried the marks of the Palestinian liberation army.[27] In November 1970 Syria survived a new turnover but for this time without a bloodshed. Hafez Al-Assad was now made a Prime-minister and convened his government. The power in Syria now went to Hafez Al-Assad, a representative of the military wing of the "Baath" party. The Syrian army and its officer corpus were supplied by members of the Alawite community. After the "Baath" party came to power the most important and skillful divisions of the Syrian army were put under the Alawite rule.[28] If the Syrian army would not have such a staff, it would be hardly possible for the Alawites to keep in their hands the political power in Syria for such a long period of time.

---

[25] **Rabinovich** 1972, 195-200
[26] **Olson** 1982, 112-115
[27] **Ma'oz** 1988, 38-39
[28] **Վարդանյան** 2017, 35-41

The role of army in Syria's both internal and external policy

In November 1970, the Syrian army under the command of Hafez Al-Assad spread its control over the country. The purpose of the announced by Hafez Al-Assad "Corrective Movement" was a come back to the main principles and ideology of the "Baath", from which the previous left-Baath authorities had turned down.[29] In 1971 when Hafez Al-Assad was elected president of the SAR, the military forces had 120,000 soldiers. From the first years of his government Hafez Al-Assad was paying an attention to the mobilization, rearmament and increasing military skills of the army. As a result Syria could completely restore its military forces and acquire a new modern army. This army demonstrated its power in the Arab-Israeli fourth war of 1973. In it Syria could get back from Israel the territories, including the Golan Hills and Al-Kuneytra, that had been seized by Israel still in 1967.[30]

In June 1976, 12,000 Syrian army troops entered Lebanon for establishing order there.[31] Some time after the invasion the major part of Lebanon came under the control of Syria.[32] In 1982 the revolt of the "Muslim brothers" was suppressed in Hama. The "Defensive division" under the command of the president's brother Rifat Al-Assad came out against the rebelled forces.[33]

It is necessary to note, that the most reliable forces of the regime of Hafez Al-Assad were the intelligence forces under Ali Duba, air forces reconnaissance led by Muhammad Al-Khuli, civilian reconnaissance party of Fuad Absi and his deputy over intelligence forces Muhammad Nasif, 10,000-15,000 "Special forces" under the command of Ali Haidar. The next military unit was the presidential or national guard with 10,000 soldiers under the command of Adnan Al-Makhluf and the "Fighting forces" of Adnan Al-Assad. In the years following the 1982 War, the Syrian army grew considerably, almost doubling from about 300,000 men in 1983

---

[29] **Commins** 1996, 74-75.
[30] **Ахмедов, Исаев, Филоник** 2000, 35-37
[31] **Weinberger** 1986, 209
[32] **Հարությունյան** 2007, 211
[33] **Seale** 1989, 332-333

Բանալի բառեր՝ *Մերձավոր Արևելք, Սառը պատերազմ, Սիրիա, Իրաք, բանակ, պատերազմ, ԹՍ, ՀՕՊ:*

[7] Шойгу назвал удар США по Сирии угрозой безопасности российских военных. http://www.interfax.ru/russia/560064

Սառը պատերազմի ժամանակ հատկապես սրացավ ռեակտիվ օդուժի և ՀՕՊ-ի պայքարը: Տեղի ունեցան մի քանի պատերազմներ, որտեղ բախվեցին օդուժը և ՀՕՊ-ը, որի հիմքը կազմում էին ցամաքային ՋՀՀ-ները: Սակայն այդ բախումների արդյունքում ի վերջո հաղթում էր օդուժը և հաղթում էր հստակ օրինաչափությունների շնորհիվ: Այդ օրինաչափությունները այսօր էլ փորձարկվում են Իրաքում և Սիրիայում:

Հակառակորդի ՀՕՊ համակարգը չեզոքացվում է հստակ կանոնների պարագայում: Դրանք են՝

1. Օդային խմբավորումը ի սկզբանե պետք է կազմված լինի մոտավորապես 50-60 տոկոս հարվածային ԹՍ-ներից և 40-50 տոկոս ապահովող, հատուկ ԹՍ-ներից: Դրանց մեջ մտնում են նախ և առաջ հետախուզական, օդային կառավարման և հատկապես ՌԷՊ-ի ԹՍ-ները:

2. Առաջին հարվածների ժամանակ, քանի դեռ օդային գերակայությունը լիովին ապահովված չէ, հարվածող միջոցների խտությունը պետք է լինի ՀՕՊ-ի նշանակետային ուղիներից առնվազն 1,5-2 անգամ ավելի: Լրացուցիչ ԹՍ-ները իրենց երկրորդական խնդիրներով կարող են ավելի բարդացնել իրավիճակը վերգետնյա ՀՕՊ-ի համար, սակայն հենց հարվածող միջոցները՝ ԹՍ-ներով ու իրենցից արձակվող միջոցներով, պետք է լինեն այդ հարաբերակցությամբ:

3. Առաջին հարվածները պետք է լինեն էլեկտրակրակային (ՌԷՄ-ի շեշտադրված տարրերով)՝ 1-2-ի կամ 1-1-ի հարաբերակցությամբ, այսինքն՝ 1 ՌԷՀ-ի ԹՍ-ին բաժին է ընկնում 1-2 հարվածային ԹՍ: Անկախ նրանից, թե վերադաս միջոցները ՌԷՀ-ի ինչ ընդհանուր մակարդակ կապահովեն, որից նաև կարող է օգտվել ենթակա միջոցը, այս հարաբերակցությունն անհրաժեշտ է հարվածների առաջին փուլում:

4. Նախնական հարվածները եթե ոչ լիովին, ապա գերազանցապես պետք է լինեն գերճշգրիտ միջոցներով: Ցանկալի է՝ այս փուլի հարվածները ավելի շատ լինեն ԹՀ-ներով ու հեռահար անօդաչու միջոցներով:

5. Քանի դեռ հակառակորդի ՀՕՊ-ը հիմնականում ոչնչացված չէ, մարտական թռիչքների 70-80 տոկոսը պետք է կատարել հենց այդ նպատակով: Սա կազմում է հարվածների առաջին փուլը:

6. Բոլոր փուլերի հարվածների հիմնական մասը պետք է իրականացվի շարժական նշանակետերի ուղղությամբ, քանի որ լավ պատրաստված հակառակորդը նշանակետերը լավ քողարկում է, իսկ առաջին հարվածներից հետո անմիջապես դրանք հանում հարվածների տակից ու արագ խուսանավում:

Սրանք հիմնական, սակայն ոչ բոլոր պայմաններն էին, որոնց պարագայում գրեթե ցանկացած մակարդակի վերգետնյա ՀՕՊ համակարգ կամ դրա հիմքով կառուցված ՌՕՈՒ-ՀՕՊ միասնություն կարող է կոտրվել: Այս և կազմակերպչական, նախապատրաստական, նյութական և այլ գործառույթների հստակ պահպանման դեպքում հնարավոր է ոչ միայն հաղթել ցանկացած ՀՕՊ-ի, այլև օդային լիարժեք գերակայության հասնել և հաղթել ռազմագործողության ժամանակ:

Փաստացի այսօր Մերձավոր Արևելքում իր կենսական փորձարկումն է անցնում նոր օդային գերակայության մոդելը իր վեց կանոններով, որոնք անկախ պատերազմի տեսակներից կիրառելի են:

Արծրուն Հովհաննիսյան - *պ.գ.թ., ռազմական վերլուծաբան*
arcrunhovhannisyan@gmail.com

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ИСТОЧНИКОВЕДЕНИЕ И ФИЛОЛОГИЯ

SOURCE STUDY AND PHILOLOGY

ԱԳԱՐԱԿԱՁՈՐԻ ԿԱՄՐՋԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՏԻԳՐԱՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Բանալի բառեր՝ *Ագարակաձոր, պարսկերեն արձանագրություն, կամուրջ, արաբատառ, սալաքար, Վայոց ձոր, ուշ միջնադար, Եղեգնաձոր:*

Հայաստանի Հանրապետության տարածքում միջնադարյան հոյակերտ կամուրջներից է Վայոց Ձորի մարզկենտրոն Եղեգնաձորի մոտակայքում, Արփա գետի վրա գտնվող Ագարակաձորի կամուրջը: Այս անվանումը, ինչպես հայտնի է, կամուրջը ստացել է այն պատճառով, որ կապ է հաստատում Ագարակաձոր (նախկին Այար, Այառ, Ագյար) գյուղի հետ:

Այս գեղեցիկ միակամար կամուրջը հայտնի է նաև մի քանի այլ անվանումներով՝ «Սուր կամուրջ», «Դադալի, Դատալի, կամ Դադալուի կամուրջ» և կամ «Դալի-փերան»[1]: Եթե «Սուր կամուրջ» անվանումը նկարագրում է նրա ձևը, ապա անհասկանալի է, թե որտեղից է գալիս «Դադալի կամ Դադալուի կամուրջ»: Անհայտ է մնացել, թե ինչ կապ կարող է ունենալ ոմն Դադալը կամրջի հետ: Նշենք, որ Դադալ անունը հանդիպում էր ուշ միջնադարում թե՛ մուսուլմանների և թերևս նաև հայերի շրջանում: Հրաչյա Աճառյանը իր անձնանունների բառարանում անդրադարձել է Տաթալէ կամ Դաթալէ անձնանուններին[2]: Հայերի մոտ Դադալ անվան առկայության մասին են վկայում նաև մինչ այժմ գործածվող Դադալյան ազգանունը:

---

[1] **ՀՀՇՏՔ** 1986, 20:

[2] **Աճառյան** 1962, 135.

Հետաքրքրական է «Դալի-փերան» անվանումը, որը պարսկերենից կարելի է թարգմանել «ճախրող անգղներ»[3]: Սա, հավանաբար, կապված է կամրջի շրջակայքում տարածված գիշատիչ թռչունների առկայության հետ, որոնց կարելի է այսօր էլ հանդիպել այնտեղ:

Ագարակածորի կամուրջը հայտնի է նաև իր արաբատառ արձանագրությամբ:

Կամուրջը, ըստ մեր դիտարկումների, առաջին անգամ հիշատակել են Քաջբերունին[4] և Ե. Լալայանը[5]: Սակայն, նրանցից ոչ ոք չի նշում նրա պարսկերեն արձանագրության մասին: ՀՀ պետական արխիվում պահվող կամրջի հայերեն և ռուսերեն 1949 թ.-ի հաշվառման քարտերում պարսկերեն արձանագրության մասին նույնպես ոչինչ չի ասվում[6]: Պարսկերեն արձանագրությունը հիշատակում է Վ. Հարությունյանը՝ կամրջի չափագրական և շինարարական նկարագրության մեջ[7]:

[3] **Steingass 1963:** 239, 499: دال /dāl/ պարսկերեն նշանակում է անգղ (Gyps fulvus), տե՛ս https://fa.wikipedia.org/wiki/کرکس

[4] **Քաջբերունի** 2003, 102:

[5] **Լալայան** 1904, 258:

[6] **Ֆոնդ** 1551-22:

[7] **Հարությունյան** 1960, 108-109:

Չնայած, որ աղբյուրները չեն հաղորդում կամրջի հիմնադրման վերաբերյալ տվյալներ, սակայն, հայ պատմագիտական և հնագիտական ավանդության մեջ ամուր համոզմունք կա, որ այն կառուցվել է XIII դարում[8], այլ ոչ թե XVII դարում, ինչպես գրում է Վ. Հարությունյանը: Ի թիվս այլոց, Հ. Մելքոնյանը նույնպես կարծում է, որ կամուրջը կառուցվել է Օրբելյանների կողմից և Դվին-Պարտավ առևտրական ճանապարհի մաս է կազմել[9]: Կամուրջը Եղեգնաձորի և Ագարակաձորի բնակիչների համար ընդհուպ մինչև 1970-ականները Արփան անցնելու թերևս ամենակարճ միջոցն է եղել[10], ինչի լավագույն վկայությունն է վերը նշված կամրջի հաշվառման քարտերին կից առկա լուսանկարներից մեկը, որը պատկերում է նրա վրայով անցնող մարդկանց[11]:

Կամրջի ուշադիր զննումը հստակորեն ցույց է տալիս վերջինիս վերանորոգումների հետքերը՝ պատերի շարվածքում և այլ մասերում տարբեր չափի, տարբեր ժամանակներում տեղադրված և բազմազան տեսակի քարերի օգտագործումը: Խորհրդային ժամանակահատվածում կամուրջը վերանորոգվել է առնվազն երկու անգամ՝ 1957 թ.-ին[12] և 1970 թ.-ին[13]: Ըստ Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն ՊՈԱԿ-ի կայքէջի՝ «միայն 1985-1986 թթ. Աշոտ Խալաթյանի գլխավորությամբ իրականացված ամրակայման աշխատանքների արդյունքում հնարավոր եղավ պահ-

---

[8] **Եղիազարյան** 1955, 38: **ՀՍՀ** 1974, 50: **ՀՀՇՏՔ** 1986, 20:

[9] Բանավոր հաղորդում: Ճանապարհի վայոցձորյան հատվածի մասին տե՛ս **Մելքոնյան** 2014: Տե՛ս նաև **Բաբաջանյան, Ֆրանկլին** 2019: 127: **ՀՍՀ** 1974: 50: **ՀՀՇՏՔ** 1986: 20:

[10] https://hushardzan.am/archives/6100

[11] **Ֆոնդ** 1551-22 կից լուսանկարներ:

[12] **Հարությունյան** 1960, 109,

[13] Եղեգնաձորի բնակիչ, նկարիչ, Եղեգնաձորի երկրագիտական թանգարանի նախկին տնօրեն Կամսար Սահակյանի բանավոր հաղորդմամբ:

պանել կամրջի ներկայիս տեսքը, պայմանով, որ այն այլևս նախատեսված չէր լինելու տրանսպորտային միջոցների տեղաշարժի համար»[14]:



Ինչպես արդեն նշեցինք, Ագարակածորի կամուրջը հանրահայտ է նաև իր արաբատառ՝ պարսկերեն արձանագրությամբ: Այն փորագրված է ուղղանկյուն սալաքարի վրա, որը տեղադրված է կառույցի արևելյան՝ դեպի Վարդաբլուր սարը նայող պատի մեջ: Մեր կարծիքով, հավանական է, որ արձանագրությունը պահպանված է մասնակիորեն: Ինչպես ստորև կտեսնենք, արձանագրության հաղորդած կցկտուր տեղեկությունը և կողք-կողքի նմանատիպ երկու ուղղանկյուն սալաքարերի առկայությունը հուշում են, որ այն նախապես փորագրված է եղել այդ երկու սալաքարերի վրա, սակայն աջ սալաքարի մակերեսը (որի վրա, ենթադրաբար եղել է արձանագրության սկիզբը) ամբողջովին անհետացել

[14] https://hushardzan.am/archives/6100

է քարի քայքայման՝ հողմահարության կամ այլ ներգործության պատճառով: Մեզ հասած արձանագրությունը նույնպես տեղ-տեղ քայքայված վիճակում է:

Բարձրության վրա գտնվելու պատճառով արձանագրությունը մատչելի չէ մոտիկից ուսումնասիրման համար՝ առանց հատուկ լեռնագնացային միջոցների, ուստի մենք այն ուսումնասիրել ենք հեռադիտակով՝ գետի ափին կանգնած: Նույն պատճառով հնարավոր չէ նաև տալ արձանագրությունը պարունակող սալաքարի չափերը:

Արձանագրությունը բաղկացած է երեք տողից: Աջ և ձախ կողմերում քարը վնասված է, և ուստի գիրը դժվար ընթեռնելի է:

Արձանագրությունը հետևյալն է.

1 [...] سنه صد و هف[تاد] ?

2 [...] دو سال [..ا]

3 صاحبه مرک/س[...]

Թարգմանություն.

1 […] տարի? հարյուր և յոթանասուն

2 […] երկու տարի

3 տերն/իրականացնողն է Մարք/ս […]

Արձանագրությունը անսովոր է նրանով, որ դրանում օգտագործված են պարսկերեն թվականներ՝ արաբականների փոխարեն: Ինչպես հայտնի է, մուսուլմանական թե՛ տապանաքարային, և թե՛ շինարարական վիմագրության մեջ միջնադարում, սովորաբար, օգտագործվում են արաբա-

կան թվականներ: Բացի այդ, արձանագրության մեջ, «տարի» բառը օգտագործված է երկու անգամ՝ նախ թվականից առաջ դրված է արաբերեն سنه -ն (եթե այդ բառի մեր ընթերցումը ճիշտ է), այնուհետև թվականից հետո դրված է պարսկերեն سال «տարի» բառը: Այստեղ աչքի է ընկնում պարսկերենի սխալ օգտագործումը. سال բառը պետք է դրվեր թվականից առաջ՝ իզաֆետի տեսքով: Ճիշտ պարսկերենով պետք է լիներ

säne säd-o häftād-o do

սակայն գրվել է

säne-ye säd-o häftād-o do sāl

հավանաբար, քանի որ سنه sane բառը դրվել է թվականների սկզբում՝ առաջին տողում, պարսկերեն նույն նշանակությամբ سال-ը դրվել է թվականներից հետո՝ երկորդ տողում:

صاحب սահեբ, կամ արաբերենի առոգանությամբ սահիբ բառը արձանագրության մեջ օգտագործվում է արաբերեն ه պատկանելություն ցույց տվող դերանունով, այսինքն «նրա տերն է Մարգ../Մարք.../Մարս...ը»[15]: Տեսականորեն հնարավոր է նաև որ صاحب-ը օգտագործված լինի sahebe (արաբերեն صاحبة s.aḥibatun) «տիրուհի» նշանակությամբ («Տիրուհի Մարգ../Մարք.../Մարս...ը»), սակայն, մենք այս տարբերակը հավանական չենք համարում:

Կամրջի արձանագրությունը առանձնանում է նաև նրանով, որ «հարյուրից» առաջ բաց է թողնված «հազար» թվականը, հավանաբար տեղ խնայելու նպատակով: Ուստի, ըստ մեր ընթերցման, արձանագրությունը նշում է 1172 հիջրայի թվականը:

---

[15] Հավանականություն կա, որ ածնանվան սկիզբը լինի նաև Մերգ..., Մերք..., Մորգ..., Մորք, Մերս.../Մորս ..., սակայն մենք այս տարբերակները չենք դիտարկում:

Այսպիսով, մեր համոզմամբ, արձանագրությունը ակընհայտորեն առնչվում է կամրջի վերանորոգման հետ, թեկուզև այն չի նշում «կամուրջ» (պարսկերեն پل փոլ կամ արաբերեն جسر ջիսր) բառը (սա կարող էր փորագրված լինել աջ քարի վրա):

Ինչ վերաբերում է արձանագրության գրատեսակին, ապա այն փորագրված է նասխով՝ նասթալիք գրատեսակի էլեմենտներով, որոնք են «հա» տառի օգտագործումը ـهـ-ի տեսքով և سال «սալ» բառը: Հետաքրքրական է, որ «ֆա», նրա վերևի կետիկի և «միմ» տառերի փորագրման համար օգտագործվել է կլոր կաղապար:

Այն, որ գիրը գրված է մակերեսի երկայնքով, այլ ոչ թե լայնական, մեր կարծիքով, բացառում է, որ արձանագրության սալաքարը լինի հին տապանաքար և կրկնօգտագործված լինի որպես պատրաստի հղկված շինանյութ: Այսինքն, նորից կարող ենք ասել, որ արձանագրությունը կապ ունի կամրջի հետ: Այն նշում է 1172 հիջրայի թվականը, որը համապատասխանում է գրիգորյան տոմարի 1758 թվականին: Մեր կարծիքով արձանագրությունը հաղորդում է 1758 թ.-ին կամրջի վերանորոգման մասին և դրա հովանավորողի՝ Մարգ.../Մարք... կամ Մարս... անունով անձնավորության մասին, որի անվան վերջին հատվածը (ձախ կողմում) ջնջված է և անընթեռնելի:

Անգլիացի առևտրականների հաշվետվություններում նշված է, որ XVII-XVIII դդ. բավականին աշխուժանում է մետաքսի ճանապարհով տարվող առևտուրը, և հայ վաճառականները մեծ դեր են խաղում Թուրքիայի, Պարսկաստանի և Եվրոպայի միջև տարվող առևտրի մեջ[16]: Ուստի զարմանալի չէ Ագարակաձորի կամրջի վերանորոգումը XVIII դարում՝ մասնավորապես 1758 թվականին, ինչպես մենք կար-

---

[16] **Մարտիրոսյան** 1989: 93

ծում ենք հաղորդում է արձանագրությունը, առավել ևս, որ այն մինչ այդ հանդիսացել է կարևոր տարր Դվին-Պարտավ առևտրական ճանապարհի վայոցձորյան հատվածում: Այս ճանապարհից օգտվել են նաև օտար առևտրականները: XVII դարում, օրինակ, ռուս առևտրական Ֆեդոտ Կոտովը, ով նկարագրում է Արդեբիլ, Ջուղա, Երևան, Էջմիածին քնակավայրերը, ամենայն հավանականությամբ անցել է դրանով[17]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աճառյան Հ. 1962, Հայոց անձնանունների բառարան, հ. 5, Երևան:

Բաբաջանյան Ա., Ֆրանկլին Ք. 2019, Միջնադարյան մշակութային լանդշաֆտը Վայոց Ձորում՝ Մետաքսի ճանապարհի համակարգում, ՀԱԻԱ-3, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ 3, Երևան, էջ 125-136:

Եղիազարյան Հ. 1955, Ազիզբեկովի շրջանի կուլտուրայի հուշարձանները, Երևան:

Հարությունյան Վ. 1960, Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները, Երևան:

ՀՀՇՏԲ 1986, Թ.Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախշյան, Հ.Խ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, 1 Ա-Դ, չորս հատորով, Երևան:

ՀՍՀ 1974, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1: Ա-Արգինա, Երևան.

Լալայեան Ե. 1904, Արփաչայի հովիտ: Շարուր-Դարալագեազի գաւառ, Ազգագրական հանդէս, Իններորդ տարի, գիրք XII, Թիֆլիս, էջ 252-262:

Մարտիրոսյան Հ. 1989, Հայաստանը Մետաքսի ճանապարհի խաչուղիներում, «Պատմա-բանասիրական հանդես», 1989 (4), Երևան, էջ 85-94:

[17] http://az.lib.ru/k/kotow_f_a/text_1924_hozhdenie_kuptza_kotova.shtml

Մելքոնյան Հ. 2014, Մետաքսի ճանապարհի վայոցձորյան հանգույցի պաշտպանական համակարգը, Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները, Հայագիտական միջազգային երկրորդ գիտաժողով, 17-19 հոկտեմբերի, 2013, Զեկուցումների ժողովածու, էջ 203-205:

Քաջբերունի (Գաբրիել Տեր-Սահակյան) 2003, Ճանապարհորդային նկատողություններ, Երևան:

Steingass F. 1963, A Comprehensive Persian-English Dictionary including the Arabic Words and Phrases to be met with in Persian Literature, by F. Steingass Phd, London, 1963

https://hushardzan.am/archives/6100 Վայոց Ձորի կամուրջները, Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն պետական ոչ առևտրային կազմակերպություն

http://az.lib.ru/k/kotow_f_a/text_1924_hozhdenie_kuptza_kotova.shtml, Котов Федот Афанасьевич, Хождение купца Федота Котова в Персию

Տիգրան Միքայելյան - *ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, Արևելյան աղբյուրագիտության և պատմագրության բաժին, գիտաշխատող,*
mtigran2002@yahoo.com

THE PERSIAN INSCRIPTION OF AGARAKADZOR BRIDGE

Keywords: *Agarakadzor, Persian inscription, bridge, Arabian letter, cobblestone, Vayots Dzor, Late Middle Ages, Yeghegnadzor.*

Agarakadzor bridge is one of gorgeous Armenian bridges in Vayots Dzor marz (province) of the Republic of Armenia. It is located near the capital of the marz Yeghegnadzor over river Arpa and leads to Agarakazdor village (former Ayar or Agyar).

Agarakadzor bridge is also known for its Persian inscription. Despite the historical accounts give no information on the establishment of the bridge, the Armenian historical and archaeological traditions confidently point out that the bridge was established in the

13th century being a part of Dvin-Part'av (Barda) route. Archeologist and Armenologist Husik Melkonyan, among others, also believes that the bridge was established by Oribelian princely dynasty in the 13th century to serve this very important commercial and military route. Until 1970s the bridge was the shortest way for crossing the river Arpa for the inhabitants of Agarkadzor village.

The visual study of the bridge - stones of various colors and forms used in walls of the bridge easily reveal traces of numerous reconstructions. During Soviet times the bridge was reconstructed in 1958 and 1970, while the website of one state body for preservation of monuments mentions about another repair in 1985-1986.

We have studied the Persian inscription (located at high position in the wall looking at Vardabloor mount - therefore we have examined it using binocular) carved in three rows as follows:

1	[...] سنه صد و هف[تاد] ?
2	[. . .] دو سال [ا..]
3	صاحبه مرک/س[...]

Translation

1	[...] year? one hundred and seventy
2	[...] two year
3	owner/executor Mark/s [...]

As seen, the inscription is extraordinary by the fact that Persian numerals are used instead of Arabic ones as traditionally applied in medieval Muslim gravestones and constructional inscriptions. Also, the word year was used two times - سنه (Arabic) before and سال (Persian) after the numerals. We also noted a wrong use of the Persian *ezafe* with the word سال. At the same time, one can see that the numeral 'one thousand', in our opinion, is omitted before the numeral 'one hundred'. Therefore, we believe that 172 should be intepreted as 1172 of the Hijri year that is equal to 1758 of the Gregorian calendar. As a whole, we think that the inscription may have covered two stone slabs: unfortunately the beginning of the inscription was erased because of weathering or other mechanical influence. We also can mention that the inscription is made in *naskh*

handwriting with elements of Nastaliq (ﻫ 'ha' and the word سال). Another interesting circumstance related to the technique of carving is that a round metallic mold was used to carve letters 'fa', dot over it and 'mim'.

Summarizing we would like to mention that the inscription on Agarakadzor bridge in our opinion communicates the year of a repair of this structure - 1758 probably by someone whose name started with Marg/k... or Mars.... As the bridge was an important element of the Dvin-Part'av (Barda) section of the Silk Route, its reconstruction in the 18th century is no surprise. In the 17-18th centuries the Silk Route trade intensified and, as known, the Armenian merchants were playing a prominent role in the commerce between Turkey, Iran and Europe. Foreign merchants should also have used part of this route in Vayots Dzor. Thus, a Russian merchant of the 17th century Fedot Kotov described towns of Ardebil, Jugha (Julfa or Jolfa), Yerevan, Ejmiatsin and probably should have passed this route.

Tigran Mikayelyan - *Institute of Oriental Studies NAS RA, Department of Source Studies and Historiography, Researcher,*
mtigran2002@yahoo.com

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԴԻՎԱՆԻ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ ՄԱՆՈՒԿ ԲԵՅԻ ԵՎ ԻՐ ԸՆՏԱՆԻՔԻ ՄԱՍԻՆ

ԿԱՐԻՆԵ ԱՎԵՏՅԱՆ

Բանալի բառեր՝ *Մանուկ Բեյ և ընտանիք, արխիվային վավերագրեր, ռուս-թուրքական հարաբերություններ, Կաթողիկոսական դիվան:*

Մաշտոցի անվան Մատենադարանի Կաթողիկոսական դիվանի և անհատական թողոններում (Ներսես Աշտարակեցու, Ալեքսանդր Երիցյանի, Մսեր Մսերյանցի) կան հազարավոր վավերագրեր, որոնք հայոց պատմության ու մշակույթի դեռևս չուսումնասիրված էջերը լուսաբանող էական նորություններ են պարունակում:

Մանուկ Բեյի կենսագրությունն ու գործունեությունը, թերևս, բավականաչափ ուսումնասիրված է (մխիթարյան միաբան հայր Ղևոնդ Հովնանյան, Մ. Մսերյանց, Հ. Սիրունի), սակայն նրա ընտանիքի պատմության ուսումնասիրությունը ուշադրության չի արժանացել: Մանուկ Բեյի առաջին կենսագիրներից մխիթարեան միաբան հայր Ղևոնդ վարդապետ Հովնանյանը իրավացիորեն գրել է. «Վերջին ժամանակները Ազգերնուս մէջ երևելի ու հայ անուան պարծանք եղող և իբրև հանճարաւոր ու քաջ քաղաքագէտ նաև արոպայի տէրութեանց առջև անուն հանող ազգայիններնէս մէկն ալ է բարձրարապատիւ Մանուկ Պէյ Միրզայեան: Բայց սակայն չեմ գիտեր ինչպէս եղած է, որ խիստ քիչ մարդիկ կան՝ որոնք աս հոյակապ ու նշանաւոր անձին վրայ, չըսեմ տեղն ի տեղը, հապա նաև վեր ի վերոյ մ'ալ ծանօթութիւն ունենան. գուցէ նաև գտնուին Ազգին մէջ, գոնէ հեռաւոր տեղեր, անանկ մարդիկ՝ որոնք և ոչ իսկ իր անունը լսած

ըլլան»[1]: Ի դեպ, երբ Ղևոնդ վրդ. Հովնանյանը պատրաստվում էր գրել Մանուկ Բեյի կենսագրությունը և այդ նպատակով գրավաճառ Հ. Էնֆիաճյանցի միջոցով դիմել էր Մսեր Մսերյանցին, նա էլ իր հերթին՝ Մուրադ բեյին, վերջինս դժգոհել էր Մսերյանցի տրամադրած տեղեկություններից, համարելով, որ իր հոր կենսագրությունը հրապարակելը դեռ վաղաժամ է[2]: Մանուկ բեյի՝ տարածաշրջանում ունեցած գործունեության համեմատ էլ բազմաթիվ են վավերագրերը, որոնք սփռված են Հայաստանի, Ռումինիայի, Մոլդովայի, Ռուսաստանի պետական արխիվներում:

1806-1812 թթ. ռուս-թուրքական պատերազմում ռուսական բանակը մի քանի հաղթանակներ է տանում թուրքական բանակի դեմ, որտեղ մեծ դեր ուներ Մանուկ Բեյի ցուցաբերած աջակցությունը: Նրա ծառայությունները բարձր են գնահատվել ռուսական բանակի զորավարներ Բագրատիոնի, Կամենսկու, Կուտուզովի կողմից: Ահա թե ինչ է գրում Բագրատիոնը Մանուկ Բեյի մասին իր զեկուցագրում. «Մանուկ Պեյ՝ գլխաւոր թարգման դրան առանձին և արդիւնաւոր ջանադրութեամբ ի կարևոր և յօգտակարագոյն գործս պետութեան եցոյց ի բարիօք ծառայութեան օգոստափառ կայսեր մերում: Տայր ինձ միշտ զկարևոր խորհուրդս վասն քաղաքացն եղելոց յայն կոյս Դանուբայ և զհամբաւսն, զորս առնոյր յայնմ կողմանէ: Ոչ շատ համարեալ այս օրինակ յատուկ ծառայութիւնսն ետ ևս զմեծամեծ նպաստ երկրին Վալաքիոյ ամենահարկաւոր ի վտանգաւոր ազգոյն ժամանակի առ հոգալոյ զպիտոյս զօրաց կայսեր: Ես պարտ անձին վարկայ ծանուցանել կայսեր և զծառայութիւնսն և զանձնանուիրումն և զարժանաւորութիւն նորա: Սակայն բաց այսմանէ պարտապան եմ յանձն առնել զնա առանձնական պաշտպանութեան և պատուոյ ամենայն

[1] **Յովնանեան Հ. Ղեւոնդ**, 1852, 1:
[2] **ՄՄ, Մսերեանցի թողոն**, թղթ. 205, վաւ. 903:

զինուորական և մեծաւորաց, այնպէս և կառավարութեան այսր երկրի, որոյ վասն ետու զայս վկայագիր կնքով և ստորագրութեամբ իմով ի 12 մարտի 1810 Պուքրեշտ»[3]: Այնուհետև մի քանի տող Բագրատիոնը թվարկում է իր տիտղոսները: Զորավար Բագրատիոնից հետո նրան փոխարինում է կոմս Կամենսկին, որի հանձնարարությամբ Մանուկ Բեյը գնում է բանակցություններ վարելու թուրքական հրամանատարության հետ, ռուսների պաշարած Ռուսչուկ քաղաքը ռուսներին հանձնելու համար: Այդ և էլի շարունակվող այլ ծառայությունների համար Կամենսկու զեկուցագրի հիման վրա կայսրը նրան շնորհում է Ս. Վլադիմիրի 3-րդ աստիճանի շքանշան, որի մասին է նույն թղթապանակի 2414 նամակ-վավերագիրը:

Ալեքսանդր Առաջին կայսրը նրան շնորհել է իսկական պետական խորհրդականի կոչում: Հայտնի է կայսեր մեկ այլ հրովարտակը, որով «հավանություն հայտնելով նրա մտադրությանը, Բեսարաբիայում մի նոր քաղաք հիմնելու և այնտեղ օտար գաղթականներ բնակեցնելու մասին, խոստանում է ձեռնտու լինել նրա հետագա ձեռնարկումներին»[4] (Վիեննա, 22/2 - 1815 թ.): Կայսեր օգնության և օժանդակության խոստումը տարածվում էր նաև Մանուկ Բեյի անձնական - ընտանեկան հարցերի վրա ևս. նա բավական արտոնյալ պայմաններում էր գտնվում. օրինակ՝ ստանալով Մանուկ Բեյին ու ընտանիքին Գերմանիայի սահման հասցնելու և նրա ունեցվածքը ապահովելու մասին, Վալաքիայի դեսպանի տեղեկագիրը, պետական խորհրդական կոմս Ռումյանցեվը հավանություն է հայտնում և ավելացնում, թե գրել է նաև Իտալիայի դեսպանին, որպեսզի արդեն ռուսա-

---

[3] **ՄՄ, Մսեր. թողոն,** թղթ. 209, վաւ. 2413: Հմմ. **Ադամյան** 1954, Վավերագրեր ռուս-հայ բարեկամական հարաբերությունների պատմությունից (1809-1811 թթ.):

[4] **ՄՄ, Մսեր. թողոն,** թղթ. 209, վաւ. 2416:

հպատակ Մանուկ Բեյի տեղում մնացած կալվածքին ուշադիր լինեն և տիրություն անեն[5] (2/7- 1813 թ.): Ըստ 2419 վավերագրի, որ պետական խորհրդական կոմս Կապոդիստրիայի նամակն է Մանուկ Բեյին այն մասին, որ կայսրը հարգելով նրա խնդիրը, կարգադրել է, որ նրա Բեսարաբիայի կալվածքը ազատ լինի զինվոր խնամելու հարկից և այլ պարհակներից, բացի պատերազմական ժամանակաշրջանից: Եվ էլի երկու փաստաթուղթ[6] 1815, 1817 թթ., որոնցով Մանուկ Բեյին թույլատրվում է ազատ թղթակցություն ունենալ արտասահմանի հետ, պետության համար կարևոր տեղեկություններ ստանալու նպատակով և գործել այնպես, որ թղթակիցները չտուժեն, ու պետությունների միջև գոյություն ունեցող համեմատաբար փխրուն խաղաղությունը չխաթարվի: Նաև պետական խորհրդական կոմս Կապոդիստրիայի նամակը Մանուկ Բեյին, առ այն, որ կայսրը շատ գոհ է մնացել նրա թղթակցությունների միջոցով արտասահմանից ստացված տեղեկություններից[7]:

Արխիվային փաստաթղթերում պահպանվել է Բեսարաբիայի հոգևոր առաջնորդ Ներսես Աշտարակեցու և Մանուկ Բեյի ու նրա ժառանգների մի կողմից, և մյուս կողմից Լազարյանների միջև շարունակվող մտերիմ հարաբերությունների պատկերը, երբ Ներսես Աշտարակեցին հորդորում է Խաչատուր Լազարյանին պաշտպան և նեցուկ լինել իր հանգուցյալ աներոջ՝ Մանուկ Բեյի ընտանիքին, որից Հասան բեյի օգտին 250.000 ռուբլի բռնագանձելու վճիռ է արձակել գավառական դատարանը և որի դեմ այլ հայցեր էլ կան դատարանում[8], տեղեկացնում է Մուրադ բեյի և պահանջատերերի միջև եղած անհամաձայնության մասին, որ

[5] **ՄՄ, Մսեր. թողոն,** թղթ. 209, վաւ. 2415:
[6] **ՄՄ, Մսեր. թողոն,** թղթ. 209, վաւ. 2417, 2420:
[7] **ՄՄ, Մսեր. թողոն,** թղթ. 209, վաւ. 2420:
[8] **ՄՄ, Ներսէս Աշտարակեցու թողոն,** թղթ. 167ա, վաւ. 755, 771, 778:

տևել է մի ամբողջ տարի[9], կամ հարցնում է, թե կարելի՞ է հարսնության խնդրել նրա քենուն՝ Աննա Էմանուելովնային այրի Աքսինիա Թումանյանցի որդու համար[10], օծում է Հնչեշտի նորակառույց եկեղեցին և անվանում Ս. Մարիամ Աստվածածին, ի պատիվ Մուրադ բեյի մոր՝ Մարիամի. «*...ի 4 ամսոյս եկեալ ի Քիշնև եւ ի 5 գնացեալ ի Հնչեստ գիւղն Մանուկ բեյի ի տեսութիւն վեհագնեալ աղայ Խաչատուր Յովակիմեան հարազատի սրբոյ եկեղեցւոյ հայոց և ընտանեաց նորա, օծաք անդէն եւ զեկեղեցին նորակերտեալ ի Մարիամ կենակցէ հանգուցեալ Մանուկ Բեյի նորոգ ի 17 սեպտեմբերի հանգուցելոյ անուանեալ զնա սուրբ Մարիամ Աստուածածին ի 14 ամսոյ յաւուր կիւրակէի. եւ ի 17 վերադարձեալ անդրէն ի Քիշնև...*»[11], կամ գրում է Հնչեշտի Հուսիկ քահանայ Հովհաննիսյանին՝ նահանգապետի պահանջով հանձնարարելով Մուրադ բեյի օժանդակությամբ կազմել 10 տարվա վիճակագրություն՝ Հնչեշտի բնակչության թվի, ամուսնությունների, ծնունդների, եկեղեցիների, քահանաների ու դպիրների, նրանց ունեցած անշարժ գույքի՝ տների, խանութների, հողերի ցուցակ, ինչպես նաև նշել քաղաքացիությունը, սկսած 1820 թվականից[12]:

Մուրադ բեյը հաճախ այցելում էր Ներսես Աշտարակեցուն[13]: Վերջինս 1829 թ. սեպտեմբերի 20-ի նամակով դիմում է Մուրադ բեյին՝ հաղորդելով նահանգապետի դժգոհությունը տարածված ժանտախտի պայմաններում Հնչեշտի ազգաբնակչության հանդեպ Մուրադ բեյի անհոգ, անկախ վերաբերմունքից և հույս հայտնում, որ լսածը սխալմունք է ու ինքը պարտավորված է զգում իրեն որպես հայր և

---

[9] **Նույն տեղում**, թղթ. 167ա, վաւ. 973:
[10] **Նույն տեղում**, թղթ. 167ա, վաւ. 244, 247, 412:
[11] **Նույն տեղում**, թղթ. 166, վաւ. 1225:
[12] **Նույն տեղում**, թղթ. 167ա, վաւ. 168:
[13] **Նույն տեղում**, թղթ. 167ա, վաւ. 111, 272:

«որպէս բարեկամ մտերիմ ձեզ և ամենայն տան հօր ձերոյ և բնաւից ձերոց բարեկամաց՝ յայտնելով ձերում քաջազնութեան զայս ամենայն, յառաջադրեմ ձեզ կատարեալ հարազատութեամբ խորհրդոց իմոց եթէ ոչ միայն այժմ ի սմին պատահման, այլ յամենայն ժամանակս կենաց ձերոց պարտաւոր էք որպէս մարդ եւ որդի մարդոյ, որպէս քրիստոնեայ ... եւ որպէս ժառանգ անդրանիկ նորին մեծանձնութեան առն հռչակաւորի՝ հանգուցեալ Մանուկ բեյի Միրզայեանց, ջանալ ամենայն զօրութեամբ եւ կարողութեամբ մտաց ձերոց գործել միշտ զամենայն զբարիս՝ որք պարտաւորութիւնք են որդւոց առամայ, որք հարկաւորք են քրիստոնէից եւ որք վայելչականք են մեծանուն հօր որդեութեանց...: Եւ ես ամենայն ջերմեռանդութեամբ հոգւոյ իմոյ եւ կատարեալ բարեկամութեամբ միշտ. եմ եւ մնամ իսկական վերյարգութեամբ այժմ եւ յաւերժ ձերում քաջազնութեան խոնարհ ծառայ արքեպիսկոպոս հայոց Վրաստանու, Բեսարաբիոյ եւ այլոց Ներսէս»[14]:

Վավերագրերի ամենաստվար հատվածը, թերևս, Մսերեանցների արխիվն է՝ վավերագրեր, նամակներ, որոնք վերաբերում են հիմնականում Մանուկ Բեյի և նրա ավագ որդու՝ Մուրադ Բեյի բազմակողմանի գործունեությանը, իսկ ընտանիքի մյուս անդամներին անդրադարձը բավական հպանցիկ է: Մանուկ Բեյն ուներ չորս աղջիկ և երկու տղա՝ Մուրատ Մանուկ պեյ և Գրիգոր Մանուկ պեյ: Աղջիկներից մեկը՝ Կատարինեն ամուսնացած էր Խաչատուր Լազարյանի հետ, մյուսի՝ Աննայի համար հարսնախոսության առաջարկը Ներսես Աշտարակեցու միջնորդությամբ 1830 թ. մերժվել էր անչափահաս լինելու պատճառաբանությամբ: Գրիգորի մասին մեզ հայտնի է այն, որ ապրել է Փարիզում, նաև՝ մի թանկարժեք մակագրություն 1830 թվականին հրատա-

[14] **Նույն տեղում**, թղթ. 167ա, վաւ. 229:

րակված Լազարյան ճեմարանի «Կարգադրութիւնք Ճեմարանին արևելեան լեզուաց» գրքի տիտղոսաթերթին, որի վրա մակագրված է. «Նուէր իշխան Գրիգոր Մանուկ Բեյից Մայր Աթոռի ճեմարանին»: Գիրքն այժմ Մաշտոցյան Մատենադարանի սեփականությունն է: Նամակագրությունը Մուրադ բեյի և Մսեր Մսերյանցի միջև (1839-1871 թթ.) ներկայացնում է երկու մտերիմ բարեկամների հարաբերություններ, որտեղ մտահոգվում, խորհրդակցում են Լազարյան ճեմարանի, նրա նոր կանոնադրության, տնօրինության և ուսուցչական կազմի, ճեմարանում տեղի ունեցող ապօրինությունների, հայոց լեզվի և կրոնի դասերի ավելացման հարցերի շուրջ, քննարկում են գրքերի հրատարակության, դրամական, նոր դպրոցներ բացելու նպատակահարմարության հարցեր: Մուրադ բեյը տեղեկացնում է, որ մտադրություն ունի դպրոց և դեղատուն հիմնել Քիշնևում կամ Հնչեշտում և հիշեցնում է Մսերյանցին նրա խոստումը այդ դպրոցում ուսուցչապետ լինելու մասին[15]: Մյուս նամակում[16] գրում է, թե դպրոցի կառուցման դեմ արգելքներ են հարուցվում և եթե այդպես շարունակվի, կթողնի այդ մտադրությունը և գումարը կհատկացնի մի այլ ազգօգուտ ձեռնարկի: Այդ մասին հարցնում է Մսերյանի խորհուրդը: Ի վերջո դպրոցի հարցը մերժվում է[17], իսկ մինչ այդ Մուրադ բեյը հայտնում է, որ Բուխարեստի նոր դպրոցին նվիրել է 1000 «մանջար», խորհուրդ է տալիս Մսերյանցին ուշադրություն դարձնել հայոց պատմության վերաբերյալ գրքերի հրատարակությանը[18], այն բանից հետո, երբ ի թիվս բազմաթիվ գրքերի Մսերյանցից ստացել և կարդացել էր վերջինիս հրատարակած «Ճռաքաղ» ամսագիրը և Ա. Մուրավյովի գիրքը («Армения и

---

[15] **ՄՄ, Մսեր. թողոն.,** թղթ. 205, վաւ. 903:
[16] **Նույն տեղում,** թղթ. 205, վաւ. 907:
[17] **Նույն տեղում,** թղթ. 205, վաւ. 908:
[18] **Նույն տեղում,** թղթ. 205, վաւ. 893:

Грузия»): Ինքն էլ նյութապես աջակցում էր նրան, որը լինում էր «ի դէպ ժամանակի» թե՛ գիտական աշխատանքների համար և թե՛ ընդհանրապես:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ադամյան Ա. 1954, Վավերագրեր ռուս-հայ բարեկամական հարաբերությունների պատմությունից (1809-1811 թթ.), Տեղեկագիր, N 9, էջ 95-101:

Յովնանեան հայր Ղևոնդ վարդապետ 1852, Միրզայեան Մանուկ Պէյին վարուց պատմութիւնը, Վիէննա, 91 էջ:

ՄՄ, Մսերեանցների արխիվ, թղթ. 205, վաւ. 903, 907, 908, 209, 893, թղթ. 209, վաւ. 2413, 2414, 2415, 2416, 2417, 2419, 2420:

ՄՄ, Ներսէս Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վաւ. 1225, թղթ. 167ա, վաւ. 111, 168, 229, 244, 247, 272, 412, 755, 771, 778, 973:

Մսերեանց Մ., Միրզայեան Մանուկ Պէյ. Պատմութիւն վարուց նորա, «Փարոս Հայաստանի», Մոսկվա, 1879, տետր Ա., էջ 2-6, 1880, տետր Ա., էջ 2-9, տետր Բ., էջ 51-55, 1881, տետր Ա, էջ 3-6, տետր Բ., էջ 2-8, տետր Գ., էջ 3-6:

Սիրունի Հ. Ճ. 1969, Մանուկ Բեյ Միրզայան՝ իշխան Մոլդովայի, «Լրաբեր հասարակական գիտությունների», N 10, էջ 30-46:

Կարինե Ավետյան - *պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, Քրիստոնյա Արևելքի բաժին, ավագ գիտաշխատող*
avetyan.karine1@gmail.com

ARCHIVES OF THE CATHOLICOSATE CONCERNING MANUK BAY AND HIS FAMILY

Key words: *Manuk bay and Family, archival documents, Russian-Turkish relations, Archives of Catholicosate.*

There are thousands of ratifications among public documents and personal archives regarding Armenian history and culture, especially the pages that haven't been studied, at Catholicosate of the Matenadaran after Mashtots. Numerous documents are kept in the archives of Nerses Ashtaraketsi, Alexander Yeritsyan, Mser Mseryan concerning Manuk Bay and his family.

Karine Avetyan - *PhD, Institute of Oriental Studies, Department of Christian Orient, Senior Researcher,*
avetyan.karine1@gmail.com

ՈՒՂԵՑՈՒՅՑ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարը հրատարակվում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում 1960 թ.-ից: Ժողովածուն ընդգրկում է **Մերձավոր և Միջին Արևելքի երկրների հին և միջին դարերի, նոր և նորագույն ժամանակների պատմության, ինչպես նաև աղբյուրագիտության և բանասիրության** հարցերի վերաբերյալ հետազոտություններ: Զգալի տեղ է հատկացված նաև տարածաշրջանի քաղաքական զարգացումների, միջազգային հարաբերությունների և այլ հիմնախնդիրների լուսաբանմանը: Ժողովածուում հրատարակվում են նաև աշխատություններ նվիրված Մերձավոր Արևելքի և Եվրասիայի այլ տարածաշրջանների միջև հարաբերություններին:

Ժողովածուի հոդվածները հրատարակվում են հայերեն, ռուսերեն, անգլերեն և այլ եվրոպական լեզուներով:

Ժողովածուն լույս է տեսնում տարեկան 2 անգամ: Հոդվածները հարկավոր է ներկայացնել տվյալ տարվա առաջին համարի համար՝ մինչև տվյալ տարվա **մայիսի 15-ը**, իսկ երկրորդ համարի համար՝ մինչև **սեպտեմբերի 15-ը**:

Ժողովածուին հոդվածներ կարող են ներկայացնել միայն **գիտական աստիճան** ունեցող հետազոտողները *(գիտական աստիճան չունեցողները՝ միայն խմբագրության որոշմամբ)*:

Ժողովածուի պաշտոնական կայքէջը՝ http://www.orientcpnme.am, էլեկտրոնային հասցեն՝ journal@orient.sci.am:

<u>Հոդվածներին ներկայացվող պահանջներ</u>

Հարկավոր է որպեսզի հեղինակները իրենց հոդվածները համապատասխանեցնեն «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» ժողովածուի ոճային հետևյալ պահանջներին՝

Հոդվածի *ծավալը պետք է լինի* ***մինչև 15 էջ****՝ ներառյալ նաև ամփոփումները և գրականությունը (ավելի մեծ ծավալը՝ խմբագրության որոշմամբ)*:

1. **Հոդվածի շարվածքը** ներկայացնել և՛ էլեկտրոնային (Word - doc, docx), և՛ թղթային տարբերակներով (Երևանից դուրս, կամ արտասահմանից ուղարկվող հոդվածները՝ միայն էլեկտրոնային տարբերակով, ժողովածուի էլեկտրոնային հասցեին՝ journal@orient.sci.am) (**շարվածքը՝ 12 տառաչափ, 1.5 միջտողային բացվածք, 3500 բառից ոչ ավել**):

2. Հայերեն տեքստերը ներկայացնել **GHEA Grapalat** տառատեսակով, **այլ լեզուներով՝ Times New Roman (նույն սկզբունքով նաև ծանոթագրություններում և գրականության ցանկում)**:

3. **Հոդվածի** վերնագիրը և հեղինակի անուն և ազգանունը պետք է լինի մեծատառերով:

4. Հոդվածի տեքստից առաջ, բանալի բառերից հետո տալ նաև հոդվածի բովանդակության վերաբերյալ **համառոտ շարադրանք** (այն պետք է ներկայացվի այն լեզվով, որ լեզվով ներկայացվում է հոդվածը. շարվածքը՝ 12 տառաչափ, միջտողային բացվածքը՝ 1, **250 բառից ոչ ավելի**: Հայերեն տեքստերը ներկայացնել **GHEA Grapalat** տառատեսակով, **այլ լեզուներով՝ Times New Roman**):

5. Հեղինակը ներկայացնում է նաև իր հոդվածի անգլերեն և ռուսերեն վերնագիրը և իր անունը և ազգանունը այդ լեզուներով (եթե հոդվածի տեքստը հայերեն է, եթե

անգլերեն կամ եվրոպական այլ լեզուներով՝ համապատասխանաբար՝ հայերեն և ռուսերեն, եթե ռուսերեն՝ հայերեն և անգլերեն):

6. Հոդվածներին կից ներկայացնել նաև հայերեն և անգլերեն **10 Բանալի բառեր (Keywords; Ключевые слова)**:

7. Եթե հոդվածում կան **հապավումներ**, ապա հոդվածի վերջում՝ Գրականությունից հետո տալ նաև հապավումները՝ բացված վիճակում:

Ծանոթագրությունները *պալ ներկայացվող հոդվածի ամեն էջի ստորակում (Footnote):*

8. **Ծանոթագրությունները** տալ ըստ հոված աշխատության լեզվի:

9. **Ծանոթագրությունների** միջտողային հեռավորությունը՝ 1, տառատեսակը՝ հայերենի դեպքում՝ **GHEA Grapalat** տառատեսակով, **այլ լեզուներով՝ Times New Roman**, տառաչափը՝ 10:

10. **Ծանոթագրությունների** մեջ նշված հեղինակների ազգանունները ընդգծել թավ (Bold), նմանապես նաև հոդվածի վերջում տրվող գրականությունում:

11. **Ծանոթագրությունները (հոդվածներ, գրքեր, զեկուցում) տալ հետևյալ կերպ՝**

Պողոսյան 2019, 36:

Poghosyan 2019: 36.

Погосян 2019: 36.

12. **Ծանոթագրություններում ներկայացվող համացանցային հոդվածները և կայքերը տալ հետևյալ կերպ՝**

Պողոսյան Պ., *Վերնագիրը*, ամսաթիվը, էլեկտրոնային հասցեն:

13. **Ծանոթագրություններում ներկայացվող հոդվածներ օրաթերթերից՝**

Պողոսյան «Օրաթերթի անունը չակերտների մեջ», օրաթերթի ամսաթիվը և համարը:

14. Եթե **ծանոթագրություններում** տրվում է նույն ազգանունը կրող երկու անձ՝ հարկավոր է նշել նաև (այդ դեպքում միայն) անվան առաջին տառը՝

Պողոսյան Պ. 2019, 36:

Պողոսյան Կ. 2019, 115:

15. Եթե **ծանոթագրությունում** նույն հեղինակը նույն տարում հրատարակել է երկու կամ ավելի աշխատություններ, և դրանք հղվում են ներկայացվող հոդվածում՝ հարկավոր է ներկայացնել հետևյալ կերպ՝

Պողոսյան 2019ա, 36:

Պողոսյան 2019բ, 76:

Poghosyan 2019a: 36.

Poghosyan 2019b: 76.

16. **Ծանոթագրություններում** եթե նույն հեղինակի նույն հղումն է կրկնվում իրար ետևից, հարկավոր է հայերենի դեպքում տալ այսպես՝

Նույն տեղում: Անգլերեն և այլ եվրոպական լեզուներով տրվող ծանոթագրությունների դեպքում՝ **Ibid.**, ռուսերենի դեպքում՝ **Там же.**

17. ***Հոդվածում ներկայացվող նկար, քարտեզ և աղյուսակ***

Հոդվածում նկարներ, աղյուսակներ և քարտեզներ ընդգրկելու դեպքում դրանք պետք է ունենան առնվազն 300 խտություն (300 dpi): Հոդվածում նկարները, աղյուսակները և քարտեզները հարկավոր է համարակալել և վերնագրել:

Հոդվածի վերջում ներկայացնել նաև **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ** *(անգլերենի դեպքում՝* **BIBLIOGRAPHY**, *ռուսերենի՝* **ЛИТЕРАТУРА** *(տալ մեծատառերով, թավ (Bold):*

18. ***Գրականության ցանկը ներկայացնել այբբենական կարգով***: Օգտագործված գրականությունը ներկայացնել հետևյալ հաջորդականությամբ՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն կամ այլ եվրոպական լեզուներով:

19. ***Գրականության ցանկում աշխատությունը (գիրք, հոդված) նշել ամբողջական՝***

Պողոսյան Պ. 2019, հոդվածի կամ գրքի վերնագիրը, տպագրության վայրը, տարեթիվը, էջերը:

20. ***Գրականության ցանկում ներկայացվող անտիպ ատենախոսությունը ներկայացվում է հետևյալ կերպ՝***

Պողոսյան Պ. 2019, Վերնագիրը (անտիպ թեկնածուական ատենախոսություն, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ): Գրքի դեպքում նշել նաև հրատարակչատունը;

21. ***Գրականության ցանկում ներկայացվող համացանցային հոդվածների և կայքերի*** հասցեները պետք է նշվեն ամբողջությամբ և հնարավորության դեպքում նաև այն օրը, երբ վերջին անգամ այցելել եք այդ կայքը:

22. ***Գրականության ցանկում ներկայացվող հոդվածներ օրաթերթերից, ամսագրերից՝***

Պողոսյան Պ., Վերնագիրը, օրաթերթի անունը չակերտների մեջ, օրաթերթի ամսաթիվը և համարը:

23. ***Գրականության ցանկում ներկայացվող գիտաժողովի տպագրված թեզիս կամ հոդված՝***

Պողոսյան 2019, զեկուցման կամ թեզիսի վերնագիրը, գիտաժողովի վերնագիրը, անցկացման վայրը և ամսաթիվը:

24. **Գրականության ցանկում, եթե նույն հեղինակը** ներկայացված է մի քանի աշխատություններով, ապա հարկավոր է այդ աշխատությունները ներկայացնել ըստ տպագրման տարիների հաջորդականության:

25. Եթե հոդվածը ներկայացվում է հայերեն՝ հարկավոր է Գրականությունից հետո տալ նաև անգլերեն **ամփո-**

փում (200 բառից ոչ ավելի) /հարկավոր չէ գրել ամփոփում բառը/: Անգլերեն կամ եվրոպական այլ լեզվով ներկայացված հոդվածի դեպքում՝ հայերեն ամփոփում: Ռուսերենի դեպքում՝ հայերեն և անգլերեն ամփոփումներ:

Ամփոփումները պետք է հանդիսանան տեքստի սեղմ բովանդակությունը: Հայերեն ամփոփման տառաչափը 12, միջտողային հեռավորությունը՝ 1, GHEA Grapalat տառատեսակով: Անգլերեն, ռուսերեն ամփոփումների դեպքում Times New Roman տառատեսակով: Ամփոփումների տեքստից առաջ պետք է մեծատառերով գրել հոդվածի վերնագիրը (կենտրոնում): Յուրաքանչյուր ամփոփման տեքստից առաջ գրվում են համապատասխան լեզվով Բանալի բառեր (Keywords, Ключевые слова): Բոլոր լեզուներով տրվող Բանալի բառերը պետք է լինեն նույնական:

Հոդվածի վերջում ներկայացնել նաև հեղինակի գիտական աստիճանը, նշել աշխատանքի վայրը, պաշտոնը և e-mail հասցեն:

Հոդվածները հարկավոր է ուղարկել միայն հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ journal@orient.sci.am

Հոդվածը ստանալուց անմիջապես հետո հեղինակները կտեղեկացվեն այդ մասին, ինչպես նաև դրա հրատարակման նպատակահարմարության և գրախոսման հանձնելու մասին:

Հեղինակների ուշադրությունն ենք հրավիրում հղումների հետևյալ համակարգի առանձնահատկությունների վրա և ակնկալում որպեսզի հոդվածների ներկայացման ժամանակ դրանք խստորեն պահպանվեն: Սույն համակարգի սկզբունքները չպահպանելու դեպքում ժողովածուի խմբագրական խորհուրդը իրավունք է վերապահում

հոդվածները չընդունել քննարկման (հղումների համակարգին կարող եք ծանոթանալ նաև՝ http://www.orientcpnme.am կայքում):

Բոլոր հոդվածները գրախոսվում են, մերժման դեպքում չեն վերադարձվում:

Գրախոսման գործընթացը

Հոդվածը ստանալուց հետո, եթե այն չի մերժվում, խմբագրությունն այն ուղարկում է համապատասխան մասնագետի՝ գրախոսման համար: Գրախոսը պարտավոր է մեկամսյա ժամկետում ներկայացնել իր կարծիքը ըստ գրախոսման ձևի: Գրախոսի դրական կարծիքի դեպքում հեղինակը տեղեկացվում է այդ մասին և, անհրաժեշտ փոփոխություններ կատարելուց հետո, խմբագրություն ուղարկում հոդվածի վերջնական տարբերակը:

«Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» ժողովածուի խմբագրություն

Էլ. փոստ՝ journal@orient.sci.am

«ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ» ՄԱՏԵՆԱՇԱՐ

1. Արևելագիտական ժողովածու, Հատ. I, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1960, 402 էջ:
2. Արևելագիտական ժողովածու, Հատ. II, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1964, 380 էջ:
3. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. III, Արաբական երկրներ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967, 227 էջ:
4. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. IV, Իրան: Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, 405 էջ:
5. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. V, Թուրքիա, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970, 449 էջ:
6. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. VI, Արաբական երկրներ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974, 434 էջ:
7. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. VII, Քրդագիտություն, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, 383 էջ:
8. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. VIII, Իրան, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, 404 էջ:
9. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. IX, Արաբական երկրներ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1978, 397 էջ:
10. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. X, Թուրքիա, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979, 329 էջ:
11. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XI, Իրան, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982, 345 էջ:
12. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XII, Թուրքիա, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985, 276 էջ:
13. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XIII, Քրդագիտություն, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985, 285 էջ:
14. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XIV, Արաբական երկրների ներքին և արտաքին քաղաքականության ժամանակակից պրոբլեմներ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, 315 էջ:
15. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XV, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1989, 341 էջ:
16. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XVI, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1996, 270 էջ:
17. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XVII, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1998, 240 էջ:

18. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XVIII, Եր., «Զանգակ-97» հրատ., 1999, 236 էջ:
19. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XIX, Եր., «Զանգակ-97» հրատ., 2000, 218 էջ:
20. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XX, Եր., «Զանգակ-97» հրատ., 2001, 349 էջ:
21. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XXI, Եր., «Զանգակ-97» հրատ., 2002, 405 էջ:
22. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XXII, Եր., «Զանգակ-97» հրատ., 2003, 332 էջ:
23. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XXIII, Եր., «Զանգակ-97» հրատ., 2004, 568 էջ:
24. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XXIV, Եր., «Զանգակ-97» հրատ., 2005, 536 էջ:
25. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XXV, Եր., «Զանգակ-97» հրատ., 2006, 476 էջ:
26. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XXVI, Եր., «Ասողիկ» հրատ., 2007, 316 էջ:
27. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XXVII, Եր., «Էդիթ Պրինտ» հրատ., 2009, 272 էջ:
28. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XXVIII, Եր., «Զանգակ-97» հրատ., 2011, 352 էջ:
29. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XXIX, Եր., «Զանգակ-97» հրատ., 2014, 352 էջ:
30. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XXX, Եր., «Գիտություն» հրատ., 2016, 276 էջ:
31. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XXXI, Եր., «Գիտություն» հրատ., 2018, 248 էջ:
32. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XXXII/1, Եր., «Գիտություն» հրատ., 2019, 345 էջ:

ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ
ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

THE COUNTRIES AND PEOPLES
OF THE NEAR AND MIDDLE EAST

СТРАНЫ И НАРОДЫ
БЛИЖНЕГО И СРЕДНЕГО ВОСТОКА

XXXII/2

Համակարգչային էջադրումը Վ. Պապյանի

Հրատ. պատվեր № 982
Ստորագրված է տպագրության՝ 12.12. 2019թ.:
Չափսը՝ 60 x 84 1/16, 23 տպագր. մամուլ:
Տպաքանակը՝ 200 օրինակ:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24: